

## Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և Նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

## Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

## **Утп түшілтөрө - Наши контакты - Our contacts**

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԳԵՂԵՐԻ ԱԼԵՔՍԻՆՅԱՆ

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՆԵՐԱՊԿՈՒԹՅԱՆ  
ՀՈԴԵՐԻ ԱԳՐՈԱՐՏԱԿՐՎԱԿԱՆ  
ՀԱՑԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԵ,  
ԲՈՐԵԼԱՎՈՎՄԱՆ ՈՒԳԼՈՒԵՐԵ

**ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ՎԱԼԵՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

**ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ  
ԱԳՐՈՄԱՐՏՈՐԱԿԱՆ  
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Ստեղծամակերտ-2016

ՀՏԴ 631/635  
ԳՄԴ 41.4  
Ա296

Նվիրում եմ ձեռդներիս՝ Վլեքսանդր և Վլշալոյս  
Վլեքսանդրի լուսավոր ու անմար հիշատակին

Աշխատությունը տպագրության է երաշխավորվել Արցախի գիտական  
կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Ս.Բ. Գալստյան, գ.գ. թեկնածու, դրցենտ  
Գրախոսներ՝ Մ.Հ. Գալստյան, գ.գ. դոկտոր, պրոֆեսոր  
Վ.Ա. Պապինյան, գ.գ. դոկտոր

**Վլեքսանյան Վ.**  
Ա 296 **ԼՂՀ գյուղատնտեսական նշանակության հողերի  
ագրոարտադրական հատկությունները, բարելավման ուղիները/  
Վ. Ալեքսանյան.-Ստեփանակերտ: 2016.- ??? էջ:**

Սենագրության մեջ ամփոփված են ԼՂՀ Ասկերանի շրջանի գյուղնշանակության հողերի ագրոարտադրական հատկությունները, հողերի էրոզացվածության աստիճանը, բնապահպանական արդի վիճակը, բերրիտուրյան, հողօգտագործման, ծանր մետաղներով աղոտության մակարդակը և ճշակվել են հողերի բռնիշտման հիմնական դրույթներն ու սկզբունքները: Դաշտային և լարորատոր հետազոտություններն իրականացվել են հանրապետության Ասկերանի և հարակից մյուս շրջանների վարչական սահմաններում գտնվող Խաչեն, Կարկառ, Վարանդա գետերի ավազանների նույն հողաէրոզիոն շրջանների հողատարածքներում: Աշխատությունում մշակված է միջոցառումների համակարգ՝ հողերի մշակման բարելավման ուղղությամբ, տրված է հողային ծածկույթի համակարգված արդի վիճակը որպես ելակետային հիմք՝ հետազո՞ գիտարտադրական հետազոտությունների համար:

Գիրքը նախարհեալած է ագրարային ոլորտի բուհերի ուսանողների, ասպիրանտների, երկրագործության բնագավառի մասնագետների, պրակրիկ հողագործների և ընկերողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 631/635  
ԳՄԴ 41.4

ISBN 978-9939-1-0327-3

© Վ.Ալեքսանյան, 2016

Իրականացվել է ԼՂՀ ԿԳՄՆ ֆինանսական աջակցությամբ՝ SCS  
15.10.001 գիրական թեմայի շրջանակներում:

## **Առաջարքներ**

Գյուղատնտեսական արտադրության կայուն և դիմամիկ զարգացման համար կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոարտադրական հատկությունների ուսումնասիրումն ու դրանց բարելավման ուղիների նախանշումը:

Վերջին շրջանում աճրող աշխարհում երկրագործության ոլորտում լայնածավալ հետազոտություններ են տարվում վարելահողերի և բնական կերպային հանդակների կորսված բերրիությունը վերականգնելու ու պահպանելու ուղղությամբ:

Վ.Ալեքսանյանի «ԼՂՀ գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոարտադրական հատկությունները, բարելավման ուղիները» վերմագրով մենագրությունը նվիրված է Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության համար կարևոր նշանակություն ունեցող գյուղատնտեսական տարածքների, մասնավորապես, վարելահողերի ու բնական կերահանդակների արդի վիճակի գնահատումը, դրանց բերրիության ու արտադրողականության բարձրացմանն ուղղված մի շարք մոտեցումների մշակմանը և փորձարկմանը: Աշխատանքում արծարծված խնդիրները, քացի գյուղատնտեսական նշանակությունից, ունեն նաև կարևոր բնապահպանական արժեք, քանի որ փորձարկված մի շարք միջոցառումներ հեղինակի կողմից ուղղվել են մեղմացնելու հողմնային ու ջրային հողատարումը, պահպանելու հուսուսի ու մատչելի սննդատարրերի պաշարը:

Մենագրությունում բերված դաշտային և լաբորատոր հետազոտությունների արդյունքները կընդլայնեն միջազգային գրականության մեջ եղած՝ այդ ուղղությամբ առկա տվյալների բազան, որը հնարավորություն կտա չորային շրջանների վարելահողերի արդյունավետության բարձրացմանն ուղղված մոդելներում կատարել կարևոր շտկումներ:

Հեղինակի կողմից տարբեր գոտիներում, դիրքադրությունների և լանջերի թեքության պայմաններում կատարված հողի ֆիզիկական, քիմիական, ֆիզիկաքիմիական առանձնահատկությունների, հողատարման գործընթացների և այդ խայտարդես ֆոնի վրա բարելավման միջոցառումների թողած ազդեցության համակողմանի վերլուծության արդյունքները կարող են կարևոր ազդակ հանդիսանալ տվյալ բնագավառի գիտական մտքի հետագա զարգացման և նոր մուտեցումների մշակման համար: Աշխատանքի գործնական արժեքը կայանում է նրանում, որ համայիր հետազոտությունների վերլուծության արդյունքում հեղինակը ներկայացրել է առաջարկությունների մի փաթեթ, որի կիրառումը հնարավորություն կտա բարձրացնել նմանատիպ պայմաններում գտնվող վարելահողերի և բնական կերահանդակների արտադրողականությունը:

Համոզված ենք, որ հեղինակի «ԼՂՀ գյուղատնտեսական նշանակության հողերի ազրուարտադրական հատկությունները, բարելավման ուղիները» մենագրությունը կատարված է բարձր մակարդակով, եզրակացություններն ու առաջարկությունները գիտականորեն հիմնավորված են, աղյուսակներում բերված փորձարարական տվյալները՝ իրական ու արժանահավատ, մատչելի ու հասկանալի հետաքրքրվողների համար:

**Խմբագիր**

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

ԼՂՀ-ն տիպիկ լեռնային երկիր է և աչքի է ընկնում խայտարդես բնակիմայական պայմաններով, առանձնապես՝ հողային ծածկույթով: Լեռնային խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում, որտեղ հողային ծածկույթի, հատկապես՝ վարելահողերի դեգրադացման ու դրանց բերրիության նվազման պոտենցիալ վտանգը մեծ է, հողօգտագործման, հողերի բերրիության, վերահսկման հարցում պահանջվում է ունենալ առանձնակի գիտական մոտեցում:

Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացումն ընթանում է հողագործության և անասնապահության ուղղությամբ, հետևապես, գյուղատնտեսական հողատեսքերի (ազրուկոհամակարգերի) արդյունավետ ու բարձր արտադրողականությամբ օգտագործումը, դրանց բերրիության պահպանումն ու բարձրացումը գյուղատնտեսական արտադրության զարգացման գլխավոր պայմաններից մեկն է: Չնայած ԼՂՀ-ում առկա են միանգամայն նպաստավոր պայմաններ բազմապիսի մշակաբույսերի աճի ու զարգացման համար, այնուհանդերձ մշակվող տարածություններից ու բնական կերպին հանդակներից ստացվող բերքի մակարդակը դեռևս չի համապատասխանում տարածաշրջանի կենսակլիմայական պայմանների պոտենցիալ հնարավորություններին: Սակայն առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հացահատիկի արտադրության հիմնախնդրին: Այս տեսակետից կարևոր նշանակություն է ստանում գյուղատնտեսական հողատեսքերի, և առաջին հերթին մշակովի հողերի արդյունավետ և բարձր արտադրողականությամբ օգտագործումը, դրանց բերրիության պահպանումն ու բարձրացումը՝ դիտարկելով այն որպես աճեցվող մշակաբույսերից բարձր ու կայուն բերքի ստացման գլխավոր նախապայմաններից մեկը:

ԼՂՀ վարելահողերը հիմնականում ընկած են բեքությունների վրա, տարրեր աստիճանի էրոզացված են և ունեն բերրիության

տարբեր մակարդակներ: Հանրապետության 141.52 հազար հեկտար վարելահողերի (ներառյալ խոպանի վերածված հողերը) 29.6%-ն ընկած է թույլ թեր հարթությունների և լանջերի վրա (մինչև 50), իսկ մնացած մասը (70.4%-ը)` լանջերի վրա:

Նախկինում կատարված ուսումնասիրությունների տվյալներով հանրապետության տարածքում ոչ էրոզացված վարելահողերը կազմում են 29.1%, մնացած մասը (70.9%) այս կամ այն աստիճանի ենթարկված են հողատարման: Առավել ոչ բարկոր վիճակում են գտնվում, հատկապես, Ասկերանի շրջանի վարելահողերը:

2010թ. տվյալներով Ասկերանի շրջանում վարելահողերը (ներառյալ նաև լրված վարելահողերը, որոնք ներկայացված են որպես խոպան հողեր) գրաղեցնում են 21.59 հազար հեկտար և տարածվում են ծովի մակերևույթից 300-1900 մ բարձրության վրա, որտեղ միանգամայն տարբեր կլիմայական ու հողային պայմաններ են դրսևրվում: Մշակովի հողերը, այդ թվում և վարելահողերը, տարածվում են անապատափառատանի և լեռնաանտառային գոտիներում:

Չնայած վարելահողերը հիմնականում տարածվում են լեռնաանտառային գոտում, այնուհանդերձ, ռելիեֆի խիստ կտրտվածության, խոր ձորերի ու էրոզիոն գոյացումների առկայության պատճառով անտառների ու բիուտների անմիջական ներգրածությունը վարելահողերի ջրային ռեժիմի վրա բավական թույլ է արտահայտվում:

Տարածաշրջանի ռելիեֆի պայմանների խայտարդետությունն առաջ է բերել նաև հողային ծածկույթի բերրիության տարբեր մակարդակի դրսևրում: Վարելահողերի բերրիության պահպանման ու բարձրացման հիմնավոր ու տարբերակված միջոցառումներ մշակելու համար անհրաժեշտ է ճիշտ պատկերացում ունենալ դրանց ժամանակակից վիճակի, բերրիության մակարդակի ու ազդուրտադրական հատկությունների վերաբերյալ: Շատ կարևոր է հստակ պատկերացում ունենալ հողերի էրոզացվածության վիճակի, հողատարման գործընթացների զարգացման հիմնական պատճառների ու առանձնահատկությունների մասին:

Վարելահողերի տարածության ավելացման նպատակով վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում LՂՀ, այդ թվում և Ասկերանի շրջանի շատ տնտեսություններում, կատարվել են կուլտուրատեխնիկական աշխատանքներ, մասնատված վարելահողերը վեր են ածվել զանգվածային դաշտերի, առանց հաշվի առնելու դրանից բխող բացասական հետևանքները: Քանի որ երկրագործությունը տարվում է անջրդի պայմաններում, առաջնային խնդիրներ են հանդիսանում մշակովի տարածությունների ջրային ռեժիմի բարելավումը, երաշտի ու խորչակների դեմ պայքարի միջոցառումների մշակումը, առանց որոնց հնարավոր չեն մշակաբույսերից ապահովել բարձր ու կայուն բերք:

Վերջին տարիներին LՂՀ Ասկերանի շրջանում հողակադասությին աշխատանքներ են տարվում, սակայն որոշ մերոդական հարցեր հստակեցված չեն, որպեսզի ճիշտ գնահատվեն հողերի բնական հատկություններն ու արտադրական կարողությունները:

Հողի սեփականաշնորհման գործընթացի իրականացման հետ առաջ են եկել հողային նոր հարաբերություններ, հողօգտագործման և հողերի պահպանման մոտեցումներ: Բոլոր դեպքերում հողերի արդյունավետ օգտագործման, դրանց պահպանման ու բերրիության բարձրացման հիմնախնդիրները մնում են առաջնային, քանզի առանց դրանց հնարավոր չեն ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը՝ անկախ հողի մշակությամբ գրադադար՝ անհատի, թե՝ կոլեկտիվի:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ պահանջվում է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան ներկա պայմաններում հողի սեփականաշնորհումից հետո պահպանել ու բարձրացնել մշակովի հողերի բերրիությունը, մշակաբույսերից ստանալ բարձր, կայուն և որակյալ բերք:

Գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության պահպանման ու մշակաբույսերի բերքատվության, ինչպես նաև բնական կերային հանդակների արտադրողականության բարձրացման համար անհրաժեշտ է ճիշտ պատկերացում ունենալ դրանց ներկա վիճակի, բերրիության մակարդակի ու դրա նպազման հիմնական պատճառ-

ների, հողերի հիմնական ազդուարտադրական հատկությունների և հատկապես դրանց էրոզացվածության վիճակի ու այն առաջ բերող հիմնական գործուների մասին:

ԼՂՀ հողային ծածկույթի ուսումնասիրման, կարգաբանման ու բնութագրման, էրոզացվածության վիճակի գնահատման ու քարտեցագրման, հողերի էրոզիայի դեմ պայքարի ազդուարտեխնիկական միջոցառումների մշակման, ինչպես նաև՝ էրոզացված հողերում հանքային ու օրգանական պարարտանյութերի կիրառման արդյունավետության պարզաբանման ուղղությամբ նախկինում կատարվել են որոշակի աշխատանքներ: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո այդ հետազոտությունների նյութերից օգտվելու հնարավորություններ չկան, իսկ այդ ուղղությամբ հրատարակված աշխատանքները չափազանց քիչ են: Հարկ է նշել նաև, որ այդ ուսումնասիրություններն ունեն վաղեմի պատմություն և ներկայումս առանձնապես գիտական արժեք չեն ներկայացնում:

Վերը նշված հանգամանքներն ավելի են մեծացնում հանրապետության շրջաններից մեկում՝ Ասկերանի շրջանում, գյուղատնտեսական հողատեսքերի վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունների նշանակությունն ու անհրաժեշտությունը:

Վերջին տարիներին հողերի կադաստրային գնահատման ուղղությամբ կատարվել են զգայի աշխատանքներ: Ներկա պայմաններում գյուղատնտեսական արտադրության հետազս զարգացման համար առանձնակի նշանակություն ունի հանրապետության և հատկապես նախալեռնային ու լեռնային գոտիների ազդուելուամակարգերի՝ գյուղատնտեսական հողատեսքերի ներկա վիճակի ուսումնասիրումն ու դրանց բերրիության և արտադրողականության բարձրացման ուղիների մշակումը:

Ուսումնասիրվել են ԼՂՀ Կարկառ ու Վարանդա գետերի ջրհավաք ավագանների տարածքները, որոնք համարվում են ոչ միայն դաշտավարության ու անասնապահության կարևոր բազա, այլև առավել շատ են տուժում երաշտից, խորշակներից, էրոզիոն երևույթների և տրանսպորտային միջոցների արտանետումների բացասական ներգործությունից:

Հանրապետության գրեթե ողջ տարածքում, այդ բվում նաև Կարկառ ու Վարանդա գետերի ջրհավաք ավազաններում, էապես խախտված է ազրոլանդշաֆտների չափավոր կառուցվածքը, ինչը և համարվում է հողատարման գործընթացների զարգացման, ջրային ռեժիմի վատրարացման և հողերի բերրիության անկման հիմնական պատճառներից մեկը: Ամենուրեք, հատկապես հողի սեփականաշնորհումից հետո, չեն իրականացվում տասնյակ տարիների ընթացքում մշակված երկրագործության արդյունավետ համակարգեր, ակտիվ պայքար չի կազմակերպվում հաճախակի կրկնվող երաշտի, խորշակների, ինչպես նաև երողին երևոյթների դեմ, արդյունավետ միջոցառումներ չեն իրականացվում արոտների ու խոտհարքների բարելավման ու դրանց արտադրողականության բարձրացման համար:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում՝ մենագրության մեջ, տրվել են 1993-2011թթ. Ասկերանի շրջանի վարելահողերի և արոտավայրերի ազրոարտադրական հատկությունները, հողերի երողացվածության աստիճանը, բնապահպանական արդի վիճակը, բերրիության, հողօգտագործման մակարդակը և մշակվել է միջոցառումների համակարգ՝ դրանց բարելավման ուղղությամբ:

Այդ նպատակին հասնելու համար.

- ուսումնասիրվել է Կարկառ ու Վարանդա գետերի ջրհավաք ավազանների վարելահողերի, արոտավայրերի արտադրողականությունը, կախված ազրոարտադրական հատկություններից՝ ֆիզիկական (մեխանիկական կազմ, ծավալային զանգված, տեսակարար կշիռ, ծակոսուկենություն, ջրակայուն ազրեգատների քանակ, ջրաքաղաքացիություն), քիմիական (ջրալույծ աղերի, կարբոնատների պարունակությունը և կազմը), ֆիզիկարիմիական (փոխանակային կատիոնների կազմն ու փոխհարաբերությունը), ազրոքիմիական (հումուսի, մատչելի սննդատարրերի պարունակությունը),
- երողին գործընթացների ինտենսիվության զարգացման, երողացվածության վիճակի, հողատարում առաջացնող գործոնների առանձնահատկությունների պարզաբանման և կանխման նպատակով լեռնային ռելիեֆի պայմանների համար ուսումնասիրվող

տարածքը ստորաբաժանվել է հողաէրոզիոն շրջանների, կախված ունիեցի տարրեր դիրքադրությունից, թեքության աստիճանից և առաջարկվել են միջոցառումներ հողատարնան կանխման վերաբերյալ,

● պարզվել է Կարկառ և Վարանդա գետերի ջրհավաք ավազանների շրջակա տարածքների հողերի աղտոտվածության աստիճանը ծանր մետաղներով, և զնահատվել թունավորության աստիճանը՝ կախված ավտոմայրությներից ունեցած տարրեր հեռավորություններից, առաջարկվել են միջոցառումներ՝ աղտոտվածության բացասական ներգործությունը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար,

● կատարված բազմակողմանի ուսումնասիրությունների, ինչպես նաև այդ ուղղությամբ նախկինում կատարված և վաղեմությունը չկորցրած հետազոտական նյութերի վերլուծության հիման վրա մշակվել ու առաջարկվել է համալիր միջոցառումների համակարգ, որի իրականացումը հնարավորություն կտա գործընթացները պահպանել և բարձրացնել վարելահողերի, բնական կերային հանդակների (արոտ, խոտհարք) բերրիությունը, հետևաբար նաև՝ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, բնական կերային հանդակների արտադրողականությունը նոր հողային հարաբերությունների պայմաններում:

Ասկերանի շրջանի ցանքային գոտու հողերում փորձարկվել ու արտադրության մեջ ներդրվել է աշնանացան ցորենի հարթահատիչածեղքային մշակման եղանակը, որը, բարձր բերք ստանալու գրավական լինելուց բացի առավել կարևորվում է արտադրական ծախսերի ու նյութերի զգակի կրծատման և բարձր տնտեսական արդյունավետություն ապահովելու առումով:

Կատարված ուսումնասիրությունները հիմք են հանդիսացել շրջանի հողերը հողաէրոզիոն շրջանների բաժանելու համար, ինչպես նաև նախատակ են ունեցել լրացնելու այդ շրջանի հողերի վերաբերյալ ուսումնասիրությունների բացը:

## **ԳԼՈՒԽ 1**

### **ԼՂՀ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՂՈԳՏԱՎՈՐԾՄԱՆ ԱՐԴԻ ՎԻճԱԿԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Գյուղատնտեսությունը երկրի բարիքների արտադրության կարևորագույն ճյուղերից է, որը տվյալ երկրի բնակչությանը ապահովում է սննդով, իսկ արդյունաբերությանը՝ գյուղատնտեսական հումքով:

Երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է ունենալ զարգացած գյուղատնտեսություն: Դրա համար հարկ է պահպանել գյուղատնտեսական հողատեսքերը, մշակել և կիրառել համալիր միջոցառումներ, դրանց միջոցով բարձրացնել օգտագործվող հողերի բերրիության մակարդակը, գյուղատնտեսության շրջանառության մեջ ընդգրկել նոր տարածքներ՝ օգտագործման ժամանակ կիրառելով ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաներ:

Արծարձվող հարցերի վերաբերյալ լուրջ հետազոտություններ են իրականացրել ԼՂՀ, ՀՀ և արտերկրի մի շարք անվանի գիտնականներ, որոնց եզրակացությունները հաշվի են առնված ներկա աշխատության մեջ:

Հողերի բերրիության պահպանման, դրանց բարձրացման հարցն ավելի սուր է զգացվում բնակլիմայական խայտարդես պայմաններ ունեցող երկրների համար, որոնց շարքին է դասվում նաև ԼՂՀ-ն՝ իր առանձնահատուկ հողային ծածկույթով, իմաստ կտրտված ռելիեֆով (Ն.Ս.Չահնազարյան, 1962): Մասսամբ դրանցով է պայմանավորված հանրապետության վարելահողերի բերրիության անկումը՝ դեղրադացիան, էրոզիոն երևույթների զարգացումը, որոնց նպաստել են նաև վերջին տասնամյակների (սկսած 1990թ.-ից) անտառահատումները, դաշտավաշտպան անտառաշերտերի և թփուտների ոչնչացումը: ԼՂՀ-ում վարելահողերի 29.1%-ը էրոզացված չէ, մնացած 70.9%-ը ենթարկվում են տարբեր աստիճանի հողատարման: Ոչ բարվոր վիճակում են գտնվում նաև Ասկերանի շրջանի վարե-

լահողերը, ուստի անհրաժեշտություն է առաջացել մշակել շրջանի հողերի պահպանման, բերիության բարձրացման հիմնավոր ուղիներ և միջոցառումների համակարգ, որի իրազործման համար անհրաժեշտ է ճիշտ պատկերացում ունենալ հողերի արդի վիճակի, այդ ուղղությամբ գիտության ձեռքբերումների և դրանց կիրառման եղանակների վերաբերյալ, որոնց միջոցով կրաքարացվեն մշակովի հողերի արտադրական կարողությունները և կապահովվի բարձր ու կայուն բերք:

Հանրապետության գյուղատնտեսությունն ընթանում է 2 ուղղությամբ՝ դաշտավարության և անասնապահության: Չնայած դաշտավարության մեջ զգալի տեղ է գրավում հացահատիկային մշակաբույսերի մշակությունը, սակայն հողերի բերրիության մակարդակը դեռևս ցածր է և մշակաբույսերի բերքատվությունը միջին հաշվով (հացահատիկի) չի գերազանցում 11-12 g/hw (Ավետիսյան Ս.Ս. և ուղիներ, 2008), ուստի անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, կիրառման, բարձր բերքատու սորտերի մշակության, հողերի օպտիմալ չափաբանակներով պարարտացման, ցանքաշրջանառության կիրառման հարցերին:

Նախկինում կատարված ուսումնասիրությունների ընթացքում կարգաբանվել, գնահատվել է ԼՂՀ հողերի երողացվածության աստիճանը, մշակվել են երողացվածության դեմ պայքարի միջոցառումներ, օգտագործվել են համապատասխան պարարտացման չափաբանակներ՝ օրգանահանքային պարարտանյութերի կիրառման ճանապարհով, կատարվել է ուսումնասիրված հողերի քարտեզագրում (Է.Մ. Հայրապետյան, 2000):

ԼՂՀ, (այդ թվում Ասկերանի շրջանի) բնական պայմանների խայտարդետությունը, վարելահողերի տարբեր աստիճանի երողացվածությունն ու բերրիության մակարդակը հնարավորություն չեն տալիս մշակելու ունիվերսալ միջոցառումների համակարգ, որն ընդունելի լինի հանրապետության կամ նույնիսկ մի շրջանի վարելահողերի բոլոր տարածքների համար, ուստի առաջանում է տարածքի վարելահողերի շրջանացման անհրաժեշտություն:

Տարածքի հողերի շրջանացման հարցերով գրադպել են Ս.Ի. Սիլվեստերովը (1965), Ա.Մ. Կաշտանովը (1976), Ա.Դ. Օոլովը (1971), Ա.Ա. Սարգսյանը (1971), Ա.Ու. Քերիմխանովը (1972), Ա.Ա. Զախարովը (1914, 1925), Բ.Յա. Գալստյանը (1931), Ա.Մ. Նալբանդյանը (1950), Ա.Ի. Չիբչյանը (1950), Խ.Պ. Միրիմանյանը (1955, 1956, 1962), Կ.Գ. Մելքոնյանը (1961, 1962, 1968), Կ.Ս. Արքահամյանը (1957), Է.Մ. Հայրապետյանը (1964, 1972), Լ.Գ. Ադամյանը (1966) և ուրիշներ: Այլ երկրներում նմանատիպ ուսումնասիրություններ են կատարել Ի.Պ. Գերասիմովը (1956), Վ.Ա. Ամբողջաձեն (1957), Մ.Ն. Զավալավսկին (1966), Խ.Մ. Մուստաֆաևը (1967) և ուրիշներ: Է.Մ. Հայրապետյանի հետազ ուսումնասիրություններով (Թ.Մ. Այրառելյան (1985, ա, ճ, 1987), Է.Մ. Հայրապետյան և ուրիշներ (1990)) պարզվել է, որ Հայաստանի տիպիկ տափաստանային գոտու (սևահողային գոտի) արևահայաց լանջերում ձևավորված հողերն իրենց բերրիության մակարդակով ու ազդարտադրական հատկություններով ավելի մոտ են չոր տափաստանային գոտու (շագանակագույն հողերի գոտի) հողերին, քան սևահողերին: Եվեկով դրանից՝ Է.Մ. Հայրապետյանն առաջարկում է լեռնային տարածքների հողերի հողաէրողիոն շրջանացման ժամանակ (շրջանացման 1-ին աստիճանում) առանձնացնել բնական գոտիներ, իսկ 2-րդ աստիճանում հաշվի առնել լանջի դիրքադրությունը, դրա հիման վրա անջատել հողաէրողիոն շրջաններ, միաժամանակ դրանց սահմաններում անջատել ենթաշրջաններ, հաշվի առնելով հողառաջացնող մայրատեսակների բնույթը (Ա.Ծ. Ընթափթ'վ, 1981):

Է.Մ. Հայրապետյանի կողմից առաջարկված սկզբունքի հիման վրա շրջանի բնակլիմայական գոտու սահմաններում անջատվել են հողաէրողիոն շրջաններ, հաշվի է առնվել ռելիեֆի հիմնական տարրը՝ լանջի դիրքադրությունը՝ մակրոռելիեֆի մասշտարով: Այսինքն, Ասկերանի շրջանի վարելահողերը խմբավորվել են երեք հողաէրողիոն շրջանների մեջ. ա) հարթ տարածությունների վարելահողեր, բ) արևահայաց լանջեր և գ) ստվերահայաց լանջերի վարելահողեր (Վ.Ա. Ալեքսանյան, 1997, թ):

Ինչպես հայտնի է, հողերի բերրիության պահպանման գործում կարևոր գործոններ են համարվում պարարտացումը և հողի մշակումը: Պետք է նշել, որ պարարտանյութերի կիրառումը մշակաբույսերի ցանքերում իրականացվում է երկու ուղղությամբ՝ բերքի քանակի ավելացման, որակի պահպանման և բարձրացման:

Մշակաբույսերի հանքային սննդառության ճիշտ կազմակերպումը պետք է նպատակառողկած լինի բարձր ու կայուն բերքի ստացմանը, արտադրանքի որակի բարելավմանը, հողի բերրիության վերաբարձրության ապահովմանն ու շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի պահպանմանը: Ուստի անհրաժեշտ է հողում ստեղծել օգտագործվող պարարտանյութերի ճիշտ հարաբերակցություն, որով և պայմանավորված են բերքի քանակը և որակը: Պարզվել է, որ բույսի կողմից որևէ սննդատարրի յուրացման մակարդակը կախված է այլ սննդատարրերի ապահովածության աստիճանից (Минеев В.Г., 1990), պարարտանյութի կիրառման ժամկետից (Смирнов П.М., 1958): Այսպես, NH4NO3-ի կիրառումը գարնանը՝ սնուցման ձևով, նպաստում է ֆոսֆորական պարարտանյութերի լավ յուրացմանը բույսերի կողմից, իսկ ֆոսֆորի պակասի դեպքում՝ հակառակը. բույսերում և ստացվող մթերքում ավելանում է նիտրատային ազոտի պարունակությունը:

Խոպան հողերում բույսերն (աշնանացան ցորենը) ավելի շատ ֆոսֆոր են կուտակում, քան սև ցելի դեպքում (Rennie T.D., 1956): Ծշտված է, որ երբ հողում պակասում է ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի քանակությունը, ընկնում է բույսերի ցրտադիմացկանությունը և ձմեռադիմացկունությունը:

Հայտնի է, որ աշնանացան ցորենի բույսերը 10 գ հատիկի բերք ձևավորելու համար պահանջում են 30-40 կգ ազոտ, 15 կգ ֆոսֆոր և 20-25 կգ կալիում՝ ազդող նյութի հաշվով (Ավաքյան Մ.Գ., 1973):

Բացի այդ աշնանացան ցորենի բույսերում սննդատարրերի քանակը հավասարապես չի բաշխված հատիկում ավելի շատ է. ազդուք՝ 2.5%, ֆոսֆորը՝ 1.0%, կալիումը՝ 0.5%, քան ծղոտում, որտեղ այն կազմում է համապատասխանաբար՝ 0.5, 0.2-0.3 և 1% (Գալստյան Ս.Հ., 2007, թ, գ):

Մեծ նշանակություն ունի աշնանացան ցորենի ջրովի կամ անջրովի պայմաններում մշակումը, որին զուգընթաց հանքային և օրգանական պարարտանյութերի ազդեցությունը ցորենի բերքի քանակի և որակի վրա տարբեր է: (Պետերբուրգսкий А.В., 1978; Վերտին С.А., Ետրուկова А.М., 1978; Պոկுдин Г.П., Բոգատых О.А., 2007):

Բացի այդ պարզված է, որ աշնանացան ցորենի Բեզոստայա-I սորտի բերքի հավելումը պարարտացման միջին չափաբանակների դեպքում կազմել է 5.0-12 g/հա, կամ 20-36%, իսկ բարձր չափաբանակների կիրառման դեպքում՝ 10.2-27.5 g/հա կամ 30-57%. (Գվոզդենկո Դ.Վ., 1971, Միխայլով Հ.Հ. և Յուլյան Լ.Պ., 1969):

Հայաստանի Հանրապետության տարբեր հողակիմայական գոտիներում կատարված փորձերը ցույց են տվել, որ հանքային և օրգանական պարարտանյութերի օգտագործումը մեծ ազդեցություն է գործում աշնանացան ցորենի բերքի որակի և քանակի վրա (Գ.Ը.Ալյանյան, 1958; Ե.Մ.Մովսիսյան, 1971; Գ.Խ.Աղաջանյան, 1957; Գ.Ա.Դավթյան, Գ.Բ.Բարյան, 1966; Մ.Մ.Սիմոնյան, Վ.Վ.Ալյանյան, 1967; Մ.Գ.Ավագյան, 1973; Ե.Ե.Նիկողոսյան և Մ.Հ.Գալստյան, 1975; Վ.Ա.Ավագյան, 2004; Մ.Հ.Գալստյան, 2007, գ):

Հողերի սեփականաշնորհումից հետո առավել սուր է զգացվում գյուղատնտեսության առջև դրված ռազմավարական խնդիրների արդյունավետ լուծման անհրաժեշտությունը, որը հմարավոր է բացառապես գիտության նվաճումների, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, կիրառման շնորհիվ: Բնապահպանության գործում մեծ նշանակություն ունեն օրգանական պարարտանյութերի ծավալների ավելացումը, հանքային պարարտանյութերի չափաբանակների կրծատումը, բույսերի մշակության նոր տեխնոլոգիաների մշակումն ու կիրառումը:

Հողի բերրիության բարձրացման գործում կարևոր դեր ունի կենսահումուսը, որը պարունակում է մոտ 2.2% ազոտ, 2.6% ֆոսֆոր և 2.7% կալիում, ինչպես նաև մի շարք միկրոտարրեր, վիտամիններ, ֆերմենտներ: Միջավայրի ռեակցիան տատանվում է 6.8-7.4-ի սահմաններում, այսինքն՝ առկա են նպաստավոր պայմաններ մշակառույսերի աճի համար (Городняй Н.М. и другие, 1990): Պարզված է,

որ մեկ տոննա կենսահումուսը համարժեք է 10 տոննա գոմաղբին (Վ.Ա.Ավագյան և Վ.Յ.Հայկազյան, 1998): Կենսահումուսը նպաստում է բանջարաբռստանային բույսերի սերմերի արագ ծլմանը, բույսերի աճին և պտուղների վաղ հասունացմանը 5-9 օրով (Գ.Ժ.Սարգսյան, 1996; Գ.Հ.Ասլանյան, Գ.Լ.Սարգսյան, Ռ.Ս.Շահպիզյան, 1997):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼՂՀ տարածքում, այդ թվում՝ Ասկերանի շրջանում, մշակաբույսերից գերակշռում է աշնանացան ցորենը, որը մշակվում է տարբեր բարձրությունների և տարբեր աստիճանի թեքությունների վրա, տեղի է ունենում սննդատարբերի կորուստ զանազան ճանապարհներով. հիմնականում գազային վիճակում ցնդելու (ազոտական պարարտանյութեր), ոչ շարժուն ձևերի (ֆոսֆորական պարարտանյութեր) ու ոչ փոխանակային ձևի (կալիումական պարարտանյութեր) վերածվելու ճանապարհով, ուստի անհրաժեշտություն է առաջանում լուրջ ուշադրություն դարձել այդ հարցերի ուսումնասիրմանն ու պարարտանյութերի ճիշտ չափարանակներով օգտագործմանը:

Հայտնի է, որ ԼՂՀ հողային ծածկույթի ուսումնասիրությամբ գրաղվել սկսել են դեռևս անցյալ դարի 20-ական թթ. (Ամիրնով-Լոգինով Վ.Պ., 1926): Առանձնացվել է 5 հողատիպ՝ հաշվի առնելով ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը, հումուսի քանակությունն ու կարրոնատային կազմը:

Հետագայում Վ.Վ.Միջինկինայի կողմից (1952, 1961) Ասկերանի շրջանում կատարվել են աշխատանքներ հողի էրոզիայի դեմ պայքարի միջոցառումների մշակման ուղղությամբ, ուսումնասիրվել է էրոզացված հողերում հանքային պարարտանյութերի արդյունավետությունը, որի հիմնան վրա էլ առաջարկվել են այդ հողերում հանքային պարարտանյութերի կիրառման օպտիմալ չափարանակները:

Հողային հետազոտություններից ստացված նյութերի միջոցով կազմվել է 1:600000 մասշտաբի քարտեզ (Ալեքպերով Ք.Ս., 1957, 1979), որը, սակայն, միայն ընդհանուր պատկերացում է տախի տարածաշրջանում (ԼՂՀ) ձևավորված հիմնական հողատիպերի և դրանց էրոզացվածության մասին: Հետագայում համանման հետա-

զոտություններ է կատարվել նաև Գ.Կ.Հասանովի կողմից (1972). կազմվել է հանրապետության տարածքի 1:100000 մասշտարի հոդաբուղին քարտեզ, առանձնացվել է 5 հոդատիպ՝ այդ հոդատիպերի ընդհանուր բնութագրմամբ, սակայն դրա վերաբերյալ անալիտիկական տվյալները բացակայում են:

Հոդածածկույթի ուսումնասիրություններ է կատարվել նաև Գ.Ա.Հակոբյանի կողմից: Հմնականում ուսումնասիրվել են խաղողի այգիների տակ ընկած հողերի ագրոբիոլական հատկությունները (Գ.Ա.Հակոբյան, 1976 ա, 1976 թ, 1982, 1988):

Ասկերանի շրջանում հոդակադաստրային աշխատանքների ուղղությամբ խոշոր մասշտարի ուսումնասիրություններ են կատարվել «Հայականողինմախագիծ» ինստիտուտի կողմից՝ 1994-1997թթ., իսկ հետագայում՝ «Հայականողին» ՊՈՍԿ-ի կողմից (2006-2007թթ.): Այդ ուսումնասիրությունների հիման վրա տրվել են համապատասխան առաջարկություններ, սակայն այդ հողերի ագրոարտադրական հատկությունները դեռևս բերի են ուսումնասիրված, լրիվությամբ բացահայտված չեն հողում սննդատարրերի ազդեցությունը, պարարտացման ժամանակ դրանց կորուստները և հետազոտեցության դրական արդյունքները՝ կախված հող ներմուծված պարտանյութերի չափաքանակներից և սննդատարրերի տեսակից:

Գյուղատնտեսության մեջ օգտագործվող պարարտանյութերից բույսերի բերքատվության գործում կարևոր նշանակություն ունեն ազոտական պարարտանյութերը, սակայն դրանց մի մասն անօգուտ հեռանում է մշակարույսերի արմատաքնակ շերտից և չի յուրացվում (Макаров Б.Н., 1988, 1994):

Հոդ ներմուծված ազոտական պարարտանյութերի 50-55%-ը բույսերը չեն յուրացնում բերք տալու համար (Бобрицкая М.А., 1974, 1975), իսկ ազոտի 20-30%-ն օգտագործվում է մանրէների կենսագործունեության համար: Ազոտի մի մասը ցնդում է N2, N2O, NO և NO2-ի ձևով, որը կազմում է պարարտանյութի 20 և ավելի տոկոսը (Մ.Հ.Գալստյան, 2007, թ): Դրա քանակությունն ավելանում է պարարտացման չափաքանակների ավելացմանը զուգընթաց: Ազոտի կորուստների քանակությունը կախված է հողի տիպից, մեխանի-

կական կազմից, կարբոնատությունից, խոնավությունից, ջերմաստիճանից, կիրառման ձևից: Կորուստները համեմատաբար բարձր են մակերեսային կիրառման դեպքում և զգալի են հող ներմուծման առաջին ամսվա ընթացքում (Կոնդիր Պ. և այլն, 1974; Պոբեծով Վ.Ա., Լեծեծ Ե.Ա., 1978; Կոպուկով Վ.Վ., Կուլետովա Ս.Ի., 1989):

Հստ Գ.Խ. Կողինազի հետազոտությունների արդյունքների (1960)՝ ամեն տարի դրենաժային ջրերի հետ 762 մլն հա տարածքից հեռանում է 228 հազար տոննա ազոտ, 139 հազար տոննա ֆոսֆոր և 2272 հազար տոննա կալիում:

Պարզվում է, որ հարք և քոյլ թերություն ունեցող հողերից ազոտի կորուստը լինում է 1% (Haunold E., 1986): Հողից և պարարտանյութերից լվացման ճանապարհով ազոտի կորուստը կարող է կազմել մինչև 45%, ինչը կախված է հողի տիպից, մեխանիկական կազմից, տեղումների քանակից, պարարտանյութերի տեսակից, օգտագործման ժամկետներից և չափարանակներից (Мовсумов З.Р. և այլն, 1974; Uhlen G., 1978; Cameron D.R. and others, 1978, Зубенко В.Ф. և այլն, 1979; Foster S and others, 1982; Карагина Л.Б., 1989): Ֆոսֆորական պարարտանյութերից լվացման ճանապարհով ֆոսֆորի կորուստն, ըստ ուսումնասիրությունների, կազմել է 0.1 կգ/հա (Shinde P.H., Shingte A.K., 1976, ըլՌՌՈՎ ը.ծ., 1979, Weaver D.M. and others, 1988): Հողից կալիումի կորուստը լվացման ձևով կազմում է մինչև 10% (Тюриն И.В., 1951):

Բազմաթիվ հետազոտողների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միջին հաշվով ոռոգման ջրերի, մթնոլորտային տեղումների միջոցով տարեկան հողից լվացվում և հեռանում է 40 կգ/հա ազոտ, մինչև 30 կգ/հա K2O և 2.5 կգ P2O5 (Amberger A., Schweige P., 1973, Пироженко Г.С. և այլն, 1978, Замарев Г.В., Чаповская Г.В., 1982, Иванов Н.А. և այլն, 1982, Зубенко В.Ф., Майстեր А.А., 1983): Հստ Մ.Հ.Գալստյանի (1976) ուսումնասիրությունների՝ հարք տարածքներից աշնանացան ցորենի ցանքերում ազոտի կորուստը (ամնիակային սիլիտրա, կարբամիդ) կազմել է 23.2%, մինչև 50 թերությունների դեպքում՝ 24.1%-31.7% և որոշ դեպքերում՝ 35.7%: Աննդատարերի զգալի կորուստներ նկատվում են նաև էրոզիայի հետևանքով:

Մշակաբույսերով ծածկված հողատարածքները նպաստում են ջրի մակերեսային հոսքի կրճատմանը 1.1-1.8 անգամ, որի հետևանքով 20 անգամ պակասում են ազոտի, ֆոսֆորի և կալիումի կորուստները (Максимов В.И., 1973):

Կախված լանջի թերությունից և ջրի ծավալից՝ մակերեսային հոսքերի հետևանքով սննդատարերի տարեկան կորուստները տատանվում են 11-62; Р2О5-ը՝ 10-36 և К2О-ն՝ մինչև 314 կգ/հա-ի սահմաններում (Stehlik O., 1968, Терещенко К.П., Козловский Б.И., 1980, Салыников М.И., 1989, Basile G. and others, 1990):

Մեծ վտանգ է ներկայացնում նաև խոհզացին էրոզիան: Ըստ ուսումնասիրությունների՝ ՀՀ ոռոգվող հողերից (133 հազար հա) խոհզացին էրոզիայի միջոցն քվոր, տարվող հողի քանակը կազմում է 3.3 մէն տոննա (Վ.Գ.Սանոյան և ուրիշներ, 1999):

Հող ներմուծված սննդատարերի մատչելի ձևերը հեշտությամբ լվացվում են հողի արմատաքաղ շերտից, սակայն երբ պարարտանութերն օգտագործվում են ցեղլիտի հետ համակցված ձևով, ապա սննդատարերը կլանվում են ցեղլիտի կողմից, պահպանվում լվացումից, հետագայում աստիճանաբար յուրացվում բույսերի կողմից, իսկ բույսերում նիտրատների քանակությունը լինում է սահմանված բույլատրելի խտությունից ցածր (Просянникова О.И., Анохин В.С. 1998): Բնական ցեղլիտների օգտագործումը հանքային պարարտանութերի հետ երկարացրել է հանքային պարարտանութերի հետազողեցությունը և բարձրացրել մշակաբույսերի բերքատվությունը (Berashvili K.L. and others, 2004):

Սննդատարերով հարուստ հողերում ցեղլիտի ներմուծումն առաջին տարում նույնիսկ քացասական ազդեցություն է բռնում, քանի որ սննդատարերը կլանվում են ցեղլիտի կողմից (Чеботарев Н.Т., 2003), իսկ 3-4 տարուց հետո նկատվում է բերքատվության բարձրացում, այսինքն՝ սննդատարերը ենթարկվում են դեսորդիայի:

Կոմիի հանքապետությունում, №60 կգ/հա չափաքանակի օգտագործումը ցեղլիտի հետ համակցված ձևով, ոլոր-վարսակ խոտանուրդի բերքի հավելումը կազմել է 49%, իսկ առանց ցեղլիտի՝

39% (Хмелинин И.Н. и др., 1999):

Վերջին տարիներին հանքային պարարտանյութերն օգտագործվում են բնական աղսորբենտների (ցեղլիտ) հետ, ինչպես գրանուլացված, այնպես էլ սովորական մեխանիկական խառնուրդի ձևով: Ցեղլիտներն օգտագործվում են որպես մելիորանտներ, ինչպես նաև որպես պարարտանյութ՝ սակավ բերրիություն ունեցող հողերում հաշվի առնելով նրա մեջ առկա հանքային և այլ միկրոտարրերի դրական ազդեցությունը հողի ֆիզիկաքիմիական հատկությունների վրա: Հայտնի է, որ բնական ցեղլիտները դրական ազդեցություն են գործում հողի սննդային ռեժիմի վրա, դրանց օգտագործման ժամանակ բարձրանում է մշակաբույսերի բերքատվությունը և գյուղատնտեսական նթերքների որակը (Խաչատրյան Հ.Է., 2009): Թերևն մեխանիկական կազմ ունեցող հողերում ցեղլիտի դրական ազդեցությունը բերքի հասունացման արագացման գործում ավելի բարձր է, քան ծանր մեխանիկական կազմ ունեցող և սննդատարրերով հարուստ հողերում (Գլածակ Օ.Ղ., 1990):

Ցեղլիտի 15 տ/հա չափաբանակի օգտագործման ժամանակ Վրաստանի կարրոնատային հողերում առվույտի կամաչ զանգվածն ավելացել է 17-26%-ով (Կավլատվili Է., Կիբուկանի Մ., 1990), իսկ Կ.Գ. Կիլամանի (Կիկաձե Կ.Г., 1989) փորձերով անտառային մուգ-դարչնագույն կարրոնատային հողերում 21 տ/հա չափաբանակով ցեղլիտի օգտագործման ժամանակ զազարի և տարդեղի բերքն ավելացել է 41-42%-ով: Ցեղլիտի և հանքային պարարտանյութերի համատեղ կիրառումը եգիպտացորենի հատիկի բերքն ավելացրել է 54-59 գ/հա-ով՝ բարելավելով մարգագետնային-շագանակագույն հողերի ջրաֆիզիկական հատկությունները (Ելեսև Պ.Է. և դր., 1998):

Աշնանացան ցորենը պահանջկոտ է սննդատարրերի նկատմամբ, այդ իսկ պատճառով մեծ նշանակություն ունի պարարտացման համակարգի և սննդատարրերի չափաբաժինների ճիշտ ընտրությունը: Պարարտանյութերը նպաստում են աշնանացան ցորենի հաջող ձմեռմանը, հողային ռեժիմների բարելավմանը, արդյունավետ թվակալմանը, բերքատվության բարձրացմանը:

Համաձայն գիտական հետազոտությունների՝ 1 ց հատիկի կազմավորման համար աշնանացան ցորենը հողից վերցնում է N - 3.0-4.5 կգ, P2O5 - 0.9-1.3 կգ և K2O - 2.0-3.6 կգ, սակայն այդ տվյալները կարող են փոփոխվել՝ կախված հողակլիմայական պայմաններից, ագրոտեխնիկայից, սրտից և բերքատվության մակարդակից: 50-60 գ/հա հատիկի բերք կազմավորելու համար, կենսազանգվածի հաշվարկով, աշնանացան ցորենն օգտագործում է 160-250 կգ ազոտ, 50-70 կգ ֆոսֆոր և 120-200 կգ կալիում, այդ իսկ պատճառով պարարտացման չափաբաժինները հաշվարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել հողում եղած այդ տարրերի առկայությունը, ծրագրավորվող բերքի քանակությունը և այդ սննդային տարրերի օգտագործման գործակիցը (Մ.Հ.Գլստյան, 2007, գ):

Հայաստանում, ելնելով ուղղահայաց գոտիականության պայմաններից, կիրառվում են պարարտացման տարրեր համակարգեր և չափաբաժիններ:

Արարատյան հարթավայրի ոռոգելի մարգագետնային գորշ հողերից 50-55 գ/հա հատիկի և համապատասխան քանակությամբ ծղուտի բերք ստանալու նպատակով աշնանացան ցորենի հիմնական պարարտացման համար առաջարկվում է օգտագործել ազոտ՝ 90, ֆոսֆոր՝ 70-120, կալիում՝ 60-120 կգ/հա ազդող նյութի հաշվով, վաղ գարնանը սննուցման ձևով տալ 60 կգ/հա ազոտ, իսկ շարահերկ մշակարույսերից հետո մշակվող աշնանացան ցորենի ցամքերը պարարտացնել N120P60-90K30-60 չափաբաժնով, ընդ որում՝ ազոտի 60 կգ տալ գարնանը՝ սննուցման ձևով: Շագանակագույն և անջրդի սակավահումուս սևահողերում 20-25 գ/հա հատիկի բերք ստանալու համար առաջարկվում է N60P30-90K30-90 չափաբաժնը, որը տրվում է միանվագ՝ հողի հիմնական մշակման ժամանակ (Կ.Գ.Մելքոնյան և ուրիշներ, 2004):

Անտառային դարչնագույն, տափաստանացված անջրդի հողերից 30-35 գ/հա հատիկի բերք ստանալու համար առաջարկվում է N90-120P40-80K60-90 կգ/հա չափաբաժնով (Մ.Մ.Սիմոնյան, 1975, Ավագյան Ն.Հ., 1967):

Բազմաթիվ ուսումնասիրություններով ապացուցված է, որ մշա-

կաբույսերի թերքատվությունը մեծապես կախված է օրգանահանքային պարարտանյութերի օգտագործման չափաքանակներից, հղային հատկություններից, ինչպես նաև տվյալ գոտու բնակլիմայական պայմաններից, հողի մեխանիկական կազմից, սննդատարրերի պարունակությունից, կիրառվող ազդութեանիկայից (Հնկություն Վ.Ի., 1972):

Մի շաբթ հեղինակներ նշում են, որ ազդութական պարարտանյութերը նպաստում են հացահատիկային մշակաբույսերի թերքի առաջացմանը միայն 50%-ով, իսկ եղանակային պայմանները՝ վեգետացիայի ընթացքում՝ ևս 30%-ով, որ N60 չափաքանակով պարարտացման ժամանակ ստուգիչ նկատմամբ թերքը կարող է ավելանալ 5-8 g/հա-ով, իսկ N90-ի դեպքում արդյունավետությունը բարձրանում է միայն բավարար խոնավության պայմաններում (Կ.Գ. Մելքոնյան և ուրիշներ, 2004):

Հացահատիկային բույսերի մշակությունը, դրանց թերքատվության բարձրացումը, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ցանկացած երկրի համար ունի կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ հացահատիկի արտադրությամբ լուծվում են մի շաբթ հարցեր՝ ազգային անվտանգության, սննդամթերքի արտադրության, արդյունաբերական նշանակության և այլն: Նախկինում կատարված ուսումնասիրությունները L-74 Մարտունու շրջանի գորշ դարչնագույն և լեռնային շագանակագույն հողերում ցույց են տվել, որ հողատարման չենթարկած մասերում հողերը ազդուով՝ լավ, ֆոսֆորով ու կալիումով՝ միջին ապահովածության են. N- 9.1-9.2; P - 2.49-2.56 և K - 38.4-39 մգ/100գ, հումուսը կազմել է 2.3-2.6%, իսկ միջին հողատարված մասերում՝ 1.09-1.29%, N - 5.66-5.85, P - 1.7-2.0 և K - 22-23.5 մգ/100 գ հողում: Այդ պայմաններում աշխանացան ցորենը N30P60K100 կգ/հա չափաքանակով պարարտացման պայմաններում՝ ոչ հողատարված հատվածներում, տվել է 8.9-10.5% թերքի հավելում, իսկ միջին երողացված հողերում՝ 17.2-23.4% հավելում, միաժամանակ 100 կգ կալիումի կիրառման ժամանակ՝ K<sub>2</sub>SO<sub>4</sub>-ի ձևով, բարելավել են հատիկի որակական հատկությունները (տաճառական Յ.Զ., 1985):

Մեծ նշանակություն ունի դաշտապաշտպան անտառաշերտերի դերը. անտառաշերտով պաշտպանված դաշտերում գարնանացան ցորենի բերքը ավելացել է 21%-ով (Сабирзянов И.Г., 2003):

Հողում տեղի ունեցող էրոզիոն գործնարացները բացասարար են ազդում ինչպես մշակաբույսերի բերքատվության, այնպես էլ միկրոտարրերի՝ Zn, Mo, Cu, В քանակության վրա, ուստի վերջիններիս կուտակումը հողում նպաստում է աշնանացան ցորենի բերքի ավելացմանը, որը, սակայն, կախված է նրանից, թե ինչ տարրերի և պարտանյութերի հետ են օգտագործվում (Амирджанян Ж.А., 1990, 1993):

Բարձր չափաբաժիններով միկրոտարրերի օգտագործումը վճառակար ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա: Հայտնի է, որ ծանր մետաղները՝ Cu, Pb, Zn, Mo, Ni, Mn և այլն, կուտակվելով հողում, բացասարար են ազդում հողի ջրաֆիզիկական հատկությունների վրա, թուլացնում են կենսաբանական ակտիվությունը, ստեղծում անբարենպաստ պայմաններ մշակաբույսերի աճի ու զարգացման համար (Амирджанян Ж.А., Սնանյան С.А., 1991, Մինես Յ.Ղ., 1990, Щигранков А.С., 2008), դրանց բարձր խտությունները նվազեցնում են հողում տեղի ունեցող կենսաբանական գործնարացները, ազդում են ամոնիֆիկացման, նիտրիֆիկացման և ազտուի ֆիքսման ակտիվության վրա (Черных Н.А., Сидоренко С.Н., 2003):

Ծանր մետաղների կուտակումը հողում կախված է հողի մի շարք հատկություններից՝ օրինակ՝ մեխանիկական կազմից: Այսպես, ծանր կավային մեխանիկական կազմ ունեցող հողերում սովորաբար տիղմային ֆրակցիաների քանակությունը բարձր է լինում, իսկ ծանր մետաղների 80%-ը կուտակվում է նշված ֆրակցիաներում: Ծանր մետաղների կուտակումը կախված է նաև հումուսի քանակությունից, քանի որ նրանում կուտակվում է ծանր մետաղների ընդհանուր քանակի 15-60%-ը (Панин М.С., 1999), բացի այդ հողում առկա ծանր մետաղները կապվում են նաև կավային հանքատեսակների հետ (Եվդոկимова Г.А. և դր., 1984): Հողում պարունակվող ծանր մետաղների փոքր խտությունը նպաստում է ֆերմենտային ակտիվության բարձրացմանը, մինչդեռ դրանց բարձր խտությունը առաջանձնություն է պարունակության վեհականության համար (Евдокимова Г.А. և դր., 1984):

թյունը նվազեցնում է մի շաբք ֆերմենտների ակտիվությունը (Կисլիցինա Վ.Պ., 1967):

Ծանր մետաղների սորսիկ ազդեցության աստիճանը կախված է հողի տիպից և նրա մեջ պարունակվող հումուսի քանակությունից (ՔՐՈՒՏՌ'Վ Խ.Թ., 1989): Ծանր մետաղներով աղտոտված հողերի բարելավման, մշակաբույսերի բերքատվության բարձրացման համար օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (գռնադր, կենսահումուս) և բնական մելիորանտներ (Ավագյան Վ.Ս., 2004, Գալստյան Մ.Հ., 2007 ա, Խաչատրյան Հ. Է., 2009, Սահակյան Վ.Ա., Մանուկյան Հ.Մ., 2008, Կազարյան Ս.Կ., Սահակյան Վ.Ա., 2010):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կենսահումուսը պարունակում է 40-60% չոր օրգանական նյութեր, 10-12% հումուս, 2-3% ընդիհանուր ազոտ, 2.6-3.0% ֆոսֆոր, 2.7-3.0% կալիում: Դաշտային փորձերով պարզվել է, որ բնական մելիորանտների (ցեղլիտների, լացիտային սուլֆի) օգտագործմամբ հնարավոր է նվազեցնել սորսիկ իոնների (ծանր մետաղների) ներթափանցումը դեպի բույսերի գեներատիվ օրգանները (Այրառելյան Յ.Մ. և դր., 2008):

Անցած դարի 90-ական թթ. սկզբներին ԼՂՀ-ում հողի սեփականաշնորհումից հետո գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների տարածքների մասնատվածության պայմաններում երկրագործության համակարգի անկանոն վարումը, ցանքաշրջանառությունների անտեսումը, բազմամյա խոտարույսերի ցանքերի խիստ կրծատումը կամ նույնիսկ բացակայությունը, օրգանական և հանքային պարարտանյութերի միակողմանի և սահմանափակ օգտագործումը, հողում անհրաժեշտ խոնավության կուտակման անբավարար միջոցառումները առաջ են բերում հողերի դեգրադացում՝ բերրիության և մշակաբույսերի բերքատվության անկում:

Բույսերի անհերթափոխ մշակությունը նպաստում է դրանց մասնագիտացված հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի զարգացմանը, ինչը բացասական ազդեցություն է բողնում մշակաբույսերի բերքի քանակի և որակի վրա: Բույսերի մշակության ճիշտ հաջորդականությունը, ցանքաշրջանառության սանիտարական դերը զգալիորեն կանխում են դաշտերում վնասակար օրգանիզմների

գարգացումն ու դրանց վճասակարության տարաբնույթ դրսևորումները և նպաստում թերքի պահպանմանը:

Հողերը ենթարկվում են նաև տեխնածին աղտոտման, ինչը հիմնականում պայմանավորված է ավտոտրանսպորտի տարբեր արտանետումներով: Վերջիններս որոշակի բացասական ազդեցություն են թողնում ավտոմայրուղու հարակից հողատարածքների բերրիության և մշակաբույսերի բերքատվության վրա: Ներկայումս խիստ կարևորվում է մայրուղիների երկայնությամբ աղտոտված հողատարածքների վնասակարության արդի վիճակի բացահայտումը, հողերում ու բույսերում ծանր մետաղների կուտակման աստիճանը՝ կախված մայրուղուց ունեցած տարբեր հեռավորություններից: Համանման հետազոտություններ են կատարել Ս.Ա.Հունամյանը (Սնանյան C.A. (2009)), Մ.Մ.Մարկոսյանը (2010), որոնք առաջարկել են համապատասխան միջոցառումներով նվազեցնել տեխնածին աղտոտումը և ստանալ էկոլոգիապես անվտանգ սննդամբերը:

Այսպիսով, բերված գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հողերի բերրիության և մշակաբույսերի բերքատվության վրա ազդում են մի շարք գործոններ, որոնց ուսումնասիրությունն անհրաժեշտ պայման է հողերի ազդարարադրական հատկությունների լավացման համար և որոնք հիմք են հանդիսանում հողերի բարելավման համալիր միջոցառումների մշակման համար, ինչը ԼՂՀ պայմաններում մինչև այժմ կատարվել է մասնակիորեն:

Այդ բացը մենագրության մեջ ներկայացված է լիարժեք և խորը ուսումնասիրությունների արդյունքներով:

## **ԳԼՈՒԽ 2**

### **ԼՂՀ ԲՆԱԿԼԻՄԱՅՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՀՈՂԱԳՈՅԱՅՄԱՆ ԱՌԱՋԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԼՂՀ-ն տիպիկ լեռնային երկիր է, որն ընկած է Փոքր Կովկասի բարձրավանդակի հարավ-արևելյան մասում և գրաղեցնում է 1145.8 կմ<sup>2</sup> տարածություն: Հանրապետության հյուսիսային մասով անցնում է Մոռվի լեռնաշղթան՝ մի քանի զիսավոր լեռնագագարներով, որոնք ունեն 3343-3740 մ բարձրություն, իսկ արևմտյան հատվածով՝ Ղարաբաղի լեռնաշղթան (2828 մ), որի արևելյան ճյուղավորության ստորոտում փոփոխ են՝ Ղարաբաղի և Միլիի հարթավայրերը, Մեծ Քիրսը (2725) և Չիարաքը (2480 մ):

Ասկերանի շրջանը, որը գրաղեցնում է 119.28 հազար հեկտար տարածություն, ընկած է հանրապետության լեռնային հատվածում: Շրջանը սահմանակից է հյուսիսից՝ Մարտակերտի, հարավից՝ Հաղբութի, արևելքից՝ Մարտունու, արևմուտքից՝ Շուշիի շրջաններին:

Շրջանի տարածքը կտրտված է խոր ձորերով, գետերի ու գետակների, ինչպես նաև հնագարյան էրոզիոն գոյացումների հուներով: Ծովի մակերևույթից ունեցած բացարձակ բարձրությունների մեծ տարբերությունները (200-3729 մ) առաջ են բերել հողագոյացման պայմանների՝ կլիմայի, ռեկիտֆի, բուսական ծածկոցի, կենդանական աշխարհի, հողառաջացնող մայրատեսակների փոփոխություններ, և դրանց խիստ բազմազանությունը պայմանավորում է հողերի աշխարհագրական տեղաբաշխման ուղղաձիգ գոտիականությունը:

Որպեսզի ճիշտ պատկերացում կազմվի Ասկերանի շրջանի հողերի, մասնավորապես՝ վարելահողերի և արոտավայրերի ազրուարտարական հիմնական հատկությունների մասին, ստորև տրվում են այն պայմանները, որոնց փոխադարձ ներգործությամբ ձևավորվել են շրջանի հողերը, ինչով և պայմանավորված է դրանց հողագոյացման առանձնահատկությունները:

**ԿԼԻՄԱ.** ԼՂՀ, այդ թվում և Ասկերանի շրջանի կլիման չափավոր ցամաքային է: Սեծ Կովկասի հյուսիսային և հյուսիս-արևելյան լանջերի համեմատությամբ այն ավելի չորային է: Հանրապետության կլիմայի վրա ազդում են արևելքից և արևմուտքից ներթափանցող ցուրտ, իսկ հյուսիսից՝ տրոպիկական տաք օդային զանգվածները: Որոշակի ազդեցություն ունեն նաև տեղական քամիների հոսանքները:

Բազմամյա տարեկան միջին ջերմությունը  $+10\text{-}11^{\circ}\text{C}$  է, բացարձակ նվազագույնը նկատվում է հունվարին և հասնում է  $-15\text{-}20^{\circ}\text{C}$ -ի, առավելագույնը՝ հուլիսին ( $+37^{\circ}\text{C}$ ): Զմեռը բավականին մեղմ է: Ոչ սառնամանիքային օրերը լինում են ապրիլի սկզբներից մինչև նոյեմբերի երկրորդ կեսերը: Վաղ աշնանային ցրտահարություններ հանրապետությունում քիչ են նկատվում, իսկ ուշ գարնանայինները (ապրիլի երկրորդ կեսերին) հաճախակի են լինում, ինչը բացասական է ազդում, հատկապես պտղատուների վրա: Ոչ սառնամանիքային օրերի թիվը կազմում է սովորաբար  $187\text{-}198$  օր: Գարնան վերջին ցրտահարությունները նկատվում են ապրիլի երրորդ տասնօրյակում, իսկ աշնանը՝ նոյեմբերի երկրորդ տասնօրյակում: Մարտի երրորդ տասնօրյակից սկսվում և մինչև ապրիլի կեսեր է տևում տեղումների շրջանը, որի պատճառով հաճախ ձգձգվում են հողի նախացանքային մշակումն ու ցանքը:

Հանրապետությունում, ինչպես և Ասկերանի շրջանում, շատ են տաք օրերը, որոնք բարերար ազդեցություն են ունենում հողագոյացման գործընթացների և գյուղատնտեսական մշակարույսների զարգացման վրա: Տարեկան միջին տեղումների քանակը Ասկերանի շրջանում 535 մմ է, ըստ որում՝ տեղումների ընդհանուր քանակի 38.3%-ը բավարում է գարնանը, 30.8%-ը՝ ամռանը, 20.6%-ը՝ աշնանը և 10.3%-ը՝ ձմռանը (աղյուսակ 2.1):

**ԼՂՀ կլիմայական պայմանները բնութագրող որոշ ցուցանիշներ  
(Ստեփանակերտի օդերևույթաբանական կայան)**

Ցուցանիշը	Ըստ ամիսների												Միջին տարե- կանը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Միջին ամսական տեղումների քանակը, մմ	18	21	37	65	103	91	42	32	40	42	28	16	535
Օդի ֆիզիկական չերմոքյունը, °C	-0.2	0.9	4.3	9.6	14.8	18.8	22.4	22.2	17.4	12.3	6.1	1.9	10.9
Միջին ամսական հարաբերական խոնավոքյունը, %	70	72	75	72	73	65	56	55	75	68	76	71	69
Միջին ամսական ջերմոքյունը հողի մակերեսին, °C	-1	1	6	12	18	22	26	27	14	20	6	0	13

Ամենաառատ տեղումները լինում են մայիսի սկզբից մինչև հունիսի կեսերը (մայիս - 103 մմ, հունիս - 91 մմ), իսկ հուլիս-օգոստոս ամիսներին տեղումների քանակը սակավ է: Մայիս-հունիս ամիսներին տեղումները հաճախ ենթերային բնույթ են կրում, ինչը մեծ բերություններում (հատկապես վարելահողերում) առաջ է բերում մակերեսային հոսքերի ձևավորում և հողատարում:

Զերծությունն ու խոնավությունը համարվում են հիմնական կլիմայական գործոններ, որոնք որոշում են ոչ միայն գյուղատնտեսական մշակաբույսերի աճի ու զարգացման պայմանները, այև հողագոյացման առանձնահատկությունները (Բ.Մ.Մնացականյան, 2005):

Հանրապետության տարածքում հաճախակի են կրկնվում երաշտն ու խորշակները, որոնք բացասաբար են անդրադառնում մշակաբույսերի բերքատվության վրա: ԼՂՀ կլիմային բնորոշ է ուշ գարնանային ու վաղ ամառային երաշտը: Խոնավության պակասը նկատվում է ամառվա առաջին կեսերին, այսինքն՝ գյուղատնտեսա-

կան մշակաբույսերի առավել ինտենսիվ աճի ժամանակաշրջանում:

Զյունը տեղում է սովորաբար դեկտեմբերի սկզբներից մինչև մարտ ամիսը: Զնածածկը կայուն չէ. հաստ ձնաշերտ, հատկապես լանջերում ու քամուց չպաշտպանված զանգվածային դաշտերում, հազվադեպ է առաջանում: Զնոան ընթացքում եղանակի պարբերաբար տարացումը առաջ է բերում ձնիալ, որի պատճառով զարնան ձնիալի ժամանակ մակերեսային ուժեղ հոսանքներ չեն առաջանում, և ձնիալի ջրերից առաջ եկող էրողիան առանձնապես ուժեղ չի արտահայտվում:

**ԼՂՀ-ում և հատկապես Ասկերանի շրջանում հաճախակի կրկնվող կարկտահարությունը մեծ վնաս է հասցնում զյուղատնտեսությանը:**

Շրջանում գերակշռում են տեղական բույլ քամիները, որոնք ներթափանցում են Կովկասյան լեռնաշղթայի կողմից. ձմռանը վիշտ են հարավից-արևմուտք, ամռանը՝ հյուսիսից-արևմուտք: Այս հանգամանքն է հաշվի առնվում պաշտպանական անտառաշերտերի նախագծման ժամանակ: Միատեմմատիկ գործող քամիները և հաճախակի առաջացող հողի չորությունն իրենց անմիջական ներգործությունն են ունենում հողակազմող գործնթացների վրա: Տաք շրջանի բավական երկար տևողությունն ու հողում չափավոր քանակի խոնավության առկայությունը առաջ են բերում օրգանական նյութերի ակտիվ հանքայնացում և հողում համեմատաբար նվազ քանակի հումուսի կուտակում: Պատահական չէ, որ շրջանի հողերում, նույնիսկ ստվերահայաց լանջերում, հոմուսի մեծ պաշարներ չեն կուտակվում (Բ.Ա.Սնացականյան ու ուրիշներ, 2005):

**ՀՈՂԱՊ-ԱԶԱՅՆՈՂ ՄԱՅՐԱՏԵՍԱԿՆԵՐ.** Ասկերանի շրջանի տարածքում հողագոյացման վրա որոշակի ազդեցություն ունեն հողառաջացնող մայրատեսակները, դրանց յուրահատուկ քնույթը: Շրջանի տարածքի սահմաններում գերակշռում են վերին կավային նստվածքները, որոնք ծածկված են կավի շերտերով:

Վերին երրորդական շրջանի նստվածքային գոյացումներին են դասվում կավավազները ու գետահովտադարավանդների գլաքարերը, ինչպես նաև ալյուվիալ խճաքարերով հարուստ կավավազները:

Բացի նշված մայրատեսակներից, Ասկերանի շրջանում մեծ տարածում ունեն նաև դելյուվիալ ու ալյուվիալ կուտակումները: Դելյուվիալ նստվածքները ներկայացնում են լոսաննան կավավագներ, կրաքարերի բեկորներ և կավեր, որոնք չուրջ 30 մ հաստությամբ ծածկում են արմատական մայր ապարները: Ալյուվիալ կուտակումները ներկայացնում են գետերի կազմաբանական տարրեր բաղադրություն ունեցող բերվածքներ (Բ.Մ.Մնացականյան և ուրիշներ, 2005):

Մեծ թեքության հատկապես զարիքափ լանջերում որտեղ էրոզիոն գործընթացներն ինտենսիվ են ընթանում, նկատվում են մայրատեսակների մերկացած ելքեր, որոնք կազմված են պորֆիրիտներից, դացիտներից, ինչպես նաև կրաքարերից ու դրանց հողմահարված նյութերից:

Կարկառ գետի ստորին հոսանքի ափերին տարածված են նաև ալյուվիալ բերվածքները, որոնք հարուստ են թեկորային նյութերով: Հիմնականում փոխսր ու հաստ շերտով տարածվող մայրատեսակները որոշակի դրական ազդեցություն ունեն հողագոյացման, հետևապես և հողի հատկությունների ձևավորման վրա: Տարածաշրջանի մայրատեսակների ազդեցությունը հողագոյացման վրա արտահայտվում է երկու տեսակետից՝

ա) կարբոնատներով հարուստ մայրատեսակների վրա առաջացած հողերը նույնականացնում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ սկսած հողի վերին շերտերից (Ա հորիզոնից),

բ) փոխսր ու հաստ շերտերով մայրատեսակների վրա առաջացած հողերում բույսերի արմատները խորն են տարածվում և արդյունքում հումուսի նշանակալից պաշարներ են կուտակվում նաև նրա խորը շերտերում (Բ.Մ.Մնացականյան և ուրիշներ, 2005): Բացի դրանից նման փոխսր ու հզոր շերտով մայրական տեսակները որոշակիորեն ազդում են էրոզիոն գործընթացների վրա: Հողաշերտից ներքև ընկած փոխսր ու ջրաբափանց մայրատեսակների առկայությունը դրական է ազդում մքնուրութային տեղումների ներծման վրա, որի հետևանքով նույնիսկ շատ թե՛ք թե՛ք լանջերում մակերեսային ուժեղ հոսքեր չեն առաջանում, և էրոզիոն գործընթացնե-

թը թույլ են ընթանում:

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ նույն թերության լանջերում ջրային էրոզիան ավելի ուժեղ է արտահայտվել կարծր մայրատեսակների վրա ձևավորված սակավ հզորություն ունեցող հողերում (Բ.Մ.Մնացականյան և ուրիշներ):

Հայաստանի տարածքում Է.Մ.Հայրապետյանի կողմից (1968թ., 1976թ., 1979թ.) կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ հզոր ու փոխսր մայրատեսակների վրա առաջացած հողատարածություններում սխալ հողօգտագործման դեպքում ձորակային էրոզիան մեծ տարածում ունի ինչը չի դիտարկվում ԼՂՀ Ասկերանի շրջանում, որտեղ փոխսր ու հզոր մայրատեսակների վրա առաջացած հողերում ձորակային էրոզիան զարգացած չէ:

**ԶՐԱԲԱՆԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ** ԼՂՀ, այդ թվում և Ասկերանի շրջանում գետային ցանցը հզոր չէ, սակայն խիստ է: Այստեղ բոլոր գետերը դասվում են տիպիկ լեռնային գետերի շարքին: Շրջանի տարածքով հոսում են Կարկառ, Մեղրագետ, Խնածախ, Պատարա, Խաչեն, Վարանդա և այլ գետեր, որոնց ջրերը հուների և տեղի անմատչելի լինելու պատճառով ոռոգման և այլ նպատակների համար քիչ օգտագործելի են:

Հոսելով խոր հուներով՝ ջրերը կողային ֆիլտրացիայով շրջակա հողերի խոնավացմանը չեն նպաստում և առանձնակի ներգործություն չունեն հողագոյացման գործընթացների վրա:

Ասկերանի շրջանը ջրային ռեսուրսներով հարուստ չէ: Շրջանի, որի տարածքը 106.3 հազար հեկտար է, ջրային ռեսուրսները կազմում են 160 մլն մ<sup>3</sup>: Մեկ մարդուն մեկ տարում բաժին է ընկնում 7.7 հազար մ<sup>3</sup> ջուր: Ենթարտեզյան հորանցքների թիվը 20-ից ավել չէ (176 լ/վրկ կամ 0.73 մլն մ<sup>3</sup>/տարի):

Շրջանում ոռոգման աղբյուրներ են համարվում Կարկառ (1.87 մլն մ<sup>3</sup>), Պատարա (7.2 մլն մ<sup>3</sup>) գետերը, աղբյուրների (0.96 մլն մ<sup>3</sup>) և ենթարտեզյան հորանցքների ջրերը (0.73 մլն մ<sup>3</sup>):

Ասկերանի շրջանում ոռոգվող հողերը կազմում են 3456 հեկտար կամ մշակովի հողերի 22.45%-ը, իսկ եթե հաշվի առնվեն նաև 6286 հեկտար լրված հողերը, ապա այդ ցուցանիշը կլինի 15.94%:

Ոռոգվող հողատարածություններն ընդարձակելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ. Պատարա և Տրակետ գետերի վրա կառուցել ջրամբարներ՝ շուրջ 20 մետր մէջ օգտակար ծավալով, ինչը հնարավորություն կտա ոռոգովի հողերի տարածությունն ընդարձակել շուրջ 2.8 հազար հեկտարով: Շատ կարևոր է ոռոգման համակարգի լրիվ վերականգնումը, որը պատերազմական գործողությունների հետևանքով շարքից դուրս է եկել:

**ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.**Գենետիկական հողագիտության հիմնադիրները (Դոկյաչև Վ.Վ., 1936, Վալյամս Վ.Ր., 1949, Կովդա Վ.Ա., 1973, ա.ծ և ուրիշներ) բուսական և կենդանական օրգանիզմները, այսինքն՝ կենսաբանական գործոնը, համարում են հողագոյացման առաջատար գործոն: ԼՂՀ (այդ թվում Ասկերանի շրջանի) հողերի ձևավորման վրա մեծ ներգործություն ունի հարուստ ու խայտարդետ բուսածածկը: Ամբողջ Կովկասում հանդիպող 8 հազար տեսակ բույսերից ԼՂՀ-ում հանդիպում են 200-ը (Բ.Մ.Մնացականյան և ուրիշներ, 2005):

Անտառներն ու թփուտներն Ասկերանի շրջանում գրաղեցնում են ընդհանուր տարածքի 55.7%: Գլխավոր ծառատեսակներն են՝ կաղնին, հաճարենին, լորենին, հացենին, բոխին: Անտառում աճում են շատ պտղատու ծառեր ու ծառարփատեսակներ՝ տանձենի, խնձորենի, հոնի, շլորի, սզնի, զկրենի և այլն:

ԼՂՀ խիստ կտրտված լեռնային ռելիեֆի պայմաններում բացառիկ մեծ է անտառների ու թփուտների հողապահապան, ջրակարգավորիչ նշանակությունը: Կիմայի վրա մեծ ազդեցություն է բողնում անտառապատվածությունը, որն իր հերթին ազդում է հողագոյացման վրա (Բ.Մ.Մնացականյան և ուրիշներ, 2005):

Ասկերանի շրջանում, ինչպես և ԼՂՀ լեռնաանտառային գոտու մնացած տարածքներում, նախկինում՝ մինչև անտառների դեգրադացումն ու դրանց տափաստանացումը, հողագոյացումն ընթացել է ծառաբուսային բուսական ֆորմացիայի տակ, իսկ համեմատաբար բավարար խոնավագվածության պայմաններում, հետագայում անտառների աստիճանական դեգրադացմանը զուգընթաց՝ ծառախոտարուսային բուսական ֆորմացիայի տակ, ավելի ուշ՝ դեգրա-

դացված տարածությունների տափաստանացման հետևանքով՝ խոտարուսային բուսական ֆորմացիայի տակ:

Լեռնասանտառային գոտու տափաստանացված տարածքներում հողագոյացումն ընթացել է համեմատաբար չորային պայմաններում, ինչի պատճառով օրգանական նյութերի պաշարների նվազմանը մեծապես նպաստել է նաև հողերի սխատեմատիկ մշակումը (Բ.Մ.Մնացականյան և ուրիշներ, 2005):

Տափաստանացված տարածություններում գերակշռում են հացազգի տարախոտային բուսական խմբավորումները, որոնց հիմնական ներկայացուցիչներն են՝ ողմախոտը (*Dactylis glomerata*), սուլացող սեզը (*Agropyrum repens*), հազարատերևուկը, կարճառտիկը, շյուղախոտը, ուրցը, ճամկխոտը, անմեռուկը, միտնյակը, ավազային կորնգանը, իշառվույտը և այլ բուսատեսակներ (Բ.Մ.Մնացականյան և ուրիշներ, 2005):

**ՀՈՂԵՐԸ.** Սմիրնով-Լողինովը, դեռևս 1926թ. ուսումնասիրելով *L. Tz* հողերը՝ ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունների, հանրապետության տարածքում առանձնացրել է հետևյալ հողատիպերը.

1. 300-600 մ վրա՝ գորշ կավավազային՝ 2% հումուսի և 0.5% CO<sub>2</sub>-ի պարունակությամբ:

2. 700-800 մ վրա՝ շագանակագույն կավավագներ՝ 3% հումուսի և 3% CO<sub>2</sub>-ի պարունակությամբ:

3. 900-1000 մ վրա՝ լեռնային սևահողեր՝ 4% հումուսի և 1% CO<sub>2</sub>-ի պարունակությամբ:

4. 1100-1700 մ վրա՝ անտառային հողեր (մոխրագույն և դարչնագույն), ինչպես նաև հումուսակարբոնատային հողեր՝ 3-5% հումուսի պարունակությամբ:

5. 1700 մ-ից բարձր տարածություններում՝ լեռնամարգագետնային հողեր:

Ավելի քան 90 տարի առաջ կատարված այս ուսումնասիրությունները բավարար չեն և չեն կարող հիմք ծառայել հողերի արտադրողականության բարձրացման ուղղությամբ որևէ գործնական միջոցառումներ մշակելու համար: Սակայն ապացուցվում է այն

փաստը, որ ԼՂՀ տարածքում առաջացած հողերը հումուսով հիմնականում թույլ կամ միջին ապահովածության են, հարուստ են կարբոնատներով:

1950-1960թթ. ԼՂԻՄ նախկին Ստեփանակերտի (ներկայումս Ասկերանի) շրջանում հողի էրոզիայի դեմ պայքարի ազրոտեխնիկական միջոցառումների և էրոզացված հողերում հանքային պարարտանյութերի արդյունավետությունը պարզելու ուղղությամբ աշխատանքներ են տարվել Վ.Վ.Սիշինկինայի կողմից (1952, 1961): Այդ ուսումնասիրությունների նյութերի աճփոփման հիման վրա հեղինակը առաջարկել է էրոզացված հողերում հանքային պարարտանյութերի կիրառման չափաքանակներ:

Աղբբեցամի գիտությունների ակադեմիայի կողմից (Ալեքսերով Ք.Ս., 1957, 1979) նախկին ԼՂԻՄ տարածքի հողաէրոզիոն ուսումնասիրությունների նյութերի հիման վրա կազմվել է հողաէրոզիոն և հողերի պահպանության 1:600000 մասշտաբի քարտեզ: Այդ քարտեզագրական նյութերը միայն ընդհանուր պատկերացում են տալիս տարածաշրջանում ձևավորված հիմնական հողատիպերի և դրանց էրոզացվածության մասին:

Ք.Ս.Ալեքսերովը նախկին ԼՂԻՄ տարածքում աճացատել է հետևյալ հողատիպերը. ա) լեռնային մնխրադարչնագույն, թ) լեռնաանտառային դարչնագույն (տիպիկ, կարբոնատային, կրագերծված), գ) լեռնաանտառային դարչնագույն, հետանտառային (տեղտեղ կրագերծված), դ) լեռնաանտառային գորշ, ե) լեռնային գորշ մարգագետնացված, զ) լեռնային սևահողեր (կարբոնատային և կրագերծված) և թ) լեռնամարգագետնային սևահողանման:

Քարտեզագրական նյութերում ընդհանուր գծերով տրվում է հողերի պահպանման միջոցառումների համակարգը:

Ավելի ուշ, այդ տարածքում հողաէրոզիոն ուսումնասիրություններ են կատարվել Գ.Կ.Հասանովի կողմից (1972), որոնց արդյունքում կազմվել է 1:100000 մասշտաբի հողաէրոզիոն քարտեզ և անջատվել են հետևյալ հողատիպերը.

1. Լեռնամարգագետնային գոտում՝ ա) լեռնամարգագետնային-ձմային, թ) լեռնային դարչնագույն մարգագետնացված, զ) լեռնային

մարզագետնատափաստանային:

2. Լեռնաանտառային գոտում՝ ա) լեռնաանտառային դարչնագույն կրագերծված, թ) լեռնաանտառային դարչնագույն կարքոնատային, զ) լեռնային դարչնագույն տափաստանացված:

3. Թփուտների տարածման գոտում՝ լեռնային մոխրադարչնագույն:

4. Տափաստանային ու կիսաանապատային գոտիներում՝ ա) լեռնային մուգ շագանակագույն, թ) լեռնային շագանակագույն, զ) շագանակագույն ոռոգելի և դ) բաց շագանակագույն հողեր:

5. Գետահովիտներում՝ գետահովտամարզագետնային հողեր:

Քանի որ այդ հողերն առաջմ բնութագրված են շատ ընդհանուր, իսկ աճախտիկական տվյալները գրեթե բացակայում են, ուստի անշատված հողատիպերի ազրուարտադրական հատկությունների մասին այդ նյութերով հստակ պատկերացում կազմելը դժվար է:

Գ.Կ.Հասանովը հողերի դասակարգման հարցում իհմք է ընդունել տվյալ ժամանակաշրջանում ընդունված հողերի դասակարգման սկզբունքները: Սակայն ակնհայտ է, որ անտառատափաստանային գոտում կարող են ձևավորվել ոչ թե տափաստանացված հողեր, այլ լեռնաանտառային դարչնագույն և գորշ տափաստանացված հողեր, չնայած այդ երկու հողատիպերն իրենց մի շարք հատկություններով մոտ են:

Տեղին է նշել, որ շագանակագույն հողերը սովորաբար ձևավորվում են ավելի չորային պայմաններում՝ տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ:

ԼՂՀ-ում հողակադաստրային աշխատանքների ուղղությամբ խոշոր մասշտաբի հողագիտական ուսումնասիրություններ են տարվել Հայպետհողիննախագիծ ինստիտուտի կողմից (1994-1997թթ): Այդ ուսումնասիրությունների իհման վրա գյուղատնտեսական հողատեսքերը բաժանվել են կարգերի և իհմք պետք է ծառայեն հողային հարաբերությունների կարգավորման հետ կապված մի շարք հարցերի լուծման համար: Կատարված հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվել և տրվել են հանրապետության, այդ թվում նաև Ասկերանի շրջանի վարելահողերի և արոտավայրերի արդի

վիճակը, դրանց պահպանման ու բերրիության բարձրացման հիմնական ուղիները, և հողերի ծագումնաբանական հարցեր պարզելու նպատակ չեն հետապնդել: Տվյալ հանգամանքը հաշվի առնելով նպատակահարմար չի համարվել քննադատական վերլուծություն կատարել տարածաշրջանի հողերի դասակարգման հարցի վերաբերյալ:

### **Հետազոտությունների օրյեկտ և մերուժները**

Դաշտային և լաբորատոր հետազոտությունները տարվել են 1993-2011թթ.՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի վարելահողերում և արոտավայրերում:

Սկզբնական շրջանում դաշտային հետազոտություններ կատարվել են 1993-1997թթ., որոնց հիման վրա շրջանի վարելահողերը խմբավորվել են երեք հողաէրողիոն շրջանների մեջ. ա) հարք տարածքների վարելահողեր (5753.1 հա), բ) արևահայաց լանջերի վարելահողեր (3722.71 հա), գ) ստվերահայաց լանջերի վարելահողեր (12114.2 հա): Յուրաքանչյուր հողաէրողիոն շրջանի վարելահողերն՝ ըստ տարածման, բաժանվել են առանձին զանգվածների և հողատիպերի: Լաբորատոր ուսումնասիրությունները կատարվել են երեք հողաէրողիոն շրջաններում, որտեղ տրվել են վարելահողերի էրողացման աստիճանը, ազրուարտադրական հատկությունները և դրանց բարելավման միջոցառումները: Նույն ժամանակաշրջանում դաշտային պայմաններում ուսումնասիրվել է անտառաքիուտային պաշտպանական շերտերի դերը հողի բերրիության պահպանման գործում: Այդ նպատակով Այգեստան և Խնապատ համայնքների տարածքներում՝ անտառաքիուտներով պաշտպանված և չպաշտպանված վարելահողերում, անջատվել են երկուական հողահանդակներ, որտեղ վարելահողերից վերև՝ լանջերի ջրբաժանային և ենթաջրբաժանային տարածքներում՝ 60-70մ լայնությամբ անտառաքիուտային շերտերի առկայության պայմաններում, դրվել են հողափոսեր և ուսումնասիրել վերցված հողանմուշների ազրուարտադրական հատկությունները: Դաշտային և հետազա լաբորատոր ուսումնասիրությունների միջոցով բացահայտվել է անտառաքիուտների դրական ազդեցությունը հողառաջացման գործընթացի և հողի

թերթուրյան պահպանման գործում:

Հաջորդող ուսումնասիրություններով (մի շարք համայնքներում) որոշվել է դաշտապաշտպան անտառաշերտերի ազդեցությունը հողում խոնավության պահպանման ու անտառաթփուտային շերտերի ազդեցությունը հողի խոնավության վրա՝ 0-80 սմ շերտում և մշակաբույսերի թերքատփության վրա՝ դաշտերի տարրեր դիրքադրության ու թեքության պայմաններում (1997-2000թ.):

Մշակվել և արվել է Ասկերանի շրջանի հողատիպերի բռնիտման սանդղակը 2008-2010թթ. դրությամբ՝ օգտագործելով հանրապետությունում իրականացված նախորդ ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի վետական կոմիտեի «Հողինախագիծ» ՓԲԸ հողերի գնահատման բաժնի կողմից 2002թ. մշակված մեթոդիկան: Ըստ այդմ՝ բռնիտման բալերը կազմել են՝ անտառային գորշ հողերինը՝ 50 քալ, անտառային դարչնագույն հողերինը՝ 60 քալ, շագանակագույն հողերինը՝ 65 քալ և մոխրագույն հողերինը՝ 42 քալ: Դաշտային պայմաններում (2005-2008թթ. ընթացքում) փորձերով ուսումնասիրվել են հողի խոնավության դիմանկան՝ ըստ առանձին տարիների և աշնանացան ցորենի զարգացման փուլերի, ուսումնակագույն հողերում՝ անջրդի պայմաններում, որին անջրդի պայմանների նկատմամբ բարձր է 2.5-3.0 անգամ:

Դաշտային պայմաններում ուսումնասիրություններ են կատարվել աշնանացան ցորենի տակ օգտագործվող պարարտանյութերի արդյունավետությունը որոշելու նպատակով: Փորձերը դրվել են ինչպես անտառային դարչնագույն տափաստանացված հողերում, այնպես էլ շագանակագույն հողերում՝ անջրդի պայմաններում, տարրեր դիրքադրության և թեքության վարելահողերում:

Սիաժամանակ հետազոտվել են Ասկերանի շրջանի վարելահողերի հիմնական հատկությունները՝ ֆիզիկական, քիմիական, ֆիզիկաքիմիական, ագրոքիմիական և ծանր մետաղներով աղտոտվածության աստիճանը: Այդ նպատակով ընտրվել են 11 համայնքներ, դրվել է 13 հողային կտրվածք, հողանմուշները վերցվել են ըստ գենետիկական հորիզոնների: Լաբորատոր պայմաններում որոշվել են

հողանմուշների քիմիական կազմը, pH-ը, փոխանակային կատիոնները (Ca, Mg, Na, K), կարբոնատները ( $\text{CaCO}_3$ ,  $\text{MgCO}_3$ ), մեխանիկական կազմը, հումուսը, մատչելի սննդատարերը (N, P, K), ծանր մետաղները (Cu, Zn, Pb, Cd, Mo, Mn):

Ստացված տվյալների վերլուծության հիման վրա շրջանի վարելահողերը խմբավորվել են երեք ագրոարտադրական խմբերի, տրվել են դրանց բնորոշ հիմնական հատկությունները և յուրաքանչյուր ագրոարտադրական խմբի համար առաջարկվել են բարելավման միջոցառումներ: Ծրջանի արտօտավայրերի ագրոարտադրական հատկությունների ուսումնասիրման համար շրջկենտրոնին մերձակա 3 համայնքներում հողափոսները դրվել են հիմնականում շագանակագույն հողերի տարածման սահմաններում: Դրվել է 7 հողափոս, հողանմուշները վերցվել են ըստ գենետիկական հորիզոնների:

2010թ. ուսումնասիրվել են Վարանդա և Կարկառ գետերի ջրավազանների հողերի ագրոարտադրական հատկությունները՝ կախված ավտոմայրուղուց ունեցած հեռավորություններից: Հողափոսները դրվել են Ստեփանակերտ-Մարտակերտ մայրուղուց (Իվանյան համայնքի տարածքում) և Ստեփանակերտ-Մարտունի մայրուղու շրջակայրից (Խաչմաշ համայնքի տարածքում՝ 25մ, 50մ, 100մ, 250մ, 500մ և 2000 մ (ստուգի) հեռավորության վրա, հողանմուշները վերցվել են 0-25 սմ շերտից: Հողանմուշներում որոշվել են ֆիզիկաքիմիական, քիմիական, ագրոքիմիական հատկությունները և ծանր մետաղների քանակությունը:

Ուսումնասիրվել է հողում խոնավության կուտակումը՝ կախված նրա մշակման եղանակից (2009-2014թ.): Պարզվել է հարթահատիշաճեղքավոր մշակման եղանակի արդյունավետությունը սովորական վարի նկատմամբ, որի դեպքում հողում կուտակվում է համեմատաբար շատ խոնավություն և դրա շնորհիվ աշնանացան ցորենի հավելյալ բերքը կազմել է 6.8 g/hա:

Հետազոտվող հողերի հիմնական ագրոարդյունաբերական հատկությունները որոշվել են լաբորատոր պայմաններում հետևյալ մեթոդներով. մեխանիկական և միկրոագրեգատային կազմը՝ ըստ Ն.Ա.Կաշինսկու (1958), աղային կազմը՝ ըստ Ե.Վ.Արինուշկինայի

(1970), կալցիումի և մագնեզիումի կարբոնատներն՝ ըստ Ս.Ա.Կուդրինի (1939), pH-ը՝ էլեկտրապոտենցիոնետրիկ եղանակով, կլանված նատրիումը և կալիումը՝ քացախարբվային ամոնիումով՝ ըստ Հ.Տ.Անանյանի և Կ.Գ.Ղուկասյանի (1968), փոխանակային կալցիումը և մագնեզիումը՝ ըստ Ա.Ն.Բաղրամյանի և ուրիշների (1979), հումուսը՝ ըստ Ի.Վ.Տյուրինի, շարժուն ազոտը՝ ըստ Տյուրին-Կոնոնվայի, շարժուն ֆոսֆորը՝ ըստ Բ.Պ.Մաշիգինի, շարժուն կալիումը՝ ըստ Ա.Լ.Մավովայի (Ե.Վ.Արինուշկինա, 1970թ.), ծանր մետաղները՝ ատոմաաքտորքինն սպեկտրալ մեթոդներով:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքների ամփոփման հիման վրա տրվել է 1997-2010թթ. ընթացքում շրջանի վարելահողերում ազրոարտադրական հատկությունների փոփոխության ուղղորդվածությունը և առաջարկվել են արտադրության բարելավման միջոցառումներ, որոնք տրված են մենագրության մեջ:

## ԳԼՈՒԽ 3

**ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՀՈՂԱԲՈԶԻՈՆ ԲՆՈՒԹՎԳԻՐԸ,  
ԴՐԱՆՑ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆ ԷՍՏ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ,  
ԵՎ ԴԱՇԱՊԱՇՏՈՎՆ ԱՆՏԱՌԱՇԵՐՏԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՀՈՂԵՐԻ ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

ԼՂՀ, այդ թվում և Ասկերանի շրջանի բնական պայմանների խայտաբղետությունը, վարելահողերի տարրեր աստիճանի էրո-գացվածությունն ու բերրիության մակարդակը հնարավորություն չեն տալիս մշակելու հողերի պահպանման ու դրանց բերրիության բարձրացման այնպիսի նույնանման միջոցառումների համակարգ, որը պիտանի լինի հանրապետության կամ նույնիսկ մեկ առանձին շրջանի վարելահողերի բոլոր տարածքների համար: Այս հանգա-մանքը առաջ է թերում տարածքի վարելահողերի շրջանացման անհրաժեշտություն:

Տարածքի շրջանացման հարցերով գրադիւ են Ս.Ի.Սիլվեստրո-վը (1965), Ա.Ա.Կաշտանովը (1976), Ա.Դ.Օոլովը (1971), Ս.Ս.Սարգս-յանը (1971), Ս.Ու.Չերիմխանովը (1972), Է.Մ.Հայրապետյանը և ու-րիշներ (1990):

Նախկին ԽՍՀՄ տարածքի շրջանացման հիմնական սկզբունքները մշակվել են Ս.Ի.Սիլվեստրովի կողմից (1965), որոնց հիմքում դրված են ինչպես ֆիզիկա-աշխարհագրական, այնպես էլ գոտիա-կանության գործոնները: Այն սկզբունքները, որոնք մշակվել են նախկին ԽՍՀՄ լայնարձակ տարածքի համար, չեն բավարարում լեռնային մարզերի, այդ թվում և ԼՂՀ պայմաններին, որտեղ տա-րածքի խիստ կտրտվածության պատճառով հողերն ընկած են տարրեր դիրքադրության ու թեքության լանջերում: Նման տարա-ծաշրջաններում ուրույն պայմաններ են ստեղծվում հողագոյաց-ման, հողի բերրիության ձևավորման, ինչպես նաև՝ էրոզիոն գոր-ծընթացների զարգացման համար:

Լեռնային տարածքներում բնական ու տնտեսական պայմաննե-րի բազմազանության պատճառով ոչ մեծ տարածքների սահմաննե-

րում առաջանում են տարբեր բերրիության մակարդակի ու տարբեր աստիճանի էրողացված հողեր: Լեռնային ռելիեֆի պայմաններում հողերի բերրիությունն ու դրանց էրողացվածության աստիճանը պայմանավորող գործոնները բազմաթիվ են, ուստի այդ բոլոր գործոնները հաշվի առնելը իրատեսական չէ:

Է.Մ.Հայրապետյանը (Թ.Մ.Այրապետյան, 1985, ա, 6) նշում է, որ եթե լեռնային պայմանների համար հաշվի առնվեն բոլոր գործոնները, ասաւ կստեղծվի տարածքի շրջանացման բարդ ցանց ու արհեստականորեն կրարդացվի դրա գործնական կիրառությունը: Այդ համացմանքը հաշվի առնելով՝ նա առաջարկում է լեռնային տարածքների շրջանացման համար հիմք ընդունել այն հիմնական գործոնները, որոնք անմիջապես ազդում են ինչպես էրողիայի արտահայտման բնույթի և հնտենսիվության, այնպես էլ հողերի գյուղատնտեսական օգտագործման բնույթի և ուղղության վրա:

Նախկին ԽՍՀՄ և արտասահմանյան երկրների լեռնային մարգերում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հողի բերրիության և դրա ազդութափական հատկությունների, ինչպես նաև էրողիոն գործընթացների զարգացման վրա առանձին գործոնների ու դրանց բաղադրամասերի ազդեցությունը կախված է ռելիեֆից և խիստ փոփոխական է: Ապացուցված է նաև, որ ռելիեֆի տարերից լանջի դիրքադրությունը մեծ ազդեցություն ունի տարածքի ջրածերմային պայմանների, բուսականության և հողային ծածկույթի, ինչպես նաև՝ էրողիոն գործընթացների զարգացման վրա (Հ.Կ.Ռակուլա, Գ.Վ.Հազարենկո, 1976):

Նման ուսումնասիրություններ Հայաստանի տարածքում կատարել են Ս.Ա.Չախարովը (1914, 1925), Բ.Յա.Գալստյանը (1937), Ա.Մ.Նալբանդյանը (1950), Խ.Պ.Սիրինանյանը (1955, 1956, 1962), Կ.Գ.Մելքոնյանը (1961, 1962, 1968), Կ.Ս.Աբրահամյանը (1957), Է.Մ.Հայրապետյանը (1964, 1972), Լ.Գ.Աղամյանը (1966): Տարբեր երկրներում այդ ուղղությամբ ուսումնասիրություններ են տարել Ի.Պ.Գերասիմովը (1994), Վ.Ա.Ամբոկածեն (1957), Մ.Ն.Չասլավսկին (1966), Խ.Մ.Մուստաֆաևը (1967) և ուրիշներ: Կատարված հետազոտություններով հաստատվել է, որ ստվերահայց լանջերում

առաջանում են ավելի քերի հողեր, որոնք օժտված են բարենպաստ ազրոարտադրական հատկություններով, ավելի քոյլ են ենթարկվում էրողիայի և ունեն ավելի բարձր արտադրողականություն:

Է.Մ.Հայրապետյանի (Թ.Մ.Այրության, 1985, ա, 6, Է.Մ.Հայրապետյան և ուրիշներ, 1990) հետազոտություններով հայտնի դարձավ, որ Հայաստանի տափաստանային գոտու (սևահողային գոտի) արևահայաց լանջերում ձևավորված հողերն իրենց քերրիության մակարդակով ու ազրոարտադրական հատկություններով ավելի մոտ են չոր տափաստանային գոտու (շագանակագույն հողերի գոտի) հողերին, քան սևահողերին: Նա, ուսումնասիրելով լեռնային տարածքների հողաէրողիոն շրջանացման հարցերը, առաջարկել է շրջանացման 1-ին աստիճանում առանձնացնել բնական գոտիներ, իսկ 2-րդ աստիճանում՝ առանձին հողակիմայական գոտիների սահմաններում, հաշվի առնելով ռելիեֆի հիմնական տարրի՝ մակրոռելիեֆի մասշտարով լանջի դիրքադրությունը, անջատել հողաէրողիոն շրջաններ:

Նույն հեղինակը ռեգիոնալ տիպի հակաէրողիոն միջոցառումներ մշակելու նպատակով առաջարկել է հողաէրողիոն շրջանների սահմաններում անջատել ենթաշրջաններ՝ հաշվի առնելով հողառաջանող նայրատեսակների բնույթը: Նման մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ մայրատեսակների բնույթով պայմանավորված է ոչ միայն էրողիայի ինտենսիվությունը, այլև տիպը՝ ծորակային էրողիան՝ մակերեսային հողատարումը:

Ելնելով վերը նշվածից հանրապետության վարելահողերը խմբավորվել են երեք հողաէրողիոն շրջանների մեջ՝ ա) հարթ տարածությունների վարելահողեր, բ) արևահայաց լանջերի վարելահողեր և գ) ստվերահայաց լանջերի վարելահողեր:

Ասկերանի շրջանի վարելահողերի տարածման սահմաններում, հողառաջանող նայրատեսակների խիստ խայտարդետության բացակայությամբ պայմանավորված, անջատվել են հողակիմայական գոտի և հողաէրողիոն շրջան՝ ըստ վարելահողերի շրջանացման 2-րդ աստիճանի:

ԼՂՀ տարածքի հողառաջանող նայրատեսակների վերաբերյալ

չկան խոշոր մասշտարի ուսումնասիրությունների տվյալներ, իսկ ներկա պայմաններում նոր, մեծածավալ ուսումնասիրությունների իրականացումը մեկ հետազոտողի համար կապված է զգալի նյութական ծախսատարության, մեծ ժամանակատարության և այլ բարդությունների ու դժվարությունների հետ: Ուստի հետազոտական աշխատանքների տվյալ փուլի համար ընտրվել է ԼՂՀ ընդհանուր բնակլիմայական պայմաններին հիմնականում բնորոշ, հանրապետության կենտրոնական մասում գտնվող չորս շրջաններին (Մարտակերտ, Մարտունի, Հաղորդ և Շուշի) հարակից համանման բնակլիմայական պայմաններ ունեցող Ասկերանի շրջանը:

Ասկերանի շրջանի, ինչպես նաև ԼՂՀ մնացած շրջանների իխսությունը ուղիեցի պայմաններում, նոյն հողահանդակում գուտ մեկ կարգի էրոզացված հող հազվադեպ է հանդիպում: Էրոզացվածության հիմնական ֆոնի վրա առանձին բժերով հանդես են գալիս նաև այլ կարգի էրոզացված հողեր: Հաշվի առնելով այդ անվիճելի փաստը՝ հողերի էրոզացվածության գնահատման ու քարտեզագրման հարցում հիմք է ընդունվել Է.Մ.Հայրապետյանի կողմից առաջարկվող սկզբունքը. եթե տվյալ տարածքում էրոզացվածության հիմնական ֆոնի վրա արտահայտված է այլ աստիճանի էրոզացված հող և այն կազմում է մինչև 15-20%, ապա նշվում է նաև էրոզացվածության այդ աստիճանը (Ա.Ծ.ԸոբՌոտպՅ.Վ, 1987):

Առաջարկվող սկզբունքով Ասկերանի շրջանի տարածքում առանձնացվել են երեք հողաէրոզիոն շրջաններ, որոնց բնութագիրը տրվում է առանձին-առանձին:

### **3.1. Առաջին հողաէրոզիոն շրջան**

Առաջին հողաէրոզիոն շրջանն (ՀԷՇ-1), ընդգրկելով հարթ տարածություններն ու թույլ թեք հարթությունները ներառում է երկու հիմնական զանգված՝ Իվանյան-Ասկերան-Աստղաշենի և Նախիջևանիկի: Բացի այդ կան նաև երկու ոչ մեծ զանգվածներ՝ Կարմիր գյուղ և Մոշխմահատ (աղյուսակ 3.1.1): Ընդհանուր տարածքը կազմում է 5753.1 հեկտար:

### **Աղյուսակ 3.1.1**

#### **1-ին հողաէրոզիոն շրջանի վարելահողերի բաշխածությունն՝ ըստ տարածման զանգվածների և հողատիպերի (1995-1997թ.)**

Վարելահողերի տարածման զանգվածները	Հողի տիպը, ենթատիպը	Տարածուք., հա
1. Խվանյան-Ավկերան-Աստղաշնն (Զ-1)	Լեռնային մոխրադշնագոյն լեռնաանտառային դարչնագոյն տափաստանացված, կարորմատային	615.0 241.3
2. Նախիջևամիկ (Զ-2)	Լեռնային մոխրադշնագոյն	1036.6
3. Քռասմի (Զ-3)	Լեռնաանտառային դարչնագոյն տափաստանացված, կարորմատային	93.0
4. Կարմիր գյուղ (Զ-4) Կարմիր գյուղ (Զ-5)	Լեռնաանտառային դարչնագոյն տափաստանացված, կարորմատային լեռնաանտառային դարչնագոյն տափաստանացված, կարորմատային	102.7 78.5
5. Մաղարաշնն (Զ-6)	Լեռնաանտառային դարչնագոյն տափաստանացված, կարորմատային	81.1
6. Մոշխմահատ (Զ-7)	Լեռնաանտառային դարչնագոյն տափաստանացված, կարորմատային	306.6
7. Այլ համայնքների վարելահողեր	-	3198.3
Ընդամենը	-	5753.1

1-ին հողաէրոզիոն շրջանի 1-ին զանգվածը (Զ-1) տարածվում է Կարկառ գետի աջափնյա ու ձախափնյա մասերում, ինչպես նաև նեղ շերտով Պատարա գետի աջափնյա հատվածում: Տարածքը կազմում է 856.3 հեկտար: Այստեղ էրոզիոն գործնքացները գրեթե արտահայտված չեն, բույլ է նաև էրոզիայի զարգացման պոտենցի-ալ վտանգը: Այս զանգվածը նախկինում հիմնականում զբաղեցված է եղել խաղողի այգիներով, սակայն Արցախյան պատերազմի տարիներին դրանք չեն մշակվել, և որպես խաղողի լիարժեք այգիներ կորցրել են իրենց նշանակությունը:

Այգիներին մեծ վնաս են պատճառել զինտեխնիկայի տեղաշարժերն ու հրետակոծությունները, վառելափայտի մթերման համար խաղողի վագերի համառարած հատումները և այլ մարտական ու տնտեսական գործողությունները: Սակայն հիմնականում քնակչությանը հացով ապահովելու խնդիրն անհրաժեշտություն է առաջ բեր-

թել խիստ նոսրացած ու քիուտների վերածված այգիները օգտագործել հացահատիկային մշակաբույսերի տակ:

Ստեղծված սոցիալ-տնտեսական դժվարությունները դեռևս հնարավորություն չեն տալիս մեծ ներդրումներ կատարել և ոռոգման համակարգն ամրողությամբ վերականգնել, որպեսզի այդ հողերում հնարավոր լինի աճեցնել ոչ միայն հացահատիկ, այլ նաև արժեքավոր այլ մշակաբույսեր:

Չնայած այս գոտում էրողին գործընթացները հիմնականում բացակայում են, այնուհանդերձ անտառաշերտերի բացակայության պատճառով սիստեմատիկ գործող քամիները միանգամայն բացասական են ներգործում հողի ջրային ռեժիմի և բերքի ձևավորման վրա:

Առաջին հողաէրողին շրջանի համեմատաբար մեծ տարածություն գրադեցնող այս զանգվածում պաշտպանական շերտերի ստեղծումը համարվում է տարածքի ջրային ռեժիմը բարելավելու ու բարձր բերք աճեցնելու կարևորագույն միջոցառումներից մեկը: Պետք է նշել, որ այստեղ հողակլիմայական պայմանները միանգամայն նպաստավոր են բարձրահասակ ծառատեսակներից պաշտպանական անտառաշերտեր ստեղծելու համար: Այս զանգվածում ծովային փուլսը նստվածքների վրա ձևավորվել են լեռնային մոխրադարչնագույն հողեր, որոնք հիմնականում հզոր են, ունեն ծանր կավավագային, նույնիսկ կավային մեխանիկական կազմ, միջին հումուսացված են, ունեն չեղոքին մոտ ռեակցիա:

1-ին հողաէրողին շրջանի երկրորդ զանգվածը (Զ-2), որն ընդգրկում է Մարտունու շրջանին հարող Նախիջևանիկ և մասամբ Վարդանոր համայնքների հարք տարածությունների և քոյլ թեքությամբ հարթությունների վարելահողերը, զբաղեցնում է 1036.6 հեկտար: Այստեղ էրողին գործընթացները դարձյալ զարգացած չեն, քոյլ է նաև ջրային էրողիայի զարգացման պոտենցիալ վտանգը: Տարածքը մինչև վերջին տարիները նույնպես զբաղեցված է եղել խաղողի այգիներով, սակայն դրանք արմատախիլ են արվել, և ներկայումս այդ տարածություններն օգտագործվում են անջրդի պայմաններում հացահատիկային մշակաբույսերի, հատկապես աշնանացած ցորե-

նի մշակության համար:

Չնայած այս զանգվածում քամու էրողիան առանձնապես զարգացած չէ, այնուհանդերձ քամու բացասական ներգործությունը հողի ջրային ռեժիմի վրա ակնառու է: Այս զանգվածում պաշտպանական անտառաշերտերի հիմնումը նույնապես անհրաժեշտություն է, անկախ նրանից, թե այդ մշակովի հողերը գյուղատնտեսական ինչպիսի մշակաբույսերի տակ կօգտագործվեն: Այստեղ, ինչպես և 1-ին զանգվածում, ձևավորվել են մոխրադարչնագույն հողեր, որոնք հիմնականում կարբոնատային են, գերազանցապես հզոր: Իսկ հողը առանձին օջախներով միջին հզորության է:

3-րդ ոչ մեծ զանգվածը (Զ-3), որը գրադարձնում է 93.0 հեկտար, գտնվում է Քռասնի համայնքի տարածքում՝ Ստեփանակերտ քաղաքի հողերին անմիջապես սահմանակից հարք տարածքում: Հողերը հիմնականում օգտագործվում են հացահատիկային մշակաբույսերի աճեցման համար:

4-րդ և 5-րդ զանգվածներն (Զ-4 և Զ-5) ընկած են Կարմիր գյուղ համայնքի հարավ-արևմտյան մասում և գրադարձնում են ընդամենը 181.2 հեկտար: Այստեղ ձևավորվել են լեռնասանտառային դարչնագույն տափաստանացված, կրազուրկ (Զ-5) և կարբոնատային (Զ-4) հողեր: Դրանք հիմնականում հզոր, մասամբ միջին հզորության են՝ օժտված բավական բարձր ջրաբափանցելիությամբ ու խոնավունակությամբ:

5-րդ ոչ մեծ զանգվածն (Զ-5) ընկած է Մաղարաշենի (81.1 հեկտար), իսկ 6-րդը՝ Մոշխմահատի (306.6 հեկտար), Մարտունու և Հաղբութի շրջաններին հարակից տարածքներում: Դրանք ձևավորվել են ծովային հզոր նստվածքների վրա: Հողի ամբողջ պրոֆիլում քարերը բացակայում են: Այս զանգվածների հողերը բերրի են: Դրանցում մշակվում են կարտոֆիլ, ինչպես նաև՝ կերի ճակնեղ:

3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ոչ մեծ տարածություն գրադարձնող զանգվածները հիմնականում շրջափակված են անտառներով ու բիուսներով և պաշտպանված քամու բացասական ներգործությունից:

1-ին հողաէրողիոն շրջանում ընդգրկված շուրջ 5.75 հազար հեկտար վարելահողերից 1.65 հազար հեկտարը լեռնային մոխրադարչ-

նագույն է, իսկ մնացած 4.1 հազարը՝ լեռնաանտառային դարչնագույն: Վարելահողերի գերակշռող մասը կարբոնատային է (90.4%) և միայն 9.6%-ն է կրագերծված:

Ուսումնասիրություններով պարզվել է, որ հարք տարածություններում գտնվող վարելահողերը հզոր են: Հողաշերտի հաստությունը (A+B) տատանվում է 65-85 սմ-ի սահմաններում: Հաստ հողաշերտի գոյացումը հիմնականում պայմանավորված է հզոր ու փուխր հողառաջացնող մայրատեսակների առկայությամբ: Նման մայրատեսակներում բույսերի արմատները տարածվում են խորը, որոնց քայլումից այդ շերտերում կուտակվում է հումուս:

Այս հողաէրոզիոն շրջանի վարելահողերն ընդհանուր առմամք էրոզացված չեն, այդուհանդեռձ հումուսի պարունակությունը Ավ հորիզոնում չի գերազանցում 3.5%-ը: Հողի արտֆիլի խորության ուղղությամբ նկատվում է հումուսի քանակի աստիճանական նվազում, ինչը բնորոշ է փուխր ու հաստ շերտով մայրատեսակների վրա առաջացած հողերին, որի մասին վկայում են Հայաստանի լեռնաանտառային գոտու հողերում կատարված ուսումնասիրությունները՝ Գ.Ս.Թարևսոյան (1963), Ռ.Ա.Էղիլյան (1974), Ս.Ե.Սիմոնյան (1974), Ռ.Ա.Էղիլյան (1976), Կ.Գ.Մելքոնյան (1976), Ի.Ռ.Փարսադանյան (1976), Գ.Ս.Թաղենոսյան (1976), Ռ.Ա.Էղիլյան (1976), Ի.Ռ.Փարսադանյան (1976), Կ.Գ.Մելքոնյան (1976):

Ռ.Ա.Էղիլյանն, ուսումնասիրելով Հայաստանի ծխախտացան շրջանների հողերը (1958, 1964, 1976), հանգել է այն եզրակացության, որ հողերի հզորությունը պայմանավորված է ոչ միայն ռելիֆի գործնուվ, դրանց էրոզացվածության աստիճանով, այլև՝ մայրատեսակների բնույթով: Ընդ որում, որպես կանոն, փուխր մայրատեսակների վրա առաջացած հողերն ունեն ավելի հզոր հողաշերտ:

1-ին հողաէրոզիոն շրջանի վարելահողերն ունեն ծանր մեխանիկական կազմ: Դրանք հիմնականում կավային են, ֆիզիկական կավի քանակությունը ( $<0.01$  մմ) հողաշերտի սահմաններում (Ա և Բ հորիզոնները) հասնում է 75.71-83.03%-ի, տիղմային ֆրակցիայինը ( $<0.001$  մմ)՝ մինչև 14.12% (աղյուսակ 3.1.2):

### Աղյուսակ 3.1.2

#### 1-ին հողակրողիոն շրջանի վարելահողերի մեխանիկական կազմն ու ստրուկտուրային վիճակը (1995-1997թ.)

Հողափո- սերի համարը, վայրը, լանջի դիրքա- դրույունը և քերովյունը	Գեմետի- կական հորիզոն- ները, սմ	Մեխանիկական կազմը, %			Ջրակայում ագրեգատների քանակը			
		Ֆիզիկա- կան կազ- ման ավագ (>0.01 մ)	Ֆիզիկա- կան կազ- ման կավ (<0.01 մ)	Տիպը (<0.001 մ)	>3 մմ	3-1 մմ	1- 0.25 մմ	>0.25 մմ ջրակայուն ագրեգատ- ների քանակը
Կտր. 3, Հովսե- փավան, բույլքն հարթություն, մինչև 3°	A <sub>q</sub> 0-27	21.89	78.11	9.46	3.9	13.2	9.3	26.4
	B <sub>1</sub> 27-49	19.57	80.43	11.72	5.6	15.3	24.7	45.6
	B <sub>2</sub> 49-67	19.24	80.76	8.81	5.0	17.6	19.4	42.0
	B <sub>2,C</sub> 67-86	23.82	76.18	8.07	4.4	10.5	15.8	30.7
Կտր. 5, Խնա- պստ, բույլքն հարթություն, մինչև 3°	A <sub>q</sub> 0-27	18.58	81.42	12.07	3.4	14.4	18.8	36.6
	B <sub>1</sub> 27-49	16.97	83.03	14.12	3.9	18.2	21.4	43.5
	B <sub>2</sub> 49-67	23.20	76.80	10.76	5.8	12.9	24.6	43.3
	B <sub>2,C</sub> 67-86	21.91	78.09	12.18	5.1	16.3	14.8	36.2
Կտր. 11, Վարդս- ձոր, բույլքն հարթություն, մինչև 3°	A <sub>q</sub> 0-27	23.28	76.72	10.06	5.2	10.7	24.3	40.2
	B <sub>1</sub> 27-49	20.99	79.01	13.17	6.8	16.2	24.7	47.7
	B <sub>2</sub> 49-67	24.29	75.71	11.46	4.3	14.7	21.0	10.0
	B <sub>2,C</sub> 67-86	25.17	74.83	13.00	4.8	12.4	14.2	31.4

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ հողի վերին շերտերում (Ավ) ստրուկտուրան բույլ իսկ ենթավարելաշերտում՝ միջին արտահայտվածություն ունի:

Նման բույլ կամ լավագույն դեպքում միջին արտահայտված ստրուկտուրան ծանր մեխանիկական կազմի առկայության պայման-ներում չի կարող հոդրում ատեղծել բարենապատ ջրաֆիզիկական հատկություններ և նպաստել բույսերի նորմալ աճին ու զարգացմա-նը: Հետևաապես նկարագրվող հողերի ջրաֆիզիկական հատկու-թյունների լավացման և բերդիության բարձրացման համար առա-

շին հերթին անհրաժեշտ է վերականգնել ու պահպանել ստրուկտուրան՝ իրականացնելով հողի մշակման ճշշտ կազմակերպում, բազմամյա խոտաբույսերի մշակություն, օրգանական նյութերի պաշարների ավելացում և այլ ազդումիջոցառումների կիրառում:

Նկարագրվող հողերն ունեն ծանր մեխանիկական կազմ, սակայն օրգանական կոլորիդների (հումուս) ոչ մեծ պարունակության պատճառով կլանված կատախնների գումարը բավականին ցածր է՝ 27.5-30.2 մգ-էկվ. 100 գ հողում:

Ինչպես նշվեց, 1-ին հողաէրոզիոն շրջանի վարելահողերը հիմնականում կարրոնատային են, հողի պրոֆիլի սահմաններում պարունակում են զգալի քանակի կարբոնատներ (5.76-8.14%), որոնք հողին տալիս են հիմնային ռեակցիա (աղուսակ 3.1.3):

### Աղյուսակ 3.1.3

**1-ին հողաէրոզիոն շրջանի վարելահողերի բիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները (1995-1997թթ.)**

Հողափոփի համար, վայրը, լանջի դիրքադրությունը և քերությունը	Գենետիկական հորիզոնները և մ	% առաջին բաշվածքում						Կանված կատախնները, մգ-էկվ 100 գ հողում	Ca	Mg
		1	2	3	4	5	6			
Կտր. 3, Հովսեփավան, բույլ թեր հարթություն, մինչև 3°	A <sub>d</sub> 0-27	5.64	3.56	0.238	5.76	8.4	24.50	5.72		
	B <sub>i</sub> 27-49	5.29	3.12	0.177	5.83	8.4	24.01	4.19		
	B <sub>e</sub> 49-67	5.07	2.54	0.149	6.08	8.5	23.62	5.51		
	B <sub>e</sub> C 67-86	4.76	1.18	0.067	8.14	8.7	20.74	3.96		
	B <sub>e</sub> C 64-92	4.86	1.06	0.061	6.73	8.6	21.16	6.31		
Կտր. 5, Խոնավաստ, բույլ թեր հարթություն, մինչև 3°	A <sub>d</sub> 0-25	6.13	3.41	0.231	5.81	8.0	24.71	3.92		
	B <sub>i</sub> 25-46	5.72	3.34	0.201	5.90	8.3	24.00	4.13		
	B <sub>e</sub> 46-64	5.26	2.36	0.134	6.62	8.3	20.55	6.19		
	B <sub>e</sub> C 64-92	4.86	1.06	0.061	6.73	8.6	21.16	6.31		
	B <sub>e</sub> C 69-89	4.49	0.83	0.051	7.18	8.4	20.72	7.08		
Կտր. 66, Նախիջևանիկ, բույլ թեր հարթություն, մինչև 3°	A <sub>d</sub> 0-25	5.26	3.36	-	-	9.0	չի որոշվել			
	B <sub>i</sub> 25-46	5.18	1.16	-	-	9.1	չի որոշվել			
	B <sub>e</sub> 46-85	5.46	1.06	-	-	9.2	չի որոշվել			
	B <sub>e</sub> C 85-145	5.99	0.76	-	-	9.0	չի որոշվել			

Մատչելի սննդատարրերով ապահովածության տվյալները բեր-  
ված են 3.1.4 աղյուսակում:

#### **Աղյուսակ 3.1.4**

##### **1-ին հողաէրոզիոն շրջանի վարելահողերի ապահովածությունը մատչելի սննդատարրերով (1995-1997թթ.)**

Հողափոխի համարը, վայրը, լամացի դիրքադրությունը, թթության աստիճանը	Գենետիկական հորիզոնները, մմ	100 գ հողում, մգ		
		N	P <sub>2</sub> O <sub>5</sub>	K <sub>2</sub> O
Կտր. 66, Նախիջևանիկ, բույլ թեր հարթություն, մինչև 3°	A <sub>1</sub> 0-25	4.0	8.1	24.4
	B <sub>1</sub> 25-46	4.0	5.9	18.2
	B <sub>2</sub> 46-85			չի որոշվել
Կտր. 24, Հովսեփավան, բույլ թեր հարթություն, մինչև 3°	A <sub>1</sub> 0-26	4.6	8.0	30.1
	B <sub>1</sub> 26-48	4.0	7.2	27.7
	B <sub>2</sub> 48-72	4.0	6.4	29.1

Տվյալները վկայում են այն մասին, որ նկարագրվող հողերն ազուրվ թույլ են ապահոված, ֆոսֆորով՝ միջին և լավ, իսկ կալիումով՝ միջին: Հետևաբար մշակաբույսերի բերքատվությունը բարձրացնելու համար հանքային պարարտանյութերով պարարտացման անհրաժեշտություն է առաջանում ելնելով սննդատարրերով ապահովածության աստիճանից: Անժիստելի է, որ ներկայում հանքապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական դժվարությունների պատճառով հանքային պարարտանյութերի կիրառումը սահմանափակ է, սակայն հողերի բերքատվության բարձրացման միջոցառումների մշակումը տարիների համար է:

#### **3.2. Երկրորդ հողաէրոզիոն շրջան**

Երկրորդ հողաէրոզիոն շրջանն (ՀԷԸ-2) ընդգրկում է Ասկերանի շրջանի տարածքի արևահայաց (հարավային, հարավ-արևմտյան, հարավ-արևելյան և արևմտյան) լանջերը գրաղեցնելով՝ 3722.7 հեկտար և տարածվելով Վարանդա գետի ձախափնյա ու Կարկառ

գետի աջափնյա մասերում: Մեկ ոչ մեծ զանգված գոյություն ունի նաև Խաչեն գետի աջափնյա մասում (աղյուսակ 3.2.1):

### **Աղյուսակ 3.2.1**

#### **2-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերի բաշխվածությունները՝ ըստ լանջերի թեքության աստիճանի (1995-1997թթ.)**

Վարելահողերի տարածման զանգվածները	Ընդհանուր տարածութ, հեկտար	Այդ բնույթ՝ ըստ թեքության աստիճանի				
		3°-ից	3-5°	5-10°	10-15°	15°-ից
Վարանդա գետի ձախափնյա հաստված (Զ-1)	2061.9	-	68.4	739.8	903.9	349.8
Կարկառ գետի աջափնյա հաստված (Զ-2)	1541.1	-	172.5	1140.3	98.6	129.7
Խաչեն գետի աջափնյա հաստված (Զ-3)	119.7	-	-	119.7	-	-
Ընդհանուր	3722.7	-	240.9	1999.8	1002.5	479.5

Առաջին զանգվածը (Զ-1) գրաղեցնում է բավականին ընդարձակ տարածություն (2061.9 հեկտար)՝ ընդգրկելով Շոշ, Սղնախ, Մխիթարաշեն, Վերին Սղներ, Ներքին Սղներ համայնքների՝ հիմնականում արևմտյան դիրքադրության լանջերի վարելահողերը, ինչպես նաև Կարմիր գյուղ, Խաչմաշ, Սարուշեն (Մարտունու շրջանին հարակից), Մխիթարաշեն, Սատղաշեն, Վերին Սղներ և Ներքին Սղներ համայնքների՝ հիմնականում հարավային, մասամբ նաև՝ հարավարևմտյան լանջերի վարելահողերը: Այստեղ գլխավորապես զանգվածային վարելահողեր են, որոնք կտրտված են թփուտներով, ծածկված ձորակներով ու բլրակներով:

Քարաշեն (Դաշուշեն)-Շոշ-Մխիթարաշեն համայնքների արևահայաց լանջերի հաստվածում վարելահողերը խիստ մասնատված են, իսկ լանջերը՝ մեծ թեքության, բայց՝ կարճ: Այստեղ մակերեսային հողատարումը բավականին զարգացած է: Նշված տնտեսություններում խախտվում են լեռնային երկրագործության տարրական կանոնները, հողի մշակումն ու ցանքը կատարվում են լանջերի թեքության ուղղությամբ:

2-րդ հողաէրոզիոն շրջանի այս հաստվածում ուլիկեֆի խիստ

կտրտվածության պատճառով թփուտները չնայած ընդհանուր դրական ներգործություն ունեն շրջակա տարածքի վրա, սակայն վարելահողերի ջրային ռեժիմի բարելավնան գործում էական ազդեցություն չունեն: Նույն վիճակն է նաև Սղնախ համայնքի տարածքի՝ Վարանդա գետի վտակի ձախափնյա մասի արևմտյան դիրքադրության լանջերի վարելահողերում:

Ստեփանակերտ-Կարմիր շուկա տանող մայրուղու աջ կողմում տարածվող վարելահողերի տակ գտնվող լանջերը հիմնականում ունեն  $5\text{--}6^{\circ}$ -ից մինչև  $8\text{--}10^{\circ}$ , մինչդեռ խճուղու ձախ մասում՝  $8\text{--}10^{\circ}$ -ից մինչև  $10\text{--}12^{\circ}$  և ավելի թեքություն:

Այստեղ, ինչպես տրված է 3.2.2 աղյուսակում, ձևավորվել են կրագուր և կարրոնատարային լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված հողեր, որոնք համեմատաբար մեղմ լանջերի վրա միջին հզորության են, իսկ մեծ թեքությունների վրա՝ սակավազոր:

### **Աղյուսակ 3.2.2**

#### **2-րդ հողաէրողիոն շրջանի վարելահողերի (ներառյալ լրված վարելահողերի) բաշխվածությունն՝ ըստ հողատիպերի (1995-1997թթ.)**

Վարելահողերի տարածնան զանցվածները	Հողի տիպը և ենթատիպը	Տպածու բյուջեն հեկտար
Վարանդա գետի ձախափնյա հաստված (Ձ-1)	ա) լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված, կրագերծ	1743.5
	բ) լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված, կարրոնատային	318.4
Կարկառ գետի աջափնյա հաստված (Ձ-2)	ա) լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված, կրագերծ	1336.8
	բ) լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված, կարրոնատային	204.3
Խաչեն գետի աջափնյա հաստված (Ձ-3)	ա) լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված, կարրոնատային	119.7
Ընդամենը	-	3722.7

Երկրորդ զանգվածը տարածվում է Կարկառ գետի աջափնյա մասում և գրաղեցնում է 1541.1 հեկտար: Այն ընդգրկում է Քոսսնի, Հարավ, Դահան համայնքների և Ստեփանակերտ քաղաքի արևմտյան և հարավ-արևելյան լանջերի վարելահողերը:

Այստեղ ձևավորվել են ինչպես կրազուրկ, այնպես էլ կարբոնա- տային լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված հո- ղեր, որոնք հիմնականում հզոր ու միջին հզոր են: Վարելահողերը մեծ մասամբ զանգվածային են, տարածքը շատ խիստ կտրտված չէ:

2-րդ հողաէրողին շրջանի վարելահողերի էրոզացվածությունը բավականին խայտարդես է. քոյլ էրոզացված հողերի ֆոնի վրա առանձին բժերով հանդես են զալիս միջին էրոզացվածության հո- ղեր, որոնք հաճախ կազմում են ընդհանուր տարածքի մինչև 20- 25%-ը: Վերջինս կապված է բնբարլրային ռելիեֆով պայմանավոր- ված տարբեր թերության լանջերի (մեզոռելինքի մասշտաբի) առկա- յության հետ:

Սարուշեն համայնքից վերև՝ Մարտունու շրջանի Սխտորաշեն և Խերխան համայնքներին հարող հատվածում, ուղևու 20-25 տարի առաջ իրացված ոչ մեծ հողատարածություններն ունեն հիմնակա- նում հարավ-արևելյան դիրքադրություն, որտեղ հողերը էրոզացված են միջին, մասամբ՝ քոյլ:

Այս հողաէրողին շրջանում, հատկապես Վարանդա գետի ձա- խափնյա հատվածում, ռելիեֆը քարդ է: Հետևապես բացի պաշտ- պանական անտառաշերտերի հիմնադրությանց անհրաժեշտ է կա- տարել կոնտուրային վար: Այդ նպատակով որպես ուղեցույց դաշ- տում պետք է քողմել հորիզոնականների ուղղությամբ նեղ անմշակ շերտեր (ոչ ավել 0.5 մետրից): Նման շերտերը նպատակահարմար է քողմել յուրաքանչյուր 80-100 մ հեռավորության վրա:

2-րդ հողաէրողին շրջանի վարելահողերի առանձնահատկու- թյուններից մեկն այն է, որ մեծ թերության լանջերում, որտեղ հողերն առաջացել են կրաքարերի վրա, քարքարոտ են: Քանի որ անտա- ռատափաստանային այս գոտում ծառաբխատեսակներից հոսքա- կանիսից շերտերի ստեղծումն առանձնակի դժվարություն չի ներկա- յացնում, ուստի նպատակահարմար է հավաքված խոշոր քարերը

հեռացնել դաշտերից և չօգտագործել հոսքականիսից շերտեր ստեղծելով համար:

Այն տարածքները, որտեղ ուղիեժի պայմաններից ելնելով վարելահողերի շրջակա հողը չի մշակվում (հատկապես բլուրների ջրաժանային մասերում), խիստ թփապատված են, իսկ առանձին տեղերում նոյնիսկ պաշտպանվել են որոշ ծառատեսակներ: Վերջիններս միանգամայն դրական դեր են խաղում տարածքում քամու քացասական հետևանքների վերացման ու ջրային ռեժիմի բարելավման գործում: Հետևապես գյուղատնտեսական հողատեսքերի տարածման հատվածներում պետք է խստիվ արգելել հատումները, մանավանդ, որ բոլոր համայնքներից վերև ընկած են հսկայական անտառային զանգվածներ, որոնց խմանքի ու սամիտարական հատումների միջոցով հնարավոր է մթերել անհրաժեշտ քանակի վառելափայտ:

2-րդ հողաէրողիոն շրջանում պաշտպանական անտառաշերտերի հիմնադրման խիստ անհրաժեշտություն կա Կարմիր գյուղի Ծարավեղ կոչվող հանդամասում, որտեղ դաշտերը զանգվածային են, և սխստեմատիկ գործող քամիները քացասարար են անդրադառնում մշակաբույսերի բերքատվության վրա, իսկ ճյունը մշտապես դաշտերից հեռացվում և լցվում է մոտակա ձորերն ու լեռնագոգերը:

Կարմիր գյուղ և Դահրազ համայնքներում վարելահողերի մի մասը չնայած ունի արևահայաց դիրքադրություն (հիմնականում արևմտյան լանջեր են), այնուհանդերձ դաշտերը շրջափակված են բավկանին խիստ թփուտներով ու անտառներով: Այդ պատճառով էլ հողերն էրողիայի չեն ենթարկվում և ունեն բավկանին բարձր բերրիություն: Այստեղ, ի տարբերություն Ծոշ-Խաչմաշ-Սարուշեն հատվածի, անտառները ծյան կուտակման ու պահպանման, հետևապես վարելահողերի ջրային ռեժիմի վրա անմիջական դրական ներգործություն ունեն, որտեղ հողահանդակների մեծությունը առաջ է բերում հոսքականիսից շերտերի ստեղծում:

Երկարամյա փորձերով հաստատված է, որ բոլոր պարագաներում պաշտպանական անտառաշերտերի հիմնադրումն արդյունավետ է: Ուստանանում կուտակված հարուստ փորձը և Հայաստանում կատարված ուսումնասիրություններն ապացուցում են, որ

պաշտպանական անտառաշերտերը նպաստում են հացահատիկային մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը 20-25%-ով (Կոլեսնիչենկո Մ.Վ., 1981):

Բազմամյա վիճակագրական տվյալները վկայում են, որ Ասկերանի շրջանում աշնանացան հացահատիկների բերքատվությունը կազմում է 13.7 g/h: Հետևապես, եթե 100 հեկտար վարելահողերի սահմաններում ստեղծվեն պաշտպանական անտառաշերտեր, ապա անհրաժեշտություն կառաջանա շուրջ 5 հեկտար վարելահող հատկացնել անտառաշերտերի տակ: Այդ դեպքում կգրանցվի ընդամենը շուրջ 70 ցենտներ հացահատիկի կորուստ: Պաշտպանական անտառաշերտեր հիմնելու դեպքում հեկտարի հաշվով առնվազն 4-5 ցենտներ բերքի բարձրացումը հճարավորություն կտա մշակվող մնացած 95 հեկտարից լրացուցիչ ստանալ շուրջ 300-400 ցենտներ հացահատիկ:

Պետք է հաշվի առնել, որ Ասկերանի շրջանի անտառատափաստանային գոտում դրական արդյունք ապահովող համակցված պաշտպանական անտառաշերտեր կարող են գոյանալ 8-10 տարում, իսկ արագած ծառատեսակների օգտագործման դեպքում՝ ավելի կարճ ժամանակամիջոցում:

Անապատացման դեմ պայքարի Սիջազգային կոնվենցիայում, որը ստորագրել է նաև Հայաստանը, նշված է, որ մեր Մոլորակի վրա ջերմության բարձրացման ու անապատացման միտում կա: Պաշտպանական անտառաշերտերի ստեղծումը պետք է դիտել որպես տարածքի ջրային ռեժիմի բարելավման ու անապատացման դեմ պայքարի հզոր միջոց:

Դաշտային ուսումնասիրություններով պարզվել է, որ 2-րդ հողաբուղուն շրջանում արևահայաց լամզերում ընկած վարելահողերում էրոզիոն գործընթացներն ավելի ակտիվ են արտահայտվում, քան մնացած երկու հողաբուղուն շրջանների վարելահողերում:

Այստեղ հակաբուղուն միջոցառումների համակարգը որոշելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ՝ հողերի էրոզացվածության աստիճանը, էրոզիայի զարգացման պոտենցիալ վտանգը, ուղեժի բնույթը և այլն:

Լեռնաանտառային գոտու վարելահողերում մակերեսային հոսքերի առաջացումը կանխելու, էրոզիայի դեմ ակտիվ պայքար տանելու նպատակով առաջարկվում է տարածքի հակաէրոզիոն կազմակերպումը զուգակցել հողապաշտպան ցանքաշրջանառությունների ու ազրոտեխնիկական միջոցառումների կիրառման հետ (Ալիս Չ.Ա., 1981):

Որոշ հեղինակներ (Մ.Մ.Սիմոնյան, 1975, 1996) առաջարկում են լանջային վարելահողերում հոսքականիսիչ շերտերի (հեղինակը անվանում է բափամեղմիչ շերտեր) ֆոնի վրա կիրառել այնպիսի հակաէրոզիոն ազրոտեխնիկական միջոցառումներ, ինչպիսիք են վարի ակոսավորումը, վարելաշերտի խոր փխրեցումը, թմբավորումը և այլն:

Հայաստանի հյուսիս-արևելյան գոտու պայմաններում, որտեղ մեծ տարածում ունեն լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված հողերը, էրոզիան կանխելու և էրոզացված հողերի արտադրողականությունը բարձրացնելու համար առաջարկվում է հողաշերտի խորը փխրեցման ֆոնի վրա օգտագործել հանքային պարարտանյութեր, ստեղծել հոսքականիչ շերտեր, ցանքը կատարել օպտիմալ չափաքանակներով (Մ.Մ.Սիմոնյան և Ա.Վ.Մարալյան, 1983, 1985):

ԱՄՆ Գյուլատնտեսության նախարարությունը (Stallings Y.H., 1957) բոլոր կարգի հողերի համար մշակել է կարգաբանման սխեմա՝ ելնելով ամենից առաջ տեղանքի բերությունից, տարածքի էրոզացվածության վիճակից: Ընդ որում՝ հողերի կարգաբանման ժամանակ հաշվի են առնվում նաև հողերի որոշ ազրոարտադրական հատկություններ, մասնավորապես՝ բերրիության աստիճանը, հողաշերտի հզորությունը, մեխանիկական կազմը: Ամերիկյան կարգաբանումը հիմնված է հողերի օգտագործման պայմանների և ինտենսիվության սկզբունքի վրա, որի դեպքում բացառվում է էրոզիոն գործընթացների արտահայտման հնարավորությունը:

Է.Մ.Հայրապետյանը (1981) հակաէրոզիոն միջոցառումների համակարգ մշակելու նպատակով առաջարկում է հաշվի առնել հողի էրոզացվածության աստիճանը, էրոզիայի արտահայտման պոտեն-

ցիալ վտանգը, լանջի թերությունը, բնական թերփության աստիճանը, հակաէրոզիոն միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը և դրա հիման վրա հողերը խմբավորել ըստ առանձին կարգերի և յուրաքանչյուր խմբի համար մշակել հողի էրոզիայի դեմ պայքարի ու էրոզացված հողերի թերփության բարձրացման միջոցառումների համակարգ:

2-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերը, ինչպես վկայում են 3.2.3 աղյուսակում թերված տվյալները, թույլ հումուսային են. հումուսի քանակը Ավ հորիզոնում տատանվում է 1.60-2.73%-ի սահմաններում: Բարձր չեն նաև ընդհանուր ազոտի պարունակությունը՝ 0.153-0.218%:

### **Աղյուսակ 3.2.3**

#### **2-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները (1995-1997թթ.)**

Հողափոսի համար, վայրը, լանջի դիրքադրությունը և թերությունը	Գենետիկական հորիզոնները, ամ	%				pH-ը ջային քաշիա ծրագիր	Կառնած կատիոնները, մգ.Ալլ 100 գ հողում		
		Հիգրոսկոպիկ խոնավությունը	Հումուս ազոտը	Բնիհանուր ազոտը	Կապ- ված CO <sub>2</sub> -ը		Ca	Mg	
Կտր. 21, Սարուշեն, հարսվա- արևելյան լանջ, 8-10°	A <sub>q</sub> 0-25	5.63	2.42	0.172	4.08	8.1	21.94	6.09	
	B <sub>1</sub> 25-45	5.81	2.57	0.161	4.76	8.1	23.18	4.13	
	B <sub>2</sub> 45-69	4.72	1.70	0.103	5.17	8.3	20.04	4.81	
	B <sub>2C</sub> 69-83	4.56	1.06	0.062	5.79	8.3	19.26	5.17	
Կտր. 38, Խաչմազ, Հարս- վային, 6-8°	A <sub>q</sub> 0-24	4.87	2.26	0.153	4.53	8.0	19.78	8.12	
	B <sub>1</sub> 24-48	5.12	2.45	0.157	4.91	8.1	21.34	6.63	
	B <sub>2</sub> 48-63	4.18	1.38	0.083	4.98	8.0	20.53	6.08	
	B <sub>2C</sub> 63-79	4.09	0.96	0.054	5.32	8.5	20.06	5.29	
Կտր. 63, Հարսվա- արևելյան լանջ, 5-6°	A <sub>q</sub> 0-27	6.02	2.73	0.218	չկա	7.2	24.72	6.01	
	B <sub>1</sub> 27-51	4.86	2.57	0.165	0.47	7.2	24.41	6.32	
	B <sub>2</sub> 51-65	4.63	1.86	0.101	1.08	8.0	21.11	4.38	
	B <sub>2C</sub> 65-81	4.67	1.37	0.083	4.76	8.5	20.51	5.16	
Կտր. 35, Կարմիր գյուղ, հարսվային, 5-6°	A <sub>q</sub> 0-22	9.39	1.60	չի որոշվել	8.4	չի որոշվել			
	B <sub>1</sub> 22-32	9.55	1.55	չի որոշվել	8.4	չի որոշվել			
	B <sub>2</sub> 32-50	7.08	1.23	չի որոշվել	8.4	չի որոշվել			
	B <sub>2C</sub> 50-70	6.89	1.20	չի որոշվել	7.0	չի որոշվել			

Նկարագրվող հողերը հիմնականում կարբոնատային են, սակայն առանձին տեղերում, որտեղ հողերը չեն ծևավորվել կարբոնատային մայրատեսակների վրա, հանդիպում են նաև կրազերծ հողեր: Կարբոնատային հողերում, որտեղ հողաշերտի սահմաններում (A և B հորիզոններ) CO<sub>2</sub>-ի քանակությունը հասնում է մինչև 5.79%-ի, հողային լուծույթի ունակցիան հիմնային է (ρH-ը տատանվում է 8.0-8.5-ի սահմաններում), իսկ կրազերծված և բույլ կրազերծված հողերում՝ չեզոքին մոտ (ρH-ը A և B հորիզոններում 7.2):

Օրգանական կոլիխների (հումուսային նյութերի) ցածր պարունակությունը պայմանավորում է այս հողերի ոչ բարձր կլանողականությունը՝ 27.90-30.72 մգ-էկվ.100 գ հողում: Կլանող կոմպլեքսը հագեցած է հիմնականում Ca-ով և Mg-ով, ըստ որում կլանված կալցիումը 3-5 անգամ ավելի է, քան մագնիսիումը:

2-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերն ունեն բավական ծանր մեխանիկական կազմ. դրանք հիմնականում կավային են: Ֆիզիկական կափի (<0.01 մմ-ից ֆրակցիաները) քանակը հողաշերտի սահմաններում (A և B հորիզոններ) տատանվում է 65,04-80.09%-ի սահմաններում: Զգալի բարձր է նաև տիղմի պարունակությունը՝ 9.47-15.30% (աղյուսակ 3.2.4):

#### **Աղյուսակ 3.2.4**

#### **2-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերի մեխանիկական կազմն ու ստրուկտուրային վիճակը (1995-1997թ.)**

Հողափոսի համարը, վայրը, լանջի դիրքադրությունը և թերությունը	Գեներիկական հորիզոնները, սմ	Մեխանիկական կազմը, %			Ջրակայուն ագրեգատների քանակը, %			
		Ֆիզիկական ավազ (>0.01մմ)	Ֆիզիկական կավ (<0.01 մմ)	Տիղմ (<0.001 մմ)	>3մմ	3-1 մմ	1-0.25 մմ	>0.25 մմ ագրեգատների քանակը
Կտր. 21, Սարուշեմ, հարավ-արևելյան լանջ, 8-10°	A <sub>d</sub> 0-25	29.83	70.17	9.62	6.6	21.6	11.5	39.7
	B <sub>i</sub> 25-45	24.19	75.81	11.07	8.4	19.9	16.0	44.3
	B <sub>z</sub> 45-69	26.26	73.74	10.16	7.7	17.6	18.4	43.7
	B <sub>zC</sub> 69-83	29.81	70.19	8.83	7.0	21.1	9.0	37.1

Հողափոսի համարը, վայրը, լանջի դիրքադրու- թյունը և քերությունը	Գենետի- կական հորիզոն- ները, սմ	Մեխանիկական կազմը, %			Ջրակայտն ագրեգատների քանակը, %			
		Ֆիզիկա- կան ավագ (>0.01 մմ)	Ֆի- զիկա- կան կավ (<0.01 մմ)	Տիղմ (<0.01 մմ)	>3մմ	3-1 մմ	1-0.25 մմ	>0.25 մմ ագրե- գաների քանակը
Կտր. 38, Խաչմաշ, հարավային, 6-8°	A <sub>d</sub> 0-24	26.77	73.23	10.19	7.7	16.1	13.1	36.9
	B <sub>i</sub> 24-48	26.77	73.17	12.06	9.0	18.3	12.1	39.4
	B <sub>2</sub> 48-63	23.58	76.42	9.47	8.8	17.9	10.5	37.2
	B <sub>2</sub> C 63-79	34.96	65.04	9.68	6.2	18.1	9.0	33.3
Կտր. 63, Հարավ, հարավ-արևելյան լանջ, 5-6°	A <sub>d</sub> 0-27	21.87	78.13	13.16	8.6	19.7	16.8	45.1
	B <sub>i</sub> 27-51	23.92	76.08	15.08	8.2	21.3	20.2	49.7
	B <sub>2</sub> 51-65	23.21	76.79	15.30	6.9	17.2	23.3	47.4
	B <sub>2</sub> C 65-81	27.36	72.64	10.61	5.8	15.5	18.8	40.1
Կտր. 57, Կաբըմիր գյուղ, հարավային, 5-6°	A <sub>d</sub> 0-26	29.68	70.32	11.10	5.5	9.1	23.1	37.7
	B <sub>i</sub> 26-41	22.80	77.20	13.59	7.3	19.1	19.7	46.1
	B <sub>2</sub> 41-60	21.84	78.16	11.74	7.3	19.1	19.7	46.1
	B <sub>2</sub> C 60-86	19.91	80.09	14.14	9.0	18.6	17.6	45.2

Նման ծանր մեխանիկական կազմ ունեցող հողերում դրսևորվում են անբարենպաստ ազդոֆիզիկական հատկություններ, ինչը բնական է:

Ծանր մեխանիկական կազմ ունեցող հողերում բույսերին մատչելի ջրի պաշարը որպես կանոն փոքր է լինում, քան թերևն և միջին մեխանիկական կազմ ունեցող հողերում:

Է.Ա.Հայրապետյանը և Ա.Գ.Պետրոսյանը (1996) Լոռու մարզի Վարելահողերում խոնավության պակասի առաջացումը վեգետացիայի ընթացքում կապում են մի շարք գործոնների և հատկապես հողի ծանր մեխանիկական կազմի հետ: Կավային մեխանիկական կազմ ունեցող այդ հողերում, ինչպես հեղինակներն են նշում, բույսերի թառանձնան գործակիցը բարձր լինելու պատճառով դրանք կարող են թառամել նույնիսկ հողում 12.5-15.0% խոնավության առկայության դեպքում: Նման ծանր մեխանիկական կազմ ունեցող հողե-

րում ջրի պաշարներն արդյունավետ օգտագործելու նպատակով առաջարկվում է պարբերաբար 10 տարին մեկ հողին խառնել 4-5 մմ մեծության ծակոտկեն քարանյութեր (սուֆ, խարամ, պեմզա)՝ հեկտարի հաշվով 60-65 մ<sup>3</sup> և դրանով բարելավել հողի ազդոքիզիկական հատկություններն ու մեծացնել ընդհանուր ծակոտկենությունը:

Ծակոտկեն քարանյութի կիրառման շնորհիվ, ինչպես պարզվել է Գ.Ա.Փիլոյանի (1981) ուսումնասիրություններից, եգիպտացորենի կանաչ զանգվածն ավելացել է 61-129%-ով, իսկ հացահատիկի ու կարտոֆիլի քերքը՝ 41-85%-ով:

2-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերի ստրուկտուրան վարելաշերտի սահմաններում նույնպես քույլ է արտահայտված՝  $>0.25$  մմ-ից, ջրակայում ազրեգատների քանակը տատանվում է հիմնականում 36.9-39.7%-ի սահմաններում: Միայն Հարավ համայնքի համեմատաբար քերքի հողերում է այն որոշ չափով բարձր՝ 45.1%:

Ենթավարելաշերտում ստրուկտուրան միջին արտահայտվածության է՝  $>0.25$  մմ-ից, ջրակայում ազրեգատների քանակը հասնում է մինչև 49.7%:

Նման ծանր մեխանիկական կազմ ունեցող հողերում ստրուկտուրայի լավացումը հողային ռեժիմների (ջրային, օդային, ջերմային) բարելավման կարևոր նախապայման է համարվում: Այդ միջոցառումը միաժամանակ կնպաստի նաև հողի կենսաբանական ակտիվության բարձրացմանը և հետևապես բույսերին անհրաժեշտ սննդատարրերի հավաքագրմանը:

Ինչպես երևում է 3.2.5 աղյուսակում բերված տվյալներից, 2-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերն ընդհանուր առմամբ ազտուվ քույլ-միջին ապահովվածության են, ֆոսֆորով՝ հիմնականում միջին, իսկ կալիումով միջինից լավ են ապահովված (կտր. 11, վերին A<sub>4</sub> հորիզոնում):

### **Աղյուսակ 3.2.5**

#### **2-րդ հողաէրողիոն շրջանի վարելահողերի ապահովածությունը մատչելի սննդատարրերով (1995-1997թթ.)**

Հողափոխ համարը, վայրը, լանջի դիրքադրությունը և թերության աստիճանը	Գենետիկական հորիզոնները, սմ	100 գ հողում, մգ		
		N	P <sub>2</sub> O <sub>5</sub>	K <sub>2</sub> O
<b>Կտր. 35, Կարմիր գյուղ, լանջի դիրքադրությունը և թերության աստիճանը նշված չեն</b>	A <sub>1</sub> 0-22	9.8	9.8	34.4
	B <sub>1</sub> 22-32	8.4	4.5	29.3
	B <sub>2</sub> 32-50	8.4	4.2	26.3
	B <sub>3,C</sub> 50-70	7.0	3.9	34.7
<b>Կտր. 11, Խաչմազ, լանջի դիրքադրությունը և թերության աստիճանը նշված չեն</b>	A <sub>1</sub> 0-25	4.6	3.9	45.3
	B <sub>1</sub> 25-44	5.2	3.4	34.7
	B <sub>2</sub> 44-67	-	3.9	34.7

### **3.3. Երրորդ հողաէրողիոն շրջան**

3-րդ հողաէրողիոն շրջանն (ՀԷԸ-3) ընդգրկում է Ասկերանի շրջանի ստվերահայաց լանջերը (հյուսիսային, հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան, արևելյան), որտեղ կան երեք հիմնական զանգվածներ և զբաղեցնում է 12114.2 հեկտար: Ընդ որում, 1-ին զանգվածը տարածվում է Կարկառ գետի ձախափնյա մասում՝ Այգեստան, Մեղրագետ, Պատարա գետավտակների երկու կողմերում՝ զրաբելով հյուսիս-արևելյան և արևելյան լանջերը (աղյուսակ 3.3.1):

### **Աղյուսակ 3.3.1**

#### **3-րդ հողաէրողիոն շրջանի վարելահողերի (ներառյալ լրված վարելահողերի բաշխվածությունն)՝ ըստ լանջերի թերության աստիճանի (1995-1997թթ.)**

Վարելահողերի տարածման զանգվածները	Ընդհանուր տարածողք, հեկտար	Վեդ բլում՝ ըստ թերության աստիճանի				
		3°-ից	3-5°	5-10°	10-15°	15-ից
Կարկառ գետի ձախափնյա հասոված (Ձ-1)	8112.8	-	543.1	5656.5	910.4	972.8
Կարկառ գետի աջափնյա հասոված (Ձ-2)	1744.0	-	81.3	1460.1	123.2	79.1
Վարամիդա գետի աջափնյա, մասսամբ ձախափնյա հասոված (Ձ-3)	2257.4	-	62.4	1929.9	141.8	123.3
Ընդհանուր	12114.2	-	686.8	9046.5	1175.4	1175.2

Երկրորդ զանգվածը տարածվում է Կարկառ գետի աջափնյա մասում՝ Նախիջևանիկ-Դահրագ-Ջաբուկ հատվածում, և գրաղեց- նում է 1714 հեկտար: Այստեղ լանջերն ունեն 5-10օ, որոշ տեղերում՝ 10-15օ թեքություն:

Երրորդ զանգվածն ընդգրկում է Վարանդա գետի աջափնյա, մասամբ նաև՝ ձախափնյա մասերը, որտեղ լանջերն ունեն հիմնա- կանում հյուսիսային և հյուսիս-արևմտյան դիրքադրություն:

Կարկառ գետի ձախափնյա մասում ընկած ամենամեծ զանգվա- ծը (Զ-1) գրաղեցնում է Խնածախի, Այգեստանի, Դահրավի, Աստ- ղաշենի, Պատարայի, Խանցըի, Խնձրիստանի, Հիլիսի, Խաչենի, Ուրախաչի, Ուկի, Քարագլուխի, Խրամորթի, Նորագյուղի հիմնա- կան տարածքները, ինչպես նաև գետի աջափնյա մասում գտնվող Արանգամինի, Նախիջևանիկի, Դահրազի, Հարավի, Ջաբուկի որոշ սահմանափակ տարածություններ: Այս հողաէրողին շրջանի վարելահողերը լեռնաանտառային դարչնագույն տափաստանաց- ված տիպի են և հիմնականում կրագուրկ:

3-րդ հողաէրողին շրջանի առավել թեք արևելյան լանջերում էրողիայի զարգացման վտանգը պայմանավորված է վարելահողե- րից վերև ընկած ուժեղ ոտնահարված, հակաէրողին թույլ դիմադ- րողականությամբ օժտված, արտներում ձևավորվող մակերեսային հոսքերով: Էրողիայի արտահայտման տեսակետից վիճակն առա- վել վատ է համայնքամերձ հողատարածություններում, որտեղ ամ- բողջ տարրա ընթացքում արածեցում է կատարվում և բուսածածկը խիստ քայլայված է: Նման տարածություններում՝ վարելահողերից անմիջապես վերև, անհրաժեշտ է ծառաթփատեսակներից ստեղծել առնվազն 25-30 մ լայնությամբ ջրակարգավորիչ-հողապաշտպան անտառաշերտեր, իսկ վարելահողերում՝ բազմամյա խոտարույսե- րից ու տեղի մակերեսային քարերից՝ հոսքականիչ շերտեր: Նման անտառաշերտերը միաժամանակ կարևոր դեր կարող են խաղալ դաշտերում՝ ծյան կուտակման ու պահպանման հարցում:

Խաչեն, Խնձրիստան, Հիլիս և Լուսաձոր համայնքների հատվա- ծում վարելահողերը տարածվում են հիմնականում արևելյան դիր- քադրություն ունեցող լանջերում և բավականին մասնատված են:

Վարելահողերը մակերեսից բույլ քարքարոտ են, իսկ էրոզիան համեմատաբար ուժեղ է արտահայտված: Ընդհանուր առմամբ այս հատվածում տարածքը խիստ կտրտված է և ոչ հարմար գյուղատնտեսության մեքենայացման համար, իսկ տարածությունների թփուտները ոչ բոլոր դեպքերում են ուղղակի ներգործում վարելահողերի ջրային ռեժիմի բարելավման վրա:

Մեծ թեքության լանջերում մակերեսային հոսքերի ձևավորման վտանգը բավականին մեծ է, ուստի վարելահողերից անմիջապես վերև՝ 15-20, նույնիսկ 25-30 մետր լայնությամբ հողապաշտպան-ջրակարգավորից անտառաշերտերի ստեղծումն անհրաժեշտ է զուգակցել ազրոտեխնիկական հողապաշտպան միջոցառումների հետ (հոսքականինից շերտերի, հողի նշակման ընթացքում միկրոռելինֆի ստեղծում և այլն):

Թփապատված տարածություններում՝ վարելահողերի տակ, իրացվել են նեղ շերտեր, այդ իսկ պատճառով վարն ու ցանքը ստիպված կատարվում են լանջի թեքության ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով մակերեսային հողատարման զարգացմանը: Ուստիմնասիրությունները ցույց են տվել, որ այսպիսի թփապատված տարածություններ հնարավոր է իրացնել վարելահողերի տակ: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել կուլտուր-տեխնիկական աշխատանքներ՝ արմատախիլ անել թփուտները, կատարել բացարձակ հարթեցում և ստեղծել մեծ դաշտեր, որպեսզի հնարավոր լինի վարն ու ցանքը կատարել լանջերի թեքությանը հակառակ: Նման զանգվածային դաշտերում անհրաժեշտություն է առաջանում հորիզոնականների ուղղությամբ ստեղծել հոսքականինից (բութերային) շերտեր՝ դիտելով դրանք որպես հողատարման կանխման կարևոր ու արդյունավետ միջոցառում: Կուլտուր-տեխնիկական աշխատանքների իրականացումը, անտառ-թփուտային տեսակներից հոսքականինից շերտերի ստեղծումը մեծապես կնպաստեն դաշտերում ձյան կուտակմանն ու հողի ջրային ռեժիմի բարելավմանը և հետևապես մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը:

3-րդ հողաէրոզիոն շրջանի 2-րդ հիմնական զանգվածը տարածվում է Վարանդա գետի աջափնյա մասում և ընդգրկում է Սղնախ, Հայաստանի մայրաքաղաք Երևանը և այլ բարբառական հայաց բնակավայրերը:

Ավետարանց, Ակնադրյուր, Մադաբաշեն, Մոշխմահատ համայնքների վարելահողերի հիմնական մասը, ինչպես նաև Ներքին Սզնեղի, Վերին Սզնեղի, Կարմիր գյուղի որոշ ոչ մեծ տարածք զբաղեցնող վարելահողեր: Այստեղ ձևավորվել են լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված հողեր, որոնք ընկած են գլխավորապես հյուսիսային և հյուսիս-արևմտյան դիրքադրության լանջերի վրա: Դրանք հիմնականում կարբոնատային են, հզոր ու միջին հզության (աղյուսակ 3.3.2):

### Աղյուսակ 3.3.2

#### 3-րդ հողաէրողիոն շրջանի վարելահողերի բաշխվածությունն՝ ըստ հողատիպերի (1995-1997թ.)

Վարելահողերի տարածման գանգվածները	Հողի տիպը և ենթատիպը	Տարածուք, հեկտար
Կարկաս գետի ձախափնյա հատված (Զ-1)	ա) լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված, կարբոնատային բ) լեռնային մոխրադարչնագույն	7698.9 413.3
Կարկաս գետի աջափնյա հատված (Զ-2)	ա) լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված, կարբոնատային բ) լեռնային մոխրադարչնագույն	1364.5 380.1
Վարանդա գետի աջափնյա հատված (Զ-3)	ա) լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված, կրաքերծ	2257.4
Ընդունեմք	-	12114.2

Բավականին բարձր հակաէրողիոն դիմադրողականության շնորհիվ այստեղ էրողիոն գործընթացներն ընդհանուր առմանը շատ բույլ են արտահայտված: Սակայն մեծ թեքությունների վրա ընկած լանջերում, որոնք անմիջապես պաշտպանված չեն անտառներով ու խիտ թփութներով, նկատվում են մակերեսային հողատարման երևույթներ, հատկապես հորդառատ, սելավային բնույթի անձրևների դեպքում:

Այս հողաէրողիոն շրջանի 2-րդ գանգվածում ռելիեֆը խիստ կտրտված չէ, և այդ պատճառով անտառի ուղղակի ազդեցությունը հողածածկույթի պահպանման ու տարածքի (Վարելահողերի) ջրային ռեժիմի բարելավման վրա անմիջական է արտահայտվում:

Սղնախ-Ավետարանց տաճող ճանապարհի ձախ կողմում ռելի-

եֆը բլրաբմբային է, վարելահողերը զանգվածային են, տարածքը համատարած է մշակվում: Նման բարդ ռելիեֆի պայմաններում հողի մշակումը և ցանքը պետք է կատարել եզրագծային եղանակով: Այդ նպատակով նախապես անհրաժեշտ է դաշտում բազմամյա խոտաբույսերից ստեղծել տրակտորի շարժմանն ուղղություն տվող անմշակ նեղ շերտեր այն հաշվով, որ անհրաժեշտության դեպքում առանց որևէ դժվարության, հնարավոր լինի դրանք վերացնել և ստեղծել նոր շերտեր:

3-րդ հողաէրողիոն շրջանում ընդգրկված վարելահողերի որոշ տարածություններ կան նաև Կարմիր գյուղի Բավարիսան կոչվող հանդամասում, ինչպես նաև Շոշ-Կարմիր շուկա տանող խճուղու աջ մասում ընկած հյուսիսային կողմնադրության լանջերում: Չնայած այստեղ վարելահողերն ընկած են մեծ թեքությունների վրա, այնուհանդերձ ունեն հակաէրողիոն բարձր դիմադրողականություն: Վերջինս պայմանավորված է հողաշերտի բավական մեծ հզրությամբ, փուլսը ջրաբափանց մայրատեսակների առկայությամբ, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Հետաքրքիր պատկեր է նկատվում ըստ հողաէրողիոն շրջանների հողերի էրոզացվածությունը վերլուծելու դեպքում: Ակնհայտ է դառնում, որ արևահայաց լանջերում (ՀԵԸ-2) հողերը համեմատաբար ավելի շատ են էրոզացված, քան ստվերահայաց լանջերում (ՀԵԸ-3): Այսպես, եթե արևահայաց լանջերի վարելահողերում չէրոզացված ու քոյլ էրոզացված հողերը կազմում են ընդհանուր տարածքի 12.9%-ը, միջին, տեղ-տեղ քոյլ էրոզացվածը՝ 61.4%, ուժեղ (տեղ-տեղ միջին) էրոզացվածը՝ 25.7%, ապա ստվերահայաց լանջերում այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար 51.7%, 38.6% և 9.7%:

Վարելահողերի էրոզացվածության որակական ու քանակական հաշվառումն ըստ հողաէրողիոն շրջանների (հարթ տարածություններ, արևահայաց լանջեր, ստվերահայաց լանջեր) հնարավորություն է տվել մշակելու հողերի բերրիության պահպանման ու բարձրացման արդյունավետ միջոցառումների համակարգ:

Ասկերանի շրջանի տարածքում ձորակային էրոզիան գրեթե

զարգացած չէ, որը պայմանավորված է հողի և հողառաջացնող մայրատեսակների բարձր ջրաթափանցելիությամբ, ինչի շնորհիվ բացառվում է մակերեսային հզոր հոսանքների առաջացումն ու հողագրունտի քայլայումը:

Տարածվելով ստվերահայաց լանջերի վրա՝ այս հողերը, բնականաբար, ավելի շատ հումուս են պարունակում, քան մնացած երկու հողաէրողին շրջանների հողերը: Ինչպես երևում է 3.3.3 աղյուսակում բերված թվական տվյալներից, այս հողերի ԱՎ հորիզոնն հումուսի քանակը տատանվում է 3.12-4.54%-ի սահմաններում: Խորության ուղղությամբ հումուսի քանակն աստիճանաբար նվազում է, BC հորիզոնի սահմաններում հասնելով մինչև 1.07-1.51%-ի: Համապատասխանաբար բարձր է նաև ընդհանուր ազոտի քանակը. Ավ հորիզոնի սահմաններում այն հասնում է մինչև 0.263%-ի: Հողի պրֆիլի խորը շերտերում, հումուսի քանակի նվազմանը գուգընթաց նվազում է նաև ընդհանուր ազոտի պարունակությունը:

Նկարագրվող հողերը իմնականում կարբոնատային են, միայն առանձին հատվածներում, այն է՝ անտառի բացատներում գտնվող վարելահողերում, հողի վերին շերտերից կարբոնատները լվացվելուարվել են դեպի ստորին շերտերը: Կարբոնատների մեծ պարունակությունը (A և B հորիզոնների սահմաններում մինչև 5.83%) պայմանավորում է այդ հողերի իմնականում իմնային ռեակցիան: Թույլ կրազերծված հողերում հողային լուծույթի ռեակցիան մոտ է շեղորին (աղյուսակ 3.3.3):

### **Աղյուսակ 3.3.3**

#### **3-րդ հողաէրողիոն շրջանի վարելահողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները (1995-1997թթ.)**

Հողափոսի համարը, վայ- րք, լանջի դիր- քադրուքյունը և քերտելումը	Գենետի- կական հորիզոն- ները, սմ	%-%ներուք				pH-ը ջրային քաղած- քում	Կանկած կատորները, մգ-էկվ 100 գ հողում		
		Հիգրոսկո- պիկ խո- նավու- թյունը	Հու- մու- սը	Ընդ- հանուր ազո- տը	Կապ- ված CO <sub>2</sub> -ը		Ca	Mg	
Կտր. 55, Սոշխ- մահան, հյու- սիսային, 5-6°	A <sub>d</sub> 0-30	7.01	4.54	0.263	չկա	7.0	36.19	8.97	
	B <sub>1</sub> 30-51	6.43	3.16	0.191	չկա	7.0	36.43	6.98	
	B <sub>2</sub> 51-68	6.14	2.07	0.122	0.86	7.3	32.79	7.35	
	B <sub>2</sub> C 68-87	5.70	1.21	0.072	2.39	7.5	30.72	3.95	
Կտր. 39, Ակն- աղբյուր, հյու- սիս-արևելյան, 6-8°	A <sub>d</sub> 0-27	6.72	4.01	0.252	չկա	7.1	27.11	8.93	
	B <sub>1</sub> 27-49	6.04	3.19	0.191	0.39	7.1	27.7	7.31	
	B <sub>2</sub> 49-72	5.18	2.58	0.149	1.12	7.5	25.54	7.02	
	B <sub>2</sub> C 72-96	5.11	1.51	0.087	2.36	7.7	24.13	5.82	
Կտր. 47, Այգեստան, հյուսիս- արևելյան, 6-8°	A <sub>d</sub> 0-25	6.08	3.56	0.210	3.58	7.9	25.24	7.09	
	B <sub>1</sub> 25-47	5.73	3.10	0.189	4.08	8.0	26.12	5.32	
	B <sub>2</sub> 47-63	6.12	2.43	0.138	4.59	8.0	25.29	6.18	
	B <sub>2</sub> C 63-81	5.07	1.26	0.076	5.83	8.1	23.18	4.69	
Կտր. 51, Ասո- ղաշեն, հյուսիս- արևմտյան, 8- 10°	A <sub>d</sub> 0-27	5.94	3.12	0.190	3.27	7.8	25.26	8.01	
	B <sub>1</sub> 27-54	5.83	2.81	0.165	3.39	7.9	25.08	7.16	
	B <sub>2</sub> 54-75	5.06	2.04	0.114	4.63	8.2	23.69	5.72	
	B <sub>2</sub> C 75-84	4.72	1.07	0.064	4.87	8.2	23.01	6.13	

3-րդ հողաէրողիոն շրջանի հողերում հումուսի և տիղմային ֆրակցիաների բարձր պարունակությունը պայմանավորում է դրանց համեմատաբար բարձր կլանողականությունը, կլանված կատիոնների քանակը հասնում է մինչև 49.16 մգ-էկվ՝ 100գ հողում: Ընդ որում՝ կլանված Ca-ի քանակությունը 4-5 անգամ ավել է, քան Mg-ի քանակությունը:

Այս հողերն ունեն միջին կավային մեխանիկական կազմ՝ տիղմի (<0.001 մմ-ից ֆրակցիաները) բավականին բարձր պարունակու-

թյամբ՝ մինչև 16.2%: Ստրուկտուրան համեմատաբար լավ է արտահայտված՝ վարելաշերտի սահմաններում  $>0.25$  մմ-ից, ջրակայուն ագրեգատների քանակը հասնում է մինչև 46.5-53.4, իսկ ենթավարելաշերտում՝ մինչև 57.7% (աղյուսակ 3.3.4):

### **Աղյուսակ 3.3.4**

#### **3-րդ հողաէրողիոն շրջանի վարելահողերի մեխանիկական կազմն ու ստրուկտուրային վիճակը (1995-1997թթ.)**

Հողափոսերի համարք, վայրը, լանջի դիրքադրույթը և թնրույնը	Գննետիկանի հորիզոնները, ամ	Մեխանիկական կազմը, %				Ջրակայուն ագրեգատների քանակը			
		Ֆիզիկական ավագը ( $>0.01$ մմ)	Ֆիզիկական կավը ( $<0.01$ մմ)	Տիպը ( $<0.001$ մմ)	$>3$ մմ	3-1 մմ	1-0.25 մմ	$>0.25$ մմ ջրակայուն ագրեգատների քանակը	
1	2	3	4	5	6	7	8	9	
Կտր. 55, Մողլսահաս, հյուսիսային, 5-6°	A <sub>q</sub> 0-30	14.94	85.06	16.21	8.6	21.4	23.4	53.4	
	B <sub>i</sub> 30-51	18.82	81.18	14.39	10.7	19.0	28.0	57.7	
	B <sub>z</sub> 51-68	21.47	78.53	9.02	8.1	23.7	18.7	50.5	
	B <sub>zC</sub> 68-87	23.89	76.11	11.64	13.3	20.0	9.8	43.1	
Կտր. 39, Աղնաղյուր, հյուսիս-արևելյան, 6-8°	A <sub>q</sub> 0-27	16.68	83.32	13.82	6.7	17.2	25.5	49.4	
	B <sub>i</sub> 27-49	16.92	83.08	14.39	7.3	20.4	25.4	53.1	
	B <sub>z</sub> 49-72	19.81	80.19	12.14	10.8	16.3	26.4	53.7	
	B <sub>zC</sub> 72-96	19.26	80.74	11.70	5.0	19.8	20.8	5.6	
Կտր. 47, Այգեստան, հյուսիս-արևելյան, 6-8°	A <sub>q</sub> 0-25	23.79	76.21	11.04	5.9	14.7	25.9	46.5	
	B <sub>i</sub> 25-47	22.88	77.12	10.71	5.9	18.1	25.4	49.4	
	B <sub>z</sub> 47-63	24.30	75.70	9.09	4.8	13.3	29.6	47.7	
	B <sub>zC</sub> 63-81	27.24	72.76	9.26	5.1	14.6	23.7	43.4	
Կտր. 51, Ասորաշեն, հյուսիս-արևմտյան, 8-10°	A <sub>q</sub> 0-27	20.77	79.23	10.41	4.6	11.9	29.2	44.8	
	B <sub>i</sub> 27-54	23.42	76.58	11.31	8.0	17.5	26.2	51.7	
	B <sub>z</sub> 54-75	20.69	77.31	10.72	4.1	19.3	23.5	46.9	
	B <sub>zC</sub> 75-84	27.41	72.59	9.66	4.4	16.4	17.4	8.2	

Մնացած հողաէրոզիոն շրջանների վարելահողերի նման, այս հողերը նույնպես ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ միջին, կալիումով միջին և լավ են ապահովված (աղյուսակ 3.3.5):

### **Աղյուսակ 3.3.5**

#### **3-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերի ապահովվածությունը մատչելի սննդատարրերով (1995-1997թթ.)**

Կտրվածքի համարը, վայրը, լանջի դիրքադրությունը և թեքության աստիճանը	Գեներիկական հորիզոնները, մմ			100 հողում, մգ		
	N	P <sub>2</sub> O <sub>5</sub>	K <sub>2</sub> O	N	P <sub>2</sub> O <sub>5</sub>	K <sub>2</sub> O
Կտր.111, Այգեստան. լանջի դիրքադրությունը և թեքությունը նշված չեն	A <sub>1</sub> 0-25	4.6	3.9	45.3		
	B <sub>1</sub> 25-44	5.2	3.4	34.7		
	B <sub>2</sub> 44-67				շի որոշվել	
Կտր.55, Խաչեն. լանջի դիրքադրությունը և թեքությունը նշված չեն	A <sub>1</sub> 0-20	7.0	4.4	41.3		
	B <sub>1</sub> 20-35	7.0	3.6	26.9		
	B <sub>2</sub> 35-66				շի որոշվել	
Կտր.81, Ակնաբյուր. լանջի դիրքադրությունը և թեքությունը նշված չեն	A <sub>1</sub> 0-25	<b>9.8</b>	3.6	23.1		
	B <sub>1</sub> 25-35	5.6	<b>8.0</b>	20.8		
	B <sub>2</sub> 35-50	4.2			շի որոշվել	
Կտր.24, Խնձրիստան. լանջի դիրքադրությունը և թեքությունը նշված չեն	A <sub>1</sub> 0-23	7.0	5.1	33.4		
	B <sub>1</sub> 23-45	7.0	0.7	28.3		
	B <sub>2</sub> 45-72	7.0	0.7	16.9		


Ասկերանի շրջանի վարելահողերի էրոզացվածության վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 3.3.6-ում:

**Ասկերանի շրջանի վարելահողերի (ներառյալ լրված  
վարելահողերի) բաշխվածությունն՝ ըստ էրոզացվածության  
աստիճանի (2010թ.)**

Հողաէրո- զիմն շրջան- ները	Հողի տիպը ևնքատիպը	Ընդհա- նուր տա- րածուք- յանը, հեկտար	Վր բվում՝ բառ էրոզացվածության աստիճանի			
			Էրոզաց- ված	Մուլյ էրո- զացված, տեղ-տեղ չէրոզաց- ված	Միջին էրոզացված, տեղ-տեղ բոյլ էրոզացված	Ուժեղ էրոզացված, տեղ-տեղ միջին էրոզացված
1	2	3	4	5	6	7
ՀԵԾ-1	ա) լեռնային մոխ- րադաշնագոյն	615.0	533.8	81.2	-	-
	բ) լեռնայնուսու- յին դարչնագոյն տափաստանացված	5035.4	4739.1	296.3	-	-
	գ) լեռնայնուսու- յին դարչնագոյն տափաստանացված, կարունատային	102.7	59.5	43.2	-	-
	Ընդամենը	5753.1	5332.4	420.7	-	-
ՀԵԾ-2	ա) լեռնայնուսու- յին դարչնագոյն տափաստանացված, կրա- գերծված	3080.3	-	398.2	2009.4	672.7
	բ) լեռնայնուսու- յին դարչնագոյն տափաստանաց- ված, կարունատա- յին	642.4	-	83.6	272.5	286.3
	Ընդամենը	3722.7	-	481.8	2281.9	959.0
	գ) լեռնային մոխ- րադաշնագոյն	793.4	-	216.2	497.8	79.4
ՀԵԾ-3	դ) լեռնայնուսու- յին դարչնագոյն տափաստանաց- ված, կրագերծված	9063.4	928.8	3740.2	3511.2	883.2
	ե) լեռնայնուս- ույային դարչնագոյն տափաստանացված, կարունատային	2257.4	198.6	1172.7	673.2	212.9
	Ընդամենը	12114.2	1127.4	5129.1	4682.2	1175.5
	Ընդամենը՝ ԼՊՀ Ասկերանի շրջանում	21590	6459.8	6031.6	6964.1	2134.5

Ելնելով կատարված ուսումնասիրություններից, հաշվի առնելով երեք հողաէրոզիոն շրջանների ագրոարտադրական հատկությունները՝ էրոզացվածութ- յան աստիճանը կազմվել է 1:10000 մասշտաբի քարտեզ (Ակ. 3.3.1):

Քարտեզում բերված են Ասկերանի շրջանի ինչպես հողատիպերը, այնպես էլ հողերի էրոզացվածության աստիճանը:



**Նկ. 3.3.1. ԼՂՀ Ասկերանի շրջանի հողաէրոզիոն քարտեզ, մասշ-  
տաք 1:10000**

**Կազմեցիմ՝ Է.Մ.Հայրապետյան,  
Վ.Ա.Ալեքսանյան,  
2010թ.**

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ասկերանի շրջանում ուժեղ էրոզացված հողերը (այդ ֆոնի վրա տեղ-տեղ միջին էրոզացված) մեծ տարածություն չեն գրաղեցնում՝ տարածքի ընդամենը 10.3%-ը: Վարելահողերի գերակշռող մասը (56.0%) ոչ էրոզացված կամ թույլ էրոզացված է: Միջին էրոզացված և այդ ֆոնի վրա տեղ-տեղ թույլ էրոզացված հողերը կազմում են 33.7%:

Շրջանի վարելահողերում ջրաբափանցելիությունը որոշելու նպատակով 3 հողաէրոզիոն շրջաններում (Ասկերան, Սարուշեն և Ակնաղյուր համայնքների տարածքում) ընտրվել են բնորոշ հողատարածություններ և երեք կրկնողությամբ կատարվել ուսումնասիրություններ:

3.3.7 առյուսակում բերված տվյալները վկայում են, որ Ասկերանի շրջանի վարելահողերն օժտված են բարձր ջրաբափանցելիությամբ:

**Աղյուսակ 3.3.7**

**Ասկերանի շրջանի վարելահողերի ջրաբափանցելիությունը  
(Երեք կրկնողությունների միջին տվյալները)**

Հողաէրոզիոն շրջանը	Ուսումնասիրությունների վայրը	Ներծծված ջրի քանակը, մմ			
		1-ին ժամում	2-րդ ժամում	3-րդ ժամում	4-րդ ժամում
1-ին ՀԷԸ	Ասկերան, թույլքեր հարթություն, մինչև 3°	381	279	163	127
2-րդ ՀԷԸ	հ. Սարուշեն, հարավ-արևելյան լանջ, 8-10°	402	311	182	143
3-րդ ՀԷԸ	հ. Ակնաղյուր, հյուսիս-արևելյան, 6-8°	512	417	362	329

Ընդ որում, ջրաբափանցելիության ամենաբարձր ցուցանիշները նկատվում են 3-րդ և ապա 2-րդ հողաէրոզիոն շրջանների հողերում: Ավելի ծանր մեխանիկական կազմ ունեցող 1-ին հողաէրոզիոն շրջանի վարելահողերի ջրաբափանցելիությունը համեմատաբար թույլ է արտահայտված, չնայած ընդհանուր առմամբ դրանք քննութագրվում են բարձր ջրաբափանցելիության ցուցանիշներով:

Պետք է նշել, որ բարձր ջրաբափանցելիությունը պայմանավորված է ոչ միայն բուն հողի, այլ նաև հողառաջացնող մայրատեսակների հատկություններով՝ հարուստ են խճով, ծակոտկեն են, հողի պրոֆիլում և մայրատեսակում ցեմենտացած ամուր շերտեր գրեթե չեն նկատվում:

Ուսումնասիրությունների արդյունքներով եզրակացվում է, որ Ասկերանի շրջանի հողերի համեմատաբար բարձր ջրաբափանցելիությունը պայմանավորված է ինչպես նրանում եղած կոլիխների բնույթով, մասնավորապես՝ օրգանական կոլիխների նվազ քանակով, այնպես էլ հանքային կոլիխների կազմում մոնտմորիլոնիտի նվազ պարունակությամբ, որոնք օժտված են ուռչելու բարձր ունակությամբ:

Կարևոր գործոն է համարվում կլանող կոմպլեքսի հագեցվածությունը Ca-ով և Mg-ով: Այն կատինները, որոնք կուազուլյացիայի են ենթարկում կոլիխներին, օրինակ Ca-ը, նպաստում են ջրաբափանցելիության ու ջրի գրավիտացիոն շարժման արագության մեծացմանը (Վ.Ա. Կովդա, 1973, ա, 6):

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բացի մակրոստրուկտորային տարրերից, ջրաբափանցելիության հարցում որոշակի դեր են խաղում նաև միկրոստրուկտորային տարրերը: Այդ են վկայում Խ.Պ.Սիրիմանյանի և Է.Մ.Հայրապետյանի կողմից Հայաստանի անապատատափաստանային գոտում կատարված ուսումնասիրությունները (1958):

Ասկերանի շրջանի 2-րդ հողաէրոզիոն շրջանի վարելահողերում որոշ ուսումնասիրություններ են կատարվել նաև մակերեսային հողատարման վերաբերյալ:

Այդ նպատակով Սարուշեն գյուղի 8-10° թեքության՝ հարավ-

արևելյան լանջին (Մարտունու շրջանի Կարմիր շուկա և Սարգսաշեն համայնքներին հարակից տարածքում), մետաղյա լաստերով անջատվել է  $2 \times 25$  մ չափերով հոսքահրապարակ և հեղուկ ու կարծր հոսք հավաքվել է իրար հաղորդակցված տակառների մեջ:

Հաշվառումը կատարվել է 1996թ. և 1997թ. առավել հորդառատ, հեղեղային բնույթի անձրևների ժամանակ: Պարզվել է՝ որքան անձրևները հորդառատ են տեղացել, այնքան հեղուկ և կարծր հոսքի հարաբերությունը փոքր է եղել: Այսպես, եթե 1996թ. հունիսի 23-ին տեղացած  $17.9$  մմ անձրևի դեպքում հեղուկ և կարծր հոսքի հարաբերությունը եղել է  $16.4:1$ , 1996թ. մայիսի 25-ին՝  $26.3$  մմ տեղումների դեպքում՝  $14.1:1$ , ապա 1997թ. մայիսի 23-ի  $39.3$  մմ տեղումների դեպքում այն եղել է  $10.7:1$ : Համեմատական ուսումնասիրություններ են կատարվել նաև հողի և կարծր հոսքի քիմիական բաղադրության վերաբերյալ, որոնց տվյալները բերված են 3.3.8 աղյուսակում:

### **Աղյուսակ 3.3.8**

**Հողի և կարծր հոսքի քիմիական բաղադրության հիմնական տվյալները (1996-1997թթ.)**

Գյուղարկման ժամանակը և բափված տեղումների քանակը	Ռառումնասիրման օբյեկտը	Ցիկլիկական կավը ( $<0.01$ մմ)	Պարունակությունը, %		Շարժում սննդատարրերի պարունակությունը, մգ 100գ հողում		
			Հոմուս	Ընդհանուր ազուր	<i>N</i>	$P_2O_5$	$K_2O$
25.05.1996թ.	հող	47.81	3.02	0.193	6.7	2.8	18.4
26.3 մմ	կարծր հոսք	60.55	3.79	0.257	13.8	4.0	21.7
23.06.1996թ.	հող	43.40	2.96	0.180	7.3	3.2	16.9
17.9 մմ	կարծր հոսք	56.14	3.77	0.264	11.6	4.4	23.6
23.05.1997թ.	հող	45.14	2.91	0.177	6.1	3.5	16.1
39.3 մմ	կարծր հոսք	53.76	3.43	0.219	10.6	5.2	19.4

Պարզվել է, որ մակերեսային հողատարման ժամանակ տարվում է հողի առավել բերի մասը: Այդ է պատճառը, որ կարծր հոսքն ավելի հարուստ է հումուսով, ընդհանուր և մատչելի ազոսով, ֆոսֆորով ու կալիումով, քան բուն հողը:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ասկերանի շրջանի վարելահողերն ընկած են տարբեր դիրքադրության, տարբեր աստիճանի թերության վրա, էրոզացված են տարբեր աստիճանի, ունեն խայտարդետ ֆիզիկական, ֆիզիկաքիմիական, ագրոքիմիական հատկություններ: Այդ հողերի հետագա մշակումը հնարավոր է միայն հողաէրոզիոն շրջանների տարածատումների և խմբավորումների միջոցով, որը հնարավորություն է տալիս մշակելու համալիր միջոցառումներ: Արդյունքում կրաքարանան հողերի բերրիությունը, մշակաբույսերի բերքատվությունը, և կնվազեն հողատարման գործընթացները:

Ինչպես նշված է 3.1, 3.2, 3.3 ենթագլուխներում, յուրաքանչյուր հողաէրոզիոն շրջան ընդգրկում է տարբեր քանակի հողազանգվածներ. առաջին հողաէրոզիոն շրջանում առկա են 6 հողային զանգվածներ, երկրորդում և երրորդում՝ 3-ական հողային զանգվածներ: Յուրաքանչյուր հողային զանգված, կախված ռելիեֆից, դիրքադրությունից, էրոզացվածության աստիճանից, բնորոշվում է իր որոշակի հողային հատկություններով: Ելնելով դրանից՝ յուրաքանչյուր հողաէրոզիոն շրջանում ընտրվել են երեք համայնքների հողեր, որոնց ազգային հատկություններով: Ելնելով դրանից՝ յուրաքանչյուր հողաէրոզիոն շրջանում ընտրվել են երեք համայնքների հողեր, որտեղ կավային մեխանիկական կազմ, դրանցում ջրակայուն ազրեգատների քանակությունը բարձր չէ (36.2-39.8%), հումուսի պարունակությունը ամբողջ շերտի միջինացված տվյալներով կազմում է 2.6-1.8%, հողերը կարբոնատային են՝ CO<sub>2</sub>-ի քանակությունը տատանվում է 6.26-6.53%-ի սահմաններում: Փոխանակային կատանների կազմում Ca-ի իոնը՝ 3.5-4.5 անգամ գերազանցում է Mg-ի իո-

նին, ազոտով՝ թույլ, ֆոսֆորով և կալիումով միջին ապահովածության հողեր են:

Երկրորդ հողաէրոզիոն շրջանի հողերի հիմնական հատկությունները որոշակի չափով տարբերվում են առաջին հողաէրոզիոն շրջանի հողերից հումուսային հորիզոնների ավելի պակաս հզորությամբ, որը տատանվում է 70-83 սմ-ի սահմաններում, հումուսի ցածր քանակությամբ՝ 1.40-1.93%, հողի կլանող կոմպլեքսում Ca-ի իոնի գերակշռմամբ, ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ միջին և կալիումով՝ միջինից լավ ապահովածությամբ:

Երրորդ հողաէրոզիոն շրջանի հողերը բնութագրվում են Մոշխմահատ, Այգեստան և Աստղաշեն համայնքների տարածքներից վերցված հողանմուշներով. հումուսային հորիզոնների հզորությունը տատանվում է 84-87 սմ-ի սահմաններում, հողերն ունեն ծանր կավային մեխանիկական կազմ, համեմատաբար քարձր է հումուսի քանակությունը, pH-ը ցածր է և տատանվում է 7.2-8.0-ի սահմաններում: Մոշխմահատ համայնքի վարելահողերը կարբոնատներից լվացված են, փոխանակային կատիոնների կազմում Ca-ի իոնը գերակշռում է Mg-ի իոնին՝ 4-5 անգամ, ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ միջին և կալիումով՝ միջինից լավ ապահովածության հողեր են:

Աղյուսակ 3.3.9

Ասկերանի շրջանի հողաէրոզիոն շրջանների վարելահողերի քիմիական, ֆիզիկական և ֆիզիկաքիմիական հատկությունները

**Ասկերանի շրջանի հողաէրոպին շրջանների վարելահողերի  
քիմիական, ֆիզիկական և ֆիզիկաքիմիական հատկությունները  
հորիզոնների դիֆերենցված ձևով**

Հարաբերություն տիցանման	Լամի քրառական ատոմական	Համապա- տիկության դիմուսա- վիճակը, առ հայտնի առաջնա- գործությունները	Համապա- տիկության դիմուսա- վիճակը, առ հայտնի առաջնա- գործությունները	pH	Կազմակերպ կամաժամանակա- կան նկար		Միահենա- կան նշանակություն %	Զիս- կարու- ապի- զա- գություն %	Եփի N:P: %	P <sub>2</sub> O <sub>5</sub> %	K <sub>2</sub> O	Հար- աբե- րություն մակարդակը, մակ 100գ		
					Ca	Mg								
ՀՀՀՀ-1	<3°	A+B <sub>1</sub> 0.49	86	3.34	8.4	24.3	5.0	79.3	10.6	36.0	0.208	4.3	7.6	28.9
ՀՀՀՀ-2	<3°	B <sub>2</sub> +B <sub>3</sub> C 49-86		1.86	8.6	21.9	4.7	78.5	8.4	36.3	0.108	4.0	6.4	29.1
ՀՀՀՀ-3	6-8°	A+B <sub>1</sub> 0.45	83	2.5	8.1	22.6	5.1	73.0	10.3	42.0	0.166	4.9	7.1	31.9
ՀՀՀՀ-4	6-8°	B <sub>2</sub> +B <sub>3</sub> C 45-83		1.40	8.3	19.7	5.0	72.0	9.5	40.4	0.082	7.0	4.2	26.3
ՀՀՀՀ-5	6-8°	A+B <sub>1</sub> 0.51	84	3.90	7.0	36.3	8.0	83.1	15.3	55.6	0.297	4.9	3.7	40.0
ՀՀՀՀ-6	6-8°	B <sub>2</sub> +B <sub>3</sub> C 51-84		1.60	7.4	31.8	5.6	77.3	10.3	46.8	0.097	4.2	3.6	27.0

**Ասկերանի շրջանի հողաէրոզիոն շրջանների վարելահողերի  
քիմիական, ֆիզիկական և ֆիզիկաքիմիական հատկությունների  
միջինացված տվյալները**

Հողաէրոզիոն շրջանները	Լոնջ թիրո- բան աս- տիճանը	Հոգինա- յին հորիոնի հարուր- յութ, սմ	pH	Մեծանիկ- կազմի %	Զրավայում ապրկապ- նիթը, %	Կարո- նասնկեր, CO <sub>2</sub> , %	Հոգինա- յին հարուր- յութը, %	Կանգնած և կանհանձն նուկալ			Միջայիկ առողիք մ/100q			
								Ca	Mg	N				
ՀԵ-1 հարդ տապա- տոքուր-ների վարևանդ-դր	< 3°	8.60	8.4	78.4	11.2	38.6	<0.001 մ	<0.001 մ	2.31	22.9	5.6	4.1	7.1	26.4
ՀԵ-2 սրբանուց- ալանու ասթիճան-դր	6.8°	75.3	8.3	73.6	11.0	40.6	4.93	1.70	21.0	6.1	6.0	4.7	35.2	
ՀԵ-3 ստիլու- հայսց ասթիճան-դր	6.8°	77.3	7.7	77.3	11.0	47.8	3.41	2.53	27.8	5.9	6.3	4.1	35.0	

Պետք է նշել, որ բոլոր երեք հողաէրոզիոն շրջանների վարելահողերն առաջացել են կավային մայրատեսակների վրա, լավ ջրաքաղաքաց են, հումուսային հորիզոնների հզորությունը ծգված է, հասնում է 80-85 սմ-ի: Տեղումների սակավ քանակությունը (320-420 մմ) մակերեսային էրոզիա չի առաջացնում:

Աղյուսակ 3.3.10-ում բերված են հողային հատկությունները դիֆերենցված ձևով՝ A+B1 և B2+B2C հորիզոնների համար: Տվյալներից երևում է, որ A+B1 հորիզոնում հումուսի քանակությունը առաջին և երրորդ հողաէրոզիոն շրջաններում հասնում է 3.34-3.90%-ի, ինչը համեմատաբար ցածր է երկրորդ հողաէրոզիոն շրջանում. կազմում է 2.5%, իսկ B2+B2C հորիզոնում՝ 1.4%:

Համեմատաբար նույն օրինաչափություններն են դիտվում նաև մնացած հողային հատկությունների վերաբերյալ:

Աղյուսակ 3.3.11-ում բերված են երեք համայնքների հողերի հումուսային հորիզոնների հզորության միջին թվաքանական տվյալները, ինչպես նաև հողաէրոզիոն շրջանների վարելահողերի ընդհանուր տարածքները. ՀԵԾ-1՝ 5753.1 հեկտար, ՀԵԾ-2՝ 3722.7 հեկտար, ՀԵԾ-3՝ 12114.2 հեկտար:

Եթե առաջին հողաէրոզիոն շրջանի հարք տարածքների (<30) և երկրորդ հողաէրոզիոն շրջանի (6-80 թերությամբ) արևահայաց լանջերի վարելահողերում միջավայրի ռեակցիան՝ pH-ը, 8.3-8.4 է, ապա ստվերահայաց (ՀԵԾ-3) լանջերի վարելահողերում pH-ը 7.7 է, այսինքն՝ թույլ հիմնային է, համեմատաբար բարձր է հումուսի քանակությունը՝ 2.53%: Երկրորդ հողաէրոզիոն շրջանում, միջինացված տվյալներով, հումուսի քանակությունն ամենացածրն է և 75.3 սմ հաստությամբ շերտում կազմում է 1.7%: Բոլոր 3 հողաէրոզիոն շրջանների հողերն ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ միջին ու լավ (ՀԵԾ-1) և կալիումով միջին ապահովվածության են:

Անհրաժեշտ է առաջին հողաէրոզիոն շրջանի վարելահողերի համար կիրառել մշակաբույսերի ցանքաշրջանառություն, օրգանահանքային պարարտանյութերով պարարտացում և ոռոգման համակարգի կառուցում:

Երկրորդ և երրորդ հողաէրոզիոն շրջանների հողերի համար

անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ. դաշտապաշտպան անտառաշերտերի, անտառաբփուտների տնկում, խոնավության կուտակում, ճիշտ մշակում՝ կախված ուղիեֆից, դիրքադրությունից և հողատարածքների մեծություններից:

Դիմերենցված մոտեցումը հնարավորություն է տալիս առավելագույն չափով ինտենսիվ օգտագործել շրջանի վարելահողերը, ստանալ կայուն և բարձր բերք:

## ԳԼՈՒԽ 4

### ԼՂՀ ԱՍԿԵՐԱՎՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ԵՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԱԳՐՈԱՐՏԱՎԴՐԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1990-ական թթ.՝ պատերազմական գործողությունների ժամանակ, ոռոգման համակարգի շարքից դուրս գալու հետևանքով նախկինում օգտագործվող խաղողի այգիները քանդվեցին և դրանց տեղում մինչև այժմ մշակվում են հացահատիկային մշակաբույսեր: Ցանքաշրջանառության բացակայության պատճառով այս հողերն աստիճանաբար կորցնում են իրենց բերրիությունը, ենթարկվում դեգրադացման: Տվյալ խնդիրն ավելի է սրվել հողերի սեփականաշնորհման պայմաններում, եթե մեծ տարածները կտրտվել են առանձին հատվածներով, բաժանվել անհատներին, ու այդ տարածքների գգալի մասը լիարժեք չի մշակվում:

Հանրապետության տարածքում հողերի հետագա դեգրադացիան կանխելու, դրանց բերրիության բարձրացումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել հողային նոր հետազոտություններ և հողերի ագրոարտադրական հատկությունների ուսումնասիրությունների արդյունքներով բնութագրել հողերի արդի վիճակը, սահմանել այն չափանիշները, որոնցով հնարավոր կլինի մշակել համալիր միջոցառումների արդյունավետ համակարգ:

1994 թ. սկսած ուսումնասիրվել են Ասկերանի շրջանի հողերը (Ալեքսանյան Վ.Ա., 1997, ա), տրվել է մշակովի հողերի հողաէրոզիոն բնութագրիր, դրանք խմբավորվել են ըստ գոտիների և ըստ համայնքների, առաջարկվել են հակաէրոզիոն միջոցառումներ (Ալեքսանյան Վ.Ա., 1997):

Հարկ է նշել, որ մինչև այժմ կատարված հետազոտություններում չեն ուսումնասիրվել ԼՂՀ հողերի աղային կազմը, փոխանակային կատիոնները, սննդային տարրերը, կարբոնատությունը, ծանր մետաղները: Իսկ եթե անգամ նախկինում կատարվել են մասնակի ուսումնասիրություններ, ապա դրանց արդյունքներն արդեն հնացած

տվյալներ են, ուստի անհրաժեշտություն է առաջանում նոր, խորը ուսումնասիրությունների միջոցով տալ հողերի (վարելահողերի և արոտավայրերի) ազդութադրական հատկությունները և ստացված արդյունքների հիման վրա կատարել համապատասխան առաջարկություններ:

#### **4.1. Վարելահողերի քիմիական կազմը**

Ուսումնասիրությունները տարվել են (2008-2010թ.) դաշտային և լաբորատոր պայմաններում: Ասկերանի շրջանի տարածքում ընտրվել են 13 համայնքներ, տարածքի մշակովի հողերում դրվել են հողափոսեր, դաշտային պայմաններում կատարվել է գենետիկական հորիզոնների մորֆոլոգիական նկարագրություն, վերցվել հողային նմուշներ՝ լաբորատոր ուսումնասիրությունների համար (նկ. 4.1.1):

Լաբորատոր պայմաններում որոշվել են վերցված հողանմուշների աղային կազմը, փոխանակային կատիոնները (Ca, Mg, Na, K), կարբոնատությունը ( $\text{CaCO}_3$ ,  $\text{MgCO}_3$ ), մեխանիկական կազմը, հունուսը, սմաղային տարրերը (N, P, K), ծանր մետաղները (Cu, Zn, Pb, Cd, Mo, Mn):

Լաբորատոր անալիզները հիմնականում կատարվել են «Երևանի Ազրորիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից, իսկ ծանր մետաղների ուսումնասիրությունը՝ «ՀՀ Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի Սեյսմաերկրաբիմիական և անալիտիկ կենտրոնի լաբորատորիայում:


Շրջանի մշակովի հողերի ազդութադրական հատկությունների և դրանց բարելավման միջոցառումների մշակման նպատակով արված հողային կտրվածքների նկարագրությունները բերվում են ստորև.

**Կորպուս 1.** Դրված է Շոշ համայնքի տարածքում, ցանված է աշնանացան ցորեն, աճը՝ նորմալ, հարավային թեքությունը՝  $7-10^{\circ}$ :

**A 0-30 սմ** - մուգ գորշ գույնի, մակերեսը՝ խոնավ, կավային մեխանիկական կազմով, կարբոնատների առկայությամբ, հատիկային ստրուկտուրայով շերտ, անցումը Բ հորիզոն՝ աննկատ:

**B 30-60 սմ** - գորշ գույնի, խոնավ, կավային մեխանիկական կազմով, պնդացած, թույլ արտահայտված ստրուկտորայով շերտ, անցում՝ ասիմետրիական:

**BC 60-90 սմ** - շագանակագույն, փուխը, խոնավ, ստրուկտորայից զորված, ծանր կա- վային մեխանիկական կազմով շերտ:



**Նկ. 4.1.1. ԼՂՀ Ասկերանի շրջանի վարելահողերում տեղադրված հողափոսերի սխեմատիկ պատկերը, Մասշտաբ 1:200000**

## I - Ծագանակագույն, մնացորդային, կարբոնատային, II -

Լեռնամարգագետնային, ճմային, հազեցած, խորքային, III - բաց շագանակագույն, ցեմենտացած, կարբոնատային, IV -

մարզագետնատափաստանային, սևահողային, խճաքարային,

արգագետնատափաստանային, խճաքարային, տեղ-տեղ ցեմենտու

VI - լեռնաանտառային, դարչնագույն, կրագերծված

**Կարպածը 2.** Դրված է Նախիջևանիկ համայնքի վերին մասում (սեփականաշնորհված տարածքում), նորատունկ այզի է (1-2 տարեկան), հյուսիս-արևելյան կողմնադրությամբ, 5-7օ քերպությամբ, վարած հողակտոր (նկ. 4.1):

**A 0-40 սմ** - մուգ դարչնագույն գույնի, խոնավ, կավային մեխանիկական կազմով, հատիկակնձիկային ստրուկտուրայով, քարերից գուրկ, անցումը B հորիզոն՝ աննկատ:

**B 40-80 սմ** - դարչնագույն գույնի, խոնավ, ծանր կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտուրայով, քարերից գուրկ, բուսական արմատային մնացորդների առկայությամբ շերտ, անցումը C հորիզոն՝ կտրուկ:

**BC 80-110 սմ** - մուգ շագանակագույն, խոնավ, պինդ, կավային մեխանիկական կազմով, ստրուկտուրայից գուրկ շերտ: Ինչպես նկատվում է նկարագրությունից, տվյալ հողային կտրվածքում հումուսային հորիզոննը հզր է և հասնում է 80 սմ:

Դրան հակառակ՝ 3-րդ կտրվածքը՝ Նախիջևանիկ համայնքում, դրվել է համայնքից ներքև, որտեղ հումուսային հորիզոնի հզրությունն ընդամենը 45 սմ է: BC հորիզոնը սկսվում է 45 սմ-ից, անմշակ դաշտ է: Նախորդ մշակաբույսը եղել է աշնանացան ցորենը:

**A 0-22 սմ** - շագանակագույն, թույլ խոնավ, խոշոր քարերի առկայությամբ, բույլ արտահայտված հատիկային ստրուկտուրայով, փուխր: Անցումը B հորիզոն՝ աստիճանական:

**B 22-45 սմ** - գորշ գույնի, բույլ խոնավությամբ, պնդացած, կավային մեխանիկական կազմով, բույլ արտահայտված ստրուկտուրայով շերտ: Անցումը C հորիզոն՝ կտրուկ:

**BC 45-70 սմ** - բաց գորշ գույնի, խոնավ, պինդ, ստրուկտուրայից գուրկ, մանր քարերի առկայությամբ շերտ:

**Կարպածը 4.** Դրված է Խնձապատ համայնքի տարածքում, վարած և ցանած դաշտ է՝ ցանված է գարի, նախորդ մշակաբույսը՝ ցորեն:

**A 0-30 սմ** - մակերեսից փոխր, մուգ դարչնագույն, հատիկային ստրուկտուրայով, բույլ խոնավությամբ, կավային մեխանիկական կազմով, անցումը B հորիզոն՝ աննկատ:



**Նկ. 4.1. Հողի կորվածքը Նախիջևանիկ համայնքի ցեղադաշտում**

**AB 30-65 սմ** - մուգ գորշագույն, պինդ, թույլ արտահայտված ստրոկտորայով, խոնավ, կավային մեխանիկական կազմով, անցումն՝ աստիճանական:

**BC 65-80 սմ** - խոնավ, բաց գորշագույն, կավավագային մեխանիկական կազմով, ստրոկտորայից գուրկ, անցումը՝ կտրուկ:

**Կորվածք 5.** Դրված է Խրամորք համայնքի տարածքում, վարած է, մակերեսից չորացած, խորությամբ խոնավ:

**A 0-22 սմ** - կավային մեխանիկական կազմով, թույլ խոնավությամբ, կնծիկային ստրոկտորայով, փուխր, քարերից գուրկ, մուգ գորշ գույնի հումուսային հորիզոն, անցումն՝ աննկատ:

**AB 22-60 սմ** - մուգ գորշ գույնի, կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրոկտորայով, թույլ պնդացած, խոնավ, անցումը C հորիզոն՝ աստիճանական:

**BC 60-90 սմ** - գորշ գույնի, ստրոկտորայից գուրկ, ծանր կավագային մեխանիկական կազմով պինդ շերտ:

**Կորվածք 6.** Դրված է Ասկերան քաղաքի տարածքում, վարած է,

ցանված է աշնանացան ցորեն, մակերեսից չոր: Ըստ հորիզոնների հետևյալ պատկերն է՝

**A 0-25 սմ** - մուգ գորշ գույնի, մանր քարերի առկայությամբ, կավային մեխանիկական կազմով, քոյլ խոնավ, հատիկային ստրուկտորայով շերտ, անցումը B հորիզոն՝ աստիճանական:

**AB 25-42 սմ** - բաց գորշ գույնի, կավային մեխանիկական կազմով, քոյլ արտահայտված ստրուկտորայով, քոյլ խոնավությամբ շերտ, անցումը C հորիզոն՝ աստիճանական:

**BC 42-70 սմ** - բաց գորշ գույնի, կավավազային մեխանիկական կազմով, քոյլ խոնավությամբ, ստրուկտորայից զուրկ շերտ:

**Կղրվածք 7.** Կտրվածքը դրված է Ավետարանոց համայնքի տարածքում, հարավային թեքության վրա: Ցորենի դաշտ է (նկ. 4.2): Ըստ գենետիկական հորիզոնների կտրվածք 7-ը ներկայացնում է հետևյալ պատկերը.

**A 0-25 սմ** - մուգ գորշ գույնի, մակերեսից չոր, խորությամբ խոնավ, կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտորայով շերտ:

**B 25-45 սմ** - գորշ գույնի, կավային մեխանիկական կազմով, քոյլ արտահայտված ստրուկտորայով, խոնավ, անցումը C հորիզոն՝ կտրուկ:

**BC 45-80 սմ** - բաց շագանակագույն, խոնավ, կավավազային մեխանիկական կազմով, ստրուկտորայից զուրկ շերտ:

Կտրվածք 8. Հողափոսը դրված է Կարմիր գյուղ համայնքի տարածքում, ցորենի դաշտ է, հյուսիս-արևելյան թեքության՝ 7-10° (նկ. 4.3): Ըստ գենետիկական հորիզոնների ունի հետևյալ պատկերը՝

**A 0-27 սմ** - մուգ գորշ գույնի, կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտորայով, քոյլ խոնավությամբ, անցումն՝ աստիճանական:

**B 27-45 սմ** - մուգ գորշ գույնի, խոնավ, կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտորայով շերտ, անցումն՝ աստիճանական:

**BC 45-80 սմ** - գորշ գույնի, խոնավ, կավային մեխանիկական կազմով, ստրուկտորայից զուրկ շերտ:

Կտրվածքներ 9 և 10-ը դրված են Հովսեփիավան համայնքի տարածքի մշակության տակ գտնվող դաշտում: Ցանված էր ցորեն: Չնայած հողավոսերը դրված էին իրարից 300 մ հեռավորության վրա, գենետիկական տեսակետից իրար նման էին, այդ իսկ պատճառով բերվում է միայն N 9 կտրվածքի նկարագրությունը.

**A 0-30 ամ -** մուգ գորշ գույնի, կավային մեխանիկական կազմով, բույլ խոնավությամբ հատիկային ստրուկտուրայով, կարբոնատների առկայությամբ, անցումն՝ աննկատ:



**Նկ. 4.2. Ցորենի դաշտ Ավելիարանց համայնքի բարածքում**



**Նկ. 4.3. Կարմիր գյուղ համայնքի տարածքում աշնանացան ցորենի դաշտ**

**B 30-45 սմ** - գորշ գույնի, խոնավ, կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտորայով, անցումը C հորիզոն՝ աստիճանաբար: C հորիզոնը սկսվում է 45 սմ-ից՝ բաց գորշ գույնի, ստրուկտորայից գուրկ, պինդ, կավային մեխանիկական կազմով:

**Կտրվածք 11.** Դրված է Պատարա համայնքի տարածքում. ցել: Նախորդ մշակաբույսը՝ ցորեն: Ըստ գենետիկական հորիզոնների հետևյալ պատկերն է՝

**A 0-25 սմ** - մուգ գորշ գույնի, մակերեսից փուխր, խոնավ, կնճիկային ստրուկտորայով, կավային մեխանիկական կազմով: Անցումն՝ աստիճանական:

**B 25-55 սմ** - գորշ գույնի, խոնավ, պնդացած, թույլ ստրուկտորայով, կավային մեխանիկական կազմով, կարբոնատների առկայությամբ:

**BC 55-80 սմ** - մուգ շագանակագույն, փուխր, ստրուկտորայից գուրկ, խոնավ, ծանր կավային մեխանիկական կազմով:

**Կտրվածք 12.** Դրված է Այգեստան գյուղի տարածքում: Վարված

է, ցանված գարի, ըստ գենետիկական հորիզոնների հետևյալ պատկերն է՝

**A 0-20 սմ** - մուգ դարչնագույն, մակերեսից խոնավ, կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտորայով շերտ, անցումն՝ աստիճանական:

**B 20-40 սմ** - դարչնագույն, խոնավ, փուխր, կավային մեխանիկական կազմով, բույլ արտահայտված ստրուկտորայով, անցումը նկատելի է:

**BC 40-55 սմ** - բաց դարչնագույն, խոնավ, բույլ արտահայտված ստրուկտորայով, կավային մեխանիկական կազմով:

**BC 55-80 սմ** - շագանակագույն, խոնավ, կավային մեխանիկական կազմով, պնդացած, ստրուկտորայից գորկ:

**Կորպածք 13.** Դրված է Ակնաբըյուր համայնքի տարածքում: Հյուսիսային թեքություն՝ 5-7օ, չմշակված, նախորդ մշակաբույլ՝ ցորեն (նկ. 4.4): Ըստ գենետիկական հորիզոնների հետևյալ պատկերն է՝

**A 0-16 սմ** - գորշ գույնի, կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտորայով, անցումը B հորիզոն՝ աննկատ:

**B 16-40 սմ** - բաց գորշագույն, խոնավ, կավային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտորայով, անցումը C հորիզոն՝ կտրուկ:

**BC 40-70 սմ** - բաց շագանակագույն, խոնավ, կավային մեխանիկական կազմով, ստրուկտորայից գորկ, փուխր:



**Նկ. 4.4. Ակնաղբյուր համայնքի տարածքում անմշակ դաշտում հողափոսերի տեղադրում Ս. Գալստյանի հետ: Նախորդ մշակաբույսը՝ ցորեն:**

Այսպիսով, նոյն հողակտրվածքներից վերցված հողանմուշների ուսումնասիրություններն, ըստ գենետիկական հորիզոնների, ցոյց են տալիս, որ Ասկերանի շրջանի մշակովի հողերը քույլից ուժեղ հումուսային հորիզոնով, հիմնականում կավային մեխանիկական կազմով հողեր են՝ տարբեր աստիճանի էրոզացված, տարբեր դիրքադրության և տարբեր աստիճանի թերության, որոնց բարելավման համար պետք է ցուցաբերել առանձնակի մոտեցումներ: Ստորև բերվում է նշված համայնքներում դրված հողափոսերից վերցված հողանմուշների քիմիական կազմն՝ ըստ ջրային քաշվածքի (աղյուսակ 4.1.1):

## Աղյուսակ 4.1.1

### ԼՂՀ Ասկերանի շրջանի մշակովի հողերի քիմիական կազմ՝ ըստ ջրային քաշվածքի (2008-2010թթ.)

Հողա- նմուշի վերցման վայրը, հասայնը	Հողի հորիզո- նի հզորու- թյունը, սմ	Մեխա- նիկա- կազմը	pH	Ջրա- լուսած աղերի գումա- ռը, %	Ջրալուսած իոնները, մգ.էկվ/100 գ հողում						
					$CO_3^{2-}$	$HCO_3^-$	$CL^-$	$SO_4^{2-}$	$Ca^{2+}$	$Mg^{2+}$	$Na^+$ + $K^+$
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Շոշ կտր. 1	A 0-30	բերն կավ.	7.0	0.095	չկա	0.61	0.40	0.35	0.70	0.16	0.50
	AB 30-60	բերն կավ.	7.2	0.077	չկա	0.39	0.20	0.51	0.65	0.16	0.29
	BC 60-90	ծանր կավա- վազ.	7.2	0.100	չկա	0.80	0.40	0.19	0.65	0.16	0.58
Նախիչե- վանիկ կտր. 2	A 0-40	բերն կավ.	7.2	0.130	չկա	1.20	0.40	0.14	0.60	0.16	0.98
	AB 40-80	բերն կավ.	7.4	0.108	չկա	1.00	0.20	0.26	0.60	0.40	0.40
	BC 80- 100	ծանր կավա- վազ.	7.0	0.086	չկա	0.61	0.20	0.38	0.60	0.16	0.40
Նախիչե- վանիկ կտր. 3	A 0-22	բերն կավ.	7.3	0.128	չկա	1.00	0.59	0.21	0.80	0.32	0.68
	B 22-45	բերն կավ.	7.0	0.120	չկա	1.00	0.40	0.26	0.70	0.32	0.68
	BC > 45	բերն կավ.	7.2	0.108	չկա	0.80	0.59	0.16	0.50	0.40	0.65
Խնապատ կտր. 4	A 0-30	միջին կավ.	7.4	0.111	չկա	0.80	0.59	0.20	0.70	0.32	0.57
	B 30-65	միջին կավ.	7.0	0.119	չկա	1.00	0.40	0.21	0.60	0.16	0.81
	BC 65-80	բերն կավ.	7.3	0.099	չկա	0.80	0.20	0.36	0.60	0.32	0.40
Խրամորք կտր. 5	A 0-22	միջին կավ.	7.2	0.138	չկա	1.00	0.79	0.20	0.60	0.48	0.91
	BC 22-60	միջին կավ.	7.3	0.132	չկա	1.00	0.59	0.27	0.60	0.40	0.86
Ասկերան կտր. 6	A 0-25	բերն կավ.	7.7	0.112	չկա	0.80	0.40	0.36	0.70	0.16	0.70
	AB 25-42	ծանր կավա- վազ.	7.8	0.135	չկա	1.20	0.40	0.27	1.00	0.48	0.30
	BC > 42	ծանր կավա- վազ.	7.7	0.147	չկա	1.39	0.20	0.33	1.00	0.32	0.60
Ավետարա- նց կտր. 7	A 0-25	բերն կավ.	7.0	0.116	չկա	1.00	0.20	0.34	1.00	0.08	0.46
	B 25-45	բերն կավ.	7.0	0.119	չկա	0.80	0.40	0.46	0.80	0.16	0.70
	BC > 45	բերն կավ.	7.6	0.139	չկա	1.08	0.40	0.46	1.00	0.40	0.54

Հողա-նմուշի վերցման վայրը, համայնք	Հողի հորիզո- նի հզորու- թյունը, սմ	Մեխա- ֆիկա- կան կազմը	pH	Ջրա- լոյնջ աղնիքի գումա- րը, %	Ջրաբույժի խնները, մգ·էկվ/100 գ հողում							
					$CO_3^{2-}$	$HCO_3^-$	$CL^-$	$SO_4^{2-}$	$Ca^{2+}$	$Mg^{2+}$	$Na^+$ + $K^+$	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Կարսիր գյուղ կտր. 8	A 0-27	միջին կազ.	7.2	0.116	չկա	0.80	0.20	0.62	0.80	0.48	0.30	
	B 27-45	միջին կազ.	7.0	0.127	չկա	1.20	0.20	0.28	0.85	0.16	0.60	
	BC 45-80	միջին կազ.	7.2	0.136	չկա	1.20	0.20	0.43	0.75	0.48	0.60	
Հովսեփա- վան կտր. 9	A 0-30	բերն կազ.	7.6	0.142	չկա	1.20	0.40	0.36	1.10	0.32	0.54	
	B 30-45	բերն կազ.	7.3	0.165	չկա	1.39	0.51	0.31	1.10	0.16	0.95	
Հովսեփա- վան կտր. 10	A 0-25	բերն կազ.	6.8	0.111	չկա	1.00	0.20	0.31	0.70	0.40	0.41	
	B 25-45	բերն կազ.	7.0	0.124	չկա	1.00	0.20	0.46	0.90	0.16	0.60	
Պատարա կտր. 11	A 0-25	բերն կազ.	6.9	0.134	չկա	1.20	0.20	0.42	0.70	0.56	0.56	
	B 25-55	բերն կազ.	6.8	0.115	չկա	0.80	0.40	0.42	0.70	0.32	0.60	
Այգեստան կտր. 12	A 0-20	միջին կազ.	6.9	0.140	չկա	1.00	0.51	0.68	0.90	0.88	0.41	
	B 20-40	միջին կազ.	7.4	0.146	չկա	1.39	0.40	0.38	0.90	0.88	0.39	
	BC > 40	միջին կազ.	7.3	0.160	չկա	1.39	0.40	0.41	0.80	0.80	0.60	
Ակնադ- րյար կտր. 13	A 0-16	ծաճր կազ.	7.6	0.159	չկա	1.39	0.20	0.56	0.80	0.80	0.50	
	B 16-40	ծաճր կազ.	7.3	0.145	չկա	1.00	0.40	0.69	0.85	0.80	0.40	
	BC > 40	միջին կազ.	7.3	0.137	չկա	1.20	0.20	0.46	0.70	0.56	0.60	

Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ հզոր հումուսային հորիզոնն ունեն Շոշ, Նախիջևանիկ (կտր. 2), Խնապատ և Պատարա համայնքների տարածքներում դրված կտրվածքները, իսկ մնացած 9 համայնքների հողերը բույլից միջին հզորության, հումուսային հորիզոննվ հողեր են:

Պետք է նշել, որ Ասկերանի շրջանի հողերը հիմնականում առաջացել են կավային մայրատեսակների վրա, ուստի գենետիկական հորիզոնների (A+B) մեխանիկական կազմը հողանմուշներում տատանվում է թերևսից միջին և ծանր կավայինի սահմաններում, միայն Շոշ և Նախիջևանիկ համայնքների տարածքներում դրված հողանմուշների (BC հորիզոննի) մեխանիկական կազմն է ծանր կավավա-

զային:

Միջավայրի ռեակցիան (pH) չեզոքից բույլ հիմնային է և տատանվում է 6.8-7.6-ի սահմաններում: տորսիկ հոնը բացակայում է, ինչը վկայում է այդ հողերի բարվոք վիճակի մասին: Երկար տարիների մշակման արդյունքում նկատվում է ջրալույծ աղերի ցածր քանակություն, որը տատանվում է 0.095-0.160%-ի սահմաններում, ուստի վտանգ չի ներկայացնում գյուղատնտեսական մշակաբույսերի համար:

Համեմատաբար բարձր է ընդհանուր -ի քանակությունը, որը հասնում է 1.39 մգ. էկվ՝ 100 գ հողում և քանի որ հողում առկա են 0.8-1.2 մգ. էկվ Ca+Mg-ի հոններ, ապա ընդհանուր -ը պայմանավորված է և աղերով, ուստի վտանգավոր չեն գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման համար: Ցածր է ինչպես ջրալույծ -ի, այնպես էլ ջրալույծ -ի քանակությունը, բայց գտնվում են բույլատրելի սահմաններում: Հարկ է նշել, որ Այգեստան և Աղնալըյուր համայնքների հողերում նկատվում է ջրալույծ մագնիսիումի բարձր պարունակություն՝ մինչև 0.9 մգ-էկվ, ինչը պայմանավորված է մայրական ապարների քիմիական կազմով:

Ելնելով աղյուսակում բերված տվյալներից՝ կարելի է եզրակացնել, որ ԼՂՀ Ասկերանի շրջանի մշակովի հողերն, ըստ աղային կազմի, միանգամայն պիտան են գյուղատնտեսական բույսերի մշակության համար (Alexanyan V.A., 2014, a):

Անբարենապաստ են այդ հողերի ֆիզիկական հատկությունները, մասնավորապես, կավային մեխանիկական կազմը, որոնց բարելավման համար անհրաժեշտ է բարձր չափաքանակներով օրգանական պարարտանյութերի կիրառում, ինչպես նաև բարելավում մեխանիկական եղանակով (խճի, պենզայի ավելացում հողի վարելաշերտին):

Վերջին տասնամյակներում հողերի ֆիզիկական հատկություններին մեծ վնաս է հասցնում հացահատիկային մոնոկուլտուրայի (աշնանացան կամ գարնանացան) հետևանքով՝ նպաստելով այդ հողերի բերրիության և մշակաբույսերի բերքատվության անկմանը:

Շրջանի մշակովի հողերի բարելավման, գյուղատնտեսական

մշակաբույսերի բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ է պարարտացում օրգանահանքային պարարտանյութերով (գոմաղը 30-40 տ/հա չափաբաժնով, հնարավորության դեպքում կարելի է ավելի բարձր չափաբանակների կիրառում՝ 40-60 տ/հա), հանքային պարարտանյութերի կիրառում՝ ենելով մշակաբույսերի պահանջից, ինչպես նաև ցանքաշրջանառության կիրառում, ոռոգման համակարգի վերականգնում, ձնհալի ջրերի կուտակում, դաշտապաշտպան անտառաշերտերի հիմնում:

#### **4.2. Վարելահողերի կարբոնատների և փոխանակային կատիոնների կազմն ու փոխհարաբերությունը**

Գյուղատնտեսական նշանակության հողերի հիմնական ազրտադրական հատկություններից են կարբոնատների պարունակությունն ու կազմը, փոխանակային կատիոնների կազմը և դրանց տոկոսային հարաբերությունները՝ հողի կլասող կոմպլեքսում:

Պետք է նշել, որ հողի կարբոնատների կազմն անմիջապես պայմանավորված է մայրական ապարների կազմով, որը ժամանակի ընթացքում տեղի ունեցող հողագոյացման գործընթացում ենթակառ է նվազագույն հողմահարման, կենսաբանական և քիմիական եղանակներով քայլայման: Դրա հետևանքով կարբոնատների քանակն աստիճանաբար պակասում է, որոշ դեպքերում լվացվում և հեռանում է հողի մակերեսային շերտերից:

Կարբոնատների քայլայմանը զուգընթաց հողում ավելանում է կլասված կատիոնների քանակությունը՝ կախված կարբոնատների ընդհանուր պարունակության մեջ տարբեր բնույթի կարբոնատների քանակական հարաբերությունից: Այսինքն՝ հողառաջացման գործընթացում մեծ է կարբոնատների դերը, իսկ հողում փոխանակային կատիոնների կազմն ու քանակական հարաբերությունը մեծ ազդեցություն ունեն գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման և բերքատվության վրա: Պարզվել է, որ գյուղատնտեսական մշակաբույսերի աճի և զարգացման համար կատիոնների լավագույն հարաբերությունը հողի կլասող կոմպլեքսում հետևյալն է՝

Ca:Mg:Na:K=60:30:5:5 (Մանուկյան P.P., 2006, Պապինյան В.А., 2013): Բազմաքիվ փորձերով հաստատված է, որ կատիոնների այդպիսի հարաբերություն ստեղծելու համար անհրաժեշտ է հող մտցնել կալցիումական աղեր: Կատիոնների ընդհանուր ծավալը անմիջականութեն կախված է հողի մեխանիկական կազմից, մայրական ապարների բնույթից, հումուսացվածությունից և այլ գործոններից:

Վերը նշված հարցերի պարզաբանման համար ուսումնասիրվել է Ասկերանի շրջանի մշակովի հողերի կարբոնատների կազմը ( $C_aCO_3$ ,  $MgCO_3$ ): Դա կատարվում է առաջին անգամ (Ալեքսանյան В.А., 2013, а), քանի որ մինչ այդ կարբոնատների կազմը տրվել է ընդհանուր ձևով, որոշելով միայն  $CO_2$ -ի քանակությունը (Սարկիսյան С.С., 1971):

Ինչպես դաշտային, այնպես էլ լաբորատոր հետազոտություններ են կատարվել շրջանի 11 համայնքների մշակովի հողերի տարածքներում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հետազոտվող բոլոր համայնքների մշակովի հողերն ունեն թերևից ծանր կավային կազմ, քանի որ առաջացել են հիմնականում կավային մայրատեսակների վրա (Ալեքսանյան Վ.Ա., 1997, թ), իսկ հումուսը, կախված հողի տիպից, դիրքադրությունից, քերության աստիճանից, տատանվում է 2.5-4.5%-ի սահմաններում՝ հողի A և B հորիզոններում, և նվազում է BC հորիզոննում՝ հասնելով 1.0-1.5%-ի (Ալեքսանյան Վ.Ա., 1997, ա):

Աղյուսակ 4.2.1-ում բերվում է ուսումնասիրվող տարածքների կարբոնատների կազմը ( $C_aCO_3$ ,  $MgCO_3$ ), որտեղից երևում է, որ տարբեր համայնքների հողերում կարբոնատների քանակությունը տարբեր է: Պետք է նշել, որ որպես օրինաչափություն, մշակովի հողերի վերին՝ A և B հորիզոնները, համեմատաբար, ավելի քիչ են պարունակում կարբոնատներ, քան ստորին՝ C հորիզոնը, ինչը ցայտուն կերպով երևում է Շոշ, Կարմիր գյուղ, Այգեստան, Ակնաղբյուր, Հովսեփավան համայնքներում դրված հողային կտրվածքների տվյալներից, որտեղ կարբոնատների կազմում գերակշռում է  $C_aCO_3$ -ը՝ տատանվելով 7.0-15.0% (Շոշ), 9.0-28.0% (Կարմիր գյուղ), 10-23%-ի (Հովսեփավան) սահմաններում:

## Աղյուսակ 4.2.1

### ԼՂՀ Ասկերանի շրջանի մշակվող հողերի կարբոնատների որակական կազմը և քանակական հարաբերությունը (2008-2010թ.)

Հողանմուշների վերցման վայրը համայնք	Հողի հորիզոնի հզորութ., սմ	Կարբոնատները, %		Ընդհանուր գումարը, %	%-% պատահայնված	
		$CaCO_3$	$MgCO_3$		$CaCO_3$	$MgCO_3$
1	2	3	4	5	6	7
Շոջ կտր.1	A 0-30	7.0	4.1	11.1	63.6	36.4
	AB 30-60	9.5	1.2	10.7	88.8	11.2
	BC 60-90	15.5	1.2	16.7	92.8	7.2
Նախիչևանիկ կտր.2	A 0-40	11.0	0.8	11.8	93.2	6.8
	AB 40-80	13.0	1.6	14.6	89.0	11.0
	BC 80-100	10.0	1.6	11.6	86.2	13.8
Նախիչևանիկ կտր.3	A 0-22	19.0	2.5	21.5	88.4	11.6
	B 22-45	20.0	2.5	22.5	88.8	11.2
	BC > 45	25.0	4.1	29.1	85.9	14.1
Խնձորեսկ կտր.4	A 0-30	14.0	1.6	15.6	89.7	10.3
	B 30-65	10.5	1.2	11.7	89.7	10.3
	BC 65-80	12.0	0.8	12.8	93.8	6.2
Խրամոք կտր.5	A 0-22	18.0	0.8	18.8	95.7	4.3
	BC 22-60	17.5	0.4	17.9	97.8	2.2
Աղբան կտր.6	A 0-25	29.0	0.8	29.8	97.3	2.7
	AB 25-42	32.0	3.3	35.3	90.7	9.3
	BC > 42	33.0	1.6	34.6	95.4	4.6
Ավետարանց կտր.7	A 0-25	17.0	2.5	19.5	87.2	12.8
	B 25-45	17.0	2.5	19.5	87.2	12.8
	BC > 45	19.0	0.8	19.8	96.0	4.0
Կարմիր գյուղ կտր.8	A 0-27	9.0	2.5	11.5	78.3	21.7
	B 27-45	10.5	2.1	12.6	83.3	16.7
	BC > 45	28.0	2.5	30.5	91.8	8.2
Հովսեփավան կտր.9	AB 0-30	10.0	4.1	14.1	70.9	29.1
	BC > 30	23.0	3.3	26.3	87.4	12.5
Հովսեփավան կտր.10	A 0-25	6.0	1.6	17.6	78.3	21.1
	B 25-45	9.0	2.5	11.5	78.3	21.7
Պատարա կտր.11	A 0-25	3.0	1.6	4.6	65.2	34.8
	B 25-55	7.0	2.4	9.4	74.5	21.1
Այգեստան կտր.12	A 0-20	9.0	3.3	12.3	73.2	26.8
	B 20-40	13.0	2.9	15.9	81.8	18.2
	BC > 40	21.0	3.3	24.3	86.4	13.6
Աղնաղբյուր կտր.13	A 0-16	14.0	1.6	15.6	89.7	10.3
	B 16-40	17.0	2.5	19.5	87.2	12.8
	BC > 40	28.0	2.5	30.5	91.8	8.2

Հողերում  $MgCO_3$ -ի քանակությունը բարձր չէ՝ տատանվում է 0.8-4.1%-ի սահմաններում, իսկ ընդհանուր կարոնատների կազմում  $CaCO_3$ -ը գերակշռում է՝ կազմելով 63.6% ( $Cn_2$ , 0-30 սմ) և 95.7% (Խրամորք համայնքի 0-30 սմ շերտում): Որպես օրինաչափություն՝  $CaCO_3$ -ի քանակությունը հետազոտվող հողիզոններում շատ քիչ է փոփոխվում: Այսպես, եթե  $Cn_2$  համայնքի հողերում այն տատանվում է 63.6-92.8%-ի սահմաններում, դրան հակառակ՝ Նախիջևանիկ համայնքի հողերում  $CaCO_3$ -ի քանակությունն՝ ըստ հորիզոնների, շատ աննշան է փոփոխվում՝ տատանվելով 86.2 - 93.2%-ի սահմաններում:

Նման օրինաչափություն է նկատվում նաև  $MgCO_3$ -ի պարունակության տեսակետից:

Այսպիսով, ուսումնասիրվող հողերում  $CaCO_3:MgCO_3$ : հարաբերությունը վտանգ չի ներկայացնում գյուղատնտեսական մշակաբույսերի աճի համար:

Աղյուսակ 4.2.2-ում բերված են նույն հողանմուշների մեջ փոխանակային կատիոնների կազմն ու քանակական հարաբերությունները՝ ըստ համայնքների:

## Աղյուսակ 4.2.2

### ԼՂՀ Ասկերանի շրջանի մշակվող հողերի փոխանակային կատիոնների որակական կազմը և քանակական հարաբերությունը (2008-2010թ.)

Հողանուշների վերցման վայրը, համայնք	Հողի հորիզոնի հզորութ., ամ	Փոխանակային կատիոններ մգ-էլեկ/100գ հողամ				Ընդհ. զում ըլ, մգ· էլեկ	%-% արտահայտված			
		Ca	Mg	Na	K		Ca	Mg	Na	K
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Շոշ կտր.1	A 0-30	31.3	9.8	0.5	1.0	42.6	73.5	23.0	1.2	2.3
	AB 30-60	31.4	16.8	0.5	0.7	49.4	63.6	34.0	1.0	1.4
	BC 60-90	29.3	14.8	0.4	0.7	45.2	64.8	32.7	0.9	1.5
Նախիջևանիկ կտր.2	A 0-40	30.4	12.8	0.3	0.5	44.0	69.1	29.1	0.7	1.1
	AB 40-80	31.4	8.6	0.5	0.7	41.2	76.2	20.9	1.2	1.7
	BC 80-100	35.4	11.8	0.4	0.7	48.3	73.3	24.4	0.8	1.5
Նախիջևանիկ կտր.3	A 0-22	29.2	6.7	0.5	1.1	37.5	77.9	17.9	1.3	2.9
	B 22-45	25.3	12.7	0.5	1.1	39.6	63.9	32.1	1.3	2.7
	BC > 45	24.5	11.6	0.4	0.8	37.3	65.7	31.1	1.1	2.1
Խնապստ կտր.4	A 0-30	26.3	7.7	0.4	1.3	35.7	73.7	31.6	1.1	3.6
	B 30-65	28.4	7.8	0.6	1.1	37.9	74.9	20.6	1.6	2.9
	BC 65-80	29.4	17.7	0.6	0.8	48.5	60.6	36.6	1.2	1.6
Խրամորք կտր.5	A 0-22	28.4	13.5	0.7	1.1	43.7	65.0	30.9	1.6	2.5
	BC 22-60	28.4	12.6	0.6	0.9	42.5	66.8	29.6	1.4	2.8
Ասկերան կտր.6	A 0-25	22.3	18.8	0.6	0.7	42.4	52.6	44.3	1.4	1.7
	AB 25-42	20.5	10.0	0.5	0.4	31.4	65.3	31.8	1.6	1.3
	BC > 42	29.0	5.7	0.5	0.4	35.6	81.5	16.0	1.4	1.1
Ավետարանց կտր.7	A 0-25	35.0	15.9	0.8	0.6	52.3	66.9	30.4	1.5	1.2
	B 25-45	43.2	9.8	0.7	0.4	54.1	79.9	18.1	1.3	0.7
	BC > 45	51.0	9.6	0.5	0.4	61.5	82.9	15.6	0.8	0.7
Կարմիր գյուղ կտր.8	A 0-27	41.2	13.5	0.3	0.7	55.7	74.0	24.2	0.5	1.3
	B 27-40	41.1	9.8	0.5	0.6	52.00	79.0	18.8	1.0	1.2
	BC > 40	33.3	19.5	0.4	0.7	53.9	61.8	36.2	0.7	1.3
Հովսեփավան, կտր. 9	AB 0-30	26.9	13.7	0.5	0.4	41.5	64.8	33.0	1.2	1.0
	BC > 30	26.9	9.8	0.6	0.5	37.8	71.2	25.9	1.6	1.3
Հովսեփավան, կտր. 10	AB 0-25	32.1	16.8	0.6	0.5	50.0	64.2	33.6	1.2	1.0
	B 25-45	42.3	18.4	0.7	1.1	62.5	67.7	29.4	1.1	1.8
Պատարա կտր.11	AB 0-25	35.3	27.4	0.5	0.7	63.9	55.2	42.9	0.8	1.1
	B 25-55	35.3	25.7	0.4	0.7	62.1	56.8	41.4	0.6	1.2
Այճաստան կտր.12	A 0-20	33.1	19.1	0.6	1.1	53.9	61.4	35.4	1.1	2.1
	B 20-40	31.1	10.1	0.5	0.7	42.9	73.3	23.8	1.2	1.7
	BC > 40	25.2	17.2	0.4	0.6	43.4	58.0	39.6	0.9	1.5
Ակնաղբյուր կտր.13	A 0-16	35.2	29.2	0.5	0.6	65.5	53.7	44.6	0.8	0.9
	B 16-40	37.2	33.2	0.6	0.6	71.6	52.0	46.4	0.8	0.8
	BC > 40	39.3	27.5	0.3	0.7	67.8	58.0	40.5	0.4	1.1

Անհրաժեշտ է նշել, որ նախակինում կատարված աշխատանքներում չեն տրվել փոխանակային Na-ի, K-ի քանակությունները:

Բերված տվյալներից երևում է, որ փոխանակային Ca-ը հիմնականում գերակշռում է Mg-ի իոնին մոտ 2.0-2.5 անգամ, իսկ փոխանակային Na-ի և K-ի քանակությունները զտնվում են թույլատրելի սահմանից (5-10%) ցածր, այսինքն՝ այդ հողերում առկա են նպաստավոր պայմաններ գյուղատնտեսական մշակաբույսերի աճի համար:

Որոշ կտրվածքներում (Եվանյան համայնքի տարածքում) Mg-ի իոնի քանակությունը հողի կլասող կոմպլեքսում բարձր է և հասնում է 44.3% (0-25 սմ շերտում), որի նվազեցման համար անհրաժեշտ է հող մտցնել կացցիումական աղեր՝ հիմնականում սուպերֆոսֆատի, գիպսի, կալցիում քլորիդի ձևով:

Mg-ի կատիոնի բարձր քանակություն է նկատվում նաև Պատարա, Աղնաղըյուր համայնքների տարածքներից վերցված հողանմուշներում, որտեղ այն տատանվում է 41.4-46.4%-ի սահմաններում, ուստի տվյալ հողերում Mg-ի իոնի քանակի իջեցման համար նույնական պես հող պետք է մտցնել կացցիումական աղեր:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ասկերանի շրջանի մշակովի հողերում հիմնականում գերակշռում է  $CaCO_3$ -ը, իսկ  $MgCO_3$ -ի քանակությունը ցածր է: Փոխանակային կատիոնների կազմում հիմնականում գերակշռում է  $Ca$ -ի իոնը, որը գերազանցում է  $Mg$ -ի իոնին 2.0-2.5 անգամ, այսինքն՝ հետազոտվող հողերում առկա են նպաստավոր պայմաններ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության համար: Այն հողակտորներում, որտեղ հողի կլասող կոմպլեքսում նկատվում է Mg-ի բարձր քանակություն ( $>30\%$ ), անհրաժեշտ է կարգավորել  $Ca:Mg$ -ի հարաբերությունը: Տվյալ հողերից բավարար բերք ստանալու համար անհրաժեշտ է հող մտցնել օրգանահանքային պարարտանյութեր և կիրառել ցանքաշրջանառություն, ինչպես նաև անցկացնել ոռոգման համակարգ (Ալեքսանյան Վ.Ա., 2013, 6):

#### **4.3. Վարելահողերում հումուսի, սննդային տարրերի (N, P, K) պարունակությունը**

Վերջին տասնամյակներում Ասկերանի շրջանի տնտեսություններում կատարվել են կուլտուր-տեխնիկական աշխատանքներ, մասնատված վարելահողերը վերածվել են զանգվածային դաշտերի, նախկին խաղողի այգիները քանդվել և դրվել են հացահատիկային մշակաբույսերի տակ, ոռոգման համակարգը դադարել է գործել, երկրագործությունը տարվում է անջրդի պայմաններում, ուստի անհրաժեշտ է նոր ուսումնասիրություններով վեր հանել այն հրատապ հարցերը, որոնց լուծման միջոցով հնարավոր կլինի բարձրացնել այդ հողերի բերրիությունը և արտադրական կարողությունները:

Քանի որ շրջանի տարածքի վարելահողերի հիմնական մասը ներկայում սեփականաշնորհված է, ուստի առաջ են եկել հողօգտագործման նոր հարաբերություններ, հողօգտագործման և հողերի պահպանման նոր մոտեցումներ: Հողերի արդյունավետ օգտագործումը, դրանց պահպանումը, բերրիության բարձրացումը համարվում են առաջնային հիմնախնդիրներ, ուստի պահանջվում է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան պահպանել և բարձրացնել մշակովի հողերի բերրիությունը, մշակաբույսերից ստանալ կայուն, որակյալ ու բարձր բերք:

Ուսումնասիրությունները տարվել են շրջանի 11 համայնքների՝ հիմնականում հացահատիկային մշակաբույսերով զբաղեցված մշակովի հողերում, որոնք բնորոշ են շրջանի ամբողջ տարածքի համար: Ուսումնասիրվող տարածքներում դրվել են հողափոսեր, որոնցից վերցվել են հողանմուշներ՝ ըստ գենետիկական հորիզոնների: Դաշտային և լարորատոր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ հողերը հիմնականում միջին հզորության, կարբոնատային, կավային մեխանիկական կազմով հողեր են:

Ուսումնասիրվող հողերը հիմնականում լեռնաանտառային դարչնագույն, կրագերծ, լեռնաանտառային դարչնագույն տափաստանացված կարբոնատային (բարձրությունների վրա) և մոխրագարչնագույն (հարքավայրային մասերում) տիպի հողեր են:

Ուսումնասիրվել են հումուսի և մատչելի սննդատարրերի (N, P, K) պարունակությունը, որոնք հանդիսանում են հողերի բերդիության գնահատման հիմնական չափանիշները (աղյուսակ 4.3.1):

#### **Աղյուսակ 4.3.1**

### **ԼՂՀ Ասկերանի շրջանի մշակվող հողերի հումուսի և մատչելի սննդատարրերի պարունակությունը (2008-2010թ.)**

Հողանմուշների վերցման վայրը (համայնքները)	Հորիզոնների հզորությ. սմ	Հումուս, %	Մատչելի սննդային տարրեր, մգ/100գ		
			N	P <sub>2</sub> O <sub>5</sub>	K <sub>2</sub> O
1	2	3	4	5	6
Շոշ կտր.1	A 0-30	5.17	4.80	4.0	46
	AB 30-60	3.29	2.20	2.6	34
	BC 60-90	1.26	1.70	1.6	30
Նախիջևանիկ կտր.2	A 0-40	4.71	4.25	3.0	25
	AB 40-80	3.38	3.00	2.8	34
	BC 80-100	1.93	1.48	2.2	33
Նախիջևանիկ կտր.3	A 0-22	3.14	3.94	5.2	41
	B 22-45	2.40	2.10	3.7	42
	BC > 45	1.40	1.96	2.2	35
Խճառաստ կտր.4	A 0-30	4.05	3.80	1.5	31
	B 30-65	2.33	2.17	0.8	32
	BC 65-80	1.64	1.63	0.8	35
Խրամորք կտր.5	A 0-22	3.81	3.00	1.5	43
	BC 22-60	3.41	2.80	2.4	35
	AB 0-25	4.62	3.90	4.3	42
Սսկերամ կտր.6	AB 25-42	3.36	3.00	3.7	33
	BC > 42	1.41	0.90	2.5	17
	A 0-25	3.15	3.10	2.2	18
Ավետարանց կտր.7	B 25-45	2.43	2.26	1.2	27
	BC > 45	1.45	1.26	1.0	17
	A 0-27	5.64	5.15	2.5	35
Կարմիր գյուղ կտր.8	B 27-45	3.50	3.70	3.5	26
	BC > 45	1.47	1.16	1.5	34
	AB 0-30	3.88	2.25	2.2	17
Հովսեփավան կտր.9	BC > 30	1.36	1.80	3.0	24
	A 0-25	5.53	4.05	4.7	32
	B 25-45	3.31	3.50	2.1	23
Պատարա կտր.11	A 0-25	4.40	3.80	4.5	35
	B 25-55	3.10	3.16	2.7	28
Այգեստան կտր.12	A 0-20	3.79	4.00	2.2	42
	B 20-40	2.47	2.30	1.5	34
	BC > 40	1.57	1.80	1.1	26
Ակնաղբյուր կտր.13	A 0-16	3.26	3.15	2.2	25
	B 16-40	2.40	1.90	2.5	26
	BC > 40	1.29	0.90	1.4	34

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ուսումնասիրվող հողերի հումուսային (A+B) հորիզոնը հիմնականում միջին հզորության է և տատանվում է 0-45 սմ-ի սահմաններում, միայն Ըոշ և Նախիջևանիկ (կտր. 2) համայնքներում դրված հողափուտերի հումուսային շերտի հզորությունն է մեծ: Հայտնի է, որ հողի հումուսային շերտի հզորության և մշակաբույսերի բերքատվության միջև գոյություն ունի սերտ կապ. որքան մեծ է հումուսային հորիզոնների հզորությունը, այնքան բարձր են բույսերին անհրաժեշտ սննդատարրերի պաշարները, և հետևաբար ստեղծվում են բարենպաստ պայմաններ մշակաբույսերի սննդառության համար:

Ի.Ո.Հովսեփյանի (1976) ուսումնասիրություններից պարզել է, որ հողի հումուսային հորիզոնի հզորության և հացահատիկային մշակաբույսերի բերքատվության միջև համահարաբերակցությունը ոռոգվող հողերում տատանվում է 0.61-0.77-ի, իսկ անջրդի հողերում՝ 0.38-0.66-ի սահմաններում, ուստի ուսումնասիրվող հողերի ներկայիս բերրիության մակարդակը ցածր է (Ալեքսանյան Վ.Ա., 2011, 6):

Աղյուսակից երևում է, որ ուսումնասիրվող հողերում հումուսի քանակությունը բարձր չէ, այն Ա հորիզոնում տատանվում է 3.5-4.5%-ի սահմաններում, խորությամբ նվազում է Յ հորիզոնում, իսկ ՅC հորիզոնում տատանվում է 0.9-1.5%-ի սահմաններում: Սակայն հայտնի է, որ հումուսի քանակով է պայմանավորված հողերի բնական բերրիության մակարդակը: Հումուսի բարձր քանակը մեծապես ազդում է հողի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական հատկությունների վրա: Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ Ասկերանի շրջանի վարելահողերի բերրիության մակարդակը ցածր է և առանց համարիր միջոցառումների կիրառման հնարավոր չէ ստանալ բարձր բերք (Ալեքսանյան Վ.Ա., 2013, a):

Ցածր է նաև սննդային տարրերի պարունակությունը. շարժուն - ի քանակությունը Ա հորիզոնում տատանվում է 5.15-3.15 մգ/100գ-ի սահմաններում: Այն համեմատաբար նվազում է Յ և ՅC հորիզոններում, այսինքն՝ այդ հողերը թույլ են ապահովված շարժուն -ով, իսկ շարժուն ֆուֆորով՝ Ա հորիզոնում՝ թույլից միջին և թույլ՝ Յ և ՅC հորիզոններում, իսկ ահա կալիունով միջին և լավ են ապահովված:

Այսպիսով, բարձր և կայուն բերք ստանալու համար անհրաժեշտ է նշված հողեր ներմուծել օրգանահանքային պարատանյութեր:

#### **4.4. Վարելահողերում ծանր մետաղների շարժում ձևերի պարունակությունը**

Ուսումնասիրություններ են տարվել նաև շրջանի վարելահողերում՝ ծանր մետաղների պարունակության բացահայտման ուղղությամբ։ Դրանց միջոցով հնարավոր է բնորոշել տվյալ հողերից ստացվող գյուղմթերքների էկոլոգիապես մաքուր լինելը։ Մարդու օրգանիզմ մտնող քունավոր միացությունների մինչև 70%-ն անցնում է սննդի հետ, 20%-ը՝ օդից և 10%-ը՝ ջրի միջոցով (Հայրապետյան Ե.Մ, Շիրինյան Ա.Վ., 2003):

Էկոլոգիապես մաքուր արտադրանք ստանալու համար անհրաժեշտ է ումենալ հակասոի տվյալներ տվյալ տարածքի, ռեգիոնի էկոհամակարգի մասին։ Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով ցանկացած միջոցառման ժամանակ պարտադիր պետք է պարզել ստացված արտադրանքի որակի համապատասխանությունը էկոլոգիա-տորսիկոլոգիական նորմատիվներին, իմանալ առանձին քիմիական նյութերի այն սահմանային քուղմթերքների և մսի մեջ, որպեսզի հետագայում վնաս չհասցվի մարդու առողջությանը։

Այդ տեսակետից կարևոր է իմանալ գյուղատնտեսական հողատեսքերում ծանր մետաղների պարունակությունը և մշակել միջոցառումներ, որոնց շնորհիվ հնարավոր կիրարի չեզոքացնել կամ նվազեցնել դրանց տորսիկ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա։

Ծանր մետաղների պարունակության ուսումնասիրությունը ԼՂՀ հողերում վերջին տասնամյակների ընթացքում կատարվում է առաջին անգամ։

Ուսումնասիրությունները տարվել են Ասկերանի շրջանի 11 համայնքների տարածքների վարելահողերից վերցված հողանմուշներում։

Հողանմուշները վերցվել են ըստ գենետիկական հորիզոնների։ Բոլոր կտրվածքների A և B հորիզոնների հողերն ունեն քերևից ծանր կավային մեխանիկական կազմ, միջին և ուժեղ կարբոնատա-

յին են, ոչ աղակաված (0.1-0.2% աղ), փոխանակային կատիոնների կազմում գերակշռում են՝ Ca-ի իոնը, հասնելով 60-70%-ի, ինչպես նաև՝ Mg-ի (20-30%), Na-ի (< 5%), K-ի (< 5%) իոնները: Հիմնականում գերակշռում է լեռնահնտառային դարչնագույն տափաստանացված հողային տիպը, ավելի ցածրադիր մասերում՝ նաև շագանակագույն հողերը: Հումուսի քանակությունը բարձր չէ, տատանվում է 3.0-4.5%-ի սահմաններում:

Այսինքն՝ բարելավման միջոցառումների շնորհիվ հնարավոր է այդ հողերից բավարար բերք ստանալ:

Պետք է նշել, որ ծանր մետաղների կուտակումը շրջակա միջավայրում, հողում կատարվում է արագ, իսկ դրանց հետացումը հողից և չեղոքացումը տևում են հարյուրավոր տարիներ: Իսկ այդ տարիների ընթացքում անցնում են ջրերի մեջ, ապա՝ յուրացվում բույսերի կողմից, անցնում սննդի մեջ:

Եկոհամակարգերի համար ավելի մեծ վտանգ են ներկայացնում ծանր մետաղների շարժուն ձևերը: Դա էլ իմք է հանդիսացնել, որպեսզի Ասկերանի շրջանի վարելահողերում որոշվի ծանր մետաղների (Cu, Zn, Pb, Cd, Mo, Mn) շարժուն ձևերի պարունակությունը (աղյուսակ 4.4.1):

#### **Աղյուսակ 4.4.1**

#### **ԼՎՀ Ասկերանի շրջանի մշակովի հողերում ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը (2008-2010թթ.)**

Հողանմուշների վերցման վայրը, համայնքներ	Հողի հորիզոնի հզորուք., մմ	Ծանր մետաղների շարժուն ձևերի քանակությունը, մգ/կգ հողում*					
		Cu	Zn	Pb	Cd	Mo	Mn
1	2	3	4	5	6	7	8
Շոշ կտր.1	A 0-30	2.24	5.60	2.5	0.20	0.40	27.3
	AB 30-60	2.24	3.40	1.7	0.26	0.40	31.0
	BC 60-90	1.10	2.10	1.0	0.14	0.28	18.0
Նախիջևանիկ կտր.2	A 0-40	5.70	6.75	2.4	0.20	0.48	39.8
	AB 40-80	2.40	4.20	2.0	0.72	0.40	60.0
	BC 80-100	1.20	2.00	1.1	0.20	0.24	27.1
Նախիջևանիկ կտր.3	A 0-22	3.03	7.20	4.0	0.64	0.42	90.0
	B 22-45	2.24	5.80	2.9	0.48	0.40	86.0
	BC > 45	1.11	4.20	1.3	0.24	0.20	42.0

Հողանմուշների վերցման վայրք, համայնքներ	Հողի հորիզոնի հզորութ., սմ	Ծանր մետաղների շարժուն ձևերի քանակությունը, մգ/կգ հողում					
		Cu	Zn	Pb	Cd	Mo	Mn
1	2	3	4	5	6	7	8
Խնապստ կտր.4	A 0-30	4.60	7.50	3.5	0.60	0.40	59.5
	B 30-65	3.10	6.70	2.3	0.34	0.40	45.2
	BC 65-80	2.10	4.30	1.8	0.26	0.28	24.6
Խրամոք կտր.5	A 0-22	3.90	7.30	2.9	0.75	0.40	74.0
	BC 22-60	4.90	1.6	0.40	0.40	55.3	74.0
Ասկիբան կտր.6	A 0-25	4.80	8.22	2.4	0.75	0.56	74.0
	AB 25-42	3.72	5.31	1.3	0.40	0.42	80.0
	BC > 42	2.80	4.14	1.0	0.28	0.26	56.2
Ավետարանց կտր.7	A 0-25	4.60	6.30	2.6	0.72	0.40	36.4
	B 25-45	2.24	3.40	2.0	0.20	0.40	45.5
	BC > 45	2.40	1.90	1.3	0.14	0.28	18.6
Կարմիր գյուղ կտր.8	A 0-27	3.90	6.40	2.1	0.56	0.40	42.4
	B 27-45	2.80	3.10	2.0	0.20	0.40	15.2
	BC > 45	2.00	2.60	1.4	0.13	0.40	18.2
Հովսեփավան կտր.9	AB 0-30	4.20	6.75	2.6	0.71	0.40	45.0
	BC > 30	2.62	4.00	1.9	0.48	0.40	57.0
Հովսեփավան կտր.10	A 0-25	3.55	3.60	3.5	0.76	0.40	62.6
	B 25-45	2.88	3.40	2.9	0.45	0.40	39.8
Պատարա կտր.11	A 0-25	4.12	5.20	3.1	0.50	0.40	46.2
	B 25-55	3.50	4.20	1.6	0.20	0.40	39.8
Այգեստան կտր.12	A 0-20	4.55	6.75	2.4	0.84	0.40	50.0
	B 20-40	2.24	3.40	1.8	0.71	0.40	48.0
	BC > 40	1.90	2.80	1.2	0.40	0.24	27.1
Ակնաղբյուր կտր.13	A 0-16	3.38	6.75	4.2	0.66	0.43	47.0
	B 16-40	3.88	6.75	2.6	0.42	0.40	39.8
	BC > 40	2.30	4.50	1.3	0.28	0.32	32.1

Ըստ բերված սանդղակի (աղյուսակ 4.4.2)՝ շրջանի վարելահողերը Cu-ով և Mo-ով չաղտոտված հողեր են, Zn-ի քանակությունը տարբեր համայնքներում տարբեր է և հիմնականում ընկած է թույլ աղտոտված սանդղակի սահմաններում: Pb-ի քանակությունը համեմատաբար բարձր է:

#### Աղյուսակ 4.4.2

**Ծանր մետաղների պարունակության (մգ/կգ) սահմանները  
տարբեր աստիճանի աղտոտված հողերում  
(ըստ Վ.Վ.Գրիգորյանի տվյալների, 1988)**

Աղտոտվածության աստիճանը	Cu		Mo		Zn		Pb	
	համբող- հանոր	շարժուն ություն	համբող- հանոր	շար- ժություն	համբող- հանոր	շար- ժություն	համբող- հանոր	շար- ժություն
Չաղտոտված	60	10	10	2	65	4	12	1
Թույլ աղտոտված	60-100	10-17	10-20	2-5	65-120	4-10	12-20	1-2
Միջին աղտոտված	100-160	17-25	20-40	5-8	120-200	10-20	20-30	2-5
Ուժեղ աղտոտված	> 160	> 25	> 40	> 8	> 200	> 20	> 30	> 5

Ուսումնասիրվող հողերում շարժուն Cd-ի քանակությունը բարձր չէ և տատանվում է 0.2-0.8 մգ/կգ-ի սահմաններում, այսինքն՝ գտնվում է սահմանային թույլատրելի խտության մակարդակում («Քիմիական նյութերով հողերի աղտոտվածության վտանգի աստիճանի զնահատման մեթոդական ցուցումներ», Մուկվա, 1987, ըստ Հայրապետյանի Է.Ս., Շիրինյանի Ա.Վ. բերված տվյալների (2003)): Շարժուն Mn-ի քանակությունն ուսումնասիրվող հողերում (A և B հորիզոններում) տատանվում է 20-80մգ/կգ-ի սահմաններում:

Ծանր մետաղներով հողերի աղտոտվածության չեզոքացման համար օգտագործվում են տարրեր նյութեր (օրգանական պարատանյութեր, կիր, ցեղլիտներ, դացիտային տուֆեր, սինթեզված ձյութ և այլն), որոնք ծանր մետաղները կապում են և վերածում բույսերի համար աննատչելի ձևերի, իսկ մետաղները հողից հեռացնելու նպատակով դրանք վերածում են շարժուն ձևերի և ապա թքով միջավայրում  $\text{FeCl}_3$ -վ (Հայրապետյան Է.Ս., Շիրինյան Ա.Վ., 2003):

Այսպիսով, համաձայն ուսումնասիրությունների արդյունքների՝ Ասկերանի շրջանի վարելահողեր՝ ըստ ծանր մետաղների շարժուն ձևերով աղտոտվածության, կարելի է գնահատել հետևյալ կերպ. շարժուն Cd-ի քանակությունը գտնվում է թույլատրելի խտության սահմաններում, իսկ Cu-ով և Mo-ով հողերն աղտոտված չեն, Zn-ով և Pb-ով թույլից միջին աղտոտված են, սակայն ոչ բոլոր համայնքներում:

Ծանր մետաղների քանակության նվազեցման համար անհրաժեշտ է կիրառել պարարտացում՝ օրգանական պարարտանյութերով, անհրաժեշտության դեպքում հող մտցնել ցեղլիտային և դացիտային տուֆեր, որոնք կլանելով ծանր մետաղները՝ կարգելակեն դրանց անցումը բույսերի մեջ (Alexanyan V.A., 2014, b):

#### **4.5. Նախալեռնային և միջին լեռնային գոտիների վարելահողերի ֆիզիկական հատկությունները և կարգավորման ուղիները**

Հողի ֆիզիկական հատկություններն անմիջականորեն ազդում են մշակաբույսերի աճի և զարգացման վրա, ուստի դրանց բարելավումը համարվում է զյուղատնտեսական մշակաբույսերի բարձր բերքի ստացման գլխավոր պայմաններից մեկը: Հողերի ընդհանուր ֆիզիկական հատկություններից են՝ ծավալային զանգվածը, տեսակարար կշիռը և ծակոտկենությունը, որոնք  $L/L$  հողերում գրեթե ուսումնասիրված չեն: Որոշ հողերի ֆիզիկական հատկությունների ուսումնասիրություններ, ըստ ուղղաձիգ գոտիականության, կատարվել են Գ.Ա.Հակոբյանի (1976), Կ.Ա.Ալեքպերովի (1979), Վ.Ա.Ալեքսանյանի (2011, ա, 6) կողմից:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքն, ըստ Ս.Ն.Բարսեղի, ստորաբաժանվում է հինգ հողակլիմայական գոտիների (Եարce C.H., 1964).

1. Յածրադիր գոտի. ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը՝ 260-350 մ: Բաց շագանակագույն հող, հումուսի քանակությունը՝ 2.6-3.0%:

2. Նախալեռնային գոտի. ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը՝ 300-350-ից մինչև 650-700 մ, շագանակագույն հող, հումուսի քանակությունը՝ 3.0-3.5%:

3. Միջին լեռնային գոտի. ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը՝ 650-1000 մ, հետանտառային մուգ շագանակագույն հող, հումուսի քանակությունը՝ 3.5-4.0%:

4. Բարձր լեռնային գոտի. ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը՝ 1000-1800 մ, հետանտառային սևահող և մուգ շագանակագույն հող, հումուսի քանակությունը՝ 3.7-4.2%:

5. Ենթալպյան և ալպյան գոտիներ. ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը 1800-2400 մ և ավելի բարձր, սևահողեր:

Հողերի ֆիզիկական հատկություններն ուսումնասիրելու ժամանակ հաշվի են առնվել վերը նշված հինգ հողակլիմայական գոտիների առանձնահատկությունները (Ալեքսանյան Վ.Ա., 2011, ա, թ): Հե-

տագուտությունները տարվել են ինչպես ոչ էրողացված, այնպես էլ էրողացված վարելահողերում (2008-2010թթ.): Ֆիզիկական հատկությունների ուսումնասիրության արդյունքները բերված են աղյուսակ 4.5.1-ում:

#### **Աղյուսակ 4.5.1**

##### **Լեռնային Ղարաբաղի հողերի ֆիզիկական հատկությունները՝ ըստ ուղղաձիգ գոտիականության (2006-2008թթ.)**

Հողաշերտի հզորությունը, սմ	Հողի խոնավու- թյունը, 15/VI, %	Ծավալային զանգված, գ/սմ <sup>3</sup>		Տեսակարգ կշիռ, գ/սմ <sup>3</sup>		Ծակոտկենություն, %	
		Հեռաց- ված	Էրողաց- ված հող, թթու- թյունը 6°	Հեռաց- ված հող, թթու- թյունը 6°	Հեռաց- ված հող, թթու- թյունը 6°	Հեռաց- ված հող, թթու- թյունը 6°	Հեռաց- ված հող, թթու- թյունը 6°
ցածրադիր գոտի, բաց շագանակագույն հող							
0-24	17.37	1.24	-	2.62	-	52	-
24-30	19.20	1.24	-	2.63	-	52	-
30-50	20.13	1.27	-	2.64	-	50	-
50-80	20.76	1.34	-	2.65	-	49	-
նախալեռնային գոտի, շագանակագույն հող							
0-24	18.94	1.18	1.27	2.60	2.67	54	52
24-30	19.20	1.19	1.29	2.61	2.68	54	51
30-50	20.13	1.22	1.30	2.64	2.64	53	51
50-80	20.06	1.28	1.36	2.67	2.70	52	49
միջին լեռնային գոտի, հետաճնտավին մուգ շագանակագույն հող							
0-24	18.60	1.18	1.28	2.60	2.66	54	51
24-30	19.10	1.19	1.29	2.60	2.67	54	51
30-50	20.06	1.21	1.30	2.62	2.68	53	51
50-80	21.41	1.25	1.34	2.64	2.68	52	50

Համաձայն կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ ցածրադիր գոտու բաց շագանակագույն հողերի վարելաշերտում ծավալային զանգվածը կազմում է 1.24-1.27 գ/սմ<sup>3</sup>, իսկ ստորին շերտերում այն ավելանում է՝ հասնելով 1.34գ/սմ<sup>3</sup>-ի:

Վարելաշերտում հողի տեսակարար կշիռը տատանվում է 2.62-2.64 գ/սմ<sup>3</sup>-ի սահմաններում, իսկ ստորին շերտերում այն ավելանում է, քանի որ վերին շերտերում ծակոտկենությունն ավելի բարձր է, քանի ստորին շերտերում:

Նախալեռնային գոտու հողերում, որտեղ հումուսի քանակությու-

նը համեմատաբար բարձր է (3.0-3.5%), վարելաշերտում ծավալային զանգվածը զգալի նվազում է՝ տատանվելով 1.18-1.28 գ/սմ<sup>3</sup>-ի սահմաններում: Որոշ չափով նվազում է նաև տեսակարար կշիռ՝ ցածրադիր գոտու հողերի հետ համեմատած: Ինչ վերաբերվում է ծակոտկենությանը, ապա դրա ցուցանիշներն ավելի բարձր են (53-54%), քան ցածրադիր գոտու հողերինը: Նախալեռնային գոտու էրո-քացված հողերի ծավալային զանգվածն ու տեսակարար կշիռը զգալի բարձր են, իսկ ծակոտկենությունն ավելի ցածր է, քան չերո-քացված հողերում: Միջին լեռնային գոտու հողերում, որտեղ հումու-սի քանակությունը 3.5-4.0% է, ծավալային զանգվածն ու տեսակա-րար կշիռը քիչ են տարբերվում նախալեռնային գոտու համանման հատկությունների ցուցանիշներից, ծակոտկենությունը վարելաշեր-տում կազմում է 54%, իսկ ստորին՝ 50-80 սմ շերտում՝ 52%:

Երոզացված հողերը բնութագրվում են անբարենպաստ ֆիզիկա-կան հատկություններով. ծավալային զանգվածն ու տեսակարար կշիռ համեմատած չերոզացված հողերի հետ բարձր են (2.66-2.68 գ/սմ<sup>3</sup>), իսկ ծակոտկենությունը՝ ցածր (50-51%):

Երոզացված հողերի ֆիզիկական վիճակի բարելավման նպա-տակով նախալեռնային գոտու շագանակագույն հողերում դրվել է դաշտային փորձ երկու տարբերակով, երեք կրկնությամբ (2006-2008թթ.):

1. Աշնանացան ցորենի մշակություն՝ առանց գոմաղբի ներմուծ-ման:

2. Աշնանացան ցորենի մշակություն՝ գոմաղբի ներմուծմամբ՝ 40 տ/հա չափաքանակով:

Գոմաղբը հող է ներմուծվել մինչև ցանքը՝ խորը վարի տակ: Բեր-քատվության արդյունքները բերված են 4.5.2-րդ աղյուսակում:

## Աղյուսակ 4.5.2

**Նախալեռնային շագանակագույն էրոզացված հողերում գոմաղի  
ազդեցությունը հողի ֆիզիկական հատկությունների և  
աշնանացան ցորենի բերքատվության վրա (2006-2008թթ.)**

Փորձի տարրերակները	Հողի շերտերը, սմ	Հողի ֆիզիկական հատկությունները			Աշնանացան ցորենի բերքատ- վությունը, գ/հա		Հավելյալ բերքը, գ/հա	
		ծավա- լային զանց- ված, գ/սմ <sup>3</sup>	տեսա- կարար կշիռ, գ/սմ <sup>3</sup>	ծակոտկե- նություն, %	հատիկ	ծղոտ	հատիկ	ծղոտ
Աշնանացան ցորենի ցանք՝ առանց գոմաղի (սոտովից)	0-24	1.27	2.67	52	11.0	13.2	-	-
	24-30	1.29	2.68	51				
	30-50	1.30	2.64	51				
	50-80	1.38	2.70	49				
Աշնանացան ցորենի ցանք՝ 40ս/հա գոմաղի ներմուծմանը	0-24	1.21	2.61	54	22	26.4	11.0	13.2
	24-30	1.21	2.64	54				
	30-50	1.28	2.64	52				
	50-80	1.38	2.70	49				

Ուսումնասիրվել է գոմաղի ազդեցությունը հողի ֆիզիկական հատկությունների և աշնանացան ցորենի բերքատվության վրա: Ուսումնասիրությունները ցոյց են տվել, որ գոմաղի ներմուծմանը՝ հիմնականում 0-30 սմ շերտում, բարելավվել են էրոզացված հողերի ֆիզիկական հատկությունները: Ստուգիչում ծավալային զանգվածը 1.27-1.29 գ/սմ<sup>3</sup> է, իսկ գոմաղի տարրերակում՝ 1.21, տեսակարար կշիռը ստուգիչում 2.67-2.68 գ/սմ<sup>3</sup> է, գոմաղի տարրերակում՝ 2.61-2.64, իսկ ծակոտկենությունը 52%-ից բարձրացել է մինչև 54%, որը տվյալ գոտու ոչ էրոզացված հողերի ցուցանիշ է:

Գոմաղի ներմուծումը հող՝ 40 տ/հա շափաքանակով, ստեղծել է բավարար պայմաններ աշնանացան ցորենի ծլման, աճման և զարգացման համար, ապահովելով 11.0 գ/հա հատիկի և 13.2 գ/հա ծղո-

տի հավելյալ բերք: Ուստի, ԼՂՀ էրոզացված հողերի ֆիզիկական հատկությունների բարելավման համար անհրաժեշտ է հող մտցնել գոմադր 40 տ/հա չափանակով և այլ պարարտանյութեր:

#### **4.6. Աշնանացան ցորենի տակ գտնվող հողերի խոնավության դիմամիկան**

Հողում բավարար քանակության խոնավության առկայության գործոնը ապահովում է բարձր բերքատվություն և կարգավորում բույսի աճի ու զարգացման մնացած գործոնները:

ԼՂՀ ցածրադիր գոտու հողերը բաց շագանակագույն են, ըստ մեխանիկական կազմի՝ թերև կավային:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 260-300 մ բարձրության վրա, որտեղ մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 320 մմ, իսկ տարեկան միջին ջերմաստիճանը՝  $13^{\circ}\text{C}$ , հունվար ամսվա միջինը՝  $1.5^{\circ}\text{C}$ , հուլիս ամսվանը՝  $25.5-26.0^{\circ}\text{C}$ : Հողերը կարքոնատային են, հումուսի քանակը 3% է: Գրունտային ջրերի մակարդակը գտնվում է 12-13 մ խորության վրա, ուստի հողագոյացման գործընթացների վրա գրեթե չի ազդում: Համաձայն Ս.Ա.Վերիգոյի, Պ.Ա.Ռազումովայի (1963) հետազոտությունների՝ եթե գրունտային ջրերը կավային հողերում գտնվում են 6-7 մ-ից խորը, ապա դրանք ազդեցություն չեն բողնում հողերի վերին մասի խոնավության վրա:

Ուսումնասիրվել է ցածրադիր գոտու խոնավության դիմամիկան, պարզվել, թե զարգացման որ փուլում է աշնանացան ցորենի տուժում ջրի պակասից, և ըստ այդմ հողերի խոնավության կարգավորման և աշնանացան ցորենի բարձր բերքատվության ապահովման համար իրականացվել է ռոռոգում:

Հողի խոնավության դիմամիկան, ըստ աշնանացան ցորենի զարգացման փուլերի, ուսումնասիրվել է Ա.Ա.Ռոդեյի մեթոդով (1955):

Հողի խոնավությունը որոշվել է հետևյալ բանաձևով.

$$W = \frac{B_1 - B_2}{B_2 - B_0} \cdot 100, \quad \text{որտեղ՝}$$

*W*-ն հողի խոնավությունն է՝ %,

*B<sub>0</sub>*-ն դատարկ բաժակի կշիռը՝ գ,

*B<sub>1</sub>*-ը խոնավ հողով բաժակի կշիռը՝ գ,

*B<sub>2</sub>*-ը չոր հողով բաժակի կշիռը՝ գ:

Հողանմուշները վերցվել են Ս.Ֆ.Նեզովելովի բուրով՝ մինչև 120 սմ խորությունից:

Փորձերը դրվել են 2005-2008թթ.՝ երկու տարբերակով, երեք կրկնողությամբ՝

I տարբերակ՝ աշնանացան ցորենի ցանք (ստուգիչ, առանց ոռոգման),

II տարբերակ՝ աշնանացան ցորենի ցանք + ոռոգում 800 մ3/հա շափաբանակով:

Հետազոտությունները վկայում են այն մասին, որ մթնոլորտային տեղումների քանակն ու բաշխումն, ըստ աշնանացան ցորենի զարգացման փուլերի, ունեն վճռորոշ նշանակություն (Ալեքսանյան Բ.Ա., 2011, 6, Ակոպյան Գ.Ա., Ալեքսանյան Բ.Ա., 2011):

Ցածրադիր գոտում տեղումները հիմնականում թափվում են մինչև հունիս ամիսը: Փաստորեն կաթնային և մոմային հասունացման շրջանում (հունիս-հուլիս ամիսներ) բույսերը տուժում են ջրի պակասից: Հատիկի հասունացումն ընթանում է հողի խոնավության դժվարամատչելի պայմաններում:

Հողի խոնավության դիմամիկան, ըստ աշնանացան ցորենի զարգացման փուլերի, բերվում է աղյուսակ 4.6.1-ում:

## Աղյուսակ 4.6.1

### Հողի խոնավության դինամիկան ըստ տարիների և աշնանցան ցորենի զարգացման փուլերի (2006-2008թ.)

Հոտա քառու - թյան թվականները	Փորձի տար քե- րակ - ները	Հոդա շերտի հզարու - թյան, սմ	Ցանքի շրջանում (2005թ.)	Թվա - կա լում	Հասկա - կարում	Ծառ կում	Կարծա յին ևս ստանա - ցում	Սն մա յին հասու - նա ցում	Բնքառա - վարուն, ց/հա
2006	I	0-20 20-120	15.9 16.8	19.2 24.8	17.8 19.9	15.5 18.0	9.0 17.2	8.8 16.0	11.4
	II	0-20 20-120	-	19.4 25.0	17.9 20.2	15.8 18.3	21.6 19.8	19.1 18.4	42.0
2007	I	0-20 20-120	16.2 17.1	19.4 24.4	17.2 20.0	15.5 17.8	8.9 16.7	8.6 15.9	9.9
	II	0-20 20-120	-	19.2 25.1	17.2 19.4	15.7 18.5	21.5 19.1	18.8 18.9	39.0
2008	I	0-20 20-120	17.0 16.8	19.6 25.2	17.6 19.8	15.8 19.2	11.6 17.8	8.9 16.4	13.0
	II	0-20 20-120	-	19.9 25.0	17.7 19.9	15.0 18.8	21.5 19.3	19.0 18.6	41.0
միջինը	I	0-20 20-120	16.3 16.5	19.1 24.8	17.5 19.6	15.3 18.3	9.8 17.5	8.1 16.1	11.3
	II	0-20 20-120	-	19.5 25.0	17.6 19.8	15.2 18.5	21.5 19.7	8.9 18.6	40.7

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ 2005թ. աշնանը՝ ցանքի շրջանում, հողի խոնավությունը վերին՝ 0-20 սմ շերտում, կազմում էր 15.9%, իսկ ստորին շերտերում (20-120 սմ)՝ 16.8%: 2006թ. գարնանը՝ թվակալման շրջանում, հողի խոնավությունը վերին շերտում բարձրացել է մինչև 19.2-19.4%, իսկ ստորին շերտերում՝ 24.8-25.0% և մատչելի է բույսերի համար: Սակայն հասկալման փուլում հողի խոնավությունը զգալիորեն նվազել է:

Համաձայն 2006թ. հետազոտությունների՝ հողի խոնավությունն առաջին տարբերակի վերին շերտում կազմել է 17.8%, իսկ երկրորդ տարբերակում՝ 19.9-20.2%, այսինքն վերջինս մատչելի է բույսերի համար: Ծաղկման փուլում հողի խոնավությունը երկու տարբերակների վերին շերտերում կազմում է 15.5-15.8%, որը դժվար մատչելի է

բույսերի համար, իսկ ստորին շերտերում՝ 18.0-18.3%, այսինքն՝ նույնպես որոշ չափով դժվար մատչելի է:

Երկրորդ տարբերակում՝ կաթնային հասունացման փուլում, կատարվել է հողի ոռոգում 800 մ3/հա չափաքանակով: Ոռոգման հետևանքով երկրորդ տարբերակի վերին շերտի խոնավությունը հասել է 21.6%, իսկ ստորին շերտում՝ 19.8%, մինչդեռ առաջին տարբերակի երկու շերտերի խոնավությունը կազմում էր, համապատասխանաբար, 9.0% և 17.2%: Մոմային հասունացման փուլում հողի խոնավությունն ավելի է նվազելով 8.8% և 16.0%-ի: Փաստորեն ստուգիչում հատիկի հասունացումն ընթանում էր հողի խոնավության դժվար մատչելիության պայմաններում՝ մոտ գտնվելով աշնանացան ցորենի թառամճան գործակցին (14%): 2006թ. աշնանացան ցորենի բերքատվությունը ստուգիչում կազմել է ընդամենը 11.4 g/հա, իսկ երկրորդ՝ ոռոգման տարբերակում՝ 42.0 g/հա:

2007թ. և 2008թ. խոնավության դիմամիկայի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աշնանացան ցորենի թփակալման փուլում հողի առավելագույն խոնավությունը դիտվում է գարնանը, որը ծախսվում է հողի մակերեսից գրլորշացման և տրամսայիրացման վրա: Կաթնային հասունացման շրջանում բույսերը հատկապես զգայուն են խոնավության պակասի հանդեպ, ինչը խիստ ազդեցություն է բողնում աշնանացան ցորենի բերքատվության վրա:

2006-2008թթ. հետազոտությունները ցույց են տվել, որ աշնանացան ցորենի միջին բերքատվությունը ցածրադիր գտնու ստուգիչ տարբերակում (առանց ոռոգման) կազմել է 11.3 g/հա, իսկ երկրորդ տարբերակում (ոռոգմամբ) զգալի բարձր է՝ 40.7 g/հա: Այսպիսով, հողում առավելագույն խոնավությունն աշնանացան ցորենի վեգետացիոն շրջանում դիտվում է գարնանը՝ թփակալման փուլում, իսկ բույսի զարգացման համար՝ կաթնային հասունացման փուլում:

#### **4.7. Նախալեռնային գոտու հողերի ջրաբափանցելիությունը՝ կապված հողի մշակման հետ**

Ջրաբափանցելիության որոշումը շատ կարևոր գիտական և պրակտիկ-արտադրական նշանակություն ունի, որովհետև մքննորտային տեղումների կամ ոռոգման ջրերի կուտակումը հողի մեջ անմիջապես կախված է նրա ջրաբափանցելիության ունակությունից, քանի որ տեղումների ու ոռոգման ջրերի մի մաս, վատ ջրաբափանցելիության դեպքում նակերեսային հոսքի կամ գոլորշացման միջոցով անարդյունավետ հեռանում են՝ միաժամանակ առաջացնելով հողերի էրոզիա: Մի շաք գիտնականների փորձերով ապացուցվել է, որ ջրաբափանցելիությունը կախված է հողի ստրուկտուրային վիճակից, մեխանիկական կազմից, հումուսի պարունակությունից, կլանված կատիոնների կազմից և այլն:

ԼՂՀ հողերում նման հետազոտություններ չեն կատարվել, ուստի խնդիր է դրվել որոշել նախալեռնային գոտու հողերի ջրաբափանցելիությունը՝ կապված նրա տարրեր խորությամբ փխրեցման հետ (2006-2008թթ.):

Արցախի նախալեռնային գոտին ընդգրկում է ծովի մակերևույթից 300-650 մ բարձրություն: Հողը հիմնականում շագանակագույն է (շահշված խիստ էրոզիայի ենթարկվածը), մեխանիկական կազմով՝ թերև կավային, ստրուկտուրան՝ թույլ հատիկակնձիկային, որտեղ մակրոստրուկտուրան կազմում է մինչև 37% (Հակոբյան Գ.Ա., 1976): Նշված գոտու կլիման բարեխառն տաք չորային է, տարեկան տեղումների միջին քանակը կազմում է 370 մմ, իսկ տարեկան միջին ջերմաստիճանը՝ +12.8°C: Հունվարի միջին ջերմաստիճանը՝ +1°C է, հուլիսի միջին ջերմաստիճանը՝ +25 °C: Տարեկան ակտիվ ջերմաստիճանների գումարը (+10°C-ից բարձր) կազմում է 3700-4000°C: Այդ կլիմայական պայմաններում աճում են միամյա և բազմամյա տարրեր ընտանիքների պատկանող մշակաբույսեր: Կան նաև բիուտներ՝ մոշենի, մասրենի, ցաքիներ և այլն:

Հումուսի պարունակությունը վարելաշերտում տատանվում է 3.2-3.6%-ի սահմաններում, հողերը կարոբնատային են: Նշված գոտում

հաճախ աշնանացան ու գարնանացան հացահատիկային բույսերը տուժում են խոնավության պակասից: Ազրոտեխնիկայի կարևոր խնդիրներից մեկն այն է, որ հողում ավելի շատ խոնավություն կուտակվի, և մշակաբույսերը չտուժեն խոնավության անբավարարությունից:

Հողում խոնավության կուտակման լավագույն միջոցը լավ ջրաքանացելիություն ունենալը է: Երկրագործությունից հայտնի է, որ խոր վարի դեպքում հողում ավելի շատ խոնավություն է կուտակվում, քան մակերեսային մշակման ժամանակ: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ ուսումնասիրվել է նշված գոտու հողերի ջրաբափանցելիությունը՝ կապված հողի՝ տարբեր խորության փխրեցման հետ:

#### **Ուսումնասիրվել են հեղուկալ գարբերակները՝**

1. փիլրեցում 24-25 սմ խորությամբ (ստուգի),
2. փիլրեցում 30 սմ խորությամբ,
3. փիլրեցում 40 սմ խորությամբ,
4. փիլրեցում 24-25 սմ խորությամբ՝ էրողիայի ենթարկված հողերում:

Հողը փիլրեցվել է քահով՝ 8 մ2 տարածքի վրա: Յուրաքանչյուր տարբերակում (առանց պաշտպանական գոտու) կազմել է 0.75 մ2՝ երեք կրկնողությամբ, յուրաքանչյուր կրկնողությունում՝ 0.25 մ2 տարածք:

Ջրաբափանցելիությունը որոշվել է Ն.Ա.Կաչինսկու մեթոդով ու բանաձևով.

$$V_{\Phi} = \frac{Q}{s \cdot t}, \text{ որտեղ՝}$$

$V_{\Phi}$  -ն ջրի քափանցման արագությունն է՝ մմ/ժամ,

$Q$  -ն՝ ծախսված ջրի քանակը՝ մլ,

$s$ -ը՝ վանդակի մակերեսը՝ սմ<sup>2</sup>,

$t$ -ն՝ ժամանակը՝ բռպեներով (կամ ժամերով):

Փորձարկումը կատարվել է դաշտային պայմաններում՝ Մարտունու շրջանի «Կարվին» կոչվող տեղամասում:

Զրաբափանցելիությունը որոշելու համար պատրաստվել է մետաղյա թիթեղից 2 վանդակ՝ 50 x 50 x 40 սմ և 60 x 60 x 40 սմ չափերի (40 սմ բարձրությունն է): Վանդակների ստորին մասը սրվել է՝ հողի մեջ 20 սմ խորությամբ խրվելու համար: Երկրորդ վանդակը դրվել է վանդակից ջրի հոսքը կանխելու համար: Չուրը լցվել է առաջին վանդակի մեջ +10oC-ի սահմաններում և պահպանվել 5 սմ բարձրության վրա:

Զրաբափանցելիության որոշման արդյունքները բերված են աղյուսակ 4.7-ում:

#### **Աղյուսակ 4.7**

#### **Վրցախի նախալեռնային գոտու հողերի ջրաբափանցելիությունը, մմ (2006-2008թ.)**

Ժամանակը, րոպե	Փխթցված 24-25 սմ		Փխթցված 30 սմ		Փխթցված 40 սմ		Փխթցված 24-25 սմ, ըստիայի հերթինած	
	ջրի ընդհանուր ծավալը, մ <sup>3</sup>	ջրի քափանցելիությունը, մմ/ժամ	ջրի ընդհանուր ծավալը, մ <sup>3</sup>	ջրի քափանցելիությունը, մմ	ջրի ընդհանուր ծավալը, մ <sup>3</sup>	ջրի քափանցելիությունը, մմ	ջրի ընդհանուր ծավալը, մ <sup>3</sup>	ջրի քափանցելիությունը, մմ
5	5204	20.8	6075	24.3	6632	26.5	3050	12.2
10	4860	19.4	4930	19.7	5350	21.4	2500	10.0
15	39.65	15.8	4380	17.5	4460	17.8	1990	8.0
20	3550	14.2	3868	15.5	3980	15.9	1850	7.4
30	6420	12.8	7348	14.9	7590	15.1	3400	6.8
60	9020	6.0	10225	6.8	10810	7.2	9600	6.4
1d-ում	33019	89	36826	98.7	38822	103.9	24090	50.8

Բերված տվյալները ցույց են տալիս, որ ստուգիչ տարբերակում, որտեղ հողը փխրեցվել է 24-25 սմ խորությամբ, առաջին մեկ ժամում ծախսվել է 33019 մլ ջուր: Զրի այդ քանակը քափանցել է հողի մեջ՝ 89 մմ խորությամբ: Երկրորդ տարբերակում հողը փխրեցվել է 30 սմ խորությամբ: Առաջին մեկ ժամում ծախսվել է 36826 մլ ջուր, հողի մեջ է քափանցել 98.7 մմ կամ ստուգիչի համենատ ծախսվել է ավել ջուր՝ 3807 մլ, իսկ հողի մեջ է քափանցել 9.7 մմ ավելի: Երրորդ տարբերակում հողը փխրեցվել է 40 սմ խորությամբ, ծախսվել է ավելի

շատ ջուր՝ 38822 մլ, հող է թափանցել 103.9 մմ: Այլ պատկեր է ստացվել խիստ էրոզիայի ենթարկված հողում. այստեղ հողը փխրեցվել է 24-25 սմ (սովորական խորությամբ):

Առաջին ժամում ծախսվել է 24090 մլ ջուր, իսկ ջրաքաղաքանցելիությունը կազմել է 50.8 մմ: Ըստ Ս.Վ.Աստապովի (1957)՝ լավ ջրաքանց հողերում առաջին ժամում ջուրն անցնում է 150 և ավելի մմ, միջինը՝ 150-50 մմ, իսկ թույլ՝ 50 մմ-ից պակաս:

Արցախի նախալեռնային գոտու հողերն ունեն միջին ջրաքաղաքանցելիություն: Այն կապված է հողի փխրեցման հետ, կազմում է 89-103.9 մմ/ժամ, էրոզիայի ենթարկված հողերում ջրաքաղաքանցելիությունը թույլ է, կազմում է 50.8 մմ/ժամ:

Այսպիսով, կատարված փորձարկումները ցույց են տվել, որ ԼՂՀ նախալեռնային գոտու հողերն ունեն միջին ջրաքաղաքանցելիություն, ինչը գլխավորապես կախված է հողի փխրուն վիճակից և ավելանում է վարելաշերտի խորացման շնորհիվ՝ դասնալով բարձր բերքի ստացման երաշխիք (Ալեքսանյան Վ.Ա.): Խիստ էրոզիայի ենթարկված հողերն ունեն վատ ջրաքաղաքանցելիություն: Դրանք բարելավելու համար պահանջվում է այդ հողերը պարարտացնել օրգանական պարարտանյութերով և կատարել այլ ազրոտեխնիկական միջոցառումներ:

#### **4.8. Հողի մշակման նոր տեխնոլոգիայի ազդեցությունն արդյունավետ խոնավության կուտակման և աշնանացան ցորենի բերքատվության վրա՝ ցածրադիր գոտու շագանակագույն հողերում**

ԼՂՀ ցանքատարածությունների 55%-ը գտնվում է չոր տափաստանային գոտում, որտեղ տարեկան տեղումների միջին քանակը տատանվում է 250-420 մմ-ի սահմաններում: Այստեղ մշակվող հողերը ենթարկվում են նաև ջրային և քամու էրոզիայի: Հացահատիկային մշակաբույսերի վեգետացիայի ընթացքում նշված գոտում թափվում է տարեկան տեղումների ընդհանուր քանակի ընդամենը 30-35%-ը: Մթնոլորտային տեղումների այսպիսի բաշխվածության դեպքում մշակաբույսերի բերքատվությունը հիմնականում կախված

է աշնան և ձմռան լճթացքում հողրում կուտակված խոնավության պաշարից: Զրապահովվածության և երաշտի դեմ պայքարի խնդիրը նման պայմաններում անհրաժեշտ է լուծել հողատարման դեմ պայքարի միջոցառումների հետ համատեղ՝ կիրառելով նվազագույն (անգութան) հողապաշտպան ագրոտեխնոլոգիա և դրա կատարման համար հատուկ տեխնիկա:

Բազմաթիվ փորձերով ապացուցված է, որ հարթահատիչային մշակումը, հողի մակերեսին խոզանի և այլ բուսական մնացորդների պահպանումը, համեմատած թևավոր վարի հետ, նպաստում է հողում ջրային պաշարների ավելացմանը՝ 25-30 և ավելի %-ով:

Թեր հողամասերում հարթահատիչային նվազագույն մշակման արդյունքում առաջացած ավելցուկային ջրի պաշարների զգալի մասը կարող է ներհողային հոսքով հոսել ձորակներ ու ջրատարներ, անարդյունավետ կորչել, միաժամանակ, առաջացնելով հողատարում: Դրա համար թերություններում անգութան մշակումը պետք է համարվի խոնավությունը պահող միջոցառումներով, որոնցից ամենաարդյունավետը ճեղքավորումն է (Ռերճակ Ի.Ե., 1979):

Հետազոտությունները ցույց են տվել, որ բավարար արդյունավետ խոնավակուտակ և հակահոսքային ազդեցությամբ օժտված է աստիճանաճական մշակված հողը՝ կազմված վերին համատարած, սաղր փիլրեցված շերտից և ստորին գծային փիլրեցված հորիզոններում: Այդպիսի պրոֆիլի ստեղծումն էներգետիկ մեծ ծախսեր չի պահանջում: Մշակված հողաշերտի աստիճանաճական հատակն արգելակում է ներծծված ջրի ներհողային հոսքը, իսկ փիլրեցված գծերն ապահովում են լավ ջրաբափանցելիություն՝ հողի խորը արմատաքանակ շերտ (Մօրցու Փ.Տ., Ռիկու Հ.Կ., 1984):

Հողի խոնավության գոլորշացման արդյունավետ կանխումը ձեռք է թերվում մշակվող հողաշերտի մուլչապատճան միջոցով: Մուլչի շերտը հողը պաշտպանում է նաև հողմատարումից և լվացումից, անձրևի կարիւների հարվածներից և արևի ռադիացիայից, նպաստում ձյան կուտակմանը, հողաշերտի սառածության նվազեցմանը (Սուրին Ա.Պ., 2005):

Հաշվի առնելով այդ ամենը՝ մշակվել է չոր հողերի մշակման նոր՝

կոմքինացված տեխնոլոգիա: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ վերին 8-10 սմ քիչ պնդացած շերտը ենթարկվում է համատարած փիսրեցնան (առանց շուր տալու՝ հարթահատիչի խոփափոր բանվորական գործիքով, իսկ ավելի խորը շերտերում բացվում են գծային ճեղքեր: Այդպիսի հարկաշերտավոր մշակման դեպքում բացառում է կոշտերի առաջացումն ու շրջումը, մշակված դաշտի մակերեսը ստացվում է առանց մեծ կատարների ու ակոսների: Բացի այդ տեղումները փիսրեցված գծային ճեղքերով ներծծվում են ավելի խորը արմատաբնակ շերտեր: Ներծծված խոնավությունը հողում ավելի լավ է պահպանվում՝ շնորհիվ վերին մանրակոշտուկավոր շերտի և դրա մակերեսին պահպանված խոզանի:

Հողի մշակման նոր տեխնոլոգիան իրականացվել է խաղողի ՊՐԵ-3 մակնիշի, կախովի ունիվերսալ գութան-փիսրեցուցիչով, որը սարքավորված է եղել երկու 60 սմ ընդգրկման լայնությամբ հարթահատիչային թարիկներով, որոնցով հողի փիսրեցման խորությունը կարգավորվել է 7-15 սմ-ի սահմաններում, ինչը ձեռք է բերվել գութան-փիսրեցուցիչի հետևի կանգնակների կարճեցմամբ: Հարթահատի- չային թարիկների կանգնակներից առաջ՝ նոյն իրանի վրա, տեղադրվել են ճեղքակտրիչներ (ճեղքահանիչներ), որոնց փիսրեցման խորությունը փոփոխվում է 25-35 սմ-ի սահմաններում: Ճեղքակտրիչն ունի փոխվող թարիկներ՝ 100 մմ լայնությամբ, որը թույլ է տալիս հողում կտրելու և բացելու 25-30 սմ խորությամբ նեղ ճեղքեր: Հողի հարկաշերտավոր մշակման խոնավակուտակ ընդունակությունը և դրա ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա գնահատելու համար 2009-2011թթ. կատարվել են մի շարք դաշտային և լաբորատոր ուսումնասիրություններ, որոնց ընթացքում հողի հարկաշերտավոր մշակումը համեմատվել է թևավոր վարի հետ: Փորձերը դրվել են ընդունված մեթոդիկայով՝ երկու տարբերակով և չորս կրկնողությամբ: Հաշվարկային փորձամարգի մակերեսը 220 մ<sup>2</sup> է: Ուսումնասիրությունները կատարվել են Ասկերանի շրջանում: Հողը բաց շագանակագույն է, կավավազային, կարբոնատային, միջին հզորությամբ, pH-ը՝ 7.5, հումուսի պարունակությունը՝ 2.5-3.0%:

Հողում խոնավության մուտքին և ելքին հետևելու նպատակով

ձմեռամուտին և վաղ գարնանը հողի տարբեր շերտերում կշռային եղանակով որոշվել է արդյունավետ խոնավությունը (տվյալները բերված են աղյուսակ 4.8.1-ում):

#### **Աղյուսակ 4.8.1**

##### **Արդյունավետ խոնավության կուտակումը՝ կախված հողի մշակման եղանակից (2009-2011թթ.)**

N	Հողի մշակման տարրերակները	Խոնավության կուտակումը (մմ)			
		Զննումունքի խորոքությունը, մմ		Վաղ գարնանը խորոքությունը մմ	
		0-50	0-100	0-50	0-100
1	թևափոր	15.5	23.7	75.2	120.7
2	հարթահատիչա- ճեղքափոր	17.3	38.8	78.6	148.3

Ինչպես երևում է բերված տվյալներից, աշնանացան ցորենի տակ հողի հարկաշերտավոր մշակումը թևափոր վարի համեմատությամբ թե աշնանը, թե գարնանը նպաստում է խոնավության ավելացմանը: Տարվա ցուրտ շրջանում հողի մեկ մետր հաստության շերտում հարթահատիչաճեղքային մշակության դեպքում 31 մմ-ից ավելի արդյունավետ խոնավություն է կուտակվում, քանի թևափոր վարի դեպքում: Ավել կուտակված խոնավության ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա պարզելու համար ուսումնասիրման տարիներին բոլոր տարբերակներում ու կրկնողություններում հաշվարկվել են բերքի կառուցվածքը և քանակը: Երեք տարվա միջին տվյալները բերված են աղյուսակ 4.8.2-ում:

**Աշնանացան ցորենի բերքի կառուցվածքը և բերքատվությունը՝  
կախված հողի մշակման եղանակից (2009-2011թթ.)**

Տարբերակման թիվ	Բույսին բաղկացած ան- թափանց մակերեսը, մ²	1մ²-ում		Թիակա - լուսը		Համեմատական գործությունը, գ/հա			Կմնաքանակ կամ բերք, գ/հա		Համարակառնությունը, թիվ, համարակառնությունը, թիվ				
		ընդյուղ ների քիլը		ընդունակությունը	արդյունավետությունը	կամաց պահանջման անդամանությունը, %	1000 կուտիկ կիլոգր. գ	ընդունակությունը	անդամանությունը, %	անդամանությունը, %					
		բարձրացած մակերեսը, մ²	ապրանքատեսակը												
1	112.3	315	395	315	1.25	1.0	6.0	21.1	264.5	39.8	54.7	26.4	28.3	18.0	-
2	116.7	391	477	405	1.31	1.16	7.2	21.8	353.1	40.0	78.7	35.3	40.4	24.8	6.8

**1 - թևավոր վար, 2 - հարթահատիչաճեղքավոր**

Աղյուսակից երևում է, որ արդյունավետ խոնավորյան ավելացումը դրական ազդեցություն է ունեցել աշնանացան ցորենի բերքատվության վրա. հավելյալ բերքը կազմել է 6.8 գ/հա: Այսպիսով, հարթահատիչային բարիկների և ճեղքակտրիչների աշխատանքի գուգակցումը հնարավորություն է տալիս տրված խորությամբ հողի մշակմամբ բարձրացնելու գործիքի ընթացքի կայունությունը, նվազեցնել վերին շերտի փիսրեցման խորությունը 10-12-ից մինչև 7-9 սմ: Այդ գործողությունը նպաստում է մոլախոտերի նվազեցմանը և հողի մակերեսին խոզանի պահպանմանը:

Հարթահատիչաճեղքային մշակման առավելությունը կայանում է նրանում, որ խորը փիսրեցված ճեղքերով մթնողրտային տեղումների ջրերն ավելի լավ են ներթափանցում արմատաբնակ խորը շերտեր, թերություններում կանխվում է մակերեսային հոսքը: Բացի դրանից, մակերեսային գոլորշացման կրծատման հաշվին ավելի լավ է պահպանվում կուտակված խոնավորյունը:

Այսպիսով, թևավոր վարի համեմատությամբ նոր հարթահատիչ-

ճեղքածիչը նպաստում է հողի մեկ մետրանոց շերտում արդյունավետ խոնավության ավելացմանը, ինչն էլ իր հերքին նպաստում է աշնանացան ցորենի բերքատվության ավելացմանը՝ 6-8 գ/հա:

Ցածրադիր գոտում առանց ոռոգման աշնանացան ցորենի ցածր բերքը մաքուր եկամուտ չի ապահովում, ուստի այդ տարածքներում անհրաժեշտ է ոռոգման համակարգի անցկացում:

#### **4.9 Ասկերանի շրջանի վարելահողերի ագրոարտադրական խմբավորումը**

Ասկերանի շրջանի հողերն ընկած են տարբեր դիրքադրության ու բարձրության՝ խիստ կտրտված, բարդ ռելիեֆի պայմաններում: Ծովի մակերևույթից ունեցած բացարձակ բարձրությունների տատանումները (200-3729 մ) առաջ են բերել հողագոյացման յուրահատուկ պայմաններ՝ կլիմայի, ռելիեֆի, բուսական ու կենդանական աշխարհի, հողագոյացնող մայրատեսակների փոփոխություններ և բազմազանություն:

ԼՂՀ ողջ տարածքում հողագոյացման պլոցեսների վրա նշանակալի ազդեցություն են թողնում հողառաջացնող մայրատեսակները, որոնցից մեծ տարածում ունեն վերին կավճային նատվածքները՝ ծածկված կավի հաստ շերտով: Հիմնական հողառաջացնող մայրատեսակներից են՝ պորֆիրիտները, դաշիտները, կրաքարերը, որոնք ուժեղ էրոզացված լանջերում հանդիպում են մերկացած ելքերով:

Հողառաջացնող մայրատեսակները, հարուստ լինելով կարողացնատներով, դրական են ազդում հողառաջացման պլոցեսի և հողային հատկությունների ձևավորման վրա: Փուլս շերտի առկայությունը հողի ստորին շերտեր հումուսի ներքափանցման հնարավորություն է տալիս, ինչի շնորհիվ ձևավորվում են հզոր հումուսային հորիզոններ, ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ մթնոլորտային տեղումների խորը ներքափանցման համար: Ուստի մակերեսային հողատարումը բույլ է արտահայտված: Հայտնի է, որ ԼՂՀ տարածքի 43%-ը զբաղեցված է անտառներով, որոնք իրենց ազդեցությունն են թողնում հողագոյացման պլոցեսի և հողերի ձևավորման

վրա:

ԼՂՀ տարածքում «Հայպետհողիննախագիծ» ինստիտուտի կողմից կատարված հողակադաստրային աշխատանքները հիմք են հանդիսացել անջատելու և համառոտ բնութագրելու հանրապետության հողատիպերը՝ հաշվի առնելով ուղղաձիգ գոտիականության օրինաչափությունները (Է.Մ.Հայրապետյան, 2000)։

1. Լեռնամարգագետնային գոտու հողեր. տարածվում են ծովի մակերևույթից 2000-2100 մ բարձրության տարածքներում։

2. Լեռնաանտառային գոտու հողեր. ընկած են ծովի մակերևույթից 1000-2000մ բարձրության սահմաններում։

3.Տափաստանային և անապատատափաստանային գոտիների հողեր. այստեղ ձևավորվում են լեռնային բաց շագանակագույն, շագանակագույն, մուգ շագանակագույն հողեր։

4.Անապատատափաստանային և չոր տափաստանային գոտիների հողեր. այստեղ հանդիպում են նաև գետահովտադարավանային հողեր։

Հաշվի առնելով վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները՝ Ասկերանի շրջանի հողերը բաժանվել են 3 հողակրողին շրջանների՝ հարք տարածքների թույլ բերություններով ( $\leq 3^{\circ}$ ), արևահայաց լանջերի ու ստվերահայաց լանջերի տարբեր աստիճանի էրոզացվածության հողերի։

Ասկերանի շրջանի վարելահողերի մի շարք ֆիզիկական, քիմիական, ֆիզիկաքիմիական, ազրոքիմիական հատկությունների ուսումնասիրությունների հիման վրա շրջանի վարելահողերը դասակարգվել են 3 ազրոարտադրական խմբերի (աղյուսակ 4.9.1):

## **ԼՂՀ Ասկերանի շրջանի վարելահողերի ազրաքայլական խմբավորումը**

Առաջին ազրոարտադրական խմբի մեջ ընդգրկված են մարգագետնա-սևահողերը և լեռնային մարգագետնատափաստանային հողերը, որոնք օգտագործվում են ինչպես վարելահողերի տակ, այնպես էլ բարձր լանջերում՝ որպես արոտավայրեր (Խնապատ, Շոշ, Պատարա, Ավետարանոց, Ակնաղբյուր համայնքների տարածքները):

Մարգագետնասևահողերը ձևավորվել են համեմատաբար խոնավ պայմաններում՝ հարթ տարածքներում՝ 1000-1300 մ բարձրության վրա, որտեղ գրունտային ջրերը մոտ են հողի մակերեսին: Հողերն ունեն ճնային շերտ և կնձիկահատիկային ստրոկտորա, ծանր կավափազային կամ թերև կավային մեխանիկական կազմ: Մշակվում են հացահատիկային մշակաբույսեր, կարտոֆիլ, բազմամյա խոտաբույսեր և կերային արմատապտուղներ:

Լեռնային մարգագետնատափաստանային հողերը ձևավորվել են համեմատաբար չորային պայմաններում՝ հարթ, ոչ էրոզացված տարածքներում, որտեղ հումուսային շերտի հզորությունը հասնում է մինչև 40-60 և ավելի սմ-ի, հումուսի պարունակությունը Ա հորիզոնում կարող է հասնել 5-6%-ի, ստրոկտորան թույլ է արտահայտված:

Այսպիսով, առաջին ազրոարտադրական խմբի մեջ մտնող վարելահողերը բնորոշվում են միջին հզորությամբ և հումուսացվածությամբ, թերևից միջին կավային մեխանիկական կազմով, թույլից միջին կարտոնատոթյամբ, միջին կլասնաման ունակությամբ: Դրանք փոխանակային Ca-ի բարձր պարունակությամբ, հատիկային ստրոկտորայով, թույլ թթվայինից թույլ հիմնային ռեակցիայով, մատչելի սննդատարրերով՝ ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ թույլից միջին, կալիումով՝ միջինից լավ ապահովված, թույլ էրոզացված և թույլ քարքարոտ հողեր են:

Նշված հողերի բարելավման միջոցառումների մեջ են մտնում քարահավաք աշխատանքները, ավելորդ ջրերի հեռացումը, հողի մշակման ճիշտ համակարգի ընտրությունը, օրգանահանքային պարարտանյութերով պարարտացումը՝ շարահերկ մշակաբույսերի համար՝ գոմաղը 45-60 տ/հա + N90P90K60 կգ/հա ազդող նյութի

հաշվով, հացահատիկային բույսերի համար՝ գոմաղը՝ 45-60 տ/հա + N100P90K60 կգ/հա, բազմամյա խոտաբույսերի համար՝ գոմաղը 45-60 տ/հա + N30P30K30 կգ/հա:

Երկրորդ ագրոարտադրական խմբի մեջ են մտնում անտառային գորշ տա-փաստանացված և անտառային դարչնագույն տափաստանացված կարբոնատային հողերը, որոնք օգտագործվում են վարելահողերի տակ (Նախիջևանիկ, Այգեստան, Հովսեփավան, Կարմիր գյուղ համայնքներ), իսկ լանջերի հողատարածքներն օգտագործվում են որպես արոտավայրեր, որոնք ձևավորվել են 1000-2000 մ բարձրության վրա: Այս հողերը բնութագրվում են հիմնականում միջին հզորությամբ, որոշ դեպքերում (Նախիջևանիկ համայնք, կտր. 2) այն հասնում է մինչև 80 սմ-ի, A հորիզոնում՝ միջին հումուսայնությամբ, կավային մեխանիկական կազմով, հատիկակնձիկային ստրոկտորայով, կարբոնատությամբ, միջին և բարձր կլասնման ունակությամբ, փոխանակային կալցիումի բարձր պարունակությամբ, բույլ թթվայինից բույլ հիմնային ռեակցիայով, բույլից միջին էրոզացվածությամբ, բույլ քարքարոտությամբ:

Երկրորդ խմբի հողերի քարելավման միջոցառումներից են՝ քարերի հավաքումը, 3 տարին մեկ վարելաշերտի խորացումը, վարելահողերի սահմաններից դուրս անտառահատումների արգելումը, թերլանցերում հոսքականիչ շերտերի, բուֆերային շերտերի ստեղծումը՝ խոտացանության միջոցով՝ 4-5 մ լայնությամբ թույլ էրոզացված տարածքներում 200-300 մ հեռավորությամբ, միջին էրոզացված հողերում՝ 100-150 մ հեռավորությամբ, իսկ ուժեղ էրոզացված հողերում՝ 60-70 մ հեռավորությամբ, ջրային ռեժիմի քարելավումը, պարարտացում օրգանահանքային պարարտանյութերով՝ շարահերկ մշակաբույսերի համար 40-60 տ/հա գոմաղը + N90P60K60 կգ/հա ազդող նյութի հաշվով, հացահատիկային բույսերի համար՝ գոմաղը 40-60 տ/հա + N60-90P30-60K30 կգ/հա, բազմամյա և միամյա խոտաբույսերի համար՝ գոմաղը 40-60 տ/հա + N30-45P30K30 կգ/հա:

Երրորդ ագրոարտադրական խմբի մեջ ընդգրկվել են մուգ շագանակագույն, շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ ցեմենտացած շերտերով, կարբոնատային հողեր (Նախիջևանիկ, Խրամորք

և այլ համայնքներ):

Այս խմբի հողերը տարածվում են 500-800 մ բարձրության սահմաններում, բնութագրվում են միջին հզորությամբ և հումուսանությամբ, թերև կավային մեխանիկական կազմով, վառողանման ստրուկտուրայով, թույլ հիմնային ռեակցիայով, բարձր կարբոնատայնությամբ, կլանված կալցիումի բարձր պարունակությամբ, թույլից միջին էրոզացվածությամբ, թույլ քարքարոտությամբ, տեղ-տեղ ցեմենտացած շերտերի առկայությամբ:

Երրորդ խմբի հողերի բարելավման միջոցառումներն են՝ ցեմենտացած շերտի վերացման համար խորը փիխեցումը, մակերեսային քարերի հեռացումը, ցանքաշրջանառության կիրառումը, ջրարբիացումը, դաշտապաշտպան անտառաշերտերի և անտառաթփուտների ստեղծումը, ոռոգման համակարգի անցկացումը, մարգագետնամելիորատիվ և անտառմելիորատիվ համալիր միջոցառումների կազմակերպումը, օրգանահանքային պարարտանյութերով պարարտացումը՝ շարահերկ մշակաբույսերի համար՝ գոմաղը 30-60 տ/հա + N90P60K60 կգ/հա, հացահատիկային բույսերի համար՝ գոմաղը 30-60 տ/հա + N60-90P30-60K30 կգ/հա, բազմամյա խոտաբույսերի համար՝ գոմաղը 30-60 տ/հա + N30-45P30K30 կգ/հա աղողոյն նյութի հաշվով:

#### **4.10. ԼՎՀ Ասկերանի շրջանի արոտավայրերի հողերի որոշ ագրոարտադրական հատկությունների արդի վիճակը և բարելավման ուղիները**

Ասկերանի շրջանի արոտավայրերի հողերն ընկած են հիմնականում տարբեր աստիճանի թեքության և կողմնադրության պայմաններում ու բարդ ռելիեֆի, ձորակներով և բլրաթմբերով պատված վայրերում:

Քանի որ ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Ասկերանի շրջանում լուրջ ուշադրություն է դարձվում անասնապահության զարգացմանը, ուստի անհրաժեշտ է ունենալ լիարժեք արոտավայրեր և հնարավոր միջոցներով բարելավել դրանց ագրոար-

տաղրական հատկությունները (Ալեքսանյան Վ.Ա., 2013, ս):

Ուսումնասիրությունները տարվել են տարբեր համայնքների տարածքներում (2008-2010թթ.), հողային կտրվածքները դրված են տարբեր կողմնադրության ու թերությունների վրա (նկ. 4.10.1)և բնորոշում են շրջանի արտավայրերի հողերի արդի վիճակը (Ալեքսանյան Վ.Ա., 2011, ա):

Ստորև բերվում են տարբեր թեքության պայմաններում դրված կտրվածքների մորֆոլոգիական հետազոտությունների արդյունքները:

Կտրվածք 81 - Դրված է Քյարտուկ համայնքի տարածքում, արոտավայր է, թփապատ, արևամտյան կողմնադրության, 25-30° թեքությամբ, ռելիեֆը կտրտված է բլարմբերով, առանձին հատվածներում հանդիպում են ուժեղ հողմահարված հողակտորներ, որոնց վրա աճում են տարախտուեր: Այս հողերն առաջացել են կավավազների վրա:



**Նկ. 4.10.1. ԼՂՀ Ասկերանի շրջանի արութավայրերում գեղադրված  
հոգափուռի սինէմապիկ պատկերը, Մասշտաբ 1:200000**

**A - հորիզոնը բացակայում է:**

**B** 0-14 սմ - բաց շագանակագույն, թույլ խոնավությամբ, միջին կավավագային մեխանիկական կազմով, թույլ արտահայտված հատիկային ստրուկտորայով, կարբոնատային, փուխր շերտ է:

**BC** 14-29 սմ - բաց շագանակագույն, թույլ խոնավությամբ, թերև կավավագային մեխանիկական կազմով, թույլ արտահայտված ստրուկտորայով շերտ է, կարբոնատային շերտ է:

**C** 29-74 սմ - բաց շագանակագույն, թույլ խոնավությամբ, ավագավագային մեխանիկական կազմով, ստրուկտորայից զորկ, կարբոնատային շերտ է՝ քարերի պարունակությամբ:

**Կտրվածք 83** - Դրված է Խվանյան համայնքում, հարավային կողմնադրության, 5-7օ թեքության վրա, արոտավայր է, տարախոտային բուսականությամբ, մայրական ապարներն ավագակավեր են:

**A** 0-14 սմ - մուգ շագանակագույն, թույլ խոնավությամբ, միջին կավավագային մեխանիկական կազմով, թույլ արտահայտված հատիկային ստրուկտորայով, կարբոնատային շերտ:

**B** 14-31 սմ - բաց շագանակագույն, թույլ խոնավությամբ, միջին կավավագային մեխանիկական կազմով, թույլ արտահայտված հատիկային ստրուկտորայով, կարբոնատային շերտ:

**BC** 31-69 սմ - դեղնավուն, թույլ խոնավությամբ, ավագակավային մեխանիկական կազմով, անստրուկտոր, կարբոնատային շերտ:

**Կտրվածք 86** - Դրված է Խնապատ համայնքի տարածքում: Արևելյան կողմնադրության, 15-20օ թեքության վրա, թփապատ արոտավայր է, տարախոտերով զբաղեցված, բլրաթմբերի առկայությամբ, միջինից ուժեղ հողմահարվածության, առանձին օջախներով հանդիպում են տարբեր թփատեսակներ: Այս հողերի մայրական ապարները կավեր են:

**A** 0-15 սմ - բաց շագանակագույն, թույլ խոնավությամբ, թույլ արտահայտված ստրուկտորայով, ծանր կավային մեխանիկական կազմով, ուժեղ կարբոնատային շերտ:

**B** 15-31 սմ - բաց շագանակագույն, թույլ խոնավությամբ, ծանր կավային մեխանիկական կազմով, թույլ արտահայտված հատիկա-

յին ստրուկտուրայով, ուժեղ կարբոնատային շերտ:

**BC 31-73 սմ** - դեղնավուն, թույլ խոնավությամբ, կավային մեխանիկական կազմով, ստրուկտուրայից զորկ, ուժեղ կարբոնատային շերտ:

**Կտրվածք 89** - Դրված է Ասկերանի շրջանի Լեսնոյե քնակավայրի տարածքում, հյուսիսային կողմնադրության լանջերում, ուղիելքը կտրտված է բլրաքմբերով, որոնք գտնվում են  $35\text{--}40^{\circ}$  թեքության վրա: Տվյալ կտրվածքը դրված է արևելյան կողմնադրության  $3\text{--}5^{\circ}$  թեքության վրա, հողատիպը հետանտառային դարչնագույն է, մակերեսից մուգ գույնի, կավավազային մեխանիկական կազմով:

Ա 0-17 սմ, B 17-36 սմ - երկու շերտերն ել սև գույնի են, միջին կավավազային մեխանիկական կազմով, անցումը դեպի հաջորդ շերտ՝ աստիճանական:

**BC 36-75 սմ** - նույնը նկատվում է այս հողաշերտում, սակայն գույնը մուգ շագանակագույն է, կարբոնատներից զորկ:

**Կտրվածք 90** - Դրված է Ասկերան քաղաքի տարածքում, լեռնային բլրաքմբերի շրջակայքում, հարավային կողմնադրության,  $30\text{--}40^{\circ}$  թեքության վրա:

**Կտրվածք 94 և 98-ը** - Նույնպես դրված են Ասկերան քաղաքի շրջակայքում: Ընդ որում՝ կտրվածք 94-ը հյուսիս-արևելյան կողմնադրության,  $25\text{--}30^{\circ}$  թեքության վրա, իսկ 98-ը՝ հյուսիս-արևելյան կողմնադրության և  $10\text{--}15^{\circ}$  թեքության վրա, կարբոնատներից զորկ:

Դրված կտրվածքները (հողափոսերը) հիմնականում ընդգրկում են շրջանի արտավայրերի տարրեր կողմնադրության և տարրեր աստիճանի թեքության լանջերի հողերը, որոնց մորֆոլոգիական ուսումնասիրություններից երևում է դրանց էրոզացվածության աստիճանը. ուժեղ թեք լանջերի հողերում քացակայում է A` հումուսակուտակիչ հորիզոննը, թույլ բուսականության և վոշիացած ստրուկտուրայի առկայությունը, կարբոնատների քարձր քանակությունը որոշ համայնքներում դրված կտրվածքներում (Քյարուկ, Իվանյան, Խնապատ) կամ կարբոնատների խսպառ քացակայությունը Ասկերան քաղաքի շրջակայքում դրված հողային կտրվածքներում:

Արտավայրերի հողերի արդի վիճակը բնորոշվում է ֆիզիկական

և քիմիական որոշ հատկությունների ցուցանիշների հիման վրա  
(աղյուսակ 4.10.1-ում):

#### **Աղյուսակ 4.10.1**

#### **Արտավայրերի հողերի որոշ ֆիզիկական և քիմիական հատկություններ (2008-2010թթ.)**

Կորպած ք զանթու վայը, N	Կողման որոշ բյուր և աս տիմանք	Գնմանի - կական տորիքն - մերի հզր ռո - բյուր, մմ	Հքըռու - կապկ խանա - վու - բյուր, %	Մէխամիկական կազմը			pH-ը՝ ջրա յին քաշ փած քի	Կարու - նասմերի քանա - կոքամ ը, %
				Ֆիզի - կական ավազը, >0.01 մմ	Ֆիզի կական կավի, <0.01 մմ	ալիքն, <0.001 մմ		
1	2	3	4	5	6	7	8	9
Ասկերան (Քյորուկ), 81	արևմտյան, 25-30°	A - չկա	-	-	-	-	-	-
		B 0-14	1.75	68.60	31.40	13.16	8.2	13.4
		BC 14-29	2.52	78.52	21.48	7.48	8.3	10.0
		C 29-74	1.11	96.12	3.88	1.36	8.3	5.0
Իվանյան, 83	հարավա- յին, 5-7°	A 0-14	2.62	75.00	25.00	7.52	7.9	3.0
		B 14-31	4.42	76.81	23.19	5.44	8.2	5.0
		C 31-69	4.21	85.12	14.38	4.16	8.2	10.0
Խնձավատ, 86	արևելյան, 15-20°	A 0-15	3.59	32.48	67.52	30.80	8.2	22.5
		B 15-31	3.17	34.52	65.48	20.48	8.3	30.0
		C 31-73	4.19	31.76	68.24	22.92	8.3	25.0
Լեսնյե, 89	արևելյան, 5-10°	A 0-17	4.76	74.52	25.48	8.68	8.1	3.0
		B 17-36	2.95	77.28	22.72	7.72	8.0	4.5
		C 36-75	4.94	72.24	27.76	13.14	7.8	5.0
Ասկերան, 90	հարավա- յին, 25-30°	A - չկա	-	-	-	-	-	-
		B 0-13	1.75	62.48	37.52	14.48	7.5	չկա
		BC 13-35	1.58	62.41	37.59	13.92	7.5	չկա
		C 35-46	2.52	83.08	16.92	7.96	7.7	չկա
Ասկերան, 94	հյուսիս- արևելյան, 25-30°	A 0-15	3.42	88.48	11.52	3.88	7.3	չկա
		B 15-34	3.47	72.12	27.88	4.28	7.6	չկա
		C 34-56	3.08	93.28	6.72	2.12	7.5	չկա
Ասկերան, 98	հյուսիս- արևելյան, 10-15°	A 0-17	2.41	82.56	17.44	2.04	7.5	չկա
		B 17-35	1.86	77.88	22.12	6.16	7.3	չկա
		C 35-77	2.73	98.32	1.68	0.20	8.0	չկա

Աղյուսակ 4.10.1-ի տվյալներից երևում է, որ ինչպես հիգրոսկոպիկ խոնավությունը, այնպես էլ մեխանիկական կազմը տարբեր կտրվածքներում տարբեր են: Եթե Քյարուկ և Իվանյան համայնքների տարածքներում գտնվող արոտավայրերի հողերի մեխանիկական կազմը միջինից թերև կավավագային է, որը C հորիզոնում թերևնանում է մինչև ավագակավերի, ապա Խնապատ համայնքի տարածքի արոտավայրերի հողերը ծանր են և բնութագրվում են կավային մեխանիկական կազմով, որտեղ համապատասխանաբար բարձր է նաև հիգրոսկոպիկ խոնավությունը, իսկ տիղմային ֆրակցիաների քանակությունը հասնում է 20-30%-ի:

Հարկ է նշել, որ Ասկերանի շրջանի Քյարուկ, Իվանյան համայնքներում դրված կտրվածքների հողերն ունեն միջինից թերև կավավագային մեխանիկական կազմ, Խնապատ համայնքում այն վերափոխվում է թերևից միջին կավայինի (ֆիզիկական կավը՝ 65.48-68.24%), իսկ Ասկերան քաղաքի շրջակայրում դրված կտրվածքների հողերը վերին՝ A և B հորիզոններում թերև կավավագային են, BC հորիզոնում՝ թերև ավագակավային:

Լեսնոյե բնակավայրում (Կտրվածք 89) աճքող հողային պրոֆիլն ունի միջին կավավագային մեխանիկական կազմ, ինչով և պայմանավորված է տիղմային ֆրակցիաների ցածր պարունակությունը (7.72-13.14%):

Նույն երևույթը նկատվում է նաև Ասկերան քաղաքի շրջակայրի արոտավայրերի հողերում, որոնք համեմատաբար թերև են, քանի որ ունեն տիղմային ֆրակցիաների ցածր քանակություն, թերև լանջերում՝ ուժեղ էրոզացված են (Կտրվածք 90), որտեղ քացակայում է A հորիզոնը: Քանի որ կտրվածքներ 81, 83, 86, 89-ը կարբոնատներ են պարունակում, ապա միջավայրի ռեակցիան հիմնային է և տատանվում է թույլից միջին հիմնայնության սահմաններում: Դրան հակառակ Ասկերան քաղաքի շրջակայրում թերև լանջերի հողերը զուրկ են կարբոնատներից, ուստի միջավայրի ռեակցիան (pH) ցածր է, տատանվում է 7.3-8.0-ի սահմաններում, և հողերում առկա են նպաստավոր պայմաններ բույսերի աճման համար:

Ուսումնասիրվել են նաև շրջանի արոտավայրերի հողերի արդի

ազրուարտադրական հատկությունները՝ փոխանակային Ca-ի և Mg-ի քանակությունը, հումուսացվածության մակարդակը, մատչելի սննդատարրերի (N, P, K) պարունակությունը, որոնք բերված են աղյուսակ 4.10.2 -ում:

#### **Աղյուսակ 4.10.2**

#### **ԼՂՀ Ասկերանի շրջանի արոտավայրերի հողերի քիմիական կազմը և ֆիզիկաքիմիական հատկությունները (2008-2010թթ.)**

Նորմածի գոմին վայրը ?	Նորմատուրամբ և թերույան ասորիճանը ( ° )	Գենտիլիական հորիզոնների հզբույրունը, մմ	Կանած			Հու - մոար %	Մառչելի սննդատարրերը մգ/100գ						
			Կանած 100գ նորում				Ca	Mg	գոմարը	N	P <sub>2</sub> O <sub>5</sub>	K <sub>2</sub> O	
			4	5	6								
Քյարուկ, 81	արևանյան, 25-30°	A չկա	-	-	-	-	-	-	-	-	-		
		B 0-14	28.6	2.0	30.6	3.38	2.52	0.44	12				
		BC 14-29	25.4	4.0	29.4	2.61	2.24	0.32	12				
		BC 29-74	21.0	2.4	23.4	1.07	2.24	0.52	18				
Իվանյան, 83	հարավային, 5-7°	A 0-14	35.8	4.0	39.8	4.74	4.20	0.52	10				
		B 14-31	35.0	4.8	39.8	5.30	3.64	0.32	8				
		BC 31-69	22.6	2.8	25.4	2.35	2.80	0.44	4				
Խնձապատ, 86	արևելյան, 15-20°	A 0-15	22.6	3.6	26.2	1.76	2.52	0.52	8				
		B 15-31	24.4	3.6	28.0	1.76	0.84	0.52	8				
		BC 31-73	22.8	3.4	26.2	1.07	1.96	0.32	8				
Լեսոնյե, 89	արևելյան, 5-10°	A 0-17	26.4	4.6	31.0	1.76	2.52	2.40	10				
		B 17-36	28.0	3.2	31.2	1.58	2.52	2.12	8				
		BC 36-75	27.8	2.6	30.4	1.69	2.52	2.12	8				
Ասկերան, 90	հարավային, 25-30°	A չկա	-	-	-	-	-	-	-				
		B 0-13	52.0	3.0	55.0	4.47	3.64	11.80	36				
		BC 13-35	46.0	5.0	51.0	3.92	3.64	6.60	36				
		BC 35-46	75.0	9.0	84.0	1.07	2.80	5.70	12				
Ասկերան, 94	հյուսիս-արևելյան, 25-30°	A 0-15	42.0	8.0	50.0	5.55	5.32	4.50	38				
		B 15-34	37.0	11.0	48.0	1.76	5.32	2.70	14				
		BC 34-56	40.0	10.0	50.0	0.93	1.68	1.20	24				
Ասկերան, 98	հյուսիս-արևելյան, 10-15°	A 0-17	57.0	8.0	65.0	4.94	5.32	3.70	20				
		B 17-35	69.0	1.0	70.0	3.38	4.76	1.90	12				
		BC 35-77	50.0	8.0	58.0	0.81	2.80	1.20	6				

Աղյուսակում թերված տվյալներից երևում է, որ փոխանակային Ca+Mg-ի ընդհանուր քանակությունը տարբեր համայնքների հողերում տարբեր է և տատանվում է լայն սահմաններում: Այսպես, եթե միջին ու ծանր կավավագանային հողերում այն տատանվում է 25-40 մգ-էկվ-ի սահմաններում, ապա ծանր կավային հողերում այն հասնում է 50-70 մգ-էկվ-ի, որտեղ գերակշռում է Ca-ի իոնը և կազմում է փոխանակային կատիոնների գումարի 70-80%-ը:

Այդ հողերում հումուսի պարունակությունը բարձր չէ և տատանվում է 3.38-1.07%-ի սահմաններում, արևմտյան կողմնադրության և 25-30օ թերության պայմաններում, սակայն խայտարդիտ պատկեր է այլ համայնքներում դրված կտրվածքներում: Այսպես, Իվանյան համայնքում դրված հողափոսի հողերում, թեպետ հարավային կողմնադրության լանջ է, սակայն թերությունը 3-5օ է, այդ իսկ պատճառով հումուսի քանակությունը համենատարար բարձր է և տատանվում է 4.2-2.8%-ի սահմաններում: Դրան հակառակ, Խնապատ համայնքի տարածքում դրված հողափոսի հողերում նկատվում է հումուսի ցածր քանակություն՝ 1.76-1.07%: Նույն պատկերն է նաև Լեսնյե քնակավայրի տարածքում դրված կտրվածքում: Հումուսի քանակությունը բարձր է Ասկերան քաղաքի շրջակայքում դրված հողափոսերի հողանմուշներում, որտեղ հիմնական կողմնադրությունը հյուսիս-արևելյան է: Այս հողերում հումուսի քանակությունը բարձր է A և B հորիզոններում և հասնում է 3.64-5.32%-ի: Սննդատարբերի (N, P, K) քանակությունն այդ հողերում ցածր է. ազոտով, ֆոսֆորով, կալիումով թույլ են ապահովված, որոշ կտրվածքներում (90, 94, 98)` կալիումով՝ միջին և լավ:

Այսպիսով, հետազոտություններից արդյունքներից պարզվում է, որ շրջանի արտավայրերի հողերը տարբեր աստիճանի են էրո-գուցված, ուժեղ թեք լանջերում՝ A հումուսակուտակիչ հորիզոնի քացակայությամբ, վերին հորիզոններում՝ ըստ մեխանիկական կազմի, միջինից թեքն կավավագային են, իսկ BC հորիզոնում՝ ավագակավային: Որոշ համայնքների հողերը բնութագրվում են ծանր կավային մեխանիկական կազմով, հողալկալի տարբերի գումարում (Ca+Mg) գերակշռում է Ca-ի իոնը, հասնելով 70-80%-ի: Ուժեղ էրո-

զացված հողերում հումուսի քանակությունը բարձր չէ, այդ հողերը բույլ են ապահովված սննդատարբերի շարժուն ձևերով՝ ազտով, ֆուֆորով, կալիումով և բարելավման կարիք ունեն (Վ.Ա.Ալեքսան-յան, 2013, ա):

Այդ հողերի բարելավման նպատակով անհրաժեշտ է կիրառել մի շարք միջոցառումներ. արտապաշտպան անտառաշերտերի հիմ-նում, արտավայրերում ճիշտ արածեցման կազմակերպում, էրոզի-ոնն գործընթացների դեմ հակաէրոզիոն միջոցառումների ձեռնար-կում, նոր անտառարփուտային պաշպանական շերտերի տնկման միջոցով խոնավության ռեժիմի կարգավորում, բազմամյա և թիթեռ-նածաղկավոր խոտարույսների ցանքի իրականացում, մոլախտուա-յին բուսականության դեմ պայքարի միջոցառումների կիրառում:

Շագանակագույն և մուգ շագանակագույն հողերի տարածման սահմաններում բրալանջերի վրա գտնվող արտավայրերը հիմնա-կանում բնութագրվում են միջին էրոզացվածությամբ և բարքարո-տությամբ (Քյաքուկ, Խվանյան, Խնապատ, Լեսնյե), որոշ հա-մայնքների տարածքներում Ա հումուսակուտակիշ հորիզոննի բացա-կայությամբ, բույլ հումուսայնությամբ, ծանր կավավազային մեխա-նիկական կազմով, բույլից միջին հիմնային ռեակցիայով:

Այս արտավայրերի բարելավման համար անհրաժեշտ է մակե-րեսային քարերի հավաքում, պարարտացում հանքային պարար-տանյութերով՝ N30P30K30 կգ/հա չափարանակով, անտառարփու-տային շերտերի ստեղծում, խոտացանություն:

## ԳԼՈՒԽ 5

### ՀՈՂԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԵՐԸ

Գյուղատնտեսական նշանակության հողերի աղետալի վիճակը գիտակցվել է դեռևս անցյալ դարում: Պատմականորեն ստեղծվել է այնպիսի վիճակ, որ ամենալավ հողերը մնացել են բնակելի կառուցապատման սահմաններում, քանի որ մարդիկ միշտ ձգտել են բնակություն հաստատել ամենաբերրի հողերի վրա:

Երկրագնդի վրա 900 մլն հեկտար էքստենսիվ մշակող հողեր են՝ բարկվել են ինտենսիվ էրոզիայի: Վերջին 30 տարիների ընթացքում մշակովի հողերի համաշխարհային ֆոնդը կրճատվել է 150 մլն հեկտարով:

Հանքային պարարտանյութերի համատարած և մեծ չափաբանակներով կիրառումը սպառնում է հողերի կենսապոտենցիալին, քուլացնում է դրանց բնական բերդիության վերականգնման հնարավորությունները, հողն աղտոտում ծանր մետաղներով: Հողերի էկոլոգիական վիճակի վրա չափազանց բացասական են անդրադառնում գյուղատնտեսության մեջ տեխնիկայի, վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի նպատակով բարձր նորմաներով պեստիցիդների օգտագործումը:

Վերջին տասնամյակների ընթացքում մարդը կարծես թե հասկացել է, որ բնության փոփոխությունները բացասական են ներգործում սոցիալ-տնտեսական գործընթացների վրա, և որ առանց բնական համակարգերի վերարտադրության տնտեսական վերարտադրությունը հնարավոր չէ: Բնության շահագործման, բնական ռեսուրսաշարների օգտագործման հարցում պետք է հաշվի առնել ոչ միայն նեղ տնտեսական շահերը, այլև էկոլոգիական հնարավոր բացասական փոփոխությունները:

Աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, «կենսաբանական» կամ «էկոլոգիական» համակարգին անցումը կատարվում է չափազանց դանդաղ: Օրինակ, ԳՖՀ-ում էկոլոգիական ֆերմաների քանակը

կազմում է ֆերմաների ընդհանուր թվի 0.2%-ը, ֆրանսիայում՝ 1.0%-ը և մեծ թիվ չի կազմում նաև ԱՄՆ-ում:

Գյուղատնտեսության «կենսաբանական» համակարգի ներդրման հարցում առանձնակի տեղ է զբաղեցնում Ավստրալիան, որտեղ հանքային պարարտանյութերը փոխարինվում են կոլորիդ լուծույթներով և կոլորիդների բարձր պարունակությամբ տարբեր խառնադրերով (կոմպոստներով): Այստեղ կիրառվում են գոմաղբի ավելի արագ «հասունացման» եղանակները, որոնք օգտագործվում են հողի ստրոկտորայի բարելավման ու բերրիության բարձրացման համար: Այդ տեսակետից Ավստրալիան աշխարհում ընդունվում է որպես կենսադիմանիկ ֆերմաների երկիր:

Եկոլոգիական պատճառներով գյուղատնտեսության դեգրադացումը կարող է խիստ բացասաբար անդրադառնալ ցանկացած երկրի էկոնոմիկայի վրա, նույնիսկ սպառնալ նրա զարգացմանը:

ԼՂՀ-ում, այդ թվում և Ասկերանի շրջանում արդյունաբերության, քաղաքային տնտեսության, տրանսպորտի, շինարարության էկոլոգիական լուրջ հիմնախնդիրներ ներկա դրույթյամբ գրեթե չկան: Առաջնային նշանակություն ունեն գյուղատնտեսության էկոլոգիական հիմնախնդիրները:

Գյուղատնտեսության էկոլոգիական հիմնախնդիրներն ընդգրկում են գյուղատնտեսության արտադրության և շրջակա միջավայրի էկոլոգիական պայմանների բարելավման հետ առնչվող մի շարք առանցքային հարցեր:

Գյուղատնտեսության էկոլոգիական լուրջ հիմնախնդիրներ են համարվում տարածաշրջանի անբարենպաստ ջրային ռեժիմը, առկա սակավ ջրային ռեսուրսների անքաղաքար օգտագործումը, հիմնականում անջրդի հողագործության վարումն ու հողային ռեսուրսների ոչ բարձր արտադրողականությամբ օգտագործումը (Ալեքսանյան Վ.Ա., 1997, ա, թ):

ԼՂՀ-ն աղքատ է ջրային ռեսուրսներով և ունի ընդամենը 1062.6 մլն մ<sup>3</sup> գետային ջուր, որը 1.0 կմ<sup>3</sup> հաշվով կազմում է 242.6 հազար մ<sup>3</sup> ջուր: Ասկերանի շրջանում ոռոգման աղբյուրներ են՝ Կարկառ գետը (1.87 մլն մ<sup>3</sup>), աղբյուրները (0.96 մլն մ<sup>3</sup>) և ենթարտեզյան հորանցքերը (0.73 մլն մ<sup>3</sup>):

Էկոլոգիական պայմանների բարելավմանը կարող է բավականաշափ նպաստել Պատարա գետի վրա ջրամբարի կառուցումը, որը հնարավորություն կտա կուտակելու 40 մլն մ<sup>3</sup> լրիվ ծավալով և 37 մլն մ<sup>3</sup> օգտակար ծավալով ջուր ու ռոռզել 3.9 հազար հեկտար հողատարածություն:

Մեղրագետի վրա ջրամբարի կառուցումը հնարավորություն կտա կուտակելու 20 մլն մ<sup>3</sup> լրիվ ծավալով և 18 մլն մ<sup>3</sup> օգտակար ծավալով ջուր և ռոռզել 2.5 հազար հեկտար հողատարածություն:

Չնայած ԼՂՀ ռոռզվող հողերի ընդհանուր տարածքը կազմում է 25.2 հազար հեկտար, որից 3456 հեկտար-ը բաժին է ընկնում Ասկերանի շրջանուն, ռոռզման ցանցի անսարքության պատճառով այդ հողերի մի զգալի մասը չի ռոռզվում: Վերջին 25 տարում ԼՂՀ ռոռզվի հողատարածություններն ավելացել են ընդամենը 2.5 հազար հեկտարով, ինչը չի կարող լուրջ բեկում մտցնել հողերը բարձր արտադրողականությամբ օգտագործելու հարցում:

ԼՂՀ տարածքի մի զգալի մասն ընկած է լեռնաանտառային գոտում, սակայն տարածաշրջանի ռեկտֆի խիստ կտրտվածության, խոր ձորերի ու կիրճերի առկայության պատճառով անտառները բոլոր դեպքերում անմիջականորեն չեն ներգրածում հողերի ջրային ռեժիմի վրա, ինչն էլ իր հերթին նույնպես բացասարար է անդրադառնում շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի վրա:

Հանրապետությունում, այդ թվում և Ասկերանի շրջանում, հաճախակի կրկնվող երաշտի ու խորչակների պայմաններում ջրային ռեժիմի բարելավման գործում առաջնահերթ նշանակություն ունի գետերի ու մակերեսային հոսքերի ամբարումը և ռոռզման նպատակներով օգտագործումը: Նման միջոցառումը կնպաստի ոչ միայն ռոռզովի տարածությունների ընդարձակմանը, այլև գյուղատնտեսության արտադրության, շրջակա միջավայրի էկոլոգիական պայմանների բարելավմանը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ռոռզովի տարածությունների ընդարձակման նպատակով նախատեսված էր մինչև 1985թ. ԼՂՀ տարածքում կառուցել 5 խոշոր ջրամբար՝ Թարբառ, Իշխանագետ, Կարկառ և Մեղրագետ գետերի վրա: Սակայն

այսօրվա դրությամբ կառուցված է միայն մեկը՝ Սարսանգի ջրամբարը (1978թ.):

ԼՂՀ ոռոգովի հողերի տարածությունն ընդարձակելու նպատակով, բացի նշված ջրամբարների կառուցումից, անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ միջոցառումներ: Այսպես, Մարտակերտի շրջանում անհրաժեշտ է կառուցել 3 ջրհան կայաններ, որոնցից երկուսը՝ Սարսանգի ջրամբարից սկիզբ առնող մայր ջրանցքի վրա՝ 200 հեկտար մշակովի հողեր ոռոգելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է ջրամբարներ կառուցել Խաչեն, Տրակետ, Վարանդա, Ամարաս, Խոնաշեն, Տող և այլ գետերի վրա, անհրաժեշտության դեպքում ուղեկցելով դրանք ջրհան կայաններով:

Առաջարկվող միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա հանրապետության մելիորատիվ ֆոնդը 25.2 հազար հեկտարից հասցնել ավելի քան 80 հազար հեկտարի, իսկ Ասկերանի շրջանում՝ 3.5 հազար հեկտարից հասցնել 10 հազար հեկտարի:

Շրջանում ընթացող երողինն օգրծնաթացները մեղմացնելու, հողերի ջրային ռեժիմը և հետևապես շրջակա միջավայրի էկոլոգիական պայմանները բարեկավելու հարցում առանձնակի նշանակություն ունի դեգրադացված անտառային նոսրութների և թփապատված տարածությունների վերականգնումը (23.3 հազար հեկտար): Ընդ որում՝ Ասկերանի շրջանում բարելավման ենթակա է 8.9 հազար հեկտար տարածք:

Երաշտի ու խորշակների դեմ ակտիվ պայքար կազմակերպելու, սիստեմատիկ գործող քամու բացասական հետևանքները վերացնելու նպատակով անհրաժեշտ է զանգվածային վարելահողերի, ինչպես նաև մեծ թերություններում հիմնադրված պտղատու, խաղողի և թթենու այգիների սահմաններում հիմնադրել շուրջ 1200 հեկտար պաշտպանական անտառաշերտեր: Նման միջոցառում անհրաժեշտ է իրականացնել Ասկերանի շրջանում՝ շուրջ 240 հեկտարի վրա:

Հանրապետության տարածքում մի շարք ջրամբարների կառուցմամբ ոռոգման ֆոնդի ավելացումը հնարավորություն կտա պաշտպանական անտառաշերտերի հիմնադրման համար օգտագործվող անտառաբփուտային տեսակներից բացի զգալի տեղ հատկացնել

պտղատուներին և ստանալ լրացուցիչ արտադրանք:

Տարածաշրջանի էկոլոգիական պայմանների վրա բացասարար է անդրադառնում մեծ տարածություններով դեգրադացված լեռնային արոտների առկայությունը: Նման տարածքները սելավային ջրերի ձևավորման սկզբնաղբյուրներ են հանդիսանում: Ընդհանուր առմամբ ԼՂՀ-ում մակերեսային և արմատական բարելավման ենթակա են շուրջ 60 հազար հեկտար դեգրադացված արոտներ, որոնցից 24.5 հազար հեկտարը գտնվում է Ասկերանի շրջանում:

Էկոլոգիական պայմանների բարելավման գործում կարևոր նշանակություն ունի ավելի քան 4.3 հազար հեկտար էրոզացված տարածություններում հակառակություն միջոցառումների կիրառումը. հանքային պարարտանյութերի և ագրոքիմիկատների չափակոր օգտագործումը, վնասատուների ու հիվանդությունների դեմ հճախեցրացված պայքարի կազմակերպումը: Ընդ որում, պետք է առանձնակի ուշադրություն դարձնել նախազգուշական, ազդոտեխնիկական ու կենսարանական պայքարի մեթոդների վրա (С.Б.Галстян, В.А.Александր, 2012):

ԼՂՀ-ում չնայած անասնապահությունը մասնակիորեն է զարգացած, այնուհանդերձ լուրջ ուշադրություն չի դարձվում գոմաղբի պահպանման առաջավոր մեթոդների վրա, որը ոչ միայն իշեցնում է հող մոցվող գոմաղբի արդյունավետությունը, այլև աղտոտում շրջակա միջավայրը:

Հողերն էրոզիայից պաշտպանելու և տարածքի էկոլոգիական պայմանները բարելավելու գործում կարևոր նշանակություն ունի մեծ թեքությունների վրա ընկած խոպան հողերի բուսապատումը և կերային հողահանդակների վերածումը:

Ասկերանի շրջանում նման միջոցառում անհրաժեշտ է իրականացնել 3.2 հազար հեկտար տարածության վրա, ինչը հնարավորություն կտա ոչ միայն բարելավելու շրջակա միջավայրի էկոլոգիական պայմանները, այլև կանխելու գյուղատնտեսական հողատեսքերի հետագա դեգրադացումը և բարձրացնելու դրանց արտադրողականությունը:

## **5.1. Վարանդա գետի ջրավազանի հողերի ագրոարտադրական հատկությունները, ծանր մետաղներով աղտոտվածության մակարդակը՝ կախված ավտոմայրուղու տարրեր հեռավորություններից**

Ստեփանակերտ-Մարտունի մայրուղու շրջակայքի հողերը գունվում են հիմնականում հացահատիկային մշակաբույսերի տակ և ինտենսիվ մշակվում են երկար տարիներ, սակայն մայրուղու շահագործման ընթացքում, դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ինչպես ագրոարտադրական հատկությունների, այնպես էլ ծանր մետաղներով աղտոտվածության առումով ուսումնասիրված չէ:

Ուսումնասիրությունները տարվել են Վարանդա գետի ջրավազանի ձախ կողմում՝ Ստեփանակերտից Մարտունի շրջկենտրոն տանող ավտոմայրուղու շրջակայրում՝ Խաչմաշ համայնքի տարածքում: Հողափոսերը դրվել են մայրուղուց 25, 50, 100, 250, 500 և 2000 մ (ստուգիչ) հեռավորության վրա՝ 0-25 սմ խորությամբ: Դրանցից վերցված հողանմուշները քննորոշում են այդ հողերի մակերեսային շերտի ագրոարտադրական հատկությունները և ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը: Լաբորատոր պայմաններում որոշվել են վերցված հողանմուշների ջրալույծ աղերի քանակն ու կազմը, միջավայրի ռեակցիան, կարբոնատությունը, մեխանիկական կազմը, փոխանակային կատիոնների կազմն ու փոխհարաբերությունը (Ca, Mg, Na, K), հումուսի ու մատչելի սննդատարերի՝ N, P, K, ինչպես նաև ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը (Ալեքսանյան Վ.Ա., 2013, թ):

*Սպորադիկ բերվում է հողափոսերի մորֆոլոգիական բնութագիրը.*

**Կտրվածք 1.** Դրվել է Ստեփանակերտ-Մարտունի մայրուղուց 25 մ հեռավորության վրա: Լեռնային բլրամբերով շրջապատված տարածք է, մշակովի հող (ցել), հարավ-արևմտյան կողմնադրությամբ, 3-5օ թերությամբ:

0-25 սմ - բաց շագանակագույն, քույլ խոնավությամբ, ծանր կավային մեխանիկական կազմով, ուժեղ կարբոնատային, մակերեսից

փոշիացած, խորքային հատիկային ստրուկտուրայով հողաշերտ է:  
Մայրական ապարները՝ կավ:

**Կտրվածք 2.** Դրվել է մայրուղուց 50 մ հեռավորության վրա, լեռ-նային բլրաբարով շրջապատված, մշակովի հող (ցել), հարավ-արևմտյան կողմնադրությամբ, 5-7օ թեքության լանջ է:

0-25 սմ - բաց շագանակագույն, բույլ խոնավությամբ, ծանր կա-  
վային մեխանիկական կազմով, կարբոնատային, կոշտ վառդան-  
ման ստրուկտուրայով հողաշերտ է: Մայրատեսակը՝ կավ:

**Կտրվածք 3.** Դրվել է մայրուղուց 100 մ հեռավորության վրա,  
մշակովի հող (ցել), հարավ-արևմտյան կողմնադրությամբ, 5-7օ թե-  
քության լանջ, բլրապատ:

0-25 սմ - բաց շագանակագույն, բույլ խոնավությամբ, ծանր կա-  
վային մեխանիկական կազմով, կարբոնատային, մակերեսից փոշի-  
ացած, խորքային վառդանման ստրուկտուրայով հողաշերտ: Մայ-  
րական ապարները՝ կավ:

**Կտրվածք 4,5.** Առաջինը դրվել է ավտոմայրուղուց 250 մ հեռավո-  
րության վրա, իսկ երկրորդը՝ 500 մ հեռավորության վրա: Ինչպես  
նախորդ կտրվածքները, վերջին երկուար նույնպես դրվել են հա-  
րավ-արևմտյան կողմնադրության և 3-5օ թեքության վրա, մշակովի  
հողեր են (ցել): Լեռնային բլրաբարով շրջապատված:

0-25 սմ - բաց շագանակագույն հողեր են, ծանր մեխանիկական  
կազմով, ուժեղ կարբոնատային, կոշտացած վառդանման ստրուկ-  
տուրայով, մակերեսից՝ ճաքճրված:

Այսպիսով, ըստ մորֆոլոգիական դիտարկումների՝ բոլոր կտր-  
վածքներում նույն պատկերն է, ընդամենը դրանք գտնվում են մայ-  
րուղուց տարբեր հեռավորությունների վրա: Ստորև բերվում են հո-  
ղանմուշների լաբորատոր հետազոտությունների արդյունքները  
(աղյուսակ 5.1.1):

**Վարանդա գետի ջրավազանի ավտոմայրուղուց տարբեր  
հեռավորության վրա դրված հողափոսերի հողերի մեխանիկական  
կազմը և քիմիական հատկությունները (2010թ.)**

Հողափոսերի հեռավորության մեջ մայրագույն, մ	Մեխանիկական կազմը, %	pH	Աղերի գոտարք, %	մգ-էկվ/100գ հողաք						
				CO <sub>3</sub>	HCO <sub>3</sub>	Cl	SO <sub>4</sub>	Ca	Mg	Na+K
25	բերն կավ	7.6	0.103	չկա	0.64	0.17	0.61	0.75	0.16	0.51
50	բերն կավ	7.8	0.134	չկա	1.03	0.25	0.55	0.70	0.40	0.73
100	բերն կավ	7.5	0.127	չկա	0.64	0.17	1.00	0.70	0.56	0.55
250	միջին կավ	7.5	0.145	չկա	0.80	0.25	1.01	0.90	0.56	0.60
500	բերն կավ	7.4	0.139	չկա	0.56	0.17	1.28	0.75	0.56	0.70

Ուսումնասիրվող հողերը միատարր են ըստ մեխանիկական կազմի, որը տատանվում է բերնից միշտին կավայինի սահմաններում: Միջավայրի ռեակցիան բույլ իմնային է, ոչ աղակալած՝ CO<sub>3</sub> տոքսիկ իոնի բացակայությամբ, իսկ մնացած հոնները գտնվում են բույլատրելի սահմաններում: Հողանմուշների քիմիական կազմի մեջ առանձնակի տարբերություն չկա, բեպես դրանք գտնվում են մայրուղուց տարբեր հեռավորությունների վրա:

Ուսումնասիրվել են նաև Վարանդա գետի ջրավազանի ավտոմայրուղուց տարբեր հեռավորության վրա դրված հողափոսերի հողերի կարբոնատային կազմը և քանակական հարաբերությունը:

Ուսումնասիրվող հողերն ուժեղ կարբոնատային են: Դրանց կազմում գերակշռում է CaCO<sub>3</sub>-ը, որը մայրուղու 25 մ հեռավորության վրա գտնվող հողանմուշի 0-25 սմ հաստության շերտում հասնում է 26.5% (աղյուսակ 5.1.2):

### **Աղյուսակ 5.1.2**

**Վարանդա գետի ջրավագանի ավտոմայրուղուց տարբեր հեռավորության վրա դրված հողափոսերի հողերի կարբոնատների կազմը և քանակական հարաբերությունը (2010թ.)**

Հողափոսների հեռավորությունը, մ	Կարբոնատներ, %		Գումարը	% - ով արտահայտված	
	CaCO <sub>3</sub>	MgCO <sub>3</sub>		CaCO <sub>3</sub>	MgCO <sub>3</sub>
25	26.5	0.8	27.3	97.0	3.0
50	11.5	1.6	13.1	87.8	12.2
100	12.5	5.3	17.8	70.2	29.8
250	22.0	2.5	24.5	90.0	10.0
500	9.5	1.2	10.7	88.8	11.2

Յածր է MgCO<sub>3</sub>-ի քանակությունը, որը տատանվում է 0.8-5.3%-ի սահմաններում: CaCO<sub>3</sub>-ի քանակը նվազում է 50 և 100 մ հեռավորության վրա դրված հողափոսների նմուշներում՝ կազմելով 11.5-12.5%, իսկ MgCO<sub>3</sub>-ը համեմատաբար ավելանում է, որը տոկոսային հարաբերությամբ՝ 100 մ հեռավորության վրա հասնում է 29.8%-ի՝ ընդհանուր կարբոնատների կազմում: Համեմատաբար ցածր է կարբոնատների ընդհանուր գումարը (10.7%)՝ 500 մ հեռավորության վրա դրված հողափոսում, որտեղ CaCO<sub>3</sub>-ը կազմում է 88.8%, իսկ MgCO<sub>3</sub>-ը՝ 11.2%: Կարբոնատների նման հարաբերությունը համարվում է չափավոր՝ մշակաբույսերի աճի և զարգացման համար: Քանի որ ուսումնասիրվող հողերն ըստ մեխանիկական կազմի, կավային են, ուստի այդ հողերում կլասման տարրողությունը բարձր է և տատանվում է 39.0-66.6 մգ-էկվ-ի սահմաններում (աղյուսակ 5.1.3):

### **Աղյուսակ 5.1.3**

**Վարանդա գետի ջրավագանի ավտոմայրուղուց տարբեր հեռավորության վրա դրված հողափոսների հողերի փոխանակային կատինների կազմը և քանակական հարաբերությունը (2010թ.)**

Հողափոսների հեռավորությունը, մ	Փոխանակային կատիններ՝ մգ-էկվ/100 գ հողում				Գումարը մգ-էկվ/100 գ հողում	% - ով արտահայտված			
	Ca	Mg	Na	K		Ca	Mg	Na	K
25	38.0	2.0	0.7	0.9	41.6	91. 3	4.8	1.7	2.2
50	32.0	5.5	0.7	0.8	39.0	82. 1	14. 1	1.8	2.0
100	47.0	7.5	0.8	0.9	56.2	83. 6	13. 3	1.4	1.7
250	56.0	9.0	0.7	0.9	66.6	84. 1	13. 5	1.1	1.3
500	45.0	10.0	0.6	1.0	56.6	79. 5	17. 7	1.1	1.7

Կատիոնների կազմում գերակշռում է Ca-ի իոնը, որի քանակությունը տատանվում է 32-56 մգ-էկվ-ի սահմաններում, կազմելով դրանց ընդհանուր գումարի 79.5-91.3%-ը: Ցածր է Mg-ի իոնի քանակությունն այդ հողերում և տատանվում է, համապատասխանաբար, 2-10 մգ-էկվ-ի և 4.8-17.7%-ի սահմաններում, իսկ փոխանակային Na-ի և K-ի քանակությունը ցածր է բույլատրելի սահմանից (5%): Փաստորեն փոխանակային կատիոնների կազմի տեսակետից հողերում նույնական առկա են նպաստավոր պայմաններ գյուղատնտեսական բույսերի մշակության համար: Հետազոտվող հողերում ուսումնասիրվել է դրանց բերիքության մակարդակը, հումուսի և սննդատարրերի պարունակությունը (աղյուսակ 5.1.4):

#### **Աղյուսակ 5.1.4**

**Վարանդա գետի ջրավազանի ավտոմայրուրուց տարրեր  
հեռավորության վրա դրված հողափոսերի հողերի հումուսի և  
մատչելի սննդատարրերի քանակությունը (2010թ.)**

Հողափոսերի համար օգտագործության մը մայրուրուց, մ	Հումուս, %	Մասշերի մեջմասարություն, մգ/100գ հողում		
		N	P <sub>2</sub> O <sub>5</sub>	K <sub>2</sub> O
25	4.24	4.25	0.80	42
50	3.52	3.96	1.50	37
100	3.62	4.18	1.50	42
250	4.10	5.55	6.00	42
500	5.58	4.90	4.50	47

Ուսումնասիրվող հողերում հումուսի քանակությունը բարձր չէ և տատանվում է 3.52-5.58%-ի սահմաններում, ընդ որում՝ առավելագույն պարունակությունը (5.58%) նկատվում է 500 մ հեռավորության վրա դրված հողափոսում, որտեղ բարձր էր նաև կլանման տարողությունը (56.6 մգ-էկվ/100գ հողում, աղյուսակ 5.1.3), իսկ կլանված Ca-ի քանակությունը հասնում էր 79.5%-ի (աղյուսակ 5.1.3): Մատչելի սննդատարրերով (N, P<sub>2</sub>O<sub>5</sub>) հողերը բույլ ապահովված են 25, 50, 100 մ հեռավորության վրա գտնվող հողերում, P<sub>2</sub>O<sub>5</sub>-ով միջին ապահովված՝ 250 և 500 մ հեռավորության հողերում, իսկ կալիումով՝ լավ ապահովված հողեր են:


Ինչպես քիմիական կազմի, այնպես էլ ծանր մետաղների պարունակության ուսումնասիրությունները կատարվել են 0-25 սմ խորությունից վերցված հողանմուշներում (աղյուսակ 5.1.5):

### **Աղյուսակ 5.1.5**

**Վարանդագիտականի ավտոմայրուղուց տարբեր հեռավորության վրա դրված հողափոսերի հողերում ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը (2010թ.)**


Հողափոսերի հեռավորությունը, մ մայրուղուց, մ	Ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակություն հողում, մգ/կգ					
	Cu	Zn	Pb	Cd	Mo	Mn
25	4.26±0.44	13.20±1.10	6.20±0.74	2.10±0.05	0.45±0.024	186.0±7.5
50	3.94±0.36	10.90±1.00	5.60±0.47	1.90±0.02	0.36±0.04	175.0±6.9
100	4.60±0.52	9.20±0.78	3.90±0.14	1.52±0.04	0.34±0.002	162.00±4.7
250	4.80±0.51	4.80±0.24	2.00±0.03	0.34±0.002	0.38±1.01	159.0±5.8
500	4.50±0.39	4.90±0.24	1.30±0.02	0.36±0.04	0.28±0.006	160.0±6.0
2000 (սոսովից)	4.20±0.36	5.30±0.48	0.80±0.03	0.28±0.004	0.27±0.03	162.8±3.7

### **Հողափոսերի հեռավորությունը մայրուղուց, մ**




Հողափոսերի հեռավորությունը մայրուղուց, մ

Pb



Հողափոսերի հեռավորությունը մայրուղուց, մ

Cd



**Գծապատկեր 5.1.1.** Ծանր մելքաղների շարժուն ջեկերի պարունակությունը  
մայրուղուց բարձրեր հեռավորությունների վրա

Հետագոտություններից պարզվել է, որ շարժուն պղնձի, մոլիբդենի պարունակությունների ավելացում ուսումնասիրվող հեռավորությունների հողանմուշներում չի դիտվում, իսկ ցինկի քանակությունը ստուգիչն գերազանցում է 2.49-1.09, կապարինը՝ 7.75-1.31, կադմիումինը՝ 7.50-1.07, մանգանինը՝ 1.26-1.07 անգամ:

Ցինկի, կապարի, կադմիումի և մանգանի առավելագույն քանակությունները դիտվում են մայրուղու հարակից տարածքում (25-50 մ-ի սահմաններում), ինչը պայմանավորված է ավտոտրանսպորտի գործունեությամբ։ Սակայն հետազայտ հնարավոր է ծանր մետաղների պարունակության աստիճանաբար ավելացում հողում՝ կապված ավտոմեքենաների կողմից ծախսվող վառելանյութի այրման հետ։

Ուստի անհրաժեշտ է մայրուղու շրջակայքի հողերում ծանր մետաղների նվազեցման, չեղոքացման միջոցառումների կիրառում՝ հող ներմուծել օրգանական պարարտանյութեր (գոմարք), մայրուղու ներկու կողմում տնկել հատուկ ծառատեսակներ, հող մտցնել բնական աղսորբենտներ՝ ցեղիտային և դաշիտային տուֆեր։

## **5.2. Կարկառ գետի ջրավազանի հողերի ագրոարտադրական հատկությունները, աղտոտվածության մակարդակը, կախված ավտոմայրուղու տարբեր հեռավորություններից**

Կարկառ գետի ձախ ափով անցնում է ավտոմայրուղի, որն ինտենսիվ կերպով օգտագործվում է ավտոմեքենաների երթևեկության համար։ Երկար տարիների օգտագործման ընթացքում մայրուղու շրջակայքն աղտոտվում է ծանր մետաղներով, որոնք առաջանում են տրանսպորտի կողմից՝ վառելիքի՝ բենզինի, դիզալիքի, յուղերի օգտագործման ժամանակ։

Տվյալ հարցերը Ասկերանի շրջանի Կարկառ գետի ջրավազանի հողերում ուսումնասիրվում են առաջին անգամ։

Ուսումնասիրություններ են տարվել Ստեփանակերտ-Մարտակերտ մայրուղու ձախ կողմում ընկած մշակովի հողերի (ցել) վրա՝ Իվանյան համայնքի տարածքում (2010թ.): Մայրուղուց 25, 50, 100,

250, 500 և 2000 մ (ստուգիչ) տարբեր հեռավորությունների վրա նույն ուղղությամբ դրվել են հողափոսեր, որոնցից վերցվել են հողային նմուշներ: Լարորատոր պայմաններում որոշվել են հողերի աղային կազմը, միջավայրի ռեակցիան, կարբոնատությունը, մեխանիկական կազմը, փոխանակային կատիոնների կազմն ու հարաբերությունը, ինչպես նաև հումուսի ու մատչելի սննդատարրերի՝ N, P, K և ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը (Ալեքսանյան Վ.Ա., 2012):

Ստորև բերվում է հողափոսերի հողերի մորֆոլոգիական քննութագրման նկարագրությունը.

**Կտրվածք 1.** Դրվել է մայրուղուց 25 մ հեռավորության վրա, հյուսիս-արևելյան կողմնադրության լանջ է, 3-5օ թերությամբ, շրջապատում լեռնային բլրամբեր են, վարելահող (ցել):

0-25սմ - բաց շագանակագույն հողաշերտ է՝ միջին կավային մեխանիկական կազմով: Կարբոնատային, մակերեսից փոշիացած, խորությամբ հատիկային ստրոկտորայով, ավազակավերի վրա առաջացած հող է:

**Կտրվածք 2.** Դրվել է մայրուղուց 50 մ հեռավորության վրա, մշակովի տարածք է (ցել), հյուսիս-արևելյան կողմնադրության, թույլ թերությամբ՝ 5-7°:

0-25 սմ - բաց շագանակագույն, խորությամբ հատիկային ստրոկտորայով, կարբոնատային, թույլ խոնավությամբ: Մայրական ապարներն ավազակավեր են:

**Կտրվածք 3.** Դրվել է մայրուղուց 100մ հեռավորության վրա, մշակովի տարածք է (ցել), հյուսիս-արևելյան կողմնադրության, 3-5° թերությամբ լանջ է:

0-25սմ - մուգ շագանակագույն, թույլ խոնավությամբ, ծանր կավային մեխանիկական կազմով, կարբոնատային, մակերեսից թույլ փոշիացած, խորությամբ, հատիկային ստրոկտորայով:

**Կտրվածք 4.** Դրվել է մայրուղուց 250 մ հեռավորության վրա, մշակովի տարածք է, հյուսիս-արևելյան կողմնադրության, 3-5° թերությամբ:

0-25 սմ - մուգ շագանակագույն, կավային մեխանիկական կազ-

մով, կարբոնատային, թույլ խոնավությամբ, մակերեսից փոշիացած, խորությամբ՝ հատիկային ստրուկտորայով: Մայրական ապարները՝ կավեր են:

**Կտրվածք 5.** Դրվել է մայրուղուց 500 մ հեռավորության վրա, մշակովի տարածք է (ցել), հյուսիս-արևելյան կողմնադրության, 3-5օ թեքությամբ, բլրաբներով շրջապատված:

0-25 սմ - մուգ շագանակագույն, թույլ խոնավությամբ, կավային մեխանիկական կազմով, կարբոնատային, վառողանման ստրուկտորայով շերտ է՝ կավերի վրա առաջացած:

Մորֆոլոգիական նկարագրության արդյունքները վկայում են, որ նույն հողատիպի՝ շագանակագույն հողի սահմաններում դրված հողափոսերի հողերն ունեն նույն կողմնադրությունը և թեքության նույն՝ 3-7 աստիճանը: Ստորև բերվում են լաբորատոր անալիզների տվյալները (աղյուսակ 5.2.1):

### Աղյուսակ 5.2.1

Աւելանի շրջանի Կարկառ գետի ջրավազանի ավտոմայրուղու ձախ կողմ ընկած հողերի մեխանիկական և քիմիական կազմը (2010թ.)

Հողամական ներկ վեց մամ հետո առաջ բար նը, մ	Սն խա մի կա - կան կազմը	pH	Աղեղի գումարը %	մգ-էլլ / 100գ հողում						
				$CO_3^{2-}$	$HCO_3^-$	$Cl^-$	$SO_4^{2-}$	$Ca^{2+}$	$Mg^{2+}$	$Na^+ + K^+$
25	միջին կավալազ.	7.6	0.136	չկա	0.72	0.20	1.07	0.55	0.96	0.48
50	միջին կավալազ.	7.8	0.163	չկա	0.89	0.11	1.35	0.65	1.12	0.58
100	թերթ կավ	7.8	0.139	չկա	0.89	0.25	0.82	0.70	0.56	0.70
250	ծանր կավ	7.4	0.114	չկա	0.64	0.20	0.75	0.70	0.24	0.65
500	ծանր կավ	7.4	0.107	չկա	0.89	0.11	0.41	0.75	0.16	0.50

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ըստ մեխանիկական կազմի մայրուղու տարրեր հեռավորություններից վերցված հողանմուշներն ունեն տարրեր մեխանիկական կազմ, 25 և 50 մ հեռավորության վրա հողերը միջին կավավազային են:

Ինչքան հեռանում է հողափոսերի տեղադրումը մայրուղուց, այն-

քան ծանրանում է հողերի մեխանիկական կազմը: Հողերի մեխանիկական կազմը 250 մ և 500 մ հեռավորության վրա ծանր կավային է, միջավայրի ռեակցիան բույլ հիմնային՝ pH-ը տատանվում է 7.4-7.8-ի սահմաններում, հողերն աղակալված չեն, ջրալույծ աղերի քանակը կազմում է 0.163-0.107%, CO<sub>3</sub> տոքսիկ իոնը բացակայում է, մնացած բույրը տարրերը գտնվում են բույլատրելի սահմաններում:

Կարբոնատների մեջ գերակշռությունը է CaCO<sub>3</sub>-ը (18.5-14.5%-ի սահմաններում), իսկ ընդհանուր կարբոնատների կազմում CaCO<sub>3</sub>-ը կազմում է 73.2-92.0% (աղյուսակ 5.2.2):

### **Աղյուսակ 5.2.2**

**Կարկառ գետի ջրավազանի հողերի կարբոնատների կազմը և քանակական հարաբերությունը, %-ով (2010թ.)**

Հողանմուշների վեցման հեռավորությունը, մ	CaCO <sub>3</sub>	MgCO <sub>3</sub>	Գոմարք	Ընդհանուր գոմարք	
				CaCO <sub>3</sub>	MgCO <sub>3</sub>
25	16.0	5.3	21.3	75.1	24.9
50	18.5	1.6	20.1	92.0	8.0
100	14.5	1.6	16.1	90.0	10.0
250	17.5	1.6	19.1	91.6	8.4
500	14.5	5.3	19.8	73.2	5.2

Մայրուղուց 25 մ հեռավորության վրա համեմատաբար բարձր է MgCO<sub>3</sub>-ի քանակությունը և կարբոնատների ընդհանուր գումարում կազմում է 24.9%, իսկ մայրուղուց տարբեր հեռավորություններում այն տատանվում է 5.2-10%-ի սահմաններում:

Ուսումնասիրվել են նաև փոխանակային կատիոնների կազմն ու հարաբերությունը մայրուղուց տարբեր հեռավորություններից վերցած հողանմուշներում (աղյուսակ 5.2.3):

### **Աղյուսակ 5.2.3**

**Կարկառ գետի ջրավազանի հողերում, ավտոմայրուղուց տարբեր հեռավորության հողերում փոխանակային կատիոնների կազմն ու հարաբերությունը (2010թ.)**

Հողանմաշների վերցման հեռավորությունը, մ	մգ-էկվ/100 գ հողաք				Գուման բԸ	% -ով արտահայտված			
	Ca	Mg	Na	K		մգ-էկվ	Ca	Mg	Na
25	33.0	7.5	0.6	0.9	42.0	78.6	17.9	1.4	2.1
50	29.5	10.0	0.8	1.0	41.3	71.4	24.2	1.9	2.5
100	36.5	11.0	0.7	0.9	49.1	74.3	22.4	1.4	1.9
250	44.0	5.0	0.8	0.8	50.6	87.0	9.9	1.6	1.5
500	36.0	10.0	0.6	0.9	47.5	75.8	21.0	1.2	2.0

Փոխանակային կատիոնների կազմում գերակշռում է Ca-ի իոնը, դրանց ընդհանուր գումարը տատանվում է 42.0-50.6 մգ-էկվ-ի սահմաններում: Տոկոսային հարաբերությամբ Ca-ը կազմում է 71.4-87.0%, Mg-ը տատանվում է 9.9-24.2%-ի սահմաններում, փոխանակային Na-ի և K-ի քանակությունները ցածր են 5%-ից, այսինքն՝ հողում առկա են նայատապիր պայմաններ բույսերի մշակության համար: Նույն հողանմուշներում ուսումնասիրվել է նաև հումուսի և սննդատարրերի պարունակությունը (աղյուսակ 5.2.4):

### **Աղյուսակ 5.2.4**

**Կարկառ գետի ջրհավաք ավազանի հողերի հումուսի և շարժում սննդատարրերի պարունակությունը (2010թ.)**

Հողանմուշների վերցման հեռավորությունը, մ Հումուս,

Հողանմաշների վերցման հեռավորությունը, մ	Հումուս, %	Շարժում սննդատարրեր, մգ/100 գ հողաք		
		N	P <sub>2</sub> O <sub>5</sub>	K <sub>2</sub> O
25	2.59	3.55	2.3	42.0
50	2.59	3.62	6.0	47.0
100	4.19	4.95	2.3	42.0
250	4.81	5.00	3.8	37.0
500	5.41	5.50	1.5	42.0

Մայրուղուց 25 և 50 մ հեռավորության վրա, որտեղ հողերը միջին կավագագային են, հումուսի քանակությունը բարձր չէ և կազմում է 2.59%, այնինչ, սկսած 100 մ հեռավորությունից, հողն՝ ըստ մեխանիկական կազմի, ծանրանում է՝ 500 մ հեռավորության վրա հասնելով ծանր կավի, իսկ հումուսի քանակությունը բարձրանում է՝ հասնելով 5.4%-ի:

Նույն օրինաչափությունն է նկատվում նաև շարժուն ազոտի պարունակության նկատմամբ: Ընդհանուր առմամբ այդ հողերը շարժուն ազոտով բույլ են ապահովված, սակայն մայրուղուց ամենամեծ հեռավորության վրա այն հասնում է 5.5 մգ/100գ հողում, իսկ ահա ֆոսֆորով և կալիումով համապատասխանաբար՝ բույլից միշտին և լավ ապահովվածության են:

Սույն հետազոտության հիմնական հարցերից է նաև ծանր մետաղների պարունակությունը մայրուղուց տարբեր հեռավորություններից վերցրած հողանմուշներում ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը (աղյուսակ 5.2.5):

### **Աղյուսակ 5.2.5**

**Կարկառ գետի ջրհավաք ավազանի հողերում ավտոմայրուղուց տարբեր հեռավորություններից վերցրած հողանմուշներում ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը (մգ/կգ հողում)**

Հողավառակի հեռա- վորություն մը մայրուղուց, մ	Ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը հողում, մգ/կգ					
	Cu	Zn	Pb	Cd	Mo	Mn
25	6.90±0.48	9.40±0.76	5.80±2.40	2.40±0.09	0.52±0.06	174.00±7.2
50	6.40±0.52	10.50±1.00	4.20±0.29	2.10±0.13	0.47±0.026	181.00±6.4
100	5.80±0.31	6.00±0.44	3.50±0.21	1.80±0.09	0.50±0.22	169.3±4.2
250	6.00±0.43	6.60±0.51	2.00±0.13	1.10±0.06	0.46±0.019	173.2±4.4
500	6.20±0.38	7.10±0.64	1.20±0.06	0.86±0.03	0.44±0.03	063.1±3.9
2000 (ստուգի)	6.40±0.55	6.30±0.50	0.68±0.13	0.76±0.06	0.47±0.03	162.9±4.2

Տվյալներից երևում է, որ ծանր մետաղների քանակությունը, կախված մայրուղու տարբեր հեռավորություններից և ստուգիչի հետ համեմատած, օրինաչափորեն ավելանում է, իսկ դրանց առավելագույն պարունակությունը նկատվում է անմիջապես մայրուղուց

սկսած՝ 25-50 մ-ի սահմաններում: Մայրուղուց աստիճանաբար հեռանալուն զուգընթաց՝ 500 մ հեռավորությամբ դրված հողափոսերի հողանմուշներում, ծանր մետաղների շարժուն ձևերի պարունակությունը նվազում է: Այսպիսով, մայրուղու ազդեցությունն օրինաչափորեն նվազում է՝ կախված հողափոսերի հեռավորությունից, թեպետ ներկա փուլում հողային ծածկույթի աղտոտվածությունը ծանր մետաղներով բարձր ցուցանիշների չի հասնում, քանի որ շրջակայքում արդյունաբերական արտադրություն չկա: Սակայն հետագայում, որպես տրամադրություն գործունեության հետևանք, այս հողերում աստիճանաբար կրաքարանա ծանր մետաղների քանակությունը՝ վճառ հասցնելով շրջակա միջավայրին:

Նշված ծանր մետաղներից դիտվում է, հիմնականում, կապարի և կադմիումի կուտակում՝ սկսած 25-500 մ, իսկ ցինկինը՝ 25-50 մ հեռավորության վրա: Ինչ վերաբերվում է մանգանին, ապա այն ավելանում է 25-250 մ-ի սահմաններում, իսկ պյուճի և մոլիբդենի քանակությունները, համեմատած ստուգիչի հետ, առանձնապես չեն ավելանում:

Ծանր մետաղների ազդեցությունը նվազեցնելու, նաև՝ չեզոքացնելու նպատակով անհրաժեշտ է ավտոմայրուղու շրջակայքի հողեր ներմուծել օրգանական պարարտանյութ (գոմաղը), ցեղլիտ, դաշիտային տուֆ և այլն:

### **5.3. Անտառաբփուտային պաշտպանական շերտերի ազդեցությունը հողի բերրիության և աշխանացան ցորենի բերքատվության վրա**

ԼՂՀ-ն համարվում է անտառներով հարուստ լեռնային երկիր: Տարածքի 40.6%-ը (464800 հեկտար) ծածկված է անտառներով ու թփուտներով: Ասկերանի շրջանում անտառներն ու թփուտները զբաղեցնում են ընդհանուր տարածքի 55.8%-ը: Հանրապետության անտառները դասվում են առաջին կարգին, որտեղ գոյություն ունեցող նորմերի ու ստանդարտների համաձայն՝ արգելվում են զանգվածային ծառահատումները: Բացառապես մեծ է ԼՂՀ անտառների

դերը ջրային ռեժիմի կարգավորման, հողերն էրոզիայից պաշտպանելու, միկրոկլիմայի ստեղծման գործում: Սակայն տարածաշրջանի մակերևույթի խիստ կտրտվածության պատճառով, անտառների անմիջական ներգործությունը վարելահողերի ջրային ռեժիմի բարելավման գործում չափազանց քոյլ է:

ԼՂՀ օրերե բոլոր շրջաններում, այդ բվում և Ասկերանի շրջանում, երկրագործությունը տարվում է հիմնականում անջրդի պայմաններում: Մշակաբույսերի ցածր բերքի ստացման գլխավոր պատճառներից մեկը հողում (ինչպես նաև օդում) խոնավության պակասն է, որը հանդես է գալիս հաճախակի կրկնվող երաշտի ու խորշակների ձևով:

Երկարամյա գիտական հետազոտությունները, ինչպես նաև արտադրության առաջավորների փորձերը վկայում են, որ պաշտպանական անտառաշերտերը նպաստում են դաշտերում ձյան պահպանմանը, հողում խոնավության կուտակմանը, ստեղծում բարենպաստ միկրոկլիմա, հողը պաշտպանում էրոզիայից (Վ.Ա.Ալեքսանյան, Է.Մ.Հայրապետյան, 1997):

Հայաստանի մի շարք տարածաշրջաններում (Թջուան, Սպիտակ, Գուգարք և այլն) Է.Մ.Հայրապետյանի և ուրիշների (1990) կողմից կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անտառներով շրջափակված տարածություններում ամեն տարի հեկտարի հաշվով ստացվում են՝ 5-6 ցենտներով ավելի հացահատիկի, 8-10 ցենտներով ավելի խոտի բերք, քան անտառներով ու անտառունկարկներով չպաշտպանված տարածություններից, միաժամանակ պաշտպանական անտառունկարկները մյուս հակաէրոզիոն միջոցառումների համակարգում, հողում ջրի պաշարը ավելացրել են 2.5-3.0%-ով, գարնանացան հացահատիկային մշակաբույսերի բերքը հեկտարի հաշվով բարձրացել է 4.5 ցենտներով, իսկ կորնգանին՝ 8-10 ցենտներով:

Պ.Ա.Խորշույյանի և Գ.Գ.Մովսիսյանի ուսումնասիրությունները (1983) ցույց են տվել, որ անտառները նպաստում են դաշտերում ձյան կուտակմանը ինչպես անտառունկարկներից ներքև, այնպես էլ վերև ընկած տարածություններում: Պաշտպանական անտառաշ-

երտեր չունեցող լանջերի համեմատությամբ ձյան շերտի հաստությունը 3.5-4.0 սմ-ով, իսկ հողի խոնավությունը՝ 2.5-3.0%-ով ավելի է եղել:

Արովյանի հողաէրոզիոն հենակետում կատարած ուսումնասիրությունների արդյունքներով (Է.Ս.Հայրապետյան և ուրիշներ, 1990) պարզվել է, որ պաշտպանական անտառաշերտերը, անկախ դրանց տիպից ու լայնությունից, միանգամայն դրական դեր են խաղում հողի ջրային ռեժիմի բարելավման գործում և դրանց դերն ավելի ուժեղ է արտահայտվում երաշտի ժամանակ:

Բազմաթիվ հետազոտողների կողմից վաղուց արդեն հաստաված է անտառի և պաշտպանական անտառաշերտերի դերը տարածքի ջրային ռեժիմի կարգավորման գործում (Գ.Ֆ.Ժուլանով, 1995, Ս.Վ.Չոնն, 1959, Ա.Ա.Մոլչանով, 1960, Պ.Ֆ.Իղզոն, 1961, Գ.Օ.Բասով, Մ.Ն.Գրիցենկո, 1963, Ա.Գ.Կոնստանտինով, 1965, Գ.Պ.Սուլմազ, 1971 և ուրիշներ):

Գ.Ա.Չերեմշինովը (1955), Պ.Մ.Ֆոկիսը (1960), Ի.Դ.Բրաուդեն (1965) պաշտպանական անտառաշերտերի ստեղծումը համարում են երաշտի և էրոզիայի դեմ պայքարի հզոր միջոց: Նրանք գտնում են, որ պաշտպանական անտառաշերտերը նպաստում են ոչ միայն մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը, այլև շրջակա միջավայրի բարելավմանը:

Հայաստանի չոր տափաստանային գոտու՝ լեռնաշագանակագույն հողերում կատարված ուսումնասիրությունները (Մ.Ա.Շալյան, 1985) ցույց են տվել, որ անտառմելիորացիան, լեռնային չոր կլիմայի պայմաններում, համարվում է հզոր, տևական ներգործող, տնտեսապես ձեռնտու միջոցառում: Ընդ որում, 20 մ լայնությամբ ստեղծված մեկ հեկտար անտառաշերտերն ընդունակ են բարելավելու անտառաշերտերից ներքև ընկած 10 հեկտար տարածություն: Պարզվել է նաև, որ անտառաշերտերի տարածքի ավելացմանը զուգընթաց դրանց ներգործությունը շրջակա միջավայրի և զյուղատնտեսական հողատեսքերի արտադրողականության վրա մեծանում է:

Նույն հեղինակը և ուրիշներ (1988) հանգել են նաև այն եզրակա-

ցության, որ անտառաշերտերի լայնության մեծացումը ուղիւցվում է ջրային ռեժիմի վրա դրական ներգործության մեծացմամբ՝ նպատակահարմար համարելով անտառաշերտերի չափավոր լայնությունը՝ կախված տնկարկների տիպից, լանջի թերքությունից և հողի վիճակից՝ ընդունել 20-40 մ:

ԱՄՆ-ում կատարված ուսումնասիրություններով ևս (Ստեվեն Վ. Ուոննինգ և Ջունիպեր Փ. Քոուզիլան, 1988, Bill-Mollison, 1998, Fravent R.K. and ot., 1955) պարզվել է պաշտպանական անտառաշերտի մեծ դերը՝ հողում խոնավություն կուտակելու, էրոզիան կանխելու, մշակաբույսերի բերքատվությունը բարձրացնելու գործում:

Վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում վարելահողերի զանգվածային դաշտեր ստեղծելու նպատակով ԼՂՀ Ասկերամի շրջանի շատ տնտեսություններում ոչնչացվել ու արմատախիլ են արվել նախկինում ծառարֆատեսակներից ստեղծված միջնակներն ու միջնականնան շերտերը, որոնք կարևոր դեր էին խաղում դաշտերում ձյուն կուտակելու, ջրի պաշարներն ավելացնելու և հողերն էրողայից պաշտպանելու, հետևապես՝ մշակաբույսերի բերքատվությունը բարձրացնելու գործում:

Նման զանգվածային դաշտերում, այն էլ խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում, սիստեմատիկ գործող քամիները դաշտերից ձյունը հեռացնում և կուտակում են ձորերում, լեռնազոգերում և հնադարյան էրոզիոն գոյացումներում: Այդ իսկ պատճառով, նույնիսկ ձևառատ տարիներին, քամիներից չպաշտպանված դաշտերում ձյունը համաչափ չի բաշխվում, որը և բացասաբար է անդրադարձնում հողի ջրային ռեժիմի վրա: Անջրդի հողերում վեգետացիայի ընթացքում բույսերը ջրի պակաս են զգում, որը և ցածր բերքի պատճառ է դառնում:

Անտառարֆուտային պաշտպանական շերտերի դերը հողերի բերքիության պահպաննան ու մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում պարզելու նպատակով, ԼՂՀ Ասկերամի շրջանի 4 համայնքների տարածքներում (Խաչմաշ, Սարուշեն, Ակնաղբյուր, Այգեստան) անցատվել են 2-ական փորձահրապարակներ: Ընդ որում, անտառարֆուտային շերտերով շրջափակված վա-

թելահողերին անմիջապես կից ընտրվել են զանգվածային դաշտերի վերածված, քամուց չպաշտպանված դաշտեր, որոնք ընդունվել են որպես ստուգիչ: Հարկ է նշել, որ նման տարածություններ Ասկերանի շրջանի լեռնաստառային գոտում հաճախակի են հանդիպում և նման փորձահրապարակների անջատումը առանձին դժվարություն չի ներկայացնում:

Ուսումնասիրությունները տարվել են 1994-1997թթ. ձմռան ամիսներին՝ կայուն ձնածածկի պայմաններում՝ յուրաքանչյուր փորձահրապարակի 50 կետերում կատարելով դիտարկումներ՝ պարզելու ձյան բաշխվածության բնույթը քամուց չպաշտպանված զանգվածային և անտառարփուտային շերտերով պաշտպանված դաշտերում, ինչպես ստվերահայաց, այնպես էլ արևահայաց լանջերում: Ըստ որում, փորձահրապարակներից երկուսն ընտրվել են արևահայաց լանջերում (Խաչմազ և Սարուշն համայնքներ), երկուսը՝ ստվերահայաց լանջերում (Աղմաղյուր և Այգեստան համայնքներ) (B.A.Ալեքսանյան, 1997):

Այդ նույն փորձահրապարակներում (1995-1996թթ.)՝ բույսերի վեգետացիայի լնարացքում, որոշվել է հողի դաշտային խոնավության դինամիկան 0-80 սմ շերտում: Աշնանացան ցորենի Բեզոստայա 1 բերքի հաշվառումը փորձահրապարակներում կատարվել է քառակուսի մետրանոց շրջանակի մեթոդով՝ 5 կրկնողությամբ:

Անտառարփուտային պաշտպանական շերտերի դերը հողի բերիության պահպանման գործում պարզելու նպատակով Այգեստան և Խնապատ համայնքների տարածքներում անջատվել են երկու հողահանդակներ: Երկու համայնքների տարածքներում էլ առանձին հողահանդակում վարելահողերից վերև լանջի ջրբաժանային և ենթարածանային մասերը, 60-70 մ լայնությամբ անտառարփուտային շերտերը պահպանվել են, իսկ դրա անմիջապես կողքին գտնվող հողահանդակում անտառարփուտները լրիվ ոչնչացվել են: Անջատված չորս հողահանդակներում տեղադրվել են հողափոսեր (ջրբաժանից որոշակի հեռավորության վրա) և ըստ գենետիկական հորիզոնների վերցվել են նմուշներ՝ լաբորատոր ուսումնասիրությունների համար:

1994-1995թթ. և 1996-1997թթ. Ասկերանի շրջանում ձյան տեսքով տեղումներ քիչ են եղել: Ստեփանակերտի օդերևութաբանական կայանի տվյալներով՝ 1994-1995թթ. ձմռան ամիսներին ընդամենը չորս անգամ է ձյուն տեղացել և առաջացել է 10-15 սմ-ից ոչ հաստ ձնաշերտ: 1995-1996թթ. ձյուն տեղացել է միայն մեկ անգամ և առաջացել է մինչև 4 սմ հաստությամբ ձնաշերտ, իսկ 1996-1997թթ.՝ երեք անգամ և առաջացել է մինչև 15 սմ հաստությամբ ձնաշերտ:

Դիտարկումներից պարզվել է, որ քամուց չպաշտպանված արևահայաց լանջերի վարելահողերում (Սարուշեն, Խաչմաշ համայնքներ) գրանցվել են ձնածածկից զուրկ 11-21, իսկ ստվերահայաց լանջերում՝ 6-16 կետեր: Հիմնականում (24-33 կետերում) առաջացել է մինչև 5 սմ հաստությամբ ձնաշերտ: 5-10 սմ հաստությամբ ձնաշերտ առաջացել է 2-8 (արևահայաց լանջերում) և 5-11 կետերում (ստվերահայաց լանջերում): 10 սմ-ից ավելի ձնաշերտ չի առաջացել (աղյուսակ 5.3.1. և 5.3.2):

### **Աղյուսակ 5.3.1**

**Ջյան շերտի բաշխվածությունը քամուց չպաշտպանված ու պաշտպանված վարելահողերում (50 կետերում կատարված դիտարկումների միջին տվյալները) (1994-1997թթ.)**

Դիտարկումների ի վարք	Դաշտի վիճակը	Դիտարկում - նորի ժամանակը	Ջյան շերտի հաստություն				
			Ձնածածկ - նոր զուրկ	Մինչև 5 սմ	5-10 սմ	10-15 սմ	15 սմ -ից բարձր
h. Խաչմաշ, հարավային լանջ, 6-8°	բամոց չպաշտպանված զանած զանգվածային վարելահող	25.12.1994թ.	21	27	2	-	-
		21.01.1995թ.	16	31	3	-	-
		07.02.1997թ.	21	24	4	1	-
		27.02.1997թ.	15	29	6	-	-
	անտառաբիուս-ներվ շրջանակված վարելահող	25.12.1994թ.	-	-	38	11	1
		21.01.1995թ.	-	-	37	13	-
		07.02.1997թ.	-	-	34	14	2
		27.02.1997թ.	-	-	36	13	1
h. Սարուշեն, հարավային լանջ, 8-10°	բամոց չպաշտպանված զանգվածային վարելահող	25.12.1994թ.	16	31	3	-	-
		21.01.1995թ.	17	28	5	-	-
		07.02.1997թ.	16	26	6	2	-
		27.02.1997թ.	11	31	8	-	-
	անտառաբիուս-ներվ շրջանակված վարելահող	25.12.1994թ.	-	-	41	9	-
		21.01.1995թ.	-	-	39	11	-
		07.02.1997թ.	-	-	34	15	1
		27.02.1997թ.	-	-	35	13	2

### Աղյուսակ 5.3.2

**Ջյան շերտի բաշխվածությունը քամուց չպաշտպանված ու պաշտպանված վարելահողերում (50 կետերում կատարված դիտարկումների միջին տվյալները) (1994-1997թ.)**

Դիտարկումների վայրը	Դաշտի վիճակը	Դիտարկման նորի ժամանակը	Դամ շեռու հաստությունը				
			Զնանծ - կից գույն	Մընկ 5 մ	5-10 մ	10-15 մ	15 մ -ից բարձր
հ. Ակնառյուր, հյուսիս-արևել- յան լանջ, 6-8°	բամոց	25.12.1994թ.	13	32	5	-	-
	չպաշտպանված զանգվածային վարելահող	21.01.1995թ.	11	29	9	1	0
		07.02.1997թ.	11	32	7	-	-
		27.02.1997թ.	9	28	11	2	-
	անտառարփուտ- ներով	25.12.1994թ.	-	-	33	17	-
		21.01.1995թ.	-	-	27	18	5
	շրջափակված վարելահող	07.02.1997թ.	-	-	27	19	4
		27.02.1997թ.	-	-	31	16	3
հ. Այգեստան, հյուսիս-արևել- յան լանջ, 6-8°	բամոց	26.12.1994թ.	16	27	7	-	-
	չպաշտպանված զանգվածային վարելահող	22.01.1995թ.	11	33	6	-	-
		08.02.1997թ.	8	30	9	3	-
		28.02.1997թ.	12	26	11	1	-
	անտառարփուտ- ներով	26.12.1994թ.	-	-	36	14	-
		22.01.1995թ.	-	-	30	17	3
	շրջափակված վարելահող	08.02.1997թ.	-	-	32	16	2
		28.02.1997թ.	-	-	28	19	3

Միանգամայն հակառակ պատկեր է նկատվում անտառարփուտներով պաշտպանված դաշտերում, որտեղ ձևածածկից գործ տարածություններ և մինչև 5 ամ հաստությամբ ձևաշերտ չեն գրանցվել: Այստեղ առաջացել է 5-15 ամ հաստությամբ ձևաշերտ, իսկ 15 ամ-ից ավելի ձևաշերտ գրանցվել է 1-2 կետերում (արևահայաց լանջերում) և 2-5 կետերում (ստվերահայաց լանջերում):

Քամուց պաշտպանված լանջերում ձյան պահպանումն ու կուտակումը նպաստել է հողում ջրի պաշարի ավելացմանը: Երկու տարվա միջին տվյալներով անտառարփուտային շերտերով պաշտպանված տարածությունների համեմատությամբ, հողի դաշտային խոնավությունը 0-80 ամ շերտում բարձր է եղել 3.5%-ով, իսկ ջրի ընդհանուր պաշարը՝ 33.6 մմ-ով (քամուց չպաշտպանված դաշտերում 17.1% կամ 164.1 մմ, պաշտպանված դաշտերում 20.6% կամ 197.7 մմ):

Դաշտային խոնավությունն անմիջական կախվածության մեջ է գտնվում տեղումներից:

1996թ. արձանագրված է որպես երաշտ տարի, բույսերի վեցետացիայի ընթացքում (մարտ-սեպտեմբեր) թափվել են ընդամենը

76.1 մմ տեղումներ, այն դեպքում, երբ 1995թ. նույն ժամանակահատվածում տեղումների քանակը եղել է 312.0 մմ: Այդ է պատճառը, որ 1995թ. վեգետացիայի ընթացքում հողի դաշտային խոնավությունը եղել է համեմատաբար բարձր (քամուց չպաշտպանված դաշտում 19.2%, կամ 181.7 մմ, անտառարփուտային շերտերով պաշտպանված դաշտում 22.9%, կամ 218.0 մմ), քան 1996թ. (քամուց չպաշտպանված դաշտում 15.0%, կամ 144.0 մմ, անտառարփուտային շերտերով պաշտպանված դաշտում 18.4%, կամ 176.6 մմ):

Դաշտերում համեմատաբար հաստ ձևաշերտի պահպանումը, ջրի մեծ պաշարների կուտակումը միանգամայն դրական են անդրադարձել աշնանացան ցորենի բերքի վրա:

Հողում ջրի կուտակման ու մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով կիրառվող ազրոտեխնիկական միջոցառումների արդյունավետությունն ավելի բարձր է պաշտպանական անտառաշերտերի առկայության դեպքում (առյուսակ 5.3.3., 5.3.4):

### **Աղյուսակ 5.3.3**

**Անտառարփուտային պաշտպանական շերտերի ազդեցությունը հողի խոնավության վրա (համարիչում դաշտային խոնավությունը %-ով չոր հողի կշռի նկատմամբ, հայտարարում՝ ջրի ընդհանուր պաշարը, մմ)**

Ռեսումանական բյուների վայրը	Դաշտի վիճակը	Խոնավության դրության ժամկետ		Ծեր 0 - 80 մ շերտում,	
		1995թ. 25.04	21.05	17.06	26.07
h. Խոշոշաշ, հարավային լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարեկանող	21.7 203.1	16.2 156.3	22.6 213.7	15.4 151.5
	անտառարփուտներով շրջափակված վարեկանող	25.1 234.9	21.3 206.3	24.7 233.1	20.1 197.8
h. Մարտինն, հարավ-արևելյան լանջ, 8-10°	քամուց չպաշտպանված զանգվածային վարեկանող	20.3 190.0	15.6 151.0	21.0 198.2	14.0 137.7
	անտառարփուտներով շրջափակված վարեկանող	23.4 219.0	20.2 195.5	22.9 216.1	18.2 179.1
h. Ակնաղբյուր, հյուսիս-արևելյան լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարեկանող	23.9 221.7	17.5 166.6	24.3 227.4	16.9 162.2
	անտառարփուտներով շրջափակված վարեկանող	27.6 256.1	21.9 199.7	27.2 254.6	21.1 202.5
h. Այգեստան, հյուսիս-արևելյան լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարեկանող	22.6 211.5	17.0 164.5	23.1 218.0	15.7 154.5
	անտառարփուտներով շրջափակված վարեկանող	25.8 241.5	20.8 201.3	26.7 252.0	20.2 198.7

### Աղյուսակ 5.3.4

Անտառաթփուտային պաշտպանական շերտերի ազդեցությունը հողի  
խոնավության վրա՝ 0-80 մմ շերտում (համարիչում դաշտային  
խոնավությունը %-ով, հայտարարում՝ ջրի ընդհանուր պաշարը, մմ)

Ուստմասնական բաժնի վայրը	Դաշտի վիճակը	Խոնավության որոշման ժամկետները		Մերժ 0-80 մմ շերտում,	
		12.04	29.05	27.06	29.07
h. Խոշմաշ, հարսվային լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարելահող	17.1 161.4	16.4 158.7	14.6 140.1	10.3 101.3
	անտառաթփուտներով շրջափակված վարելահող	20.4 192.5	19.8 191.6	17.9 171.8	14.0 137.0
h. Սարուշեն, հարավ- արևելյան լանջ, 8-10°	քամուց չպաշտպանված զանգվածային վարելահող	16.8 158.6	16.3 157.8	14.7 141.1	9.1 89.5
	անտառաթփուտներով շրջափակված վարելահող	19.7 185.9	18.5 179.1	16.8 161.3	13.4 131.8
h. Ակնադրյուր, հյուսվառ-արևելյան լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարելահող	18.7 176.5	17.9 173.3	15.9 152.6	11.8 116.1
	անտառաթփուտներով շրջափակված վարելահող	22.1 208.6	21.8 211.0	19.7 189.1	15.4 151.5
h. Այգեստան, հյուսվառ- արևելյան լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարելահող	17.9 168.9	17.1 165.5	15.0 144.0	10.6 104.3
	անտառաթփուտներով շրջափակված վարելահող	21.7 204.8	20.2 195.5	19.1 183.3	14.6 143.6

### Աղյուսակ 5.3.5

Անտառաթփուտային շերտերի ազդեցությունն աշխանացան ցորենի  
թեզոստայա 1 սորտի բերքատվության վրա

Ուստմասնական բաժնի վայրը	Դաշտի վիճակը	Բերքը ց/հ			
		1995թ.		1996թ.	
		Հա - տիկ	Ծովու	Հա - տիկ	Ծովու
h. Խոշմաշ, հարսվային լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարելահող	20.3	25.2	14.6	18.4
	անտառաթփուտներով շրջափակված վարելահող	22.5	24.5	19.4	24.5
h. Սարուշեն, հարավ- արևելյան լանջ, 8-10°	քամուց չպաշտպանված զանգվածային վարելահող	18.0	23.1	13.4	17.3
	անտառաթփուտներով շրջափակված վարելահող	20.9	27.4	17.6	22.1
h. Ակնադրյուր, հյուսվառ- արևելյան լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարելահող	21.4	27.2	16.4	20.9
	անտառաթփուտներով շրջափակված վարելահող	24.7	32.8	19.5	24.9
h. Այգեստան, հյուսվառ- արևելյան լանջ, 6-8°	քամուց չպաշտպանված զանգվածային վարելահող	22.7	28.8	15.9	20.1
	անտառաթփուտներով շրջափակված վարելահող	25.5	33.9	19.1	24.4

$$S_{x_0} \% = 1.0\% \quad \text{ԱԷՏ}_{05} = 0.6 \text{ g/hա}$$

Աղյուսակներ 5.3.3, 5.3.4 և 5.3.5-ում բերված թվական տվյալները ցույց են տալիս, որ անտառաբփուտային պաշտպանական շերտերը նպաստել են աշնանացան ցորենի Բեզոստայա 1 սորտի բերքի բարձրացմանը միջին հաշվով 3.2-3.8 g/h-ով (չպաշտպանված դաշտերում 16.3-19.0 g/h, պաշտպանված դաշտերում 20.1-22.2 g/h): Ընդ որում, բերքի ավելացումն առավել զգալի է արտահայտվել 1996թ. երաշտ տարում: Այսպես, եթե 1995թ. գյուղատնտեսության համար նպաստավոր տարում պաշտպանական անտառաբփուտային շերտերը նպաստել են բերքի բարձրացմանը 3.1 g/h, ապա 1996թ. երաշտ տարում այդ ցուցանիշը եղել է 3.9 g/h:

Նկատելի է նաև, որ անտառաբփուտային պաշտպանական շերտերի դերն առավել դրական է անդրադարձել 1996թ. երաշտ տարում՝ արևահայաց լանջերում, որտեղ բերքի հավելումը կազմել է 4.3 g/h:

Ասկերանի շրջանի որոշ համայնքներում (Ասկերան, Խնապատ, Խրամոր, Այգեստան և այլն) էրողին գործընթացների զարգացմանը նպաստում է այն հանգամանքը, որ անտառաբփուտներով ծածկված մեծ թեքության լանջերն իրացվում են ընդիուպ մինչև ջրբաժանը: Այստեղ 12-15օ թեքության լանջերում հողատարումը հանդես է զալիս անմիջապես ենթաջրբաժնային մասում՝ ջրբաժնից 20-25 մ հեռավորության վրա: Լանջի այդ տարածքում հողը հիմնականում միջին էրողացված է, իսկ առանձին բծերով՝ նույնիսկ ուժեղ էրողացված: Չամին ձյունը դաշտերից հեռացնում, տեղափոխում է ճորերն ու հնադարյան էրողին գոյացումները:

Խնապատ համայնքի տարածքում կատարված դիտարկումները ցույց են տվել, որ նման լանջերում ձյուն գրեթե չի կուտակվում կամ գոյանում է ոչ մեծ հաստության ձևաշերտ, այն դեպքում, եթե լանջի ստորոտում ձյան շերտի հաստությունը կազմում է 20-25 սմ, իսկ անտառաբփուտներով ծածկված հնադարյան էրողին գոյացումներում՝ մինչև 50-55 սմ և ավելի:

Աղյուսակներ 5.3.6 և 5.3.7-ում բերված թվական տվյալները վկայում են, որ 60-70 մ լայնությամբ անտառաքիուտային շերտերը բավական հուսալիորեն են հողի պաշտպանում էրողիայից:

### **Աղյուսակ 5.3.6**

**Անտառաքիուտային շերտերի ազդեցությունը հողի բերրիության  
պահպանման վրա (հ. Խնապատ, արևելյան լանջ, 8-10օ) (1996թ.)**

Հողափակի համար դաշտի վիճակը	Գենոֆի - կական երթագործ ներք. մթ	Տոկոսներով		Մեխանիզման կազմը %		
		Հող մտա նոր ազու	Ընդհան ուր ազու	Ֆիզիկական ավագ (>0.01մ)	Ֆիզիկական կազմ (<0.01մ)	Տից (<0.001մ)
Կտր. 31, անտառքիուտ- ներով պաշտպանված դաշտ, ջրաժամից 100մ հեռավորության վրա	A <sub>d</sub> 0-27	3.72	0.238	39.82	60.16	7.33
	B 27-53	2.87	0.172	37.53	62.47	7.01
	BC 53-67	1.76	0.109	47.93	52.07	5.19
	C 67-79	0.43	0.024	50.89	49.11	4.04
Կտր. 32, անտառքիուտ- ներով չպաշտպանված դաշտ, ջրաժամից 100մ հեռավորության վրա	A <sub>d</sub> 0-24	2.46	0.147	48.17	51.83	4.58
	B 24-41	2.03	0.121	39.45	60.55	6.04
	BC 41-63	1.52	0.088	50.28	49.72	4.92
	C 63-76	0.47	0.027	49.91	50.09	3.98

### **Աղյուսակ 5.3.7**

**Անտառաքիուտային շերտերի ազդեցությունը հողի բերրիության  
պահպանման վրա (հ. Ակնաղբյուր, հյուսիս-արևելյան լանջ, 10-12°)  
(1996թ.)**

Հողափակի համար դաշտի վիճակը	Գենոֆի - կական երթագործ - ներք. մթ	Տոկոսներով		Մեխանիզման կազմ, %		
		Հող մտա նոր ազու	Ընդհան ուր ազու	Ֆիզիկական ավագ (>0.01մ)	Ֆիզիկական կազմ (<0.01մ)	Տից (<0.001մ)
Կտր. 53, անտառքիուտ- ներով պաշտպանված դաշտ, ջրաժամից 100մ հեռավորության վրա	A <sub>d</sub> 0-27	4.03	0.267	48.07	51.93	8.56
	B <sub>1</sub> 27-51	3.11	0.180	49.86	50.14	7.36
	B <sub>2</sub> 51-63	2.19	0.129	54.49	45.51	7.18
	B <sub>2C</sub> 63-79	1.08	0.057	61.08	38.92	4.19
Կտր. 54, անտառքիուտ- ներով չպաշտպանված դաշտ, ջրաժամից 100մ հեռավորության վրա	A <sub>d</sub> 0-24	3.26	0.205	54.77	45.23	5.64
	B <sub>1</sub> 24-44	2.60	0.140	51.36	48.64	7.19
	B <sub>2</sub> 44-55	1.79	0.102	56.51	43.29	6.71
	B <sub>2C</sub> 55-72	1.16	0.061	63.88	36.12	6.04

Հողը, պաշտպանված լիմելով էրոզիայից, ավելի հզոր է դասնում, պարունակում է ավելի շատ հումուս և ընդհանուր ազոտ: Անտառարփուտներով չպաշտպանված տարածություններում հողաշերտի հաստությունը ( $A+B$ ) պակաս է 12 սմ-ով, հողաշերտի սահմաններում հումուսի պարունակությունը՝  $0.84\text{-}1.26\%$ -ով, ընդհանուր ազոտը՝  $0.051\text{-}0.091\%$ -ով: Հողի վերին հորիզոններում ( $A\psi$ ) ֆիզիկական կավի քանակը պակաս է եղել  $8.35\%$ -ով, իսկ տիղմինը՝  $2.75\%$ -ով:

Ստորին հորիզոններում մեխանիկական կազմի և հումուսի պարունակության տեսակետից էական տարբերություններ չեն նկատվել:

Ակնաբերյուր համայնքի տարածքում (հյուսիս-արևելյան լանջ, 10-12օ) կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շուրջ  $45\text{-}50$  մ լայնությամբ անտառփուտային շերտերը բավական հուսափ պաշտպանում են հողն էրոզիայից:

Անտառարփուտներով չպաշտպանված տարածությունում էրոզիայի հետևանքով հողաշերտի հաստությունը նվազել է 8 սմ-ով, հումուսի պարունակությունը  $A\psi$  հորիզոնի սահմաններում՝  $0.77\%$ -ով, ընդհանուր ազոտինը՝  $0.062\%$ -ով:

Հողատարման հետևանքով վարելահողերի վերին հորիզոններում նվազել է հողի նուրբ դիսպերսաված ֆրակցիաների, մասնավորապես՝ ֆիզիկական կավի և տիղմի քանակը: Նկատելի է, որ անտառարփուտներով չպաշտպանված ստվերահայաց լանջերում շնայած հողը նույնպես էրոզիայի է ենթարկվում, այն այնպիսի ուժգնությամբ չի արտահայտվում, ինչպիսին նկատվում է արևահայաց լանջերում:

Նման կարգի ուսումնասիրություններ տարվել են նաև Այգեստան համայնքի տարածքում (հարավ-արևելյան լանջ, 10-15օ) (աղյուսակ 5.3.8):

### Աղյուսակ 5.3.8

**Անտառարփուտային շերտերի ազդեցությունը հողի բերրիության պահպանման վրա (հ. Այգեստան, հարավ-արևելյան լանջ, 10-15°) (1996թ.)**

Հողագոյն համարը, դաշտի վիճակը	Գննողի - խելան հորիզոն - նորմ, մմ	Տոկոսներով		Մեխանիզական կազմ՝ %		
		Հող մուս	Ընդհանուր ազուր	Ֆիզիկա կան ական (>0.01մ)	Ֆիզիկա կան կան (<0.01մ)	Տիրու (<0.01մ)
Կտր. 37, անտառ- թփոտներով պաշտ- պանված դաշտ, ջրբա- ժանից 100մ հեռավո- րության վրա	A <sub>d</sub> 0-25	3.26	0.211	51.60	48.40	5.12
	B 25-49	2.53	0.157	46.99	53.01	6.70
	BC 49-56	1.84	0.122	59.88	40.12	4.83
	C 56-72	0.31	0.018	69.64	30.36	3.14
Կտր. 38, անտառ- թփոտներով չպաշտ- պանված դաշտ, ջրբա- ժանից 100մ հեռավո- րության վրա	A <sub>d</sub> 0-23	2.01	0.134	60.53	39.47	3.68
	B 23-36	1.13	0.066	58.95	41.05	4.51
	BC 36-53	0.74	0.043	62.39	37.61	3.92
	C 53-65	0.33	0.019	68.90	31.10	3.30
Կտր. 39, անտառ- թփոտներով պաշտ- պանված դաշտ, ջրբա- ժանից 170մ հեռավո- րության վրա	A <sub>d</sub> 0-27	3.72	0.241	42.26	57.74	6.12
	B 27-46	2.91	0.165	48.88	51.12	6.01
	BC 46-58	1.56	0.080	57.09	42.91	5.36
	C 58-78	0.39	0.023	66.61	33.39	4.11
Կտր. 40, անտառ- թփոտներով չպաշտ- պանված դաշտ, ջրբա- ժանից 170մ հեռա- վորության վրա	A <sub>d</sub> 0-27	2.53	0.159	53.68	46.32	4.64
	B 27-39	1.47	0.089	50.57	49.43	5.07
	BC 39-47	1.03	0.059	58.87	41.13	4.69
	C 475-67	0.37	0.021	63.96	36.04	3.92

Ինչպես շատ տնտեսություններում, այստեղ նույնական մշակովի հողերի տարածությունն ավելացնելու նպատակով վարելահողերից վերև տարածվող անտառարփուտները ոչնչացվել են մինչև ջրբաժանի ներառյալ: Դրա անմիջապես կողքին ընկած տարածությունում, որտեղ տարածքը հնադարյան էրոզիոն գոյացումներով մասնատվել է և դարձել գյուղմեքենայացման մշակման համար ոչ պիտանի, անտառարփուտները պահպանվել են: Այստեղ ոչ միայն ենթաջրբաժանը, այլև ջրբաժանը ծածկված է անտառարփուտներով:

Իրար կողքի ձգվող բավական երկար այս երկու լանջերում ջրբաժանից 100 մ և 170 մ հեռավորությունների վրա տեղադրվել են հողափոսեր:

Անալիտիկական տվյալները, որոնք բերված են աղյուսակ 5.3.8 - ում, վկայում են, որ անտառարփուտներով չպաշտպանված տարա-

ծություններում հողաշերտի հզորությունը պակաս է եղել 11-13 սմ-ով, հումուսի քանակը՝ 1.19-1.25%-ով, ընդհանուր ազոտինը՝ 0.077-0.082%-ով: Հողատարման հետևանքով նվազել է նաև ֆիզիկական կավի ( $<0.01$  մմ-ից) քանակը՝ 8.93-11.4%-ով, տիղմինը ( $<0.001$  մմ-ից)՝ 1.44-1.148%-ով:

Ինչպես երևում է այդ նույն աղյուսակի տվյալներից, հողատարման գործընթացներն արտահայտվել են գրեթե լանջի ամբողջ երկարությամբ, և հողի քացասական հատկությունները փոփոխվել են ոչ միայն ենթաջրաժանային, այլ նաև նրա ստորոտի մասերում:

1996թ. կատարված թերքի հաշվառումից պարզվել է, որ անտառաբփուտային շերտերով պաշտպանված տարածություններում աշնանացան ցորենի Բեզոստայա 1 սորտի թերքատվությունը անտառաբփուտներով չպաշտպանված տարածությունների համեմատությամբ ավել է եղել 4.1 g/h (13.7 g/h-ի դիմաց 17.8 g/h):

Տվյալները վկայում են այն մասին, որ մեծ թերության լանջերում անտառաբփուտների ոչնչացումն ու արմատախիլ անելը և այդ տարածությունները վարելահողերի վերածելը՝ անկախ լանջերի դիրքադրությունից, բոլորովին հիմնավորված չեն ոչ հողերի արդյունավետ օգտագործման, և ոչ էլ դրանց թերքիության պահպանման տեսակետից:

## **ԳԼՈՒԽ 6**

### **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ծրագրավորման պարագայում սովորաբար հաշվի են առնվում տվյալ հողակլիմայական գոտու, ենթագոտու պայմաններում ստացվող բերքի հնարավոր ցուցանիշները: Ընդ որում, հիմնականում հաշվի են առնվում հողակլիմայական գոտին կամ ենթագոտին, հողերի ոռոգովի կամ անջրդի լինելը, շրջանացված մշակաբույսերի սորտը, հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառումը, գյուղատնտեսական աշխատանքների մերենայացումը, վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացումը և այլ գործոններ:

Հողային պաշարների արդյունավետ օգտագործման, պահպանան, բարելավման, տնտեսական կարգավորման գործում կարևոր նշանակություն ունի հողային կադաստրի վարումը, որն իր մեջ պարունակում է հողերի վերաբերյալ իրավական, քանակական, որակական և տնտեսական գնահատման վերաբերյալ անհրաժեշտ ու հավաստի տեղեկություններ:

Հողային կադաստրի վարման անհրաժեշտությունը ԼՂՀ-ում առանձնապես մեծացել է հողի սեփականաշնորհումից հետո ստեղծված հողային նոր հարաբերությունների պայմաններում: Հողային կադաստրը մեծ նշանակություն ունի գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեությունը ճիշտ վերլուծելու գործում, այն կապելով հողի արտադրողականության, ագրոմելիորատիվ միջոցառումների և տնտեսական պայմանների հետ:

Շուկայական տնտեսության պայմաններում՝ հողային բարեփոխումների ընթացքում, որտեղ հողը հանդիսանում է որպես շուկայական շրջանառության առարկա՝ անշարժ գույք, առաջացել են նոր

հարաբերություններ ու հասկացություններ՝ սեփականության օգտագործում, առքուվաճառք, վարձակալություն, սերվիսուտ, գրավ և այլն: Գյուղատնտեսական հողատեսքերի մասնավոր սեփականության պայմաններում առաջացել են նոր խնդիրներ՝ հողի գնի և դրանց հարկնան հիմքի ստեղծման գործում:

Հողը, հանդիսանալով բնության բաղադրիչներից մեկը, օժտված է հատուկ հատկություններով, որոնք կարող են գնահատվել որոշակի ցուցանիշներով: Հողերի գնահատման տվյալներն անհրաժեշտ են հողի հարկի, վարձավճարի չափերի, հողի շուկայական գնի, նորմատիվային արժեքի, անշարժ գույքի օբյեկտների, շուկայական հարաբերությունների պետական կարգավորման, ինչպես նաև հողերի արդյունավետ օգտագործման հմարավորությունների բացահայտման, հողերի օգտագործման և պահպանման, պետական վերահսկողության իրականացման և այլ հարցերում:

Ժամանակակից պայմաններում հողի գնահատումը կատարվում է բոնիտման և հողերի արժեքային գնահատման միջոցով:

Բոնիտումը հողերի որակական, համեմատական գնահատումն է: Բոնիտման նպատակն է բացահայտել յուրաքանչյուր հողամասի բնական բերրիությունը և պիտանելիությունը գյուղատնտեսական մշակաբույսերի համար՝ ազրուելողգիական այս կամ այն գործոնների համարի ազդեցության պայմաններում: Այն արտահայտվում է համեմատական ցուցանիշներով՝ բալերով:

Դեռևս 1954թ. Վ.Վ.Դոկուչաևը գտնում էր, որ հողերի բոնիտման ժամանակ կարևոր է՝

ա) կատարել հողերի դասակարգում, որոշել հողի տիպը և այլ տարսունոմիական միավորներ,

բ) ուսումնասիրել հողերի նորֆոլոգիական, գենետիկական, ֆիզիկաքիմիական հատկությունները, դրանց բազային սանդղակները և հաշվարկել տվյալ հողի գնահատման միջին բան՝ ըստ այդ հատկությունների:

ՀՀ-ում հողերի բոնիտման հարցերով գրադպել են Ի.Ս.Հովսեփյանը (1976), Ա.Ս.Եղելյանը (1987, 2003, 2004, 2012), Է.Մ.Հայրապետյանը և ուրիշներ (1996), իսկ Ուսումնառում՝ Ս.Ս.Սորոլիը

(1982), Ֆ.Յավրիլյուկը (1994), Ա.Ա.Ստարկովը (2010) և այլ հետազոտողներ:

Հողերի որակական գնահատման հասկացությունը, խնդիրները և մեթոդները ժամանակի ընթացքում պայմանականորեն փոփոխվել են:

Երկար ժամանակ այն դիտվում էր որպես ինքնուրույն գործողություն, իսկ այժմ համարվում է որպես հողերի կաղաստրային գնահատման հիմնական բաղադրիչ մաս:

Հողերի որակական հատկությունները լիարժեք բնութագրելու, դրանք բարձր արդյունավետությամբ օգտագործելու, հողային հարաբերությունները կարգավորելու նպատակով, ԼՂՀ-ում վերջին տարիներին աշխատանքներ են տարվում հողային կաղաստրի մշակման ուղղությամբ, որտեղ ուրույն տեղ են գրաղեցնում հողագիտական հետազոտությունները և դրա հիման վրա հողերի որակական գնահատման աշխատանքները։ Սակայն հողերի բնական հատկություններն ու արտադրական ունակությունները ճիշտ գնահատելու համար, հողերի բոնիտման մի շարք մեթոդական հարցեր ԼՂՀ-ում պայմաններում դեռևս հստակեցված չեն։ Ուստի, խնդիր է առաջացել Ասկերանի շրջանի հողերի բոնիտման օրինակով մշակել ԼՂՀ տարածքի հողերի բոնիտման այն հիմնական դրույթներն ու սկզբունքները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ամբողջ հանրապետության հողերի բոնիտման և կաղաստրային գնահատման համար։

Հողերի բոնիտման ժամանակ հաշվի են առնվել խոշոր մասշտարի հողագիտական հետազոտությունների ընթացքում անցատված հողային տարստնոմիական միավորները՝ տիպը, ենթատիպը, տեսակը, տարատեսակը և այլն։

ԼՂՀ-ում հողերի բոնիտման ցուցանիշները մշակելու համար հիմք են հանդիսացել հանրապետության տարածքում, այդ թվում՝ Ասկերանի շրջանում 1994-1996թթ. կատարված հողերի կաղաստրային գնահատման ուսումնասիրությունների նյութերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կաղաստրի պետական կոմիտեի «Հողշինախագիծ» ՓԲԸ հողերի գնահատ-

ման բաժնի կողմից՝ 2002թ. մշակված «ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գնահատման մեթոդիկա»-ի պահանջները, հաստատված՝ ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 8-ի N 955 որոշմամբ:

Հողերի բոնիտման գիտական հիմք են հանդիսացել Դ.Ֆ.Տյումենցի (1975), Ա.Ա.Վարշամովի (2005), Ի.Ս.Հովսեփյանի (1976), Ա.Ա.Եզեկյանի (2003) և այլ գիտնականների կողմից մշակված գնահատման մեթոդներն ու սկզբունքները:

Հողերի որակական գնահատման համար օգտագործվել են հողերի հիմնական հատկությունների և հատկանիշների այն տվյալները, որոնք համեմատաբար հաստատուն են և ժամանակի ընթացքում դանդաղ են փոփոխվում: Այդ հատկություններն են՝ հումուսի պարունակությունը, հումուսային հորիզոնների հզորությունը, հողի մեխանիկական կազմը, ջրակայուն ազրեգատների և կլանված կատիոնների գումարը, կարբոնատությունը, որոնք բերված են համայնքների խոշոր մասշտաբի հողագիտական հետազոտության նյութերում:

Հողի հատկությունները և հատկանիշները չեն հանդիսանում հողի բերրիության և մշակաբույսերի բերքատվության անմիջական գործուներ: Որպես բերրիության պայման՝ դրանք սերտ կապի մեջ են գտնվում միջավայրի, ռելիեֆի, կիմայի ու այլ գործուների հետ, կախված են հողում տեղի ունեցող ֆիզիկական և կենսաբանական երևույթների հաշվառմանը դժվար ենթարկվող ցուցանիշներից, որոնք ի հայտ են գալիս երկրագործության կուլտուրայից, նյութական և աշխատանքային ծախսերի մակարդակից և այլն:

Տարբեր բնակլիմայական գոտիներում հողերի բերրիությունը պայմանավորող գործուների կազմը և հարաբերակցությունը փոփոխվում է: Միաժամանակ փոփոխվում է նաև բերքատվության վրա դրանց ազդեցությունը: Բոնիտման ընթացքում հողերի մորֆոլոգիական ծագումնաբանական հատկանիշների հիման վրա ստացված բոնիտման ցուցանիշները համադրվում են բերքատվության ցուցանիշների հետ:

Ասկերանի շրջանի հողերի որակական գնահատումը կատարվել

է տարածքի հողագնահատման շրջանացման հիման վրա, հետևյալ փուլերով՝

օ տարածքի հողագնահատման շրջանացում,

օ փաստացի գոյություն ունեցող նյութերի, տվյալների հավաքում և նախնական մշակում,

օ հողերի բնական հատկությունների, կլիմայական պայմանների և մշակաբույսերի բերքատվության վերաբերյալ տվյալների մշակում, դրանց միջև գոյություն ունեցող ազդեցության կապի հայտնաբերում,

օ բոնիտման սանդղակների մշակում,

օ հողօգտագործողների հողերի, հողամասերի բոնիտում:

Հաճախ հետազոտությունների տվյալների հիման վրա՝ Ասկերանի շրջանի տարածքում առանձնացվել է երկու հողագնահատման շրջան՝

1. հարքավայրային ներքին շրջան՝ մոխրագույն և շագանակագույն հողերի տիպերի սահմանում,

2. լեռնային անտառատափաստանային շրջան՝ լեռնաատառային դարչնագույն, գորշ տափաստանացված հողերի տիպերով:

ԼՂՀ Ասկերանի շրջանի հողային ֆոնդի հողագնահատման շրջանացումը հանդիսանում է տարածքի բաժանման գիտական համակարգ, որը բնութագրվում է բնական հողային և տնտեսական գորեքե միատարր պայմաններով ու նպաստում է գյուղատնտեսական արտադրության ճիշտ տեղաբաշխմանը և տնտեսական օբյեկտիվ նախապայմանների ստեղծմանը:

Հողերի բոնիտման սանդղակների մշակման ընթացքում՝ ըստ վերոհիշյալ գնահատման շրջանների, հավաքվել և մշակվել են հիմնական մշակաբույսերի բերքատվության վերաբերյալ տվյալներ: Այդ մշակաբույսերն են՝ հացահատիկային, բանջարա-բռստանային, կարտոֆիլը, միամյա և բազմամյա խոտաբույսերը:

Հողերի բոնիտման ընթացքում հողի որակի և բերքատվության միջև կապը կրում է ոչ թե կախյալ, այլ համահարաբերակցական (կոռելյացիոն) բնույթ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ բոլոր տիպերի հողերի

համար կոռելյացիոն սերտ կապ գոյություն ունի հողի հումուսային շերտերի հզորության, հումուսի պարունակության և մշակաբույսերի բերքատվության միջև:

Ուսումնասիրությունների ընթացքում հաշվի է առնվել նաև այն համգամանքը, որ յուրաքանչյուր բնակլիմայական գոտում առաջանում են ծագումնաբանական առանձին հողատիպեր, ենթատիպեր, տեսակներ ու տարատեսակներ, որոնք իրենց հողային, ազդուարտադրական հատկություններով, բերրիությամբ տարբեր են և հանրապետության լեռնային ռելիեֆի ու կիմայի պայմաններում կրում են գոտիական բնույթը:

**Հողի տիպը:** Տարբեր բնակլիմայական գոտիներում, կախված հողառաջացման գործընթացների բնույթից, ձևավորվում են տարբեր գենետիկական առանձնահատկություն ունեցող հողի տիպեր ու ենթատիպեր, որոնք հանդիսանում են հողերի կարգաբանման հիմնական բարձր տարատնոմիական միավորներ: Միևնույն տիպի մեջ մտնում են հողառաջացման նմանատիպ պայմաններում զարգացող այն հողերը, որոնք ունեն նույնանման կտրվածքի կազմություն, հողի հորիզոնների որոշակի դասավորություն, ձեռք են բերել բերրիության և արտադրողականության համանման ցուցանիշներ: Գլխավոր հողատիպերից են շագանակագույն հողերը, անտառային տափաստանացված դարչնագույն հողերը, անտառային գորշ տափաստանացված հողերը և մոխրագույն հողերը: Հողերի որակական գնահատման առաջին փուլում (2008-2010թթ.) Ասկերանի շրջանի տարածքում զարգացող հողատիպերի համար կազմվել է բոնիտման հիմնական սանդղակ (աղյուսակ 6.1).

## Աղյուսակ 6.1

### Ասկերանի շրջանի հողատիպերի բոնիտման սանդղակը (2008-2010թթ.)

Հողի տիպը	Բոնիտման քաղաքացիություն	Բնույթավորություն, ց/հա
Անտառային գորշ հողեր	50	25
Անտառային դարչնագույն հողեր	60	35
Շագանակագույն հողեր	65	40
Մոխրագույն հողեր	42	20

Հողերի բռնիտման գործընթացի հաջորդ փուլում մշակվել են հողերի բերրիության վրա ազդող դրական ու բացասական հատկությունների սանդղակներ և ուղղման գործակիցներ:

Հողերի բռնիտման, որակական գնահատման ցուցանիշներից է հողի հումուսային շերտի հզորությունը:

**Հողի հզորությունը:** Հողառաջացման պրոցեսում հողում կուտակվում է հումուս: Հողի հզորությունը որոշվում է հումուս պարունակող A և B հորիզոնների գումարով: Տարրեր պայմաններում առաջացած հողերը իրարից տարրերվում են ըստ հումուսային հորիզոնի հզորության, ուստի և բերրիության տարրեր մակարդակներով:

Հետազոտությունները ցույց են տվել, որ սերտ կապ գոյություն ունի հողի հզորության և մշակաբույսերի բերքատվության միջև (Ի.Ս.Հովսեփյան 1976):

Աշխատանքների կատարման ընթացքում հիմք է ընդունվել նաև Ասկերանի շրջանի վարելահորերի հզորության գնահատման սանդղակը (Ե.Ս.Հայրապետյան և ուրիշներ, 2000), որը բերված է աղյուսակ 6.2-ում:

## Աղյուսակ 6.2

### Հողերի գնահատումն՝ ըստ հզորության

Հողի տիպը	Հողի հզորությունը		
	Անվանումը	Ցուցանիշը	Գնահատվող քաղը
Շագանակագույն	հզոր և գերհզոր	> 60	100
Մոխրագույն	միջին հզոր	40-60	80
Անտառային դաշտագույն	սակավագոր	< 40	60

**Հումուսի պարունակությունը:** Հումուսի պարունակությամբ է պայմանավորված հողերի բնական բերրիության մակարդակը: Որքան շատ է հումուսի քանակը, այնքան ինտենսիվ է ընթանում հողում ազոտի, ֆոսֆորի, կալիումի, ծծմբի և այլ մակրոտարրերի, ինչպես նաև միկրոտարրերի (բոր, մանգան, մոլիբդեն, կորալտ, նիկել, ցինկ, երկար և այլն) միացությունների կուտակումը և, հետևապես, բարձրանում է մշակաբույսերի բերքատվությունը: Հումուսի քանակը մեծապես ազդում է հողի ֆիզիկական, քիմիկական, կենսաբանական հատկությունների բարելավման վրա:

Ի.Ա.Հովսեփյանի տվյալներով (1976) հումուսային հորիզոնում հումուսի քանակի և մշակաբույսերի բերքատվության միջև եղած համահարաբերակցությունը ջրովի հողերում տատանվում է 0,70-0,93-ի, իսկ անջրդի հողերում՝ 0,66-0,87-ի սահմաններում: Հումուսը, հանդիսանալով հողի բերրիության հիմնական ցուցանիշը, տարբեր հողատիպերում տարբեր է:

2008-2010թթ. ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքներով գնահատվել են Ասկերանի շրջանի վարելահողերը, ըստ հումուսի պարունակության, և տրվել են գնահատման բալերը՝ ըստ Է.Ա. Հայրապետյանի կողմից մշակված սկզբունքի: Այն բերված է աղյուսակ 6.3-ում.

### **Աղյուսակ 6.3**

#### **Հողերի գնահատում՝ ըստ հումուսի պարունակության**

Հողի տիպը	Հոմաժ սրբաճակությունը		
	Մնականություն	Ցուցանիշ %	Գնահատված բալը
Շագանակագույն	բավարար	> 4	100
Մոխրագույն, անտառային գորշ	միջին հումուսային	3.4-4.0	70
Դարչնագույն տափաստանացված	սակավ հումուսային	< 3	50

**Հողի մեխանիկական կազմը:** Հողի բերրիության մակարդակը կախված է հողի մեխանիկական կազմից: Հողերի կտրվածքի փուլսը զանգվածը բաղկացած է տարբեր տրամաչափի մասնիկներից, որոնց ընդհանուր գումարը կոչվում է հողի մեխանիկական կազմ: Հողի մեխանիկական կազմից մեծ չափով կախված են հողի ջրային, օդային, ջերմային ռեժիմները, ֆիզիկամեխանիկական հատկությունները, այսինքն՝ բույսերի աճի ու զարգացման վրա աղող գործոնները: Աղյուսակ 6.4-ում բերված է հողերի գնահատումն՝ ըստ մեխանիկական կազմի, և բոնիտման գնահատման բալը (Է.Ա.Հայրապետյան և ուրիշներ, 2000):

**Աղյուսակ 6.4**  
**Հողի գնահատումն՝ ըստ մեխանիկական կազմի**

Մեխանիկական կազմը	Ցուցանիշը. <0.01մմ մամիկների քանակը, %	Գնահատման բալթ
Կավային	> 60	60
Ծանր կավավագային	45-60	70
Սիջին կավավագային	30-45	100
Թերև կավավագային	20-30	50
Ավագսկավային	< 20	20

**Հողի ստրուկտուրային վիճակը:** Տարբեր բնապատմական պայմաններում առաջացած հողերը տարբեր ստրուկտուրա են ունենում՝ հատիկավոր, կնճիկային, հատիկակնճիկային, փոշեհատիկային, կոշտավոր, ընկուզանման, թեփուկավոր, սյունանման և այլն: Ստրուկտուրան հողի կարևոր հատկանիշներից է և բերդիությունը բնորոշող կարևոր պայմաններից մեկը: Ստրուկտուրային հողերն ունեն բարենպաստ ջրաջերմային ռեժիմ, որը միանգամայն դրական է ներգործում կենսաբանական պրոցեսների ակտիվության և սննդային ռեժիմի վրա (Է. Ա. Հայրապետյան և ուրիշներ, 2000): Հողի ստրուկտուրային հատկությունների հիման վրա կազմվում է նրա ստրուկտուրային վիճակի և ջրակայուն ագրեգատների գումարի գնահատման սանդղակ, որը բերվում է աղյուսակ 6.5-ում (Է. Ա. Հայրապետյան և ուրիշներ, 2000):

**Աղյուսակ 6.5**  
**Հողի ստրուկտուրային վիճակի և ջրակայուն ագրեգատների գումարի գնահատման սանդղակ**

Հողի տիպը	Անվանմը	Ցուցանիշը ջրակայուն ագրեգատների գումարը, %	Գնահատվող բալթ
Շագանակագոյն	ստրուկտուրային	> 40	100
Մոխրագոյն, անտառային գորշ	միջին ստրուկտուրային	30-40	80
Դարչնագոյն տափաստանացված	բոյլ ստրուկտուրային	< 30	50

Գնահատման սանդղակը կազմվել է ըստ Ասկերանի շրջանի վարելահողերի հողատիպերի ջրակայուն ագրեգատների գնահատման ցուցանիշների:

Հողի կլանունակությունը: Կլանունակությունը հողի այն հատկությունն է, որի շնորհիվ հողն ընդունակ է լուծույթներից, պղտոր ջրերից, ոռոգելի ջրերից կլանելու և պահելու այն նյութերը, որոնք շփման մեջ են մտնում հողի մասնիկների հետ: Կլանունակությունը զգալի չափով բնորոշում է հողի ֆիզիկական և ֆիզիկաքիմիական հատկությունները և չափում է փոխանակվող կատիոնների (կալցիումի և մագնիսիումի) գումարով՝ մգ-էկվ/100գ հողում:

Հողի կլանման ունակությունը կախված է հողում օրգանական նյութերի, հատկապես՝ հումուսի և հողի մեխանիկական կազմից: Որքան շատ է հողում տիղմային ֆրակցիաների քանակը, այնքան մեծ է հողի կլանման ունակությունը:

Տարբեր տիպի հողեր ունեն տարբեր չափի կլանման հնարավորություն: Հողի կլանող կոմպլեքսը կլանում և պահում է դրական լիցքավորված կատիոններ Ca<sup>2+</sup>, Ma<sup>2+</sup>, Na<sup>+</sup>, K<sup>+</sup>, H<sup>+</sup>, Al<sup>3+</sup>: Հողում կլանված կատիոնների Ca<sup>2+</sup>, Ma<sup>2+</sup>, Na<sup>+</sup>-ի գումարով է բնորոշվում հագեցվածությունը:

Հողի հիմնական ֆիզիկական, ֆիզիկաքիմիական հատկությունները կախված են հողում պարունակվող փոխանակային Ca<sup>2+</sup>, Ma<sup>2+</sup>-ի քանակությունից: Որքան բարձր է վերջիններիս, հատկապես Ca<sup>2+</sup>-ի քանակը, այնքան ավելի են այդ հողերն օժտված ջրակայուն լավ ստրուկտուրայով, բարենպաստ ջրային և օդային հատկություններով և ձեռք են բերում չեղոքին մոտ ռեակցիա: Դրան հակառակ, Na<sup>+</sup> պարունակող հողերն ունենում են հիմնային ռեակցիա, իսկ H<sup>+</sup>, Al<sup>3+</sup> պարունակող հողերը՝ քըու ռեակցիա և վատ ջրաֆիզիկական հատկություններ:

Այլուսակ 6.6-ում բերված է հողերի գնահատման սանդղակը (Է.Ս.Հայրապետյան և ուղիւներ, 2000): Ըստ Ասկերանի շրջանում առկա հիմնական հողատիպերի:

## Աղյուսակ 6.6

### Հողերի գնահատումն՝ ըստ կլասված կատիոնների գումարի

Հողի տիպը	Կամմամ ոմակարգությունը	Ցացանիշը, մգ -էլլ/100կ հողում (Ca+Mg)	Գնահատվող քարը
Շագանակագույն	ուժեղ	> 40	100
Մոխրագույն, անոտառային գորշ	միջին	30-40	85
Դարչնագույն տափաստանացված	քույլ	< 30	75

**Հողային լուծույթի ռեակցիան:** Հողի ռեակցիան ծագումնաբանական և արտադրական կարևոր ցուցանիշ է հողերի գնահատման համար: Այն արտահայտվում է  $\rho\text{H}$ -ի ցուցանիշով:

Հողային լուծույթի կարևոր հատկություններից մեկը նրա ռեակցիայի բնույթն է: Ցուրաքանչյուր հողային տիպի բնորոշ է յուրահատուկ ռեակցիա, որը կախված է հողում տարալուծված օրգանական քրունների քանակից և հողի կլասող կոմպլեքսում  $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Na}^+$ ,  $\text{H}^+$ ,  $\text{Al}^+$ -ի քանակությունից:

Հողային լուծույթի ռեակցիան կարող է տատանվել 3-10-ի սահմաններում և պայմանավորված է մայրական ապարների, բուսական ծածկոցի բնույթով, կլիմայական պայմաններով, օգտագործվող պարարտաճյութերի տեսակով և այլ հատկանիշներով:

Մշակովի բույսերի համար ամենանպաստավորը հողային լուծույթի բույլ թթվային կամ բույլ հիմնային ռեակցիան է, եթե  $\rho\text{H}$ -ը տատանվում է 5,5-7,5-ի սահմաններում: Եթե հողային լուծույթի  $\rho\text{H}$ -ը 5,5-ից ցածր կամ 9-ից բարձր է, ապա պահանջվում է այդ հողերի բարելավում կրացման (թթու հողերում) կամ թթվեցման (հիմնային, ալկալի հողերում) եղանակով: Հիմք ընդունելով նշվածը՝ պարզ է, որ հողի  $\rho\text{H}$ -ը հանդիսանում է հողերի որակական գնահատման, բոնիտման համար կարևոր ցուցանիշ: Աղյուսակ 6.7-ում տրված է հողի գնահատման սանդղակը (Է. Ս. Հայրապետյան և ուրիշներ, 2000): Ըստ հողային լուծույթի ռեակցիայի:

## Աղյուսակ 6.7

### Հողի գնահատումն՝ ըստ հողային լուծույթի ռեակցիայի

Հողային լուծույթի pH -ի անկանոնք	pH-ի ցուցանիշը	Գնահատման քայլ
Չեզոք	6.5-7.5	100
Թույլ հիմնային	7.6-8.0	80
Հիմնային	8.1-8.5	60
Ուժեղ հիմնային	> 8.6	40
Թույլ բրվային	< 6.4	80

ԼՂՀ-ում վարելահողերի բոնիտման սանդղակները կազմվում են հողերի հիմնական տիպերի և ենթատիպերի կտրվածքով, որոնք զարգանում են ռելիեֆի հարք պայմաններում, ունեն հզոր հումուսային շերտ, միջին և ծանր կավափազային մեխանիկական կազմ, բավարար ազդարատադրական հատկություններ և զերծ են հողի բերդիության վրա ազդող բացասական հատկություններից:

Տիպիկ հողերից տարբերվող հողերի բոնիտման մեջ մտցվում է համապատասխան ուղղում՝ հողի բերդիության վրա ազդող բացասական գործոնների հաշվառման վերաբերյալ ուղղման գործակիցներով: Բացասական գործոնները մի դեպքում ազդում են հողի ֆիզիկաքիմիական հատկությունների վրա, իջեցնում հողի բերդիության աստիճանը, մյուս դեպքում՝ ազդում հողի մշակման արտադրական ծախսերի ավելացման վրա:

Հողերի որակի համեմատական գնահատման բայի ուղղման գործակցի համար ընդունվել են այնպիսի հատկություններ, որոնք մեծ չափով պայմանավորում են հողի որակը և արտադրողական կարողությունը: Ինչպես արդեն նշվել է, ԼՂՀ պայմանների համար ուղղման ցուցանիշը են ընդունվել հողերի քարքարոտության աստիճանը, մանրահողի շերտի հաստությունը և էրոզացվածության աստիճանը:

Հողերի քարքարոսության աստիճանը խիստ բացասարար է անդրադարձում դրանց որակի վրա՝ առաջ բերելով բերքատվության նվազում: Ընդ որում, գործակցի մշակումը պետք է կատարել մակերեսային և պրոֆիլային քարքարոտության համար առանձին-առանձին:

Հողի էրոզացվածության աստիճանի մեծացմանը զուգընթաց բերքատվությունը նվազում է: Է.Մ.Հայրապետյանի (1976, 1990) ուսումնասիրություններով պարզվել է, որ թույլ էրոզացված հողերում աշնանացան ու գարնանացան հացահատիկների բերքատվությունը միջին հաշվով նվազում է մինչև 20-25%, միջին էրոզացված հողերում՝ 40-50%, իսկ ուժեղ էրոզացված հողերում՝ 60-70% -ով:

Մանրահողի շերտի հաստությունը նույնական ազդում է հողերի որակի վրա: Տարբեր հաստությամբ մանրահողի պարունակության դեպքում մշակաբույսերի արմատային զանգվածի տարածումը հողի խորը շերտերը, ինչպես նաև աշնանային-ձմեռային տեղումներից ջրի պաշարների կուտակումը տարբեր է, ինչը մեծ չափով ազդում է մշակաբույսերի բերքատվության վրա:

ԼՂՀ Ասկերանի շրջանի վարելահողերի որակական համեմատական գնահաման (քոնիտման) համար հիմք են ընդունվել այն չափանիշները, որոնք մշակվել են Հայպետողիննախազգիծ ինստիտուտում Է.Մ.Հայրապետյանի, Կ.Գ.Անլըռնյանի, Կ.Ա.Ռուկանյանի կողմից (2000):

Գործակիցները մշակվում են հողի բերրիության վրա ազդող քացասական հատկությունների ցուցանիշների հիման վրա: Ելնելով գնահատվող յուրաքանչյուր հողամասի տնտեսական պայմաններից՝ ուղղման գործակիցները հնարավորություն են տալիս օբյեկտիվորեն ճիշտ գնահատել մեծ քանակով հողակտորներ:

Ուղղման գործակիցները մշակվում են ըստ՝

- թերության աստիճանի
- հողատարվածության
- քարքարոտության և այլն:

Հողի քացասական հատկությունների գնահատման ուղղման գործակիցները բերված են աղյուսակ 6.8-ում:

## Աղյուսակ 6.8

### Ուղղման գործակիցներ

Գործմնները	Ցուցանիշը	Ուղղման գործակիցը
Թեքության աստիճանը	հարթություն	1.0
	բռյլթեք հարթություն <3°	0.9
	բռյլթեքություն, 3-7°	0.8
	միջին թեք, 7-12°	0.6
Հողատարվածություն	չհողատարված	1.0
	բռյլհողատարված	0.8
	միջին հողատարված	0.6
	ուժեղ հողատարված	0.5
Քարքարոտություն	ոչ քարքարոտ	1.0
	բռյլքարքարոտ	0.8
	միջին քարքարոտ	0.6
	ուժեղ քարքարոտ	0.5

**Բռնիտման բաղի որոշումը:** Բռնիտման բալը յուրաքանչյուր կտրվածքի, հողակտորի կամ հողի համար որոշվում է ըստ առանձին հատկությունների որոշված բալերի գումարի միջին թվաքանականով: Ելնելով յուրաքանչյուր հողամասի հողային պայմաններից և բացասական այս կամ այն հատկության արտահայտման աստիճանից՝ բռնիտման սանդղակով որոշված բալերը ենթարկվում են համապատասխան ուղղման՝ այն բազմապատկելով ուղղման գործակցով, հետևյալ կերպ՝

$$\beta_{\text{հող}} = \beta_h \times Q_{\text{ուղ}}, \text{որտեղ}$$

$\beta_{\text{հող}}$  - տվյալ հողակտորի գնահատման բալն է,

$\beta_h$  - հողի հիմնական գնահատման բալն է,

$Q_{\text{ուղ}}$  - հողի բացասական հատկության ցուցանիշի ուղղման գործակիցն է:

Այսպես, Ասկերանի շրջանի շագանակագույն հողերի գտնում վարելահողերի գնահատման հիմնական բալը կազմում է 65 (աղյու-

սակ 6.1): Այդ հողերի բույլ հողատարված հողամասերի քալը կկազմի 52 (65X0,8), միջին թեք լանջերում՝ 39 (65X0,6), որոնք բնորոշում են հողի բացասական հատկանիշները՝ քարքարոտությունը, էրո-գացվածությունը, թեքության աստիճանը, ինչպես նաև մի շարք այլ բացասական հատկանիշներ՝ ցեմենտացած շերտի առկայություն, աղակալվածություն, ալկալիացվածություն, կլանված  $\text{Na}^+$ ,  $\text{Mg}^{2+}$ -ի առկայություն, գրունտային ջրերի խորություն և այլ հատկանիշներ:

Նույն սկզբունքով է հաշվարկվում նաև այլ բացասական հատկանիշների ազդեցությունը հողի հիմնական քալի վրա:

Լեռնային երկրագործության պայմաններում հաճախ մի խումբ բացասական հատկություններ (մեխանիկական կազմ, հողատարվածություն, թեքության աստիճան) հանդես են զայս համատեղ, մեկի արտահայտման աստիճանը կախված է մյուսից: Այդ դեպքում հողի բոնիտման քալն ազդում է մեկ գործոնի ուղղման գործակցով, որն ավելի է արտահայտված: Օրինակ՝ թեթև մեխանիկական կազմի և հողատարման միաժամանակ առկայության դեպքում ուղղումը կատարվում է հողատարման գործակցով՝  $\Omega_{\text{հող}} = \Omega_h \times \Omega_{\text{հողատարման}}$ :

Հողերի բոնիտման քալի հաշվարկն՝ ըստ համայնքների, կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\Omega_{\text{ընդ}} = \frac{\Omega_1 \times S_1 - \Omega_2 \times S_2 - \dots - \Omega_n \times S_n}{S_{\text{ՏԱՐ}} \cdot} \times Q_{\text{հողատ.}} \cdot X_{\text{գաղ}}, \quad \text{որտեղ}$$

$\Omega_{\text{ընդ}}$  - հողերի ընդհանուր քալն է,

$\Omega_1, \Omega_2 \dots \Omega_n$  - առանձին հողամասերի բոնիտման քալերն են,

$S_1, S_2 \dots S_n$  - առանձին հողամասերի տարածությունն է, հա,

$Q_{\text{հող}}$  - հողատարման ուղղման գործակիցն է,

$X_{\text{գաղ}}$  - աղակալման ուղղման գործակիցն է:

Այսպիսով, ելմելով որակական զնահատման ցուցանիշներից՝ հողերը խմբավորվում են՝ ըստ արդյունավետ օգտագործման հնարավորությունների, ազրոտեխնիկական ու ազրոմելիորատիվ միջոցառումների կիրառման անհրաժեշտության, որի հիման վրա մշակվում են երկրագործության ու պարարտացման համակարգեր:

Օգտագործելով համայնքի հողերի միջին կշռային բալի բանաձևը (Ե.Մ.Հայրապետյան, 2000)՝ մշակվել է Ասկերանի շրջանի Շոշ գյուղի հողակտորների որակական գնահատման սանդղակն՝ ըստ կատարված հետազոտությունների, որը բերված է աղյուսակ 6.9-ում:

Աղյուսակ 6.9

ՏԵՂԵԿԱԳԻՐ

## **Վարելահողերի որակական գնահատման (Ըոշ համայնքի օրինակով)** **(2008-2010թ.)**

Հստ այդ հաշվարկի Ծոշ գյուղի վարելահողերի միջին քալը շատ ցածր է և հավասար է 35-ի:

Ուսումնասիրվող համայնքի (Ծոշ) հողերի բոնիտման տվյալներից պարզվում է, որ նույն համայնքի տարածքում տարբեր հողամասեր ունեն տարբեր ցուցանիշներ, հետևաբար նաև՝ տարբեր բոնիտման բալեր: Անհրաժեշտ է ըստ առանձին հողակտորների մշակել ու կիրառել տարբեր ազրոտեխնիկական և ազրոնելիորատիվ միջոցառումներ տվյալ համայնքի հողերի բարելավման համար:

Հողերի բոնիտումը ներկայում կատարվում է ավտոմատացված համակարգերի, համակարգչային տեխնիկայի և տեխնոլոգիայի հատուկ ծրագրերի միջոցով, ուստի աշխատանքները կատարվում են արագ, ստացված տվյալները լինում են ստույգ և հուսալի, տրվում են տեղեկագրի ձևով: Այդ արդյունքները, ՀՀ հողերի համար, բերված են Է.Մ.Հայրապետյանի և ուրիշների (2000), Ա.Ս. Եղեկյանի (2012) աշխատանքներում:

Տվյալ մոտեցումը դեռևս բացակայում կամ շատ քիչ է օգտագործվում ԼՂՀ հողերի ուսումնասիրությունների և գնահատման ժամանակ, ուստի կատարված հետազոտությունների արդյունքները լիարժեք կարող են օգտագործվել ապագայում՝ ԼՂՀ հողածածկույթի հողերի բոնիտման և տնտեսական գնահատման ժամանակ:

#### **6.1. Վարելահողերի համալիր ազրոնոմիական բնութագիրը**

Հողային հետազոտությունների ժամանակ ուսումնասիրվող հողերը խմբավորելիս հաշվի է առնվում դրանց գենետիկա-ծագումնաբանական առանձնահատկությունների, առաջացման պայմանների, ազրոարտադրական հատկությունների, կարրոնատների և հումուսի քանակության, հումուսային հորիզոնի հզորության, մեխանիկական կազմի, քարքարոտության, կմախքայնության, հողատարվածության աստիճանի և այլ հատկությունների ու հատկանիշների վերաբերյալ բազմակողմանի տեղեկությունների ամբողջականությունը:

Հողերի որակական համեմատական գնահատման նպատակով,

բացի հողի վերը նշված հատկություններից, պարտադիր պետք է հաշվի առնել նաև մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները:

Հողերի խմբավորումը կատարվում է տվյալ հողային տիպի կամ նման հատկություններ ունեցող այլ տիպերի կամ ենթատիպերի խմբավորմամբ: Այդպիսի խմբավորումը հողային կադաստրի համակարգում՝ որակական գնահատմանը զուգահեռ, լրացուցիչ տեղեկատվություն է ապահովում հողերի կադաստրային գնահատման համար:

Յուրաքանչյուր ազրոարտադրական հատկություն ենթարկվում է կադաստրային գնահատման՝ բոնիտման, տրվում որակական գնահատման բալային սկզբունքով: Ստացված տվյալների հիման վրա մշակվում է միջոցառումների համակարգ տվյալ հողային խճի համար, որի միջոցով հնարավորություն է ընձեռվում բարձրացնել տվյալ հողային խճի հողերի բերրիության մակարդակը, դրանց փաստացի կամ պոտենցիալ արտադրողականությունը: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս ըստ արտադրողականության խմբավորելու և համեմատելու որոշակի տարածքի հողերը, երևան հանելու գյուղատնտեսական մթերքների ավելացման ռեզերվները՝ տվյալ հողերի առավել արդյունավետ օգտագործման հետ կապված:

Հիմք ընդունելով Ասկերանի շրջանի հողերի ուսումնասիրման նյութերը (գլուխ 4, աղյուսակներ 4.1-4.7)՝ դրանց վերլուծական տվյալների հիման վրա կազմվել է առանձին խճերի հողերի բոնիտման և ազրունիական բնուրագրման տվյալների համադրելիության միասնական տեղեկագիր:

Ուսումնասիրությունները ԼՂՀ Ասկերանի շրջանում (2008-2010թ.) ցույց են տվել, որ հողաէկոլոգիական ինդեքսի մեծությունը կրում է գոտիական բնույթը: Նորմալ պայմաններում զարգացող հողերում այդ ցուցանիշը՝ հարթավայրային պայմաններից դեպի լեռնալանջերն ընկած վարելահողերում, աստիճանաբար փոքրանում է՝ պայմանավորված, ինչպես հողային հատկությունների, այնպես էլ կլիմայական ու ռելիէֆային պայմանների փոփոխություններով:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ հողաէկոլոգիական միջին ցուցանիշները շրջանի հարթավայրային պայ-

մաններում բարձր են, իսկ լեռնային հատվածներում՝ նվազում են: Դրան զուգահեռ, դիտարկումները ցույց են տվել, որ հողային հատկությունների բոնիտման բալը՝ այդ երեք տարիներին, տատանվում է 72-80-ի սահմաններում: Արդյունքում ակնհայտ է դաշնում, որ հողերի տնտեսական գնահատման ընթացքում այդ հանգամանքը շատ կարևոր է: Այսպիսով, հողերի արժեքային գնահատման ընթացքում որպես կարևոր տեղեկատվական հիմք կարելի է ընդունել ինչպես հողերի բոնիտման, այնպես էլ հողաէկոլոգիական խմբերի ցուցանիշները:

Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա՝ տեղեկացրի տեսքով, տրվում են Ասկերանի շրջանի տարրեր կլիմայական գոտիներում գտնվող համայնքների վարելահողերի համեմատական, որակական գնահատման արդյունքները: Այդ շրջաններից ընտրվել են համայնքներ, որոնց տարածքում որոշվել են վարելահողերի ագրոնոմիական հատկությունների և հողերի բոնիտման ցուցանիշները (աղյուսակ6.1.1):

### **Աղյուսակ 6.1.1.** **Վարելահողերի ագրոարտադրական հատկությունները և որակական գնահատման ցուցանիշները՝ ըստ գլխավոր հողատիպերի (2008-2010թթ.)**

Կողմանական համարը համարը	Հողագոյն և ենթադրական	Համապատման հարցման հերթականը			Համապատման պարզաբնակը			Մեխանիկական լատեզնությունը ( $<0.01 \text{ mm}$ )			Փականականի կառումների գումարը ( $\text{Cs}^+/\text{Mg}^+$ )			Հողի pH - ու նոր բար.			Ընդհան. - նոր բար.
		անվանում	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	քառ.	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14				
կտր. 10 <i>Cn<sub>2</sub></i>		62	A 0-30 AB 30- 60 BC 60- 90	5.17 3.29 1.26	100 70 30	թթվ. կազ թթվ. կազ ծանր կազ	50 50 70	11.1 10.7 16.7	75 75 75	7.0 7.2 7.2	100 100 100	81 76 62					
կտր. 1 Նախիւնս- միկ		62	A 0-40 AB 40- 80	4.71 3.38	100 70	թթվ. կազ թթվ. կազ	50 50	11.8 14.6	75 75	7.2 7.4	100 100	77 71					
կտր. 5 Խճանատ		62	A 0-30 BC 30- 60	4.05 2.33	70 50	միջին կազ միջին կազ	100 100	15.6 11.7	75 75	7.4 7.0	100 100	81 77					
կտր. 9 Այսիստան		62	A 0-20 B 20-40	3.79 2.47	70 50	միջին կազ միջին կազ	100 100	12.3 15.9	75 75	6.9 7.4	100 100	81 77					
կտր. 12 Ակնաբերք	Հապանակա- ղության մաս-	60	A 0-16 B 16-40	3.26 80	100 80	ծանր կազ թթվ. կազ	70 70	15.6 19.5	75 75	7.6 7.3	80 100	77 77					
կտր. 13 Ավելասանց	ցոր- կարունակ.	60	A 0-25 B 25-45	3.15 2.43	85 80	թթվ. կազ թթվ. կազ	50 50	19.5 19.5	75 75	7.0 7.0	100 100	74 73					
կտր. 4 Ավելասանց	բաց շաբաթ. ցիմնաց.	55	A 0-25 AB 25-48	4.62 3.36	100 80	թթվ. կազ ծանր կազ	50 70	29.8 35.3	75 85	7.7 7.8	80 80	72 74					
կտր. 3 Լոյանը	կարունակ.	55	A 0-22 BC 22-60	3.81 3.41	100 80	միջին կազ միջին կազ	90 90	18.8 17.9	75 75	7.2 7.3	100 100	80 80					

Ուսումնասիրվող համայնքների հողաէկոլոգիական ցուցանիշների վերլուծությունից պարզորոշ երևում է, որ ոչ միայն լրիվ շրջանում, այլև նույն համայնքի տարածքում տարբեր հողամասեր ունեն տարբեր ցուցանիշներ:

Հողերի համալիր ազրոնոմիական բնութագրման համակարգում հողերի թերթիւրյան գնահատման ժամանակ հաշվի են առնվել յուրաքանչյուր տարածքի կլիմայական և ռելիէֆային պայմանները: Հողաէկոլոգիական ցուցանիշը հնարավորություն է տալիս համեմատական կարգով քանակապես գնահատել տարածքների հողամասերի էկոլոգիական պայմանները՝ երկրագործության տեսանկյունից: Հողաէկոլոգիական ցուցանիշների օգնությամբ կարելի է որոշել գյուղատնտեսական մշակաբույսերի կողմից էկոլոգիական պայմանների յուրացման աստիճանները: Հողաէկոլոգիական ցուցանիշի մեծության համադրումը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության հետ հնարավորություն է տալիս կատարելագործել բուսաբուծության կամ այլ ճյուղի տեղադրման հնարավորությունները:

Հողերի կադաստրային գնահատման բնագավառը, հողաէկոլոգիական ինդեքսը համարվում է հուսալի հիմք՝ տարբերակված գնահատման ցուցանիշների՝ հողի հարկի, վարձավճարի, նորմատիվային արժեքի որոշման և այլ բնագավառներում:

## **6.2. Վարելահողերի և մշակության համար պիտանի հողերի դասակարգման և խմբավորման սկզբունքները**

ԼՂՀ լեռնային բարդ ռելիէֆի պատճառով, վարելահողերը գտնվում են ինչպես հարթ տարածքներում, այնպես էլ տարբեր դիրքադրության և թեքության լանջերի վրա, հողակտորներն ունեն տարբեր չափեր և նույն համայնքի սահմաններում գոյություն ունեն տասնյակ հողամասեր և հողակտորներ, որոնք իրարից տարբերվում են իրենց ազրոարտադրական հատկություններով:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում հողերի բնորոշ կողմը հողագուման բնական գործոնների ուղղաձիգ գոտիականության դա-

սավորվածությունն է, որը ստեղծում է յուրահատուկ լեռնային տիպի հողային ծածկույթ (Ռ.Ա.Էդիլյան, 1964, (P.A.Эдилян, К.Г.Мелконян, 1974), Խ.Պ.Սիրիմանյան, Ա.Ս.Եզելյան, 1973, ՀՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, 1971, Կ.Գ.Մելքոնյան, Հ.Դ.Նազարյան, Ռ.Ա.Մանուկյան և ուրիշներ, 2004, Հայաստանի ազգային ատլաս, Ա և Բ, Երևան, 2007, 2008): Հողերի որակական հատկությունների հաշվառումը և խմբավորումը կատարվում է դրանց արտադրագումնաբանական դասակարգման սխեմայով, որի խնդիրն է գործնական նպատակով տարածքային սահմանազատում կատարել գյուղատնտեսության համար առավել պիտանի և այլ նշանակության հողերի միջև: Այդպիսի դասակարգումը նախատեսում է հանրապետության ամբողջ հողային ֆոնդը բաժանել ըստ գոտիական տիպերի, պիտանելիության կատեգորիաների, դասերի ու խմբերի, իրենց ախտորոշիչ ցուցանիշներով, որոնք առանձնացվում են տարածքների բնագյուղատնտեսական, էկոլոգիալանոշափտային, հողակադաստրային շրջանացման ընթացքում:

Ելնելով հողերի կադաստրային գնահատման պահանջներից՝ հողերի որակական հատկությունների ուսումնասիրման, դասակարգման և խմբավորման համար առաջարկվում է երկու մոտեցում. մի կողմից՝ կատարել յուրաքանչյուր հողամասի հողօգտագործման գործուների և մարդու տնտեսական գործունեության ազդեցության ուսումնասիրություն և դասակարգում, իսկ մյուս կողմից՝ այդ ուսումնասիրությունների արդյունքները կիրառել հողերի գնահատման և արտադրական օգտագործման միջոցառումների մշակման ընթացքում:

Հողերի խմբավորման ընթացքում դրանց վերոհիշյալ հատկությունների ցուցանիշները բվային քանակական արտահայտությամբ արտացոլվում են հողերի բոնիտման միջոցով: Դրա համար մշակվել են յուրաքանչյուր գործոնի գնահատման սանդղակներ և ուղղման գործակիցներ, որոնց հիման վրա կատարվել է առանձին հողամասերի բոնիտում, որին հաջորդել է հողերի գնահատման խմբավորումը, ինչը հողագիտական տեսակետից հանդիսանում է խոշոր մասշտարի հողային, երկրաբուսաբանական և այլ հետազո-

տուրյունների նյութերի տարածական արտահայտման հիմնական ձև: Խմբավորումը նպաստում է հողերի կադաստրային գնահատման նյութերի հիման վրա կատարվող հաշվարկներին: Խմբավորման միջոցով բացահայտվում են տարրեր հողերի արդյունավետ օգտագործման համեմատական հնարավորությունները, որոնք նպաստում են ազրութելինիկական և մեխիորատիվ միջոցառումների, պարտանյութերի օգտագործման ճիշտ կազմակերպմանը և այլն:

Մշակման տակ գտնվող հողերի հատկությունների օպտիմալ չափանիշներն ընդունվում են որպես հողի բարձր բերրիության մոդել, որը որոշ պայմաններում կարող է «չափորոշիչ» ծառայել ոչ միայն ազրոնումիական մեկ, այլ նաև մի քանի խմբերի համար, որոնք մոտ են իրենց հատկություններով (օրինակ՝ ոռոգելի խոնավ մարգագետնային, գորշ հզոր կավային և ոռոգելի խոնավ-մարգագետնային, գորշ միջին հզոր ծանր կավավազային, կրազուրկ և տիպիկ կամ թույլ կրազերծված սևահողերին և այլն):

ԼՎՀ լեռնային երկրագործության պայմաններում վարելահողերը գտնվում են տարրեր աստիճանի թեքության լեռնալանջերի վրա, հանդես են գալիս տարրեր չափի ու ծևի հողամասերով, որոնց միջին մեծությունը կազմում է 3.5 հեկտար: Տարրեր համայնքների հողօգտագործման սահմաններում առկա են բազմաթիվ առանձին մշակվող հողամասեր: Համապետությունում գոյություն ունեցող նախկին փոքր չափի հողամասերը բաժանվեցին առանձին հողաբաժինների, որի արդյունքում հանրապետությունում առաջացան տարրեր չափի հազարավոր հողաբաժիններ, որոնց միջին մեծությունը կազմում է մոտ 1.4 հեկտար:

Հողերի այդպիսի մասնատվածության պայմաններում՝ առանձին փոքր հողամասերի համար, կադաստրային գնահատման տարրերակված ցուցանիշներ մշակելու համար հողային հատկությունների և մշակաբույսերի բերքատվության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, իսկ մշակված գնահատման տվյալների կիրառման հնարավորությունները այնքան էլ մեծ չեն: Ելնելով անհրաժեշտությունի՝ հողերի գնահատման նպատակով պետք է կատարել խմբավորում, առանձին խմբերի համար մշակել կադաստրային

գնահատման տարբերակված ցուցանիշներ՝ հողի արժեք, որը հողերի կադաստրային գնահատման նյութերի հիման վրա կատարվող տնտեսական հաշվարկները դարձնում է նպաստավոր և օգտագործման համար առավել ընդունելի:

Ըստ ազդուարտադրական խմբերի՝ հողերն առանձնացնելու ժամանակ հիմնական չափանիշներ են ընդունվում հողակլիմայական ուղղաձիգ գոտիականության հիման վրա սահմանված հողերի ծագումնաբանական միատարրությունը, պրոֆիլի կազմի միաննանությունը (հատկապես՝ վերին հորիզոնների), հողառաջացնող մայրատեսակը, մեխանիկական կազմը, ջրային, օդային և ջերմային ռեժիմները, սննդատարբերի պաշարը, ռելիեֆը, ուրվագծերի միատարրության աստիճանը, հողատարումը, քարքարոտությունը, աղակալված ծուրյան աստիճանը և այլն: Յուրաքանչյուր հողագնահատման շրջանի վարելահողերի համար առանձնացվում է հողագնահատման հիմք խումբ. լավագույն, լավ, միջին, միջինից ցածր և վատ:

Այն հողամասերը, որոնք ունենում են 81-100 քալ, դասվում են առաջին խմբին, 61-80 քալի դեպքում՝ երկրորդ, 41-60-ի դեպքում՝ երրորդ, 21-40-ի դեպքում՝ չորրորդ, 0-20-ի դեպքում՝ հինգերորդ խմբին:

Հողերի գնահատման խմբերն առանձնացնելիս հաշվի են առնվում հետևյալ սկզբունքները՝ եթե հողածածկը և հողօգտագործումը խայտաբղետ չեն, ապա հողերի խմբերը տարբերվում են ըստ առանձին հողատեսքերի, իսկ եթե դրանց խայտարդետության պայմանները բարդ են, ապա հողատեսքերի մասնատվածության պայմաններում հողերի խմբավորումն ընթանում է խառը ձևով, այսինքն՝ գնահատման միևնույն խմբում ընդգրկվում են այնպիսի հողեր, որոնք արտադրական հատկություններով տարբեր են, բայց փոքր տարածություն ունենալու պատճառով հնարավոր չեն առանձին խմբերի դասել: Վարելահողերի խմբավորման ընթացքում միևնույն հողերի խմբերին դասվում են այն հողերը, որոնք իրենց արտադրագումնաբանական հիմնական հատկություններով չեն տարբերվում միմյանցից (ընդհանուր տարածությունը կազմում է տվյալ գրտու 70-

75%-ը, իսկ այլ հատկությունները՝ 20-30%-ը):

Ելնելով հողօգտագործման պայմաններից՝ ՀՀ-ում վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի հողագնահատման խմբերը կազմվել են առանձին:

Գնահատման լավագույն (I) խմբի մեջ ընդգրկվում են բարձր բերրիություն ունեցող այն հողերը, որոնք հզոր են, ապահովված են սննդատարերով, աչքի են ընկնում հումուսի և հիմքերի՝ կլանող կոմպլեքտում, բարձր քանակով: Հողի արդյունավետ խոնավությունը բարձր է, ծանր և միջին կավավագային մեխանիկական կազմով: Այդ խմբի հողերը սովորաբար կրագորիկ են, չողատարված, աղացորկ, առաջացել են հիմնականում հարթությունների վրա: Դրանք բերի են, ապահովում են տվյալ գոտում նշակլող գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր բերք, հետագա բարելավման համար հատուկ ազդութեանիկական և մեխորատիվ միջոցառումներ չեն պահանջում և որակական գնահատման ընթացքում ստանում են 100 բալ:

**Գնահատման լավ (II)** խմբի մեջ մտնում են այն հողերը, որոնք նման են գնահատման առաջին խմբի հողերին, սակայն դրանց գիշում են ինչպես արտադրական, այնպես էլ գենետիկական որոշ հատկություններով: Այդ պատճառով համեմատաբար ցածր է բերրիությունը, սահմանափակ են հողօգտագործման հնարավորությունները (գյուղատնտեսական բույսերի մշակման առումով): Հողերի որակը բարելավելու համար անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ ազդումնեխորատիվ միջոցառումներ: Որակական գնահատման ժամանակ այդ հողերը ստացել են 61-80 բալ:

**Գնահատման միջին (III)** խմբին պատկանող հողերը նախորդ՝ 1-ին և 2-րդ, խմբերից տարբերվում են բարդ ռելիեֆով, ավելի ցածր բնական բերրիությամբ: Այդ խմբի հողերում հումուսի, սննդատարբերի, ինչպես նաև կլանված հիմքերի և արդյունավետ խոնավության պաշարը բավարար է: Նման պայմաններում սահմանափակվում են գյուղատնտեսական մշակաբույսերի ընտրության և մշակման հնարավորությունները: Այդ հողերն առավելապես միջին հզոր են, ունեն բերք և միջին կավավագային մեխանիկական կազմ, աչքի

են ընկնում մի շարք բացասական հատկություններով՝ թույլ հողատարմանք, ոչ խորքային ցեմենտացմանք, թույլ աղակալմանք և այլն: Այդ խմբի հողերը ձևավորվել են թույլ և միջին թեքություն ունեցող լանջերի վրա: Այդ հողերի թերքատվության բարձրացման համար պահանջվում են մի շարք լրացուցիչ ոչ բարդ ագրոտեխնիկական և մելիորատիվ հակաէրոզիոն միջոցառումներ: Որակական զնահատման ժամանակ այս հողերը ստացել են 41-60 բալով:

**Գնահատման միջինից ցածր (IV)** խմբին պատկանող հողերը գտնվում են անբարենպաստ ռելիէֆային պայմաններում, տարբեր թեքության լանջերի վրա: Տարածքը հաճախ մասնատված է ձորակացանցով, որը դժվարացնում է հողերի արդյունավետ օգտագործումը: Հիշյալ հողերը սակավազոր են, ունեն ավազային, թերու կավազավային մեխանիկական կազմ, թույլ ստրուկտորային են, միջին և ուժեղ քարքարոտ, հանդես են գալիս խորքային և մակերեսային ցեմենտացած շերտով, միջին հողատարմանք, թույլ աղակալմանք, աղքատ են հումուսի պարունակությամբ, կլանված հիմքերով, ունեն ամբավարար խոնավություն: Այդ պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսերի կազմը և ընտրությունը զգալի չափով սահմանափակ է, թերքատվությունը՝ ցածր: Գյուղատնտեսական մշակաբույսերի թերքատվության բարձրացման համար պահանջվում է հակաէրոզիոն, ագրոտեխնիկական, մելիորատիվ և կուլտուրտեխնիկական հատուկ միջոցառումների համալիր: Ըստ զնահատման՝ 21-40 բալ:

**Գնահատման վատ (V)** խմբի հողերը սակավազոր են, զուրկ սննդատարերից, ուժեղ քարքարոտ ու հողատարված են, ունեն անբարելավ ագրոարտադրական հատկություններ, որոնց պատճառով ցածր է մշակաբույսերի թերքատվությունը: Տարածքի մասնատվածության և լանջերի խիստ թեքության պատճառով գյուղատնտեսական աշխատանքների մերենայացման հնարավորությունները սահմանափակ են: Նման հողերում թերիթության բարձրացման համար պահանջվում են հատուկ ագրոմելիորատիվ և հակաէրոզիոն միջոցառումներ: Հողերի խմբավորման նյութերի հիման վրա կազմվում են հողագնահատման քարտեզներ՝ կոնկրետ յուրաքանչյուր հո-

դակտորի համար, առաջարկվում են բարելավման միջոցառումներ, որոնք օգնում են լուծելու մի շարք գործնական հարցեր: Այդ հողերին տրված է ամենացածր գնահատականը՝ մինչև 20 բալ:

Հաշվի առնելով հողերի գնահատման և բոնիտման սկզբունքները՝ ազրոնոմիական խմբավորման աշխատանքների վերջում կազմվել է առանձին համայնքների հողօգտագործման սահմաններում գտնվող վարելահողերի խմբավորման տեղեկագիր՝ Ծոշ համայնքի հողերի օրինակով, որը բերված է աղյուսակ 6.2.1-ում:

### **Աղյուսակ 6.2.1**

#### **Վարելահողերի ազրոնոմիական խմբերի կառուցվածքն՝ ըստ Ծոշ համայնքի տարածքի**

Համայնք	Հողի Խտուրք	Տարածությունը, հա	Գնահատման միջին բալը	Բնամենք %
Ծոշ	II	29.7	62	10.1
	III	93.6	52	31.8
	IV	41.5	31	14.1
	V	129.5	17	44.0
	ընդամենը	294.5	35	100

Աղյուսակի տվյալներից երևում է, որ Ծոշ համայնքի 294,5 հեկտար վարելահողերի մեջ առաջին խումբը (լավագույն հողերը) բացակայում է, գնահատման միջին բալը 35 է, այսինքն՝ այդ հողերի բերրիության բարձրացման համար պահանջվում է ազրոնոմիական բարելահողերի միջոցառումների իրականացում (տարածքի ճիշտ կազմակերպում և գյուղատնտեսական մշակաբույսերի տեղաբաշխում, ցանքաշրջանառությունների, հատկապես, հողապահության ցանքաշրջանառությունների կիրառում, որտեղ ճիմ առաջացնող բազմամյա խոտաբույսերը պետք է մեծ տեղ գրադեցնեն, ազատ ցելերի փոխարինում գրադեցված ցելերով, շարահերկ բույսերի մշակության բացառում, հոսքականիսից՝ բուժերային, շերտերի ստեղծում, որոնք կարգավորում են ջրի մակերեսային հոսքը, դաշտապաշտպան, հողմակար-

գավորիչ, ջրակարգավորիչ անտառտնկարկների, անտառաբփուտային շերտերի հիմնում, անձրևային և ձնիալ ջրերի կուտակում):

Անհրաժեշտ է նշել, որ բերված միջոցառումների կիրառումը համապատասխանում է համայնքի հողերի ընդհանուր տարածքի 58,1 %-ին (4-րդ և 5-րդ խմբի հողեր՝ 171 հեկտար, միջին բալը՝ 24): Իսկ 2-րդ և 3-րդ խմբի հողերը, որոնք զբաղեցնում են 123,3 հեկտար (միջին բալը՝ 57), համեմատաբար ավելի քիչ կապիտալ միջոցներ են պահանջում դրանց բարելավման համար, ինչը պետք է հաշվի առնել ֆինանսական միջոցների հատկացման ժամանակ:

Կատարված հողային հետազոտությունների արդյունքները, ազդուարտադրական խմբավորումները և կադաստրային գնահատման, բոնիտման նոտեցումները օրինակ կհանդիսանան հետազառումնասիրողների համար՝ ԼՂՀ այլ շրջաններում նմանատիպ աշխատանքների իրականացման ժամանակ:

## ԳԼՈՒԽ 7

### ԼՂՀ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՀՈՂԵՐԻ ԲՄՐԵԼԱՎԱՄՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

7.1. Աշնանացան ցորենի տակ օգտագործվող պարարտանյութերի արդյունավետությունը

Լինելով ազրարային երկիր՝ ԼՂՀ-ն, մինչև 1990-ական թթ. ունեցել է զարգացած գյուղատնտեսություն, որի հիմնական ուղղություններն են եղել երկրագործությունը և անասնապահությունը: Հանրապետությունում մեծ ուշադրություն էր դարձվում հացահատիկի արտադրությանը: Ըստ 1981-1990թթ. տվյալների՝ հանրապետությունում տարեկան արտադրվել է 63000 տ հացահատիկ, մեկ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 25.8-27.3 ց (Ծատուրյան Ա.Ա., 2008): Սակայն, 1990թ. սկսված պատերազմական գործողությունների հետևանքով, հանրապետության գյուղատնտեսությունն անկում ապրեց. տասնյակ հազարավոր հեկտար վարելահողեր չեն մշակվում, գոյություն ունեցող խարողի այգիները շարքից դրվագ եկան, մեծ անկում ապրեց նաև անասնաբուժությունը:

Հետպատերազմյան տարիներին սկսվեց գյուղատնտեսության վերականգնումը: Հանրապետությունում տրամադրվեցին անտոկոս վարկեր՝ հացահատիկի արտադրության վերականգնման համար, որի շնորհիվ մեկ տարվա ընթացքում արտադրվեց 76.6 հազար տ հացահատիկ՝ 21.2 ց/հա միջին բերքատվությամբ (Ծատուրյան Ա.Ա., 2008): Հարկ է նշել, որ գյուղատնտեսության վարումը հիմնականում իրականացվում է անօրին պայմաններում:

ԼՂՀ-ում զարգացած գյուղատնտեսություն ունենալու հիմնական և առաջնային պայմաններից մեկն է հանդիսանում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ոռոգման համակարգի ստեղծում, նոր ջրագծերի անցկացում, ինչն էլ հնարավորություն կտա բարձրացնել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:

Կայուն և բարձր բերքի ստացման երաշխիք է հանդիսանում նաև

պարարտացման համակարգի արդյունավետ կիրառումը: Պարարտանյութերի օգտագործման միջոցով հնարավորություն է ընձեռվում բարձրացնել հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը: Ըստ Ս.Կ.Երիցյանի ներկայացրած տվյալների՝ մինչև 1950թ. Հայաստանում հացահատիկային բույսերի մշակության ժամանակ հանքային պարարտանյութեր չեն օգտագործվել, ուստի հեկտարից ստացվել է 7-8 գ միջին բերք, հետագա տարիներին՝ պարարտանյութերի կիրառման միջոցով, հատիկի միջին բերքը հասել է 10-12 գ/հա: Այնուհետև, երբ տրվել են պարարտանյութերի բարձր չափաբանակներ (200-212 կգ/հա NPK), ճիշտ ազդուտեխնիկայի կիրառման և ոռոգման պայմաններում ցորենի հատիկի բերքը հասել է 50-80 գ/հա:

Ս.Կ.Երիցյանի կողմից L74-ում դրված փորձերը ցույց են տվել, որ անտառային դարչնագույն հողերից՝ անջրդի պայմաններում, պարարտացման միջոցով N90 կգ/հա ազդրող նյութի հաշվով հնարավոր է ստանալ 33.8 գ/հա բերք, իսկ արմատային սնուցման ձևով՝ ևս 2.5 կգ/հա: Մակրո- (N, P, K, Fe) և միկրո- (B, Mo, Zn, Cu) տարրեր պարունակող ջրալոյժ համակցված պարարտանյութ (ՁՀՊ) կիրառելու դեպքում ստացվել է 38.3 գ/հա հատիկի բերք (Երիցյան Ս.Կ. և ուրիշներ, 2008):

Աշնանացան հացահատիկային մշակաբույսերի պարարտացման համակարգում մեծ նշանակություն ունի վաղ գարնանային սնուցումը (մինչև բույսերի հասկալումը) ազդուական պարարտանյութերով:

Տվյալ հարցերի պարզաբանման համար կատարվել են ուսումնասիրություններ (2007-2010թ.): Դաշտային փորձերը դրվել են ինչպես անտառային դարչնագույն հողերում՝ 650-700 մ բարձրության վրա (Կարմիր գյուղի համայնքում), այնպես էլ հարթավայրային գոտու շագանակագույն հողերում՝ 300-350 մ բարձրության վրա, տարրեր դիրքադրության պայմաններում՝ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան 3-50 բերության պայմաններում: Անջրդի պայմաններում մշակվել է աշնանացան ցորենի Բեզոստայա 1 սորտը: Պարարտացումը կատարվել է գարնան՝ սնուցման ձևով: Պարա-

տացման փորձերը դրվել են հետևյալ սխեմայով.

**Փորձ I. Հյուսիս-արևելյան կողմնադրություն, 3-5օք քերություն.**

1. Ստուգիչ (առանց պարարտացման)
2. Գոմաղբ 30 տ/հա
3. Գոմաղբ 30 տ/հա+N60 կգ/հա (ազդող նյութի հաշվով)
4. N60 կգ/հա (ազդող նյութի հաշվով)
5. Ցենկարբոֆոս (250 կգ/հա)

**Փորձ II. Հարավ-արևելյան կողմնադրություն, 3-5օք քերություն.**

1. Ստուգիչ (առանց պարարտացման)
2. Գոմաղբ 30 տ/հա
3. Գոմաղբ 30 տ/հա+N60 կգ/հա (ազդող նյութի հաշվով)
4. N60 կգ/հա (ազդող նյութի հաշվով)
5. Ցենկարբոֆոս (250 կգ/հա)

Բոլոր տարբերակները դրվել են 3 կրկնողությամբ, 2 մ2 (1մx2մ) մակերեսի վրա: Յուրաքանչյուր կրկնության և տարբերակի միջև բռնվել է 0.5-ական մետր լայնությամբ պաշտպանիչ շերտ:

Մինչև ցանք կատարելը փորձադաշտերից վերցվել են հողանմուշներ 0-40 սմ շերտով, և որոշվել են սմանդային տարբերը: Պարզվել է, որ փորձադաշտերի հողերը (անտառային դարչնագույն և շագանակագույն) ազոտով և ֆոսֆորով թույլ են ապահոված, իսկ կալիումով՝ միջին և լավ:

Ցանքերի պարարտացումը կատարվել է հետևյալ կերպ. գարնանը (2008թ.)՝ ապրիլի սկզբին (1-5-ը), գոմաղբը նախապատրաստվել և (նկ. 7.1.1) տրվել է միջքուսային տարածքում՝ խառնվելով հողի հետ փոցխման միջոցով: Նույնը կատարվել է նաև մյուս տարբերակներում (նկ. 7.1.2, 7.1.3):



**Նկ. 7.1.1. Գոմաղի նախապատրաստումը փորչամարզերի  
պարագացման համար**



**Նկ. 7.1.2 Փորչերի դրման սխեմա**



**Նկ. 7.1.3. Փորձադաշտում աշնանացան ցորենի վիճակը  
պարապացումից մեջ ամիս հետո**


Փորձերը դրվել են հարավ-արևելյան կողմնադրության, 3-5օ թերության, շագանակագույն հողերում՝ անջրդի պայմաններում: Աշնանացան ցորենի բերքահավաքից առաջ բույսերի բարձրությունը, բերքատվությունը բերված են 7.1.1 աղյուսակում:

### **Աղյուսակ 7.1.1**

**Ասկերանի շրջանի շագանակագույն հողերում աշնանացան ցորենի  
բերքատվությունը՝ կախված պարարտացման տարրերակներից և  
հարավ-արևելյան կողմնադրությունից**

Փորձի տարրի - բակմերը	Բույսի բարձրու- թյունը, սմ	Բերքատվությունը, գ/հա				Բերքի համեմունք		
		2008թ.	2009թ.	2010թ.	3 տար. կա- մֆ չփ նը	գ/հա	%-ով	
Ստուգի (առանց պարարտացման)	100-105	14.4	13.6	14.2	14.1	0.0	0.0	
Գոնադը 30 տ/հա	108-115	17.2	18.1	19.3	18.2	4.1	29.0	
Գոնադը 30 տ/հա +N60	115-120	19.6	20.2	20.6	20.1	6.0	42.6	
N60	110-115	19.0	18.8	19.3	19.0	4.9	34.8	
Ցեղաբույս (250 կգ/հա)	112-117	19.2	18.9	19.3	19.1	5.0	35.5	

$$S_{x_0} \% = 1.6\% \quad \text{ԱԷ} S_{05} = 0.7 \text{ g/hw}$$



**Գծապատկեր 7.1.1. Պարարտանյութերի ազդեցությունը աշնանացան ցորենի բերքատվության վրա (գ/հա, հարավ-արևելյան կողմնադրություն)**  
 1. ստուգիչ, 2. գոմաղը 30 տ/հա,  
 3. գոմաղը 30 տ/հա + N60, 4. N60,  
 5. ցեղարքոֆոս (250 կգ/հա)

Փորձերի արդյունքներից երևում է, որ ստուգիչում ինչպես բույսերի բարձրությունը (100-105 սմ), այնպես էլ ստացված հատիկի բերքը երեք տարվա միջինով ցածր է և կազմում է ընդամենը 14.1 գ/հա:

Գոմաղը՝ 30 տ/հա չափաբանով տարբերակում հատիկի բերքը ստուգիչի նկատմամբ ավելացել է 29%-ով, գոմաղը 30 տ/հա+N60 չափաբանի դեպքում՝ 42.6% կամ նախորդ տարբերակի նկատմամբ 13.6%-ով: N60 կգ/հա տարբերակում բերքը համեմատաբար նվազել է 7.8%-ով՝ գոմաղը 30 տ/հա +N60 տարբերակի նկատմամբ, իսկ ցեղարքոֆոս 250 կգ/հա չափաբանին տալու դեպքում բերքի հավելումը ստուգիչի նկատմամբ կազմում է 35.5:

Այսպիսով, լավագույնը համարվում է գոմաղը 30 տ/հա +N60 տարբերակը:


Նմանատիպ փորձեր են դրվել նաև նույն հողերում՝ հյուսիսարևելյան կողմնադրության պայմաններում (աղյուսակ 7.1.2):

## Աղյուսակ 7.1.2

Ասկերանի շրջանի շագանակագույն հողերում աշնանացան ցորենի բերքատվությունը՝ կախված պարարտացման տարբերակներից և հյուսիս-արևելյան կողմնադրությունից

Փոքրի տարի քականը	Քաղսի բարձրությունը, մմ	Բերքատվություն, գ/հա (համեմ)				Բերքի հավելումն	
		2008թ.	2009թ.	2010թ.	3 տարվա միջինը	գ/հա	%-ով
Ստուգիչ (առանց պարարտացման)	105-108	15.4	15.7	15.8	15.6	0.0	0.0
Գոնադր 30 տ/հա	112-118	20.4	20.6	20.0	20.3	4.7	30.1
Գոնադր 30 տ/հա +N60	118-122	22.3	22.7	22.6	22.5	6.9	44.2
N60	117-120	20.8	21.0	21.0	20.9	5.3	34.0
Ցեղարքովու 250 կգ/հա	118-120	21.8	21.3	21.2	21.4	5.8	37.2

$$S_{x_0} \% = 1.6\% \quad \text{ԱԲ} S_{05} = 0.7 \text{ g/hu}$$



## Գծապատճեր 7.1.2.

Պարարպամայութերի ազդեցությունը աշնանացան ցորենի բերքատվության վրա (գ/հա, հյուսիս-արևելյան կողմնադրություն)

1. սպուզիչ, 2. գոնադր, 30 տ/հա,
3. գոնադր 30 տ/հա + N60, 4. N60,
5. ցեղարքովու (250 կգ/հա)

Աղյուսակ 7.1.2-ում բերված են բերքատվության ցուցանիշները, որոնցից երևում է, որ ստուգիչում՝ (առանց պարարտացման) անջրդի, հյուսիս-արևելյան կողմնադրության պայմաններում, ստացվել է

15.6 g/hw թերք, իսկ գոմաղը 30 տ/hw չափաբաժնով տալու դեպքում այն ավելացել է 30.1%-ով, կամ 4.7 g/hw-ով և գոմաղը 30 տ/hw+N60 տարրերակում՝ համապատասխանաբար 44.2%-ով կամ 6.9 g/hw-ով: Միայն N60 տարրերակում թերքը նախորդի նկատմամբ նվազում է 10.2%-ով, իսկ ցեղկարբոֆոս կիրառելու դեպքում՝ 250 կգ/hw չափաբաժնով, որը տրվել է սնուցման եղանակով, և թերքի հավելումը կազմել է 37.2%՝ ստուգիչի նկատմամբ:

Այսպիսով, փորձերը ցույց են տալիս, որ լավագույն գոմաղը 30 տ/hw+N60 տարրերակն է: Ուստի, L<sub>12</sub> շագանակագույն հողերի համար՝ անջրդի պայմաններում, բարելավման միջոցառումների համակարգում, առաջարկվում է օգտագործել գոմաղը 30 տ/hw+N 60 ազդող նյութի հաշվով չափաբաժնը: Հաճքային պարարտանյութերի չափաբաժնի ավելացման և հողերի ոռոգման դեպքում թերպատվությունն ավելի կրաքարանա:

Ասկերանի շրջանի բարձրադիր գոտում՝ անտառային դարչնագույն հողերում (Կարմիր գյուղ համայնք), 2007-2010թթ. դրվել են դաշտային փորձեր, ինչպես հարավ-արևելյան, այնպես էլ հյուսիսարևելյան կողմնադրության 3-5օ թերության և անցրդի պայմաններում: Փորձերի համար օգտագործվել է նույն պարարտացման սխեման, ինչը շագանակագույն հողերում. 1. ստուգիչ (առանց պարարտացման), 2. գոմաղը 30 տ/hw, 3. գոմաղը 30 տ/hw +N60 կգ/hw (ազդող նյութի հաշվով), 4. N 60 կգ/hw (ազդող նյութի հաշվով) և 5. ցեղկարբոֆոս 250 կգ/hw (ֆիզիկական քաշով):

Բոլոր փորձերը դրվել են 3 կրկնողությամբ: Աղյուսակ 7.1.3-ում թերված են փորձից ստացված տվյալները, որոնք 3 տարիների և 3 կրկնողությունների միջին տվյալներն են:


### Աղյուսակ 7.1.3

Ասկերանի շրջանի բարձրադիր գոտու անտառային դարչնագույն հողերում աշնանացան ցորենի բերքատվությունը՝ կախված պարարտացման տարրերակներից և տարբեր կողմնադրություններից (2007-2010թ.)


Փոքի տարբերակները	Հարավ -արևելյան կողմնադրություն		Հյուսիս -արևելյան կողմնադրություն	
	միջին բերքը, g/հա	հավելյալ բերքը, g/հա	միջին բերքը, g/հա	հավելյալ բերքը, g/հա
Ստուգի (առանց պարարտացման)	17.0	-	17.6	-
Գոմաղը 30 տ/հա	27.6	10.6	29.6	12.0
Գոմաղը 30 տ/հա +N60	34.0	17.0	36.9	19.3
N60	24.4	7.4	25.2	7.6
Ցեղարքովու 250 կգ/հա	24.5	7.5	25.6	8.0

$$S_{x_0} \% = 0.4\% \quad \text{Ա:} S_{0.5} = 0.2 \text{ g/հա}$$

Աղյուսակ 7.1.3-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ Ասկերանի շրջանի բարձրադիր գոտու անտառային դարչնագույն հողերում աշնանացան ցորենի բերքատվությունը բարձր է՝ համեմատած ցածրադիր գոտու շագանակագույն հողերից ստացված բերքատվության հետ (աղյուսակներ 7.1.1 և 7.1.2), իսկ նույն գոտու սահմաններում՝ հյուսիս-արևելյան կողմնադրության պայմաններում, ավելի բարձր բերք է ստացվում, քան հարավ-արևելյան դիրքադրության պայմաններում:



Գծապատկեր 7.1.3. Պարարտանութերի և հարավ-արևելյան կողմնադրության ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա  
1. գոմաղը 30 տ/հա, 2. գոմաղը 30 տ/հա + N60,  
3. N60, 4. ցեղարքովու (250 կգ/հա)



**Գծապատկեր 7.1.4. Պարարգանյութերի և հյուսիս-արևելյան կողմնադրույժան ազդեցությունը աշխանացան ցորենի բերքագվույժան վրա**

1. գոմաղը 30 գ/հա, 2. գոմաղը 30 գ/հա + N60,

4. ցեղարքոֆու (250 կգ/հա)

Լավագույն տարբերակն է՝ գոմաղը 30 տ/հա+N60 կգ/հա, որն ապահովում է 34.0-36.9 գ/հա բերք, ինչը պայմանավորված է խոնավության ապահովածությամբ, հումուսի ու սննդատարբերի համեմատաբար բարձր պարունակությամբ՝ համեմատած ցածրադիր գոտու շագանակագույն հողերի հետ (Վ.Ա.Ալեքսանյան, 2011, թ, 2013, թ):

Նմանատիպ աշխատանքներ են կատարվել նաև ՀԱՍՀ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսումնափորձնական հողամասում՝ նույն սխեմայով, ինչ և նախորդ փորձերում, սակայն պարարտացումը կատարվել է այլ կերպ. 2010թ. աշնանը, հողի հիմնական վարի տակ՝ 2-րդ տարբերակում, տրվել է 30 տ/հա գոմաղը, 3-րդ տարբերակում՝ 30 տ/հա գոմաղը+N30 կգ/հա, 4-րդ տարբերակում՝ N30 կգ/հա, իսկ 3-րդ և 4-րդ տարբերակներում՝ մնացած N30 չափաժինը տրվել է գարնանը (2011թ.)՝ սնուցման ձևով: Հինգերորդ տարբերակը՝ 250 կգ/հա չափաժնով ցեղարքոֆուսը, նույնպես տրվել է գարնանը:

Պետք է նշել, որ ցանքը (2010թ.) կատարվել է հոկտեմբերի 10-ին. յուրաքանչյուր 1 մ2-ի վրա ցանվել է 300 սերմ, սերմերը լրիվ ծլել են մինչև նոյեմբերի 24-ը: Ցանվել է բեզոստայա 1 սորտը: Փորձերի ըն-

բացքում կատարվել են սխստեմատիկ դիտարկումներ: Փորձերի դիտարկումների արդյունքները բերված են աղյուսակ 7.1.4-ում:

#### **Աղյուսակ 7.1.4**

##### **Բույսերի խտությունը աշնանացան ցորենի դաշտում՝ ըստ տարրերակների (2010-2011 թթ.)**

Փորձի տարրի բակ ներք (հասու)	Խ <sup>2</sup> վրա ցան - պած սեր մն- քը (հասու)	Ժամկետ		Բույսերի բանակը Խ <sup>2</sup> վրա			Դաշ- տային ծառ ան կո- րյուն մը %,	Զննու դի- նեց - կամու - բյուն, %	Թերք հա- վաքի ժա- ման պահ - պամ ված թըրքը %	
		Ցան քի ծառան	Լին կու - մից հետո	Օնուու - մից առաջ	Օնուու - մից հետո	Թերքա- նակը - մից առաջ				
Ստուգիչ	300	10/ X	24/XI	215	211	190	178	71.7	90.0	93.8
Գոնարք 30տ/հա	300	10/ X	24/XI	223	214	196	187	74.3	91.6	95.6
Գոնարք 30տ/հա+N60	300	10/ X	24/XI	226	219	205	197	75.3	93.6	96.2
N60	300	10/ X	24/XI	225	215	206	197	75.0	95.8	95.4
Ցենկարբոֆոս 250կգ/հա	300	10/ X	24/XI	226	218	208	200	75.3	95.4	96.2

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ստուգիչում դաշտային ծլունակությունը 71.7% է, լավագույն տարրերակը գոմաղը 30տ/հա+N60 կգ/հա չափաբաժնն է, որտեղ սերմերի ծլունակությունը հասնում է 75.3%-ի, ձմեռադիմացկանության ցուցանիշը բարձր է 3, 4 և 5-րդ տարրերակներում՝ համեմատած ստուգիչի հետ: Նոյնը նկատվում է նաև բերքահավաքից առաջ պահպանված բույսերի քանակով, որը մնացած տարրերակներում բարձր է ստուգիչի նկատմամբ:

Աղյուսակ 7.1.5-ում բերված են Ասկերանի շրջանի շագանակագույն հողերում աշնանացան ցորենի աճի և զարգացման փուլերը՝ հարավ-արևելյան դիրքադրության պայմաններում, թերությունը՝ 5-7°:

## Աղյուսակ 7.1.5

**Աշնանացան ցորենի աճման ու զարգացման փուլերը Ասկերանի շրջանի  
շաղանակագույն հողերում (2010-2011թ.) (ՀԱՎՀ Ստեփանակերտի  
մասնաճյուղի փորձահողամաս)**

Փորձի տարբե րակ նորը	Ծրամ	Թվա կայում	Խորհ ու - վա - կայում	Հասկա կայում	Ծաղ կրամ	Հաստացում			Լրիվ ծրամից միմյա նառ նա ցամք, օրինություն
						Կար - նային	Մոմա - յին	Լրիվ	
Ստուգիչ	20/X- 24/XI	2/XI- 6/XI	18/IV- 25/IV	14/V- 18/V	20/V- 25/V	29/V- 1/VI	18/VI- 21/VI	10/VII- 15/VII	264
Գ-ոնարդ 30ու/հա	20/X- 30ու/հա	2/XI- 24/XI	18/IV- 25/IV	14/V- 18/V	20/V- 25/V	29/V- 1/VI	18/VI- 21/VI	10/VII- 15/VII	264
Գ-ոնարդ 30ու/հա+N60	20/X- 30ու/հա+N60	2/XI- 24/XI	18/IV- 25/IV	14/V- 18/V	20/V- 25/V	29/V- 1/VI	18/VI- 21/VI	10/VII- 15/VII	264
N60	20/X- 24/XI	2/XI- 6/XI	18/IV- 25/IV	14/V- 18/V	20/V- 25/V	29/V- 1/VI	18/VI- 21/VI	10/VII- 15/VII	264
Ցեղարքոֆու	20/X- 250կգ/հա	2/XI- 24/XI	18/IV- 25/IV	14/V- 18/V	20/V- 25/V	29/V- 1/VI	18/VI- 21/VI	10/VII- 15/VII	264

Քանի որ ցանքը կատարվել էր հոկտեմբերի 10-ին, ապա սերմենի ծրամը սկսվել է հոկտեմբերի 20-ից և լրիվ ծրամը համատարած ձգվել է մինչև նոյեմբերի 24-ը, աստիճանաբար թփակալվել է և ձմեռել: Խողովակալումը դիտվել է 18/IV-25/IV, այսինքն՝ ապրիլ ամսվա II-րդ կեսին, մինչ այդ 3-րդ, 4-րդ տարրերակներին տրվել էր սնուցման եղանակով N30 կգ/հա չափարաժինը (ազդող նյութի հաշվով), իսկ ցեղարքոֆուը լրիվ չափարաժինը (250 կգ/հա): Ամբողջ վեգետացիան մինչև բերքահավաքը տևել է 264 օր, տվյալ ցուցանիշների գծով տարրերակների միջև տարրերություն չի նկատվել:

Աղյուսակ 7.1.6-ում բերքած են փորձերի հիմնական տվյալները՝ աշնանացան ցորենի կենսաբանական բերքը և որոշ կառուցվածքային տարրեր:

## Աղյուսակ 7.1.6

**Աշնանացան ցորենի կենսաբանական բերքը և դրա կառուցվածքային  
տարրերը Ասկերանի շրջանի շագանակագույն հողերում (ՀԱԱՀ  
Ստեփանակերտի մասնաճյուղի փորձահողամաս) (2010-2011թ.)**

Փորձի տարրի անունը	Բույս տերի բարձր., մմ	Մնկ հասկի		Կշիռը մ <sup>2</sup> /կ		Կնմաքանական բերքը, գ/հա						
		Եր - կա - ռու բար ձրի, մմ	Հասկի մերի քիւլ, մաս	Բույ - սի	Հա - տիկ մերի	Ըն - դրս - մանը	Հա - տիկ կի	Ծոր - տի	Հասկին ծղու հա բն բն ու բու նը	Հա - տիկի հա վե - յալ բնը	%-ով ար - տա - հայր - յած	
Սոսովիչ	87.9	5.3	7.9	0.31	325.8	148.1	32.6	14.8	17.8	1.2	0.0	0.0
Գոնադր 30տ/հա	93.5	7.4	13.9	0.65	411.5	178.9	41.2	17.9	23.3	1.3	3.1	+20.9
Գոնադր 30 տ/հա + N60	107.4	7.6	13.0	0.75	544.5	226.9	54.5	22.7	31.8	1.4	7.9	+53.4
N60	107.0	7.5	13.0	0.75	523.5	218.2	52.4	21.8	30.6	1.4	7.0	+47.3
Ցեղար- դրիու 250 գ/հա	104.0	7.0	12.5	0.65	465.0	202.2	46.5	20.2	26.3	1.3	5.4	+36.5

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ բույսերի բարձրությամբ, հատիկների քանակով, կշռով և հատիկի բերքատվության ցուցանիշներով լավագույն տարրերակը դրված փորձերում համարվում է զոմադր 30 տ/հա+N60 կգ/հա (ազդող նյութի հաշվով) շափաբաժինը, որի դեպքում ստացվել է 22.7 գ/հա հատիկի բերք + 31.8 գ/հա ծղոտի բերք, որը ստուգիչի նկատմամբ կազմում է 53.4% հավելյալ բերք, իսկ զոմադր 30 տ/հա տարրերակի դեպքում այն կազմում է + 20.9%:

Ազոտ 60 կգ/հա տարրերակում հատիկի հավելյալ բերքը ստուգիչի նկատմամբ կազմում է 47.3%, իսկ ցեղարդոֆոս տարրերակում այն կազմում է +36.5%, քանի որ տվյալ տարրերակում N-ի քանակությունը ցածր է N60 տարրերակի նկատմամբ:

Այսպիսով, 2010-2011թ. փորձերը ցույց են տալիս, որ Ասկերանի շրջանի շագանակագույն հողերում (Ստեփանակերտի մասնաճյուղի փորձահողամաս)՝ անջրդի պայմաններում, 300-350 մ բարձրությունում գաղտնաբառը կազմում է 300-350 մ բարձրություն:

թյան վրա դրված փորձերում լավագույն տարբերակը համարվում է գոմաղը 30տ/հա+N60 կգ/հա (ազդող նյութի հաշվով) տարբերակը, որի դեպքում ապահովվում է 22.7 գ/հա աշնանացան ցորենի հատիկի բերք: Ազոտի չափաբաժնի ավելացման դեպքում հնարավոր է այդ հողերից ստանալ ավելի բարձր բերք, իսկ ոռոգման պայմաններում ցորենի հատիկի բերքի քանակությունը կարելի է հասցնել 40-50 և ավելի ց՝ հեկտարից:

Այսպիսով, փորձերը վկայում են, որ նույնիսկ նույն հողատիպի (շագանակագույն հողեր) սահմաններում, պարարտացման տարբեր եղանակների դեպքում՝ I-ը՝ սնուցում ցանքից հետո և գարնանը (Իվանյան համայնք), II-ը՝ հավելյալ պարարտացում՝ հիմնական վարի տակ (Ստեփանակերտի մասնաճյուղի փորձահողաման), բերքատվության ցուցանիշները մոտ են: Հետևաբար, պետք է հաշվի առնել նշված հանգամանքը պարարտացման եղանակի և ժամանակի ընտրության դեպքում:

Սակայն պետք է նշել, որ հանրապետությունում մշակաբույսերի բերքատվության զգալի ցածր լինելու հիմնական պատճառ է հանդիսանում նաև այն, որ, պայմանավորված նյութատեխնիկական միջոցների պակասությամբ, տնտեսություններն ի վիճակի չեն ձեռք բերելու անհրաժեշտ որակի սերմնանյութ, պահանջվող քանակի տեխնիկա ու սարքավորումներ, իրականացնել պարարտացման, բույսերի վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի համալիր միջոցառումներ և այլն:

ԼՂՀ գրեթե ոչ մի տնտեսությունում, փաստորեն, չեն կիրառվում գիտականորեն հիմնավորված ցանքաշրջանառություններ, տարիներ շարունակ նույն դաշտում ցանկում է նույն մշակաբույսը, այսինքն՝ կիրառվում է երկրագործության մոնոկուլտուրայի համակարգ:

Վերջին մի քանի տարիների ընթացքում մշակաբույսերն աճեցվում են կամ առանց պարարտանյութերի օգտագործման, կամ միակողմանի ազոտական պարարտացման պայմաններում: 1990թ.-ից ֆուֆորական ու կալիումական պարարտանյութեր գրեթե չեն մտցվել վարելահողեր, իսկ ազոտական պարարտանյութերը մտցվել են

շատ սահմանափակ քանակություններով և տարածություններ:

Արդյունքում արձանագրվել է գրեթե բոլոր մշակաբույսերի բերքատվության նվազում:

Հանրապետությունում կանոնակարգված չէ և հազվագյուտ դեպքերում է իրականացվում այնպիսի խիստ կարևոր ազդումիջոցառում, ինչպիսին է սորտաբարձացումը: Հացահատիկային մշակաբույսերի սերմերի ավելի քան 90-95%-ը անհայտ վերաբտադրության սերմեր են և դրանց օգտագործման ժամանակ ստացվում է ցածր բերք:

Մշակաբույսերի բերքատվության անկման գլխավոր պատճառներից մեկը կապված է այն հանգամանքի հետ, որ ինչպես ԼՂՀ, այնպես էլ Ասկերանի շրջանում, գրեթե շնչ իրականացվում վճասատուների, հիվանդությունների ու մոլախոտերի դեմ տարվող պայքարի համալիր միջոցառումների համակարգ: Բացի այդ, հայտնի պատճառներով նվազել է տնտեսությունների տեխնիկական գինվածությունը, որի հետևանքով ճգճգվում է այս կամ այն ազդումիջոցառման կատարումը, խախտվում է մշակաբույսերի աճեցման տեխնոլոգիան:

## 7.2. Խոտհարքների բարեկալման միջոցառումները

Գարնանը նմանատիպ փորձ է դրվել նաև նույն տարածքի խոտհարքում, համեմատաբար, հարթ, 3-5օ բերքության պայմաններում: Արևելյան կողմնադրության, սակավագոր՝ A+B հորիզոնների գումարը կազմում է 10-12 սմ, որից հետո սկսվում է BC հորիզոնը՝ բաց շագանակագույն հողերում:

Պարարտացման սխեման եղել է նույնը, ինչ որ նախկին փորձերում: Փորձերը դրվել են 5 տարբերակով՝ 3 կրկնողությամբ, փորձամարգերի միջև բողնվել է 0.5 մ լայնությամբ պաշտպանիչ շերտ:

Մարտի վերջին՝ ըստ տարբերակների, հողի մակերեսին կատարվել է պարարտացում, ապա փոցխվել է: Փորձը դրվել է անջրդի պայմաններում:

Ստորև՝ աղյուսակ 7.2.1-ում, բերվում են փորձից ստացված տվ-

յալները, ընդ որում՝ ներկայացվում են 3 կրկնողությունների միջին տվյալները:

### **Աղյուսակ 7.2.1**

#### **Խոտհարքում կանաչ գանգվածի, չոր խոտի քանակներն՝ ըստ պարարտացման տարբերակների (2011թ.)**

Ըորմի տարբերակները	Քերք, g/hw		Չոր խոտի հավելյալքները	
	Կանաչ գանգված	Չոր խոտ	g/hw	%
Սոուզիչ	13.4	7.8	0.0	0.0
Գոնադր 30 տ/hw	16.0	8.3	0.5	+6.4
Գոնադր 30 տ/hw+N60	16.8	8.8	1.0	+12.8
N60	16.0	8.6	0.8	+10.3
Ցեղարքոֆոս 250 կգ/hw	15.9	9.0	1.2	+15.3

$$S_{x_0} \% = 0.8\% \quad \text{ԱԲ} S_{05} = 0.3 \text{ g/hw}$$

Աղյուսակի տվյալներից երևում է, որ սոուզիչ տարբերակում (առանց պարարտացման)՝ ինչպես կանաչ գանգվածի, այնպես էլ չոր խոտի բերքը ցածր է և կազմում է 7.8 g/hw (չոր խոտ): Ըստ պարարտացման տարբերակների՝ բերքատվությունն ավելանում է. լավագույն տարբերակներն են՝ գոնադր 30 տ/hw + N60 կգ/hw (ազդող նյութի հաշվով) տարբերակը, որին գերազանցում է ցեղարքոֆոս 250 կգ/hw տարբերակը, որտեղ չոր խոտի հավելյալ բերքը կազմում է 15.3%: Նախորդ տարբերակում այն կազմում է 12.8%: Քանի որ ստացված բերքը պայմանավորված էր միայն տեղումների քանակով, ուստի, այն կախված է տվյալ վեգետացիայի ժամանակ հողում կուտակված խոնավությունից, այսինքն՝ բարենպաստ տարիներին, պարարտացման ֆոնում հնարավոր է ստանալ ավելի բարձր բերք:

Խոտհարքներից բարձր բերք (չոր խոտ) ստանալու համար անհրաժեշտ է կարգավորել հողում խոնավության կուտակումը: Դրա համար պահանջվում է մի շարք միջոցառումների իրականացում՝ անտառաշերտերի ստեղծում, ճնշալ ջրերի կուտակում և պարտացում, օրգանահանքային պարարտանյութերի կիրառում:

## ԳԼՈՒԽ 8

### ՄՇԱԿՎՈՂ ՀՈՂԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԱԳՐՈՍԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշակվող հողերի բարելավման ազրումիջոցառումների տնտեսական արդյունավետությունը կախված է տվյալ միջոցառման քնույթից, հողի տիպից, սննդարտարերի պարունակության մակարդակից, մշակաբույսի սորտային առանձնահատկությունից, ազրուեխնիկայից, պարարտացման համակարգից, ցանքաշրջանառության կիրառումից, ռոռոգումից, որոնց առկայության պայմաններում հճարավոր է միավոր տարածքից ապահովել ավելի բարձր բերք և շահույթ:

ԼՌՀ գյուղատնտեսության մեջ նշակվող հիմնական մշակաբույսերն են՝ աշնանացան ցորենը և զարին: Ուսումնասիրությունները տարվել են աշնանացան ցորենի ցանքերում:

Չնայած աշնանացան ցորենը և զարին առաջատար մշակաբույսեր են, դրանցից ցածր բերք է ստացվում, քանի որ ցածր է մշակության արդյունավետությունը: Դրա հիմնական պատճառներն են՝ ցանքաշրջանառությունների բացակայությունը, սերմանյութի ցածր որակը, հողի ոչ ճիշտ նախապատրաստումը, հողերի ցածր բերքիությունը, հիվանդությունների, վնասատունների և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների, ինչպես նաև պարարտանյութերի անբավարար կիրառումը կամ բացակայությունը:

Նախկինում կատարված փորձերով պարզվել է, որ մեկ տոննա գոմաղբի կիրառման դեպքում կատարված ծախսերն ապահովում են 60-80 կգ հացահատիկի, 200-240 կգ շաքարի ճակնդեղի, նույնանքան բանջարքոստանային մշակաբույսերի հավելյալ բերք (Ե.Մ.Մովսիսյան, 1971, Վ.Գ.Ալինել (Մինսև Վ.Գ., 1973), Լ.Մ.Դերժավին (Դերժավին Լ.Մ., 1985)), իսկ գոմաղբի հետ հանքային պարարտանյութերի համատեղ օգտագործումն էլ ավելի է բարձրացնում մշակաբույսերի բերքատվությունը և ծախսված մեկ դրամի դի-

մաց ստացած շահույթը (Գալստյան Մ.Հ., 2007 գ): Ուստի, տվյալ մշակաբույսերի մշակության ժամանակ, պետք է հաշվի առնել վերը նշված գործոնները՝ բույսերի պահանջը հողի և մշակման նկատմամբ, հողի ճիշտ նախապատրաստումը, ցանքի ժամկետը, մոլախոտերի դեմ պայքարը:

Ըստ Ս.Կ.Երիցյանի և ուրիշների կատարած փորձերի՝ ԼՂՀ տարածում (միջին լեռնային գոտի, անջրդի պայմաններ) աշնանացան ցորենի Բեզոստայա 1 սորտից N90 կգ/հա ֆոնում ստացվել է 33,8 գ/հա հատիկի բերք, իսկ եթք կիրառվել է N90+ԶՀՊ 2,5 կգ/հա (արտարմատային սնուցում գարնանը) պարարտացում, ապա ստացվել է 38,3 գ/հա հատիկի բերք (Ս.Կ.Երիցյան և ուրիշներ, 2008):

Կատարված փորձերի արդյունքներով ապացուցվել է բարելավման տարբեր միջոցառումների և գործոնների ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել է այդ միջոցառումների տնտեսական արդյունավետությունը:

Տնտեսական արդյունավետության հաշվարկման ժամանակ հաշվի են առնվել ԼՂՀ-ում (շուկայական հարաբերությունների պայմաններում) նյութերի ձեռքբերման, ստացված բերքի, բերքահավաքի, պահեստավորման, վաճառքի գները՝ հիմք ընդունելով գոյություն ունեցող մեթոդները:

Օգտագործվել են հետևյալ շուկայական գները. գոմաղբ՝ մեկ տոննայի արժեքը 1000 դրամ, իսկ դաշտ տեղափոխություն և հող մտցնելու ծախսերը՝ 1500 դրամ, ցորենի հատիկի մեկ կգ վաճառքի գինը՝ 140 դրամ, իսկ ծղոտինը՝ 10 դրամ, մեկ մ3 ջրի արժեքը՝ 11 դրամ, մեկ հեկտարի հավելյալ բերքի տեղափոխումը և պահեստավորումը (5 կմ հեռավորության վրա)՝ 10 հազար դրամ:

Պարարտանյութերի արժեքը. ամռնիումի նիտրատ՝ 130 դրամ/կգ, սուպերֆոսֆատ՝ 60 դրամ/կգ, ցեղաբուֆոս՝ 110 դրամ/կգ, մեկ հեկտարի ոռոգումը (մեկ անգամ)՝ 5 հազար դրամ: Բնլոր փորձերում ցանքի համար օգտագործվել է աշնանացան ցորենի Բեզոստայա 1 սորտը: 2006-2008թթ. Ասկերանի շրջանի հարթավայ-

բային գոտում (Իվանյան համայնքի տարածքում) ուսումնասիրվել է ոռոգման ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա: Ինչպես այս, այնպես էլ մյուս փորձերի դեպքում հողերը եղել են ազոտով բույլ, ֆոսֆորով՝ բույլ և միջին, կալիումով՝ միջին և լավ ապահովածության: Փորձի արդյունքները բերված են աղյուսակ 8.1-ում:

### Աղյուսակ 8.1 Ոռոգման ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա

Փորձի առարկավայրեղ	Միջն բարձրություն	Հավելյալ բերք ց/հա		Հավելյալ ներքի արժեքը, հազար դրամ			Կատարված լաշտուցիչ ծախսերը, հազար դրամ			Այլ ծավալներ %	Ըստ ծավալների հազ. դրամ	Զան նկատող հազ. դրամ	Լրացնել ծախսներ մն. պահի մեջ ստացված լուսավոր շահ
		Հատիկ	Ծրբ	Հատիկ	Ծրբ	Ծրբ	Ծրբ	Հատիկ	Ծրբ				
Սառացի (սաաց ռողման)	17.0	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
Ոտագոմ 2 ամեզմ ( $2 \times 700 \text{ մ}^3$ ) $= 1400 \text{ մ}^3$	26.0	9.0	13.1	126.0	13.1	139.1	27.6	27.0	54.6	49	59.6	79.5	1.39

Ստուգիչ տարրերակում (առանց ոռոգման) հատիկի միջին բերքը կազմել է 17g/հա, իսկ 2 անգամ ոռոգման դեպքում հեկտարից ստացվել է 26.0 ց բերք: Հավելյալ բերքը հեկտարից կազմել է 9 ց հատիկ և 13.1 ց ծղոտ, իսկ զուտ եկամուտը՝ 79.5 հազար դրամ:

Փորձի արդյունքները ցույց են տալիս, որ հարթավայրային գոտում բարձր բերքի ստացման համար անհրաժեշտ է ոռոգման համակարգի ստեղծում և կիրառում:

ԼՂՀ-ում, ինչպես և Ասկերանի շրջանում, զյուղատնտեսական մշակաբույսերը հիմնականում մշակվում են անջրդի պայմաններում՝ տարրեր թեքությունների վրա, ուստի, մեծ նշանակություն ունի հողում խոնավության կուտակման և պահպանման հարցերի ուսումնասիրումը։ Հետևապես, ուսումնասիրվել է հողում արդյունավետ խոնավության կուտակման ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա։ Հողի նախացանքային մշակումը կատարվել է երկու եղանակով. 1. սովորական վար (ստոգիչ), 2. հարթահատիչով հողի մակերեսային մշակում 7-9 սմ խորությամբ և միաժամանակ խորքային ճեղքերի բացում 25-30 սմ խորությամբ՝ հարթահատրիչին ամրացված փիլտրեցուցիչների միջոցով։ Դրա շնորհիվ հնարավոր է եղել կանխել խոնավության գոլորշացումը հողի մակերեսից և հողի ստորին շերտերում ավելացնել արդյունավետ խոնավությունը։ Փորձի արդյունքները բերված են աղյուսակ 8.2-ում։

## Աղյուսակ 8.2

### Հողում արդյունավետ խոնավության կուտակման ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա

Փորձառնություն	Մագիստրոսական դիմում	Հավելաց թերթ ցհաւ		Հավելաց թերթ արժեքը հաւաքար դրամ		Կասարված լրացուցիչ ծախսերը հազար դրամ		Համար համար պահպանագործ աշխատավորությունը	Համար համար պահպանագործ աշխատավորությունը	Արժեքը, %	Բարձրացնելու համար նախագծական պահպանագործ աշխատավորությունը	Համար համար պահպանագործ աշխատավորությունը	Համար համար պահպանագործ աշխատավորությունը
		Համար համար պահպանագործ աշխատավորությունը	Համար համար պահպանագործ աշխատավորությունը	Համար համար պահպանագործ աշխատավորությունը	Համար համար պահպանագործ աշխատավորությունը	Համար համար պահպանագործ աշխատավորությունը	Համար համար պահպանագործ աշխատավորությունը						
Սովորական (առանձ բակամ վար)	18.0	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հարթահատրիչ աշխատավորությունը	22.0	4.0	5.8	56.0	5.6	61.8	12.0	25.7	37.7	3.4	41.1	20.7	0.50

Բերված տվյալներից երևում է, որ հարթահատիչով հողի մշակման ժամանակ բարձրացել է աշնանացան ցորենի բերքատվությունն՝ ի հաշիվ հողում կուտակված խոնավության, և ստացվել է ցորենի հատիկի  $4\text{g}/\text{հա}$  ու ծղոտի  $5.8 \text{ g}/\text{հա}$  հավելյալ բերք: Զուտ եկամուտը հեկտարից կազմել է  $20.7 \text{ հազար դրամ}:$

Ասկերանի շրջանի բարձրադիր գոտու մշակովի հողերը տարբեր աստիճանի էրոզացված են, ցածր է բերրիության մակարդակը, ուստի անհրաժեշտ է այդ հողերի արդյունավետության բարձրացման համար մշակել համապատասխան միջոցառումներ: Ուսումնասիր-վել է էրոզացված հողերում օրգանական պարարտանյութի ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա (աղյուսակ 8.3):

Աղյուսակ 8.3

**Էրողացված հողերում օրգանական (գռմալիք) պարարտանյութի  
ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա**

Տրվել է 40տ/հա չափարանակով գրմաղը՝ հիմնական վարի տակ, որը ստուգիչի նկատմամբ ապահովել է 11.0 g/հա հատիկի և 13.2 g/հա ծղոտի հավելյալ բերք: Միջոցառման տնտեսական արդյունավետությունը մեկ հեկտարից կազմել է 49.8 հազար դրամ:

ԼՂՀ-ում, այդ թվում և Ասկերանի շրջանում, 1990-ական թթ. սկսած տեղի են ունեցել զանգվածային անտառահատումներ, անտառարփուտների վերացում: Արդյունքում բեր լանջերի հողերը գրկվել են դաշտապաշտպան անտառաշերտերից: Դրա հետևանքով դիտվել է էրոզիոն երևոյթների ուժգնացում, հողատարում, նվազել է զյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը: Տվյալ երևոյթների պարզաբանման համար դրվել են փորձեր՝ պարզելու անտառաշերտերի, անտառարփուտների ազդեցությունն անտառային դարչնագույն հողերում՝ աշնանացան ցորենի բերքատվության վրա: Փորձերը դրվել են Կարմիր գյուղի տարածքում (1996-1998թթ.): Առաջին փորձի տարրերակներն են՝ 1. ստուգիչ-անտառաշերտով շպաշտպանված տարածք, 2. անտառաշերտերով պաշտպանված տարածք: Արդյունքները բերված են աղյուսակ 8.4-ում:

#### **Աղյուսակ 8.4**

**Դաշտապաշտպան անտառաշերտերի ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա (հյուսիս-արևելյան, 8-10օ թերության)**

Փորձի ասպեկտ - բակներով	Միջն թիրաց ցհան	Հավելյալ բերքը, g/հա		Հավելյալ բերքի արժեքը հազար դրամ		Կատարված լրացուցիչ ծախսերը, հազար դրամ			Այլ ծախսերի 9%	Ընդունված ծախսերը, հազ. դրամ	Զառ նկատությունը հազ. դրամ	Լրացուցիչ ծախսած մեջ դրահանգ առաջնական լրացուցիչ շան լր
		Հասկելի	Միաժամկետ	Հասկելի	Միաժամկետ	Համաժամկետ	Համաժամկետ	Համաժամկետ				
Ստուգիչ	18.0	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Անտառա - ժերմակ պաշտ - պահպան տարածք	21.6	3. 6	5.2	50. 4	5.2	55. 6	-	24.9	24. 9	2.2	27.1	28.5

Անտառաշերտով չպաշտպանված տարածքից ստացվել է 18 գ/հա հատիկի միջին բերք, իսկ պաշտպանված տարածքից՝ 21.6 գ/հա: Հատիկի հավելյալ բերքը կազմել է 3.6 գ, իսկ ծղոտինը՝ 5.2 գ/հա: Չուտ եկամուտը հեկտարից կազմել է 28.5 հազար դրամ:

Նույնպիսի փորձ է դրվել նույն համայնքի տարածքում՝ հյուսիսարևելյան կողմնադրության լանջի վրա 10-12օ բերության պայմաններում: Ուսումնասիրվել է անտառաթփուտային շերտի (40-50 մ լայնության) ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա (աղյուսակ 8.5):

### Աղյուսակ 8.5

**Դաշտապաշտպան անտառաթփուտների ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա, 10-12օ բերության պայմաններում  
(հարավ-արևելյան)**

Փոքր տարրեն - բակ ները	Միջին բերք գ/հա	Հավելյալ բերքը գ/հա		Հավելյալ բերքի արժեքը հազար դրամ			Կատարված լրացրցիչ ծախտեր, հազար դրամ			Ընդունակ դրամ	Այլ նախարարությունների հազ. դրամ	Համակարգ հազ. դրամ	Համակարգ հազ. դրամ	Լուսավորման մեջ ներառված շնորհ
		Հաստի	Երկար	Հաստի	Երկար	Ընդունակ	Համակարգ հազ. դրամ	Համակարգ հազ. դրամ	Ընդունակ					
Սառու զի	15.2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Անտառ - ու - բիուս ներք պաշտ պահ ված տառածք	19.1	4.1	6.0	57.4	6.0	63.4	-	25.0	25.0	2.3	27.3	36.1	132	

Անտառաթփուտներով չպաշտպանված տարածքից (ստուգիչ) ստացվել է 15.2 գ/հա հատիկի բերք, իսկ պաշտպանված տարածքից՝ 19.1 գ/հա: Չուտ եկամուտը հեկտարից կազմել է 36.1 հազար դրամ:

Ասկերանի շրջանի բարձրադիր գոտում՝ անտառային դարչնագույն հողերում (Կարմիր գյուղ), դրվել են դաշտային փորձեր, ինչպես հարավ-արևելյան, այնպես էլ հյուսիս-արևելյան կողմնադրության, 3-5օ բերության և անջրդի պայմաններում (2007-2011թ.):

Փորձերի համար որպես տարբերակներ օգտագործվել է՝ 1. սոուզիչ (առանց պարարտացման), 2. գոմաղը 30 տ/հա, 3. գոմաղը 30 տ/հա + N60 կգ/հա (ազդող նյութի հաշվով), 4. N60 կգ/հա (ա.ն.հ.) և 5. ցենկարբոֆոս 250 կգ/հա չափաքանակով (ֆիզիկական քաշով):

Հայտնի է ինչպես գոմաղի, այնպես էլ ազոտական պարարտանյութերի դրական ազդեցությունը զյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում և դրանց տնտեսական արդյունավետությունը: Ցենկարբոֆոսը զյուղատնտեսության մեջ որպես պարարտանյութ օգտագործվում է վերջին տասնամյակում և իրենից ներկայացնում է համակցված, բարդ, նիտրատներից գուրկ, հատիկավորված պարարտանյութ՝ պարունակելով 16% ազոտ, 16% ֆոսֆոր (ազդող նյութի հաշվով) և 68% ցեռլիտ: Փորձարկվել է տարբեր մշակաբույսերի վրա և նկատվել է դրական արդյունք՝ շնորհիվ ցեղիսի բյուրեղային ցանցի մեջ գտնվող միկրոև մակրոծակոտիների, որոնց կողմից սմնդատարբերը կլանվում են և չեն լվացվում, այլ աստիճանաբար յուրացվում են բույսերի կողմից:

Տարբեր մշակաբույսերի համար այս պարարտանյութի տարբեր չափաբաժիններ է առաջարկվում, հիմնականում՝ 250-300 կգ/հա: Հող է մտցվում նախացանքային մշակման ժամանակ, կամ ցանքի հետ, որոշ դեպքերում նաև սնուցման ձևով՝ կուտիվացիայի ժամանակ: Ուսումնասիրությունների ընթացքում այն օգտագործվել է գարնան կուտիվացիայի ժամանակ՝ 250 կգ/հա չափաքանակով, որի ձեռքբերման, տեղափոխման և դաշտ մտցման համար ծախսվել է 35 հազար դրամ:

Բոլոր փորձերը դրվել են 3 կրկնողությամբ: Աղյուսակ 8.6-ում բերված են բերքի 3 տարվա միջին տվյալները: Ստորև բերվում են փորձի սխեման, տարբերակները և ստացված տնտեսական արդյունավետության ցուցանիշները:

## Աղյուսակ 8.6

**Օրգանական և հանքային պարարտանյութերի օգտագործման  
տնտեսական արդյունավետությունն աշխանացան ցորենի ցանքերում  
(անտառային դարչնագույն հող, հարավ-արևելյան կողմնադրություն)**

Փորձի տարրի-բակմերը	Միջին բերքը ց/հա	Հավելյալ բերք, ց/հա		Հավելյալ բերքի արժեքը, հազար դրամ		Կատարված լրացոցի ծախսերը, հազար դրամ		Այլ օգտակար ցույցներ, %	Հայտնի օնկանիք հազ. դրամ	Զուտ եկամուտ հազ. դրամ	Լրացուցիչ օնկանիք օնկանիք լրացուցիչ շահուածությունից հետո
		Հատիկ	Ծրոտ	Հատիկ	Ծրոտ	Ընդամենը	Ելորդի նոր բերքնանին, սեղամիջնամյան, հոր ճացանան				
Ստուգիչ	17.0	-	-	-	-	-	-	-	-	-	-
Գոմապր 30տ/հա	27.6	10.6	15.4	148.4	15.4	163. 4	70.0	31.6	101.6	9.1	110.7
Գոմապր 30տ/հա + N60	34.0	17.0	24.6	238.0	24.6	262. 6	67.9	33.0	100.9	9.1	110.0
N60	24.4	7.4	10.7	103.6	10.7	114. 3	32.0	26.0	58.0	5.2	63.2
Ցեղարբուխ (250տ/հա)	24.5	7.5	10.9	105.0	10.9	115. 9	35.6	34.2	69.8	6.2	76.0
											39.9
											0.53

Փորձերը ցույց են տվել, որ լավագույն տարրերակը գոմապր 30 տ/հա +N60 կգ/հա չափաբաժնով պարարտացման տարրերակն է, որի դեպքում ստացվել է 17.0 ց/հա հատիկի հավելյալ բերք, իսկ մաքուր եկամուտը կազմում է 152.6 հազար դրամ՝ հեկտարից: 2-րդ տեղում է գոմապր 30տ/հա չափաբաժնով պարարտացումը, զուտ եկամուտը՝ 52.7 հազար դրամ/հա:

Նույնատիպ փորձ է դրվել նաև հյուսիս-արևելյան կողմնադրության և 3-5° թեքության պայմաններում: Փորձի սխեման և ստացված արդյունքները բերված են աղյուսակ 8.7-ում:

## Աղյուսակ 8.7

**Օրգանական և հանքային պարարտանյութերի ազդեցությունն աշխանացան ցորենի բերքատվության վրա (անտառային դարչնագույն հող, հյուախ-արևելյան կողմնադրություն)**

Փորձի տարբերակները	Միջն բերքը/g/հա	Հավելյալ բերքը, g/հա		Հավելյալ բերքի արժեքը, հազար դրամ		Կատարված լաստիշ ծախսերը, հազար դրամ		Այլ ծննդեր, 9%	Հնագույն ծննդերը, հազ. դրամ	Զոտ եկանոնական հազ. դրամ	Լրացնելու օգնական միջոցների շահութը
		Հասողին	Ծորոտ	Հասողին	Ծորոտ	Ընդամենը	Նյութին ձնը ընդունակ, տեղափոխման համացանց				
Ստուգիչ	17.6	-	-	-	-	-	-	-	-	-	-
Գոմարք 30տ/հա	29.6	12.0	17.4	168.0	17.4	185.4	70.0	30.6	100.6	9.5	110.1
Գոմարք 30տ/հա+N60	36.9	19.3	28.0	270.2	28.0	298.2	86.0	33.0	119.0	10.7	129.7
N60	25.2	7.6	11.0	106.4	11.0	117.4	32.0	26.0	58.0	5.2	63.2
Ցենկարբոֆոս (250կգ/հա)	25.6	8.0	11.6	112.0	11.6	123.6	33.2	36.0	74.2	6.7	80.9
											42.7
											0.53

Տվյալներից երևում է, որ կատարված փորձում լավագույն տարբերակը նույնպես գոմարք 30 տ/հա + N60 կգ/հա չափաբաժնով պարարտացումն է, բերքի հավելումը կազմում է 19.3 գ/հա, իսկ մաքուր եկամուտը՝ հեկտարից՝ 168.5 հազար դրամ: Նույնպիսի փորձ կատարվել է նաև շրջանի շածրադիր գոտու շագանակագույն հողերում (2010-2011թթ.): Օգտագործվել է նույն սխեման և նորից անջրդի պայմաններում (ՀԱԱՀ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի փորձահողամասում): Ինչպես գոմարքը, այնպես էլ հանքային պարարտանյութերը տրվել են կուլտիվացիայի ժամանակ: Փորձի սխեման և արդյունքները բերված են աղյուսակ 8.8-ում:

## Աղյուսակ 8.8

### Օրգանական և հանքային պարարտանյութերի ազդեցությունն աշնանացան ցորենի բերքատվության վրա՝ շագանակագույն հողերում

Փորձի տարրե- րակները	Միջնաբերքը/հա	Հավելյալ բերք, g/հա		Հավելյալ բերքի արժեքը, հազար դրամ		Կատարված լրացուցիչ ծախսերը, հազար դրամ	Այլ նույնականացուցիչները մասնակիությունը, %	Այլ նույնականացուցիչները մասնակիությունը, %	Հաջողակացուցիչները մասնակիությունը, %	Հաջողակացուցիչները մասնակիությունը, %			
		հասիկ	ծոյն	հասիկ	ծոյն								
Սոուզիչ	15.8	-	-	-	-	-	-	-	-	-			
Գոնառք 30տ/հա	25.8	10.0	14.5	140.0	14.5	154.5	68.0	35.0	103.0	9.3	112.8	41.7	0.37
Գոնառք 30տ/հա + N60	32.8	17.0	24.7	238.0	24.7	262.7	89.6	37.4	127.0	11.4	138.4	124.3	0.90
N60	23.0	7.2	10.4	100.8	10.4	111.2	32.0	30.1	62.1	5.6	67.7	43.5	0.64
Յեղար- բրիոն (250կգ/հա)	22.8	7.0	10.2	98.0	10.2	108.2	35.6	29.4	65.0	5.9	70.9	37.3	0.53

Ստացված արդյունքներից երևում է, որ լավագույն տարրերակը գոմաղը 30 տ/հա +N60 կգ/հա (ազդրող նյութի հաշվով) չափարանով պարարտացումն է, որի դեպքում մաքուր եկամուտը հեկտարից կազմում է 135.7 հազար դրամ, ինչը բավականին բարձր ցուցանիշ է մյուս տարրերակների նկատմամբ: Այստեղից հետևում է, որ գոմաղը փոնում N60 կգ/հա չափարանում կիրառման դեպքում՝ անջրդի պայմաններում, հնարավոր է ստանալ 33-37 գ/հա հատիկի բերք:

Այսպիսով, կատարված փորձերը ցույց են տալիս, որ անհրաժեշտ է ոռոգման համակարգի կառուցում, ցանքաշրջանառության կիրառում, համակցված պարարտանյութերի օգտագործում:

Թեր լանցերում անտառարփուտների պահպանման, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման միջոցով հնարավոր է կանխել այդ հողերի հետագա էրոզիան, իսկ օրգանահանքային պարարտանյութերի կիրառման միջոցով՝ բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը, որի դեպքում հեկտարից ստացվող մաքուր եկամուտը կգերազանցի 150 հազար դրամը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ, այդ թվում Ասկերանի շրջանի վարելահողերը տեղաբաշխված են հարթ և հիմնականում տարբեր դիրքադրության և թեքության աստիճանի լանջերում՝ տարբեր աստիճանի երողացվածությամբ և բնութագրվում են խայտարդետ ֆիզիկական, ֆիզիկարիական, ազրորիմիական հատկություններով։ Այդ հողերի բարելավումը հնարավոր է միայն հողաէրողիոն շրջանների տարանցատման և խմբավորման միջոցով։ Հիմք ընդունելով ռելիեֆի առանձնահատկությունները՝ լանջերի տարբեր թեքություններն ու դիրքադրությունները, ինչպես նաև՝ հաշվի առնելով վարելահողերի խայտարդետ հատկությունները, Ասկերանի շրջանի սահմաններում անջատվել են երեք հողաէրողիոն ենթաշրջաններ։ 1) հարթ տարածություններ, 2) արևահայաց լանջեր, 3) ստվերահայաց լանջեր։

Նման տարանցատումը հնարավորություն է տվել յուրաքանչյուր հողաէրողիոն ենթաշրջանի համար մշակել համալիր միջոցառումներ, որոնց կիրառման արդյունքում կնվազեն հողատարման զործընթացները, կրածրանա հողերի բերրիությունը, հետևաբար՝ նաև մշակաբույսերի բերքատվությունը։ Ծրջանի նախալեռնային և միջին լեռնային գոտիների վարելահողերի ֆիզիկական հատկությունների ուսումնափրությունները հավաստում են, որ տարածքի երեք գոտիների հողերն ունեն բարենպաստ ֆիզիկական հատկություններ՝ բարձր բերքի ստացման համար։

Ծրջանում ձորակային երողիան զարգացած չէ՝ պայմանավորված հողառաջացնող մայրատեսակների բարձր ջրաբափանցելիությամբ, որը խոչընդոտում է մակերեսային հզոր հոսանքների առաջացմանն ու հողագրունտի քայլքայմանը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մակերեսային հողատարման ժամանակ լվացվում է հողի վերին առավել բերրի մասը, որը հարուստ է հումուսով, ընդհանուր և մատչելի ազոտով, ֆոսֆորով ու կալիումով, դա պետք է հաշվի առնել միջոցառումների մշակման ժամանակ։

Կատարված հետազոտությունների արդյունքներով կարևորվում է կտրտված ռելիեֆի պայմաններում, մեծ թեքություն ունեցող լան-

շերում առկա անտառաբիուտային շերտերի պահպանումը, նոր շերտերի հիմնումը (60-70 մ լայնությամբ), ինչը հնարավորություն կտա ձմռանը կուտակել ձյուն և պահել հողում եղած խոնավությունը, իսկ ամռանը մեղմացնել քամիների ուժգնությունը, կանխել հողերի էրոզիան, որոնք կբարձրացնեն մշակաբույսերի բերքատվությունը:

Շրջանի մշակովի հողերն ունեն քոյլ քրվայինից թույլ հիմնային ռեակցիա: Այդ հողերից լավագույն թերք հնարավոր է ստանալ հողի մեջ օրգանահանքային պարարտանյութեր ներմուծելով, ցանքաշրջանառություն կիրառելով, ոռոգման ենթակա տարածքներում ոռոգման համակարգ անցկացնելով:

Վարելահողերը որոշ չափով աղտոտված են ծանր մետաղներով. շարժուն Рb-ի քանակությունը համեմատաբար բարձր է և տատանվում է թույլից միջին աղտոտվածության սահմաններում, շարժուն Cd-ի քանակությունը բարձր չէ՝ 0.2-0.8 մգ/կգ, Mn-ինը տատանվում է 20-80 մգ/կգ-ի սահմաններում, որը նույնպես բարձր չէ և գտնվում է թույլատրելի սահմաններում, իսկ Cu-ով և Mo-ով աղտոտված չեն, Zn-ի քանակությունը ըստ առանձին համայնքների հողերի տարրեր է և ըստ սանդղակի գտնվում է թույլ աղտոտվածության սահմաններում:

Հաշվի առնելով շրջանի հողերի տեղաբաշխվածությունը, ազրուարտա-դրական հատկությունները՝ դրանք բաժանվել են երեք ազրուարտադրական խմբերի.

1. Մարզագետնասևահողեր և լեռնային մարզագետնատափաստանային հողեր. օգտագործվում են ինչպես վարելահողերի տակ, այնպես էլ բարձր լանջերում՝ որպես արոտավայրեր (Խնապատ, Ծոշ, Պատարա, Ավետարանց, Ակնաղբյուր համայնքների տարածքները):

2. Անտառային գորշ տափաստանացված և անտառային դարչնագույն տափաստանացված կարբոնատային հողեր. օգտագործվում են վարելահողերի տակ (Նախիջևանիկ, Այգեստան, Հովսեփավան, Կարմիր գյուղ համայնքներ), իսկ լանջերի հողատարածքներն օգտագործվում են որպես արոտավայրեր:

3. Մուգ շագանակագույն, շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ ցեմենտացած շերտերով, կարբոնատային հողեր (Նա-խիջևանիկ, Ասկերան, Խորանորդ և այլ համայնքներ). տարածվում են 500-800 մ բարձրության սահմաններում, բնութագրվում են միջին հզորությամբ և հումուսայնությամբ, թերև կավային մեխանիկական կազմով, վառողանման ստրոկտուրայով, թույլ հիմնային ռեակցիա-յով, բարձր կարբոնատայնությամբ, կլանված կալցիումի բարձր պարունակությամբ, թույլից միջին էրոզացվածությամբ, թույլ քար-քարոտությամբ, տեղ-տեղ ցեմենտացած շերտերի առկայությամբ:

Ծրջանի արոտավայրերի հողերը, ընկած լինելով տարրեր թերու-թյան, կողմնադրության ու բարդ ռելիեֆի՝ ձորակներով և բլարմբե-րով պատված վայրերում, ունեն խայտաքրետ մեխանիկական կազմ, իսկ սննդատարրերի պարունակության տեսակետից դրանք աղքատ են ազոտով և ֆոսֆորով, իսկ կալցիումով՝ միջին և լավ են ապահովված: Էրոզացված արոտավայրերի հողերում ցածր է ինչ-պես հումուսի, այնպես էլ սննդատարրերի քանակությունը: Ծրջանի արոտավայրերի հողերի բարելավման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- մակերեսային քարերի հավաքում,
- արոտավաշտպան անտառաշերտերի և անտառաթփուտա-յին շերտերի ստեղծում,
- արածեցման վանդակային համակարգի կիրառում,
- հակաէրոզիոն միջոցառումների կազմակերպում,
- հանքային պարարտահյութերի կիրառում՝ N30P30K30 կգ/հա չափարանակով, խոտացանություն:

Անտառաթփուտային շերտերով պաշտպանված հողերն էրոզի-այի չեն ենթարկվում կամ թույլ են ենթարկվում, իսկ անտառաթ-փուտներից զորկ դաշտերում, անտառաթփուտներով պաշտպանված հողերի համեմատ, հողաշերտի հաստությունը պակաս է 8 սմ-ով՝ պայմանավորված արագընթաց զարգացող հողատարման գործըն-թացներով: Նշվածները, ինչպես և դրանց ազդեցությունն աշնանա-ցան ցորենի բերքատվության վրա, մանրամասն նկարագրված են ուսումնասիրությունների արդյունքներում:

Ասկերանի շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերի գնահատման որակական միջին ցուցանիշները հարթավայրային պայմաններում բարձր են, իսկ լեռնային հատվածներում՝ ցածր: Հողային հատկությունների բոնիտման բալը տատանվում է 72-80-ի սահմաններում, և վարելահողերն՝ ըստ բոնիտման հողա- գնահա- տականի, առանձնացվում են 5 խմբի մեջ՝ 1) 100-81, 2) 80-61, 3) 60- 41, 4) 40-21, 5) 20-0 բալ:

Շրջանի հարթավայրային գոտու շագանակագույն և բարձրա- դիր գոտու անտառային դարչնագույն տարրեր դիրքադրության հո- ղերում պարարտացման լավագույն տարրերակը համարվում է զո- մադր 30 տ/հա+N60 կգ/հա տարրերակը, որը բոլոր տարրերակնե- րում ստուգիչի նկատմամբ ապահովում է աշխանացան ցորենի հա- տիկի 42.6-ից մինչև 110%-ի բարձր բերք, 20.7 հազարից մինչև 168.5 հազար դրամ/հա շահույթ: Տարրերակներում արդյունքների առանձնապես մեծ տարրերություն չի նկատվում նույն գոտիների պայմաններում՝ խորը վարի տակ, աշնանային սննուցման և գարնա- նային սննուցման միջև:

Հիմք ընդունելով կատարված ուսումնասիրությունների արդ- յունքները, հաշվի առնելով հողերի ներկա մելիորատիվ և էրոզաց- վածության վիճակը՝ դրանց բերրիության բարձրացման նպատա- կով առաջարկվում է համալիր միջոցառումների համակարգ, որի իրականացումը հնարավորություն կտա ոչ միայն լավացնել հողերի ազդարարական հատկությունները, բարձրացնել մշակաբույսե- րի բերքատվությունը, այլ որ առավել կարևորվում է՝ բարելավել շր- ջակա միջավայրի էկոլոգիական վիճակը:

Ելնելով շրջանի վարելահողերի խմբավորումից՝ ըստ հողատի- պերի և նրանց առկա, փաստացի ազդարարական հատկու- թյունների, յուրաքանչյուր խմբի համար առաջարկվում են բարե- լավման մի շարք միջոցառումներ.

1. Առաջին խմբի մեջ մտնող մարզագետնասևահողերի և լեռնա- յին մարզագետնաստափաստանային հողերի բարելավման համար առաջարկվում է բարահավաք աշխատանքներ, ավելորդ ջրերի հե- ռացում, հողի մշակման ճիշտ համակարգի ընտրություն, պարա-

տացում օրգանահանքային պարարտանյութերով՝ շարահերկ մշակաբույսերի համար՝ գոմաղը 45-60 տ/հա + NP90K60 կգ/հա ազդող նյութի հաշվով, հացահատիկային բույսերի համար՝ գոմաղը 45-60 տ/հա + N100P90K60 կգ/հա, բազմամյա խոտաբույսերի համար՝ գոմաղը 45-60 տ/հա + NP30K30 կգ/հա:

2. Երկրորդ խմբի հողերի բարելավման միջոցառումներից են՝ քարերի հավաքումը, վարելաշերտի խորացումը՝ 3 տարին մեկ անգամ, վարելահողերի սահմաններից դուրս անտառահատումների արգելումը, թեր լանջերում հոսքականիսից շերտերի բուֆերային գոտիների ստեղծումը, խոտացանության միջոցով 4-5 մ լայնությամբ՝ բույլ էրոզացված տարածքներում 200-300 մ հեռավորությամբ, միջին էրոզացված հողերում՝ 100-150 մ հեռավորությամբ, իսկ ուժեղ էրոզացված հողերում՝ 60-70 մ հեռավորությամբ, ջրային ռեժիմի բարելավում, պարարտացում օրգանահանքային պարարտանյութերով՝ շարահերկ մշակաբույսերի համար գոմաղը 40-60 տ/հա + N90P60K60 կգ/հա ազդող նյութի հաշվով, հացահատիկային բույսերի համար՝ գոմաղը 40-60 տ/հա + N60-90P30-60K30 կգ/հա, բազմամյա և միամյա խոտաբույսերի համար՝ գոմաղը 40-60 տ/հա + N30-45P30K30 կգ/հա:

